Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ ***http://www.armin.am***

Էլ. փոստ՝ ***info@armin.am***

Մարի Լուիզ Վարդանյան

Վարդը

Վեպ

ԵՐԵՎԱՆ «ՎՄՎ-ՊՐԻՆՏ»
2015

ՀՏԴ 821.19-31Վարդանյան
ԳՄԴ 84(5Հ)-44
Վ 301

Գիրքը տպագրվել է ***Պարգև Մանոյանի*** *հովանավորությամբ*

Վարդանյան Մարի Լուիզ
Վ 301 Վարդը:Վեպ/Մարի Լուիզ Վարդանյան.- Եր.: ՎՄՎ-Պրինտ, 2015.- 344 էջ:

Հարյուրամյա ժամանակային տարածություն ունեցող 1915թ. ցեղասպանության մորմոքի, սերնդից սերունդ հաղորդվող պատմական հիշողության, հայրենազրկման, մարդկային խեղված ճակատագրերի ու ապրեցնող սիրո մասին է Մարի Լուիզ Վարդանյանի «Վարդը» վեպը: Հեղինակը այրող կարոտով է խոսում իր նախորդ սերնդի, Մուշի, Էրգրի և աշխարհին իր տունը դարցրած նրա մարդկանց վերածննդի հրաշքի մասին:

ՀՏԴ 821.19-31Վարդանյան
ԳՄԴ 84(5Հ)-44

ISBN 978-9939-60-287-5 © Մարի Լուիզ Վարդանյան, 2015

Կյանքը վարդի նման է, նրա յուրաքանչյուր թերթը պատրանք է, իսկ փուշն՝ իրականություն:

Արիստոտել

Սարերի միջև՝ կանաչապատ ու խոր մի հովտում, մի քանի տնով փոքրիկ գյուղ կար, որի բնակիչները կարծես առանձնացել էին, որ ստեղծեն մի բնակավայր բարվոք ապրելու համար:

Երբ ասում եմ՝ մի քանի տներից էր բաղկացած, այնքան էլ ճիշտ չէ, բավական շատ էին, կարելի է ասել՝ հարյուրից ավելի: Հովտում կար մի փոքրիկ խորություն, որի միջով անցնում էին սարերից եկող ջրերը, ձմռանը՝ ձյան հալոցքները, գարնանը՝ բազմաթիվ ակներից բխող աղբյուրները: Շրջապատված էր գյուղը անտառներով:

Այստեղ հավաքվել էին, բնական է, իրար ծանոթ, բարեկամ, ազգական: Երբ մի բնակավայր է ստեղծվում, նախ հավաքվում են ազգ, բարեկամ, որից հետո՝ ծանոթ ու անծանոթ ընտանիքները: Բոլորն իրար ճանաչում էին և լավ հարաբերություններ ունեին:

Տուն ասելով՝ պետք է հասկանալ մեկ կամ կիսահարկ, կամ գետնահարկ, ավելի շուտ, գետնափոր, երդիկներով, հողե տանիքներով:

Նրանց ապրուստի միջոցը շատ պարզ էր, ցանում էին հարակից հողամասը, պահում էին կենդանիներ, աճեցնում, բազմացնում: Օգտվում էին՝ հարևան գյուղերի հետ առևտուր անելով, իրենց ունեցածը չունեցածի հետ փոխանակելով կամ ծախելով:

Այդպես ապրում էին և գոհ էին իրենց ապրուստից, ունեցածից:

Ուրախ էին, եթե չունենային ուրիշ, իրենց հանգիստը խանգարող արտաքին հանգամանքներ, որոնք երբեմն և շատ հաճախ էին պատահում և վրդովում այս խաղաղ մարդկանց կյանքը:

Հոժար էին միշտ այդ ձևով ապրելու, բայց հանգիստ՝ անտեսելով իրենց վիճակի խեղճությունը, խուլ, անիմաստ կյանքի խորությունը: Իրենք էլ ունեին շատ արժանիքներ կյանքը վայելելու որպես մարդ: Չգիտեին, թե որքան զարգացած էր մարդու ապրուստը արտաքին աշխարհում, մարդու կյանքը՝ բոլոր բնագավառներում, այդ մասին գաղափար էլ չունեին:

Կառչած էին հողին. ինչ անեն, որ քաղցը գոնե հագեցնեն մի բանով: Հագուկապին անտեղյակ էին, այնքան, որ կարողանան պահպանվել ցրտից, պատսպարվեն ձմռան ցուրտ օրերից:

1890 թվականն էր, աշխարհը բարգավաճում էր, զարգանում էր նոր տեխնիկայի վերելքներով: Չխոսենք անցյալ դարերի հիասքանչ կոթողների մասին, ապրելակերպի, նիստուկացի, կուլտուրայի մասին և հարստությունների մասին նաև:

Այստեղ գաղափար էլ չունեին այս բոլորից, և ամենափոքր պատկերացում էլ չկար:

Խեղճ մարդիկ, խեղճ գյուղացիներ, հետ էին քաշվել, հավաքվել այդ խուլ աննկյունում, ստեղծել իրենց վաթանը: Համերաշխ էին, ուրախանում էին ամեն մի փոքր բանով:

Ամեն մի ընտանիք ուներ իր թոնրատունը՝ հացը թխելու, սպասը եփելու, խաշը թոնիրը կախելու ձմռան օրերին:

Հավաքվում էին քուրսու շուրջ, ոտները կախում թոնրի մեջ, այսպես ձմռան երկար երեկոներին պատմում իրարից լսած պատմությունները, խոսում, ուրախանում էին:

Գյուղում իրենց սրբատեղի էին ստեղծել՝ Աստծո տունը, որտեղ էլ հավաքվում էին: Գիտեին հոգևոր տոները՝ Ծնունդ, Զատիկ: Հովիվ ունեին, որը կարդում էր Սուրբ գիրքը և քարոզում: Աղոթում էին Աստծուն, մոմեր վառում:

Կար դպրոց, մի քանի գիտակ մարդիկ այստեղ հայ երեխաներին սովորեցնում էին կարդալ, գրել: Այդքանը: Ձգտումները շատ էին, հնարավորությունները՝ քիչ, անում էին հնարավորությունների չափերով:

Երբեմն խելահաս մարդիկ դուրս էին գալիս, բերում որոշ նորություններ, բայց ավելի բարգավաճել չէին կարող, երկրի կառավարությունը զրկում էր՝ իր օրենքները ներդնելով, արգելելով ավելին:

Այդպես էլ անցնում էին տարիները, անցնում էր կյանքը: Բոլորն աղքատ էին և խեղճ ու միամիտ:

Բայց զգացմունքներն արթուն էին, կային ընտանիք, օջախ, անուն, նամուս, սեր, ամուսնություն, ծնունդ, Աստված ունեին, ամենակարևորը, ինչպես տեսանք: Սիրում էին արարողություններ: Ստեղծել էին իրենց ներաշխարհը ղեկավարող արժեքները, գոնե այդքանը կարող էին անել:

Երբեմն կառավարությունից մարդիկ էին անցնում, հետաքրքրվում իրենցով, բայց այդքանը, ոչ ավելին. լավ գիտեին՝ որքան մարդ կա այդ գյուղում, ինչ կրոնի են պատկանում և ինչով են զբաղվում:

Գյուղը շատ ուշ ունեցավ նաև իր աղքատիկ խանութը, հեքիմ, դերձակ, կոշկակար և այլն:

Սկսեցին բրուտագործությունը զարգացնել՝ ունենալու անհրաժեշտ բաներ իրենց առօրյայի համար: Երբ տեսան՝ կարելի է ապրել այդտեղ, ոմանք իրենց ուժերով կառուցեցին տներ քարաշեն՝ ավելի ապահով իրենց համար:

Լավ իմանալով, որ իրենց հողն է, իրենց հայրենիքն է, միշտ վախով են ապրել, միշտ մեծ կասկածների մեջ: Ուզում էին փարատել իրենց վախը՝ իրենց ուժեղ զգալով, քանի որ իրոք ուժ ունեին իրենց բազուկների մեջ:

- Ըսօր հարսնիք ունինք, մըր Սաթոյ աղջկա: Գինաս չէ՞ ում կառնի, էն Սարգսի տղին: Լավ տղա ի, խորոտ, աղջիկն էլ խորոտ ի:

- Չը գինամ, ես չը գինամ:

- Ինչի՞ չը գինաս, հեչ մեկը չըսած, չը գինաս:

- Տղին իմալ կը կանչին:

- Մոսո՛, Մոսո է անունը, աղջիկն՝ Արեգնազան: Շատ կը սիրին իրարու: Սաթոյի մարդն չըր ուզի տար, հըմը տվեց, իմալ չը տար, աղջիկն սիրեր: Տղան էլ օր ու գիշեր դռներն վեր կիտար, կըսեր չիտան կը փախցում: Ամոթ, այիբ կորցուցեր էր: Սիրեր ինչ էներ, սիրուց հաց բիլա չըր ուտե: Շատ խորոտ է աղջիկը՝ երկար ծամեր, սև չամիչ աչքեր, բոյ չինար, խորոտ, ինչ ըսիմ քըզի, լավ գինաս մըր հայու, Մշու աղջիկներ:

Երկու օր առաջ գառնարած Սարգիսը գնացել էր տղայի համար աղջիկ ուզելու: Երկար խոսելուց հետո համաձայնել էին տալ, քանի որ աղջիկը ասել էր, որ սիրում է տղային: Որոշել են՝ երկար չթողնեն և անմիջապես ամուսնացնել:

Այդ օրը մորթել էին երկու խոշոր անասուն ու հրավիրել ամբողջ գյուղին հարսանիք: Այդպես էր, ուրախությանը գնում էին ամբողջ գյուղով, ինչպես նաև տխրությանը, միշտ նույն ձևով, մի մարդու նման ներկա էին:

Սիրում էին երգել իրենց ազգային, պապերի հորինած

երգերը, պարել իրենց առանձնահատուկ պարերը: Շատ բարձրախոս էին, հետն էլ, կարելի է ասել, շատ աշխույժ էին նաև:

Հարևաններով կանայք հավաքվում էին, հաց թխում թոնրում, մորթած միսը եփում օջախների վրա՝ մեծ պղնձե ղազանների մեջ: Այդպես էին պատրաստվում, և մասնակցում էր ամբողջ գյուղը: Խմում էին իրենց քամած գինին:

Հնչում էին զուռնան և դհոլը. որտեղ թնդում էին զուռնան ու դհոլը, այնտեղ էին երգն ու պարը:

Հարսանիքներն անում էին աշնանամուտին, երբ դաշտերի աշխատանքները վերջացնում էին, բոլորը հանգիստ մտնում էին իրենց տները, քանի որ շատ խիստ էին ձմեռները: Շատ ձյուն: Անասունը մնում էր գոմերում, որտեղ պատսպարվում էին նաև հավերը:

Գարունը բացվելուն պես սկսում էր աշխատանքը դաշտերի, այգիների: Արոտավայրերը լցվում էին արդեն բազմացած կովերով, ոչխարներով, այծերով, իրենց ձագերով՝ հորթերով ու գառներով:

Այս էր պատկերը հայ գյուղացու կյանքի, և այդպես շարունակ: Դեռ ավելին չէր զարգացել, այդքանին էլ շնորհակալ էին:

Մեծ աղմուկով, հարայ, վարայրվ տղայի տանից տղայի կողմի մարդիկ գնում են՝ հարսը բերելու: Խառնիխուռն, մեկը քայլելով, մյուսը վազելով, իրար հետ խոսելով, գոռալով, դհոլ- զուռնայով հասնում են հարսի տան դիմաց՝ գյուղի մեծ մասը ոտքի հանելով: Շարունակում էին՝ դհոլի զարկերը ավելի ու ավելի արագացնելով, ցույց տալու համար, որ արդեն հասել են հարսի դռանը:

Պետք էր, որ տան մեծերը դիմավորեին հարսանքավորին: Տղայի կողմից բերված սինիները պարեցնելով՝ սպասում էին:

Վերջապես դուրս եկան աղջկա բարեկամները, փոխանակեցին սինիները ինչ-որ բաներով՝ ծրարված հատուկ ձեռագործված մեծ թաշկինակների մեջ, որոնց պարունակությունը կիմացվի միայն բացելուց հետո: Այդ անակնկալը լինում էր կամ գաթա, կամ գլխաշոր, կամ հյուսված գուլպա:

Մովսեսի (Մոսո էին կոչում նոր փեսային) տանից եկած սինիներից մեկի մեջ էին գեղեցիկ զգեստները՝ նոր հարսին հագցնելու համար: Պետք էր, որ հարսը լիներ փեսայի ընտրած հագուստի մեջ, այդպիսին էր կարգը: Այդ ժամանակ, երբ տղայի կողմի ամբողջ ժողովուրդը իրեն կոտորում էր պարելով, երգելով, մյուս կողմի վրա բացված հրապարակում լարախաղացը արդեն լարի վրա կատարում էր իր մշտական վարժությունները, իսկ զուռնայի հնչյունների տակ յալանչին թռչկոտում էր՝ աջ ու ձախ գովելով, ծամածռություն և կատակ անելով սրա-նրա հետ, ուրախացնելով, ծիծաղեցնելով մարդկանց:

Շատերը բռնել էին մշեցոց ավանդական քոչարին, մեծ հրապարակ բացելով՝ թռչում էին՝ հետևելով դհոլի ռիթմին, քայլերը բոլորը լավ գիտեին, մեկ մարդու պես:

Այդ միջոցին մի քանի կանայք հարսին հագցնելով էին զբաղված: Երգում և գովում էին ամեն մի հանդերձը հագցնելու ընթացքում:

Պետք է ասել, որ կային շատ կիսափեշեր, փեշեր, ձեռագործված պատմուճաններ՝ բոլորն էլ գույնզգույն ժապավեններով, կապերով. մեկը մյուսի հետևից կապելը, իրոք, բարդ էր, բայց մեծ փորձ ունեին և հերթականությունը շատ լավ գիտեին:

Ապա թագը, ինչ գեղեցիկ էր զարդարված, արծաթյա դրամներով: Շատ ուրախ երգելով հագցրին գեղեցիկ Արեգնազին:

Սիրահարը կարծես երազի մեջ լիներ, մեծ սիրով հնազանդ

անում էր բոլոր շարժումները, որպեսզի կարողանային իրեն կատարյալ զարդարել՝ ներկայացնելու համար իր սիրեցյալին:

Մոսոն մեծ դժվարությամբ կարողացավ հասկացնել Արեգնազի հորը, որ միայն նրա աղջկան է սիրում և չի լինի մեկ ուրիշը երևի:

Պատրաստ էր Արեգնազը՝ գեղեցկադեմ, բարակ իրանով, որի մարմնի գեղեցկությունը չէին կարողացել թաքցնել, չնայած այնքան շերտ-շերտ շորեր էին հագցրել: Նրա գեղեցիկ աչքերն էին գերել Մոսոյին:

Մոսոն էլ գեղեցիկ, թիկնեղ երիտասարդ էր: Մեծ սիրտ ուներ, ինչպես կարողացավ ընկնել Արեքնազի սիրո ծուղակը՝ ինքն էլ չիմացավ, որքան էլ ուզեց չլսել իր սրտի ձայնին, չկարողացավ, արդեն սիրահարվել էր: Անկարող էր դուրս գալ այդ քաղցր, երբեմն էլ ցավոտ վիճակից:

Շատ դժվար էր առաջին անգամ Արեգնազին մոտենալը, միայն գյուղի աղբյուրի մոտ կարող էր տեսնել նրան: Աղջիկները, կուժերն առած, գնում էին ջուր բերելու, բայց միշտ խմբով էին, ոչ մի անգամ մենակ չէր լինում, դա էլ դժվարացնում էր Մոսոյի մոտենալը: Որքան ուշանում էր, այդքան անհամբերությունը կրկնապատկվում էր:

Ինքն էլ աշխատանք ուներ, արհեստ. Մոսոն դարբին էր, պատրաստում էր գյուղացիներին պետքական տարբեր իրեր՝ ձիերի պայտեր, խոփեր, մուրճեր:

Երբ առաջին անգամ հանդիպեց Արեգնազին, չիմացավ ինչ խոսել, իրար նայեցին, բարևեցին, ձեռքից առավ կուժը ջուր լցնելու համար: Այդ բոլորն արեց մեքենայաբար, առանց հայացքը կտրելու Արեգնազի երեսից: Ջուրը երկար վազեց, լցվեց, կուժից թափվեց, բայց ինքը դեռ նայում էր, իսկ վաղուց լցվել էր կուժը: Արեգնազը, երբ նկատեց այդ, մոտեցավ, կուժը վերցրեց ու գնաց:

Այդ օրվանից չուներ քուն, դադար, գործը տանջանք դարձավ իր համար: Գործից հետո նրան տանը բռնել չէր լինում, նա արդեն Մոսոն չէր, նա Սիրահարն էր: Բոլորը նրան կոչեցին «սիրահարը»:

Արեքնազը այդ օրվանից հասկացավ, որ Մոսոն սիրում է իրեն, չնայած չէր բացել սիրտը ու չէր ասել այն երկու բառը՝ «սիրում եմ»:

Այդպես անցավ որոշ ժամանակ, մինչև Մոսոն կարողացավ համոզել ծնողներին, որ պետք է իր կամքը կատարեն, իսկ Արեգնազի ծնողները ամոթ էին համարում, որ իրենց աղջիկը համարձակվել է սիրել մեկին, առանց իրենց կամքի:

Վերջիվերջո Մոսոյի հայրը կարողացավ համոզիչ խոսքով ներկայացնել իր առաջարկը ապագա խնամուն:

Ահա այսօր երկուսի սրտները տրոփում էին: Միմյանց բարևել էին, այն էլ մեկ անգամ, աղբյուրի թափվող զուլալ ջրերի առջև:

Այն օրվանից աղջիկը խուսափում էր, չէր ուզում լինել գյուղացիների ուշադրության կենտրոնում, բամբասանքի առարկա, բայց դա նշանակում էր, որ չի՞ սիրում, ո՛չ: Նույն ձևով ինքն էլ կարոտում էր ու Մոսոյի պատկերը չէր կարող հեռացնել աչքերի առջևից: Այսօր առաջին անգամ պիտի կարողանային խոսել իրար հետ, դիպչել, զգալ իրար:

Աստծո մարդը այս երիտասարդ զույգին՝ դեռևս անծանոթ իրար, պիտի միացներ ու պսակեր:

Համագյուղացիները երգում, պարում էին, բայց սպասում էին նաև հյուրասիրվելուն:

Արեգնազի ծնողները մտածել էին պատրաստվել հյուրասիրելու համար: Պատրաստել էին քաղցրավենիքներ խնամիներին և հարսանքավորներին հաճույք պատճառելու համար:

Վերջապես փեսային թույլատրեցին հարսին տանից դուրս հանել: Կարծես երկար խաղացին իր համբերության հետ:

Մոսոն ներս մտնելուն պես խենթի նման անմիջապես բռնեց Արեգնազի ձեռքը ու վերից վար ուշադիր նայեց իր գեղեցիկ հարսին: Քողը ծածկել էր դեմքը, շատ կուզեր տեսնել գեղեցիկ աչքերը, բայց դեռ նորից պետք էր համբերել, սպասել, դեռ շուտ էր:

Հանեցին հարսին դհոլ-զուռնայով ու դանդաղ քայլերով անցան գյուղի միջով: Ամբողջ գյուղը ուրախ էր այդ օրը:

Հարսանիքը շարունակվեց երեք օր ու գիշեր, այդ ընթացքում էլ արեցին պսակը:

Քավորը պսակադրության ժամանակ իջավ սարերից, որպեսզի խաչը բռնի: Ֆիդայի էր, երիտասարդ, առույգ, քաջ, անունը՝ իգիթ Արմենակ (Արմո): Արմենակը դեռ երեխա էր, երբ թուրքերը դաշտում սպանել էին հորը, մայր չուներ արդեն: Նրան մեծացնելու գործը մնացել էր հորաքրոջը: Այժմ ֆիդային է իր շատ ընկերների հետ: Անկայուն էր կյանքը, ոչ մի օրը մյուսին նման չէր: Սասունցիներն ու մշեցիները քաջ մարդիկ էին, անվախ, կյանքն էր ստիպել իրենց, սարերից էին ուժ ստանում:

Այսպես ամեն տարի գյուղն ուներ մի քանի հարսանիք, ծնունդ և մահ: Եվ այդ բոլորն ամբողջ գյուղի համար էր: Բայց դա միայն խաղաղ պայմաններում:

Գյուղում ապրում էին հայեր, կային նաև քրդեր և մի քանի թուրք ընտանիքներ:

Գարունը բացվելուն պես յուրաքանչյուրը ճիշտ ժամանակին վարում-ցանում էր: Հողակտորը փորում- տնկում էին, գիտեին ինչ անել լավ բերք ստանալու համար:

Այստեղ բոլորը բարեկամներ էին, եթե բարեկամ էլ չէին, իրար հորեղբայր, մորաքույր էին կանչում: Շատերը տարիների ընթացքում գնացել էին օտար երկրներ, ինչպես Ամերիկա: Ոմանք փախել էին երկրի կառավարության բռնությունից ազատվելու համար՝ մտածելով տանել հետագայում նաև հարազատներին, որ իրենց դեռ չէր հաջողվում:

Սարգսի եղբայրը Ամերիկա էր գնացել: Սարգիսը Մոսոյի հայրն էր, չէր ուզում, որ Մոսոն մնա, վստահություն չուներ թուրք կառավարության հանդեպ. շատ բաներ էին տեսել, և իզուր չէր, որ իրենք՝ հայերը, ընտրել էին այս խուլ սարերի մեջ ծվարելու միտքը, բայց ոՒր փախչեին իշխանությունից, շուտ կգտնեն տեղը, եթե ուզեին: Ժամանակ առ ժամանակ հրաբուխի պես պայթում էր: Խեղճ հայ ժողովուրդ, գլուխը ինչպես պահեր. «Խեղճ մշեցի, Մշո Սուրբ Կարապետ քեզ պահապան»:

Այդպես էր նաև ամբողջ Հայաստանում, գնալով ավելի բացահայտ էին դառնում այդ դեպքերը: Բոլոր նահանգներում այդ էր դրությունը, հայ ժողովրդի հերթական ջարդերը կարելի է նշել տարեթվերով, նույնիսկ ամսաթվերով, բայց ոՎ չգիտե. միայն մեկ միտք են ունեցել՝ բնաջնջել և գրավել հայկական աշխարհը նահանգ առ նահանգ:

Սասունցիները միշտ հերոսական պայքար են մղել, ընդդիմացել են «համիդիե» զորքերին անձնազոհաբար: Սասունցիների ուժերը, սակայն, ի վերջո, չբավեցին, թշնամին ոչնչացրեց, թալանեց, սրի քաշեց:

Այսպես շարունակ, գնալով ավելի ու ավելի:

Հարսանիքից անցել էր մոտ մեկ ամիս, Մոսոն արդեն վերսկսել էր աշխատել, ուրախ էր: Արեգնազը հարմարվել էր իր նոր տանը, նոր ընտանիքին: Սիրում էր ամուսնուն, հարգում և սիրում էր նրա ծնողներին:

Փառանձեմը քրոջ պես սիրում էր Արեգնազին: Միասին էին անում տան բոլոր գործերը, մաքրում դուրս ու տուն, իսկ Հեղինեն հոգում էր բոլորի համար, եփում, կերակրում և սիրում բոլորին՝ միշտ վախը սրտում. աչքը տեսածից է վախենում:

Այսքան հոգի մի սենյակի մեջ ուտում, խմում ու խոսում էին, պատմում անցած-դարձածից, պետք եղած ժամանակ ծիծաղում: Պառկում էին շատ զգույշ՝ ամեն մի շարժումը հաշվի առնելով,

մտածելով չխանգարել կողքի քնածին: Առավոտյան նորից նույնը կրկնվում էր. գոնե լույս կար, արև կար. մութն ընկնելուն պես խնայում էին ճրագի լույսը:

Խեղճ էր գյուղացին, անճար էր գյուղացին, այնքան որ կյանք ուներ, ապրում էր անհույս պայմաններում:

***

- Ախչի Արեգնազ, քուրդ ոՒր է, չՒս տեսել, չկա՞:
- ՉիՄ տեսած, չգինամ:
- Չըգինաս, իմալ չգինաս:
- Չըմ գինա:
- Քո քուր չիկա, ոՒր գացած:

Սաթոն խելագարված եկել, աղջկան՝ Վարդին էր փնտրում Արեգնազի տանը:

Վարդը առավոտյան կուժը առել, գնացել է աղբյուր ու չի վերադարձել. երկար ժամանակ է անցել: Սաթոն վերադարձավ տուն, սկսեց բոռալ, կանչել: Հարևանները հավաքվեցին, լուրը հասցրին Առաքելին, Վաղինակին: Հայր ու տղա դաշտում էին, վազելով եկան, ամբողջ գյուղը հավաքվեց, փնտրեցին ամեն տեղ. չկա ու չկա: Գյուղի երիտասարդները, ձիերն առած, ընկան դաշտերը, սարերը, փնտրեցին ամեն տեղ, չգտան: Լաց ու կոծ, խնդրանք, անեծք թափեցին, աղոթեցին, լացեցին, ապարդյուն: Անցավ երկու օր, արդեն պարզ էր, որ թուրքը տարել էր, փախցրել էր, երևի սիրել էր:

Վարդը գեղեցիկ էր, շատ նման քրոջը:

Երկու տարի փոքր էր մեծից, բայց ավելի նուրբ տեսք ուներ, գրեթե նույնանման սև աչքեր, երկար մազեր:

Սաթենիկը կորցրել էր իրեն, գլուխը խփում էր աջ ու ձախ, անիծում տանողին, անիծում իրեն, որ չկարողացավ պահել աղջկան, բայց ոՒր տարավ այդ անիրավը այդքան արագ: Հայրը

գլխիկոր, այլևս հալ չուներ, ուտել- խմելը մոռացել էր: Բոլորը գիշեր-ցերեկ ողբում էին: Մտածում էին, որ գայլ ու գազան չկա, ոչ մի նշան չկա ոչ մի տեղ, փախցրել ու տարել են, կուժն էլ աղբյուրի մոտ թողել լիքը ջրով: Պարզ էր, որ թուրքն էր տարել, քանի որ շատ հաճախ էր պատահում:

Երբ քույրը ամուսնացավ, այնուհետև Վարդը վերցրեց կուժը՝պարտականություն վերցնելով իր վրա:

Այդպես կորավ Վարդը:

Իրոք, անկայուն էր կյանքը, թուրքն ինչ ուզում, անում էր, ինչ անես, ոնւմ դիմես, օրենքն իրենց ձեռքն է, շատ խոսես, կվերացնեն քեզ էլ: Այդպես կորավ Վարդը, միայն անունը մնաց տանջված ծնողների սրտում: Բայց չդադարեցին փնտրել, անընդհատ հարցնում էին բոլորին, թե տեսել են արդյոք, գոնե իմանան որտեղ է, մեկ է, ետ բերել չէին կարող: Այդպես մնացին ինչուների մեջ մինչև նոր անակնկալների հանդիպելը:

***

Թալան:

Հանկարծ մի մեծ փոշու ամպ երկինք բարձրացավ: Հեռվից գյուղ եկող ճամփան չէր երևում:

Գյուղացիները չհասկացան, թե ինչ է կատարվում, իսկ ձիերի սմբակների դոփյունները, փոշու հետ խառնված, թնդացնելով ճամփան, առաջանում էին: Ինչ է արդյոք, դա ինչ զորք է, ինչու՞ են այդքան աճապարում: Չհասցրին հասկանալ, երբ արդեն կանգնած էին յուրաքանչյուր տան դռան առջև մի քանի զինված թուրքեր: Եկել էին բազմությամբ՝ թալանելու, առնելու, կողոպտելու, ինչ որ պատահի:

Իրենց չի հետաքրքրում՝ ունես-չունես, ուզում են, խփում են, գցում են, խառնում են, հրում են: Սա թալան է, թալանելու ուրիշ ձև չկա, շատ խստիվ հավաքում են, ինչ պատահի:

Խեղճ գյուղացին տվեց ինչ ուներ, մի ամբողջ կյանքի կուտակածն էլ առան, չունեցողի վերջի լուման էլ տարան: Ինչ աչքի էր ընկնում այդ հյուղակում, դա էլ առան:

Խփեցին, ծեծեցին, դիմադրողին սպանեցին, ծերերին գետին նետեցին: Կանայք խենթի պես փախչում էին աջ ու ձախ: Ջահել աղջիկները պահվեցին, թաքնվեցին: Ճիչ, աղաղակ, գոռում, գոչյուն. զենքերը կրակում էին օդ, վախեցնում, ուզածները վերցնում, եթե դիմադրում էր գյուղացին, կրակում էին վրան կամ խփում, վերջացնում:

Այս վայնասունը, հրմշտոցը տևեցին մի քանի ժամ: Որքան մարդիկ մեռան, քանի՞ աղջիկ տարան:

Լուրը հասավ ֆիդայիներին: Բոլորը սարերից իջան, կռիվ բռնկվեց, բայց թուրքերը շատ էին ավելի: Հավաքած թալանը չթողեցին, տարան, իրենք էլ փախան:

Այդ կատարվեց օրը ցերեկով, լավ օր էր, արևոտ աշնանամուտ, երբ աշխատավորը հանդում, դաշտում էր: Եկան առանց քաշվելու, առանց հարցնելու, առանց օրենք ներկայացնելու: Եկան հենց այնպես, թալանելու, ծեծելու, սպանելու: Իրենց ձեռքն է և իրավունք, և օրենք:

Խեղճ հայ, խեղճ գյուղացի, ոմ դիմեր, ոմ բողոքեր: Այսպես էր, ինչ ուզում, անում էին: Դա անում էին երբեմն, հանկարծ, անակնկալ: Միշտ պետք էր զգոն լինել և ուժ ունենալ համակերպվելու այդ մտքի հետ:

Երբ հարձակումը սկսեց, տան անդամները վախ ու սարսափ են զգում, նախ չգիտեն պատճառը, իսկ երբ սկսում է հրմշտոցը, այլևս հավասարակշռությունը կորցրած՝ աղաչում, պաղատում են, չգիտեն՝ իրենք էլ խփեն, ձեռք բարձրացնեն, թե ոչ. վերջում ինչ կլինի: Այսպես կործանվում են, որովհետև իրենց պաշտպանել չեն կարող: Ձենքը թուրքի ձեռքն է:

Մոսոն եկավ, հասավ, արդեն ուշ էր: Հորը հրացանով խփել էին, իսկ մորը, որ ուզել էր ամուսնուն փրկել, հարձակվելու պահին սպանել էին: Մայրն ընկած էր գետնին անշնչացած, հայրը, կողքին նստած, ողբում էր, քույրը՝ Փառանձեմը, գրկել էր հորը ու լաց էր լինում:

Երբ թուրքերը հարձակվեցին տան վրա, Փառանձեմը հացատանն էր, իմացավ, որ զինվորներ են եկել, թաքնվեց, դուրս չեկավ, այդպես էր, միշտ ջահելներին ասում էին, որ թաքնվեն, դուրս չգան, չերևան աչքներին: Ջահելները վախենում էին, նամանավանդ որ Վարդին փախցրել էին այդ ժամանակ:

Փառանձեմը թուրքերի գնալուց հետո մտավ տուն, ինչ

տեսնի. մայրը՝ արյան մեջ գետնին պառկած, հայրը՝ վիրավոր, ծեծված, մյուս կողմում ընկած: Այլևս չգիտեր ինչ անել, գրկեց հորը, նստեց:

Երբ Մոսոն ներս մտավ, տեսավ այդ վիճակը, խենթի պես դուրս թռավ, բայց ինչ. արդեն գնացել էին բոլորը, ամբողջ գյուղը նույն դրության մեջ էր, որն իր վիշտն էր ողբում, որը՝ իր ունեցվածքը, որն էլ՝ իր կորցրած աղջկան:

Մեծ վիշտ էր պատել, դրամատիկ ընդհանուր մի պատկեր. դա վաղուց չէին տեսել այդ գյուղում, որ կորած, թաքնված էր սեգ սարերի մեջ.

Թուխպը պատեց,
Մեջն իր առավ,
Վիշտը պատեց,
Ժպիտը պաղավ,
Ապրելու իղձն էլ
Ընդմիշտ տարավ:

Մոսոն ձին նստեց, փնտրեց կնոջը, գտավ դաշտում. մի մարգի մոտ նստած՝ ցավ էր քաշում: Հասավ, գրկեց, լուրը հասել էր դաշտ, Արեգնազը տեսավ, որ բոլորը վազում են դեպի գյուղ վայնասունով, ամեն մարդ մեկն ուներ տանը, փրկելու էին վազում, բայց ինքը մի քայլ էլ չկարողացավ անել, ոտքերը բռնվեցին, նստեց, անկարող էր շարժվելու, ոչ մեկը չկանգնեց, որ տեսնի՝ ինչ է եղել, ոչ մեկը չիմացավ իր ցավը: Նա բավական առաջացած հղիություն ուներ, բայց ուզում էր օգնել ամուսնուն, դաշտում իր օգնության կարիքն ունեին: Ուժասպառ նստեց, արդեն մտածում էր, որ չի կարողանա տուն հասնել: Անհույս էր, երբ Մոսոն հասավ: Անզոր էր վեր կենալ, Մոսոն հասկացավ, որ դրությունը լուրջ է: Գրկեց կնոջը, համբուրեց ու ասաց, որ շուտով կվերադառնա, ու թռավ ձիով: Մի քանի րոպե անց

վերադարձավ՝ հետը բերելով գյուղի հեքիմին և ծրար, որ արդեն պատրաստել էր Արեգնազը:

Բաց դաշտում ծնվեց իրենց որդին՝ Վահանը:

Երբ տուն վերադարձավ հեքիմին բերելու, մինչև հեքիմի պատրաստվելը Մոսոն մորը վերցրեց գետնից լացելով, ողբալով, համբուրելով, պառկեցրեց մահիճի վրա, որից հետո հորը գետնից վերցրեց, պառկեցրեց: Փառանձեմը արդեն կապել էր հոր վերքը, որից հոսում էր արյունը: Փառանձեմը խոսում էր հոր հետ, ներում էր խնդրում, զղջում թաքնվելու համար. ինչո՞ւ շուտ չհասավ. միգուցե կանխեր կատարվածը: Բայց հայրը, ընդհակառակը, գոհ էր, այլապես աղջիկը պիտի լիներ զոհը:

Հայր ու աղջիկ շատ լացեցին, մինչև որ Արեգնազին բերեցին տուն: Արեգնազը իր տղայի հետ մտավ տուն. տունը գլխին դարձավ, երբ տեսավ այն տակնուվրա եղած, երկու սիրելիները պառկած ամենքն իր տեղը, տալը՝ Փառանձեմը, շփոթված ու իրեն կորցրած: Նախ գլխի չընկավ, որ մահ կա այս տանը, Մոսոն ոչինչ չէր ասել: Երբ իմացավ, գիտակցությունը կորցրեց: Մոսոն հազիվ կարողացավ գրկել կնոջը, երեխան դեռ գրկում էր:

Փառանձեմը անմիջապես վերցրեց երեխային՝ խանձարուրի մեջ փաթաթած, ուժ չուներ նույնիսկ երեխայի երեսին նայելու, իսկ Արեգնազը մնաց գետնին պառկած:

Այո՛, մեկը մեռնում է, մյուսը՝ ծնվում, և ոչ մեկը մեղավոր չէ դրա համար: Կյանքն է այդպես: Բայց այս դեպքում մենք շատ լավ գիտենք՝ ով է մեղավոր, անարդար, դաժան:

Երեխային դրեցին պապի մոտ:

Հեքիմը, որը եկել էր իրենց հետ, անմիջապես սկսեց Արեգնազին ուշքի բերել., նա կարող էր նույնիսկ կյանքը

կորցնել: Ամեն հնար դրեց, որպեսզի կյանքի բերի, և դա շատ դժվար հաջողվեց: Կնշանակի՝ կյանքը դեռ ժպտալու էր իրեն, բայց ինչպե՞ս ու երբ: Թելից էր կախված կյանքը ու փրկվեց:

Շուտով կազդուրվեց. դա պետք էր իր համար, իր երեխայի և բոլորի համար:

Գյուղը ամբողջ ողբաց իր վիշտը. շուքով, հարգանքով, մրմուռով թաղեցին սիրելիներին իրենց գերեզմանատանը: Տղամարդիկ կազմեցին ֆիդայական խմբեր ու խումբ-խումբ ցրվեցին շրջապատող սարերը, գյուղի չորս կողմը:

***

Մոսոն փակեց իր դարբնոցը ու բարձրացավ սարերը, բայց փակելուց առաջ որոշեց փոքր սուր դանակներ պատրաստել՝ մտածելով, որ զենք չունեն, գոնե դանակ ունենան պաշտպանվելու համար:

Արեգնազը ամեն ինչ արեց, որ խնամի և լավացնի Մոսոյի հորը, որը, սակայն, չդիմացավ այդ ցավին, կնոջ վիշտը ծանր ազդեց իր վրա, ու մահացավ:

Մոսոն հոր մահից հետո վերցրեց կնոջը, երեխային և քրոջը, տարավ իր հետ սարերը: Այլևս չուզեց վերադառնալ: Երկար մնացին անօթևան՝ պատսպարվելով տարբեր տեղերում՝ ժայռերի տակ, քարայրների մեջ: Աչքները չորս արած հսկում էին գյուղը վերևից:

Ֆիդայիները ամեն ինչում օգնում էին գյուղացիներին: Այստեղ՝ սարերում, ստեղծեցին իրենց համար մնալու տեղերը:

Մոսոյի երեխան կամաց-կամաց մեծանում էր, հաճախ մտածում էին՝ կկարողանան մի օր նորից իջնել գյուղ՝ ապրելու այնտեղ: Այս էր ֆիդայու ընտանիքի կյանքը: Ծնողներին թաղելուց հետո կարծես մարեց ճրագը այդ տան: Երեխան էլ նոր ուրախություն չբերեց, չունեցան այն երջանկությունը,

որ սպասում էին, ամեն ինչին անտարբեր էին վերաբերվում, ամեն ինչը դժվար էր շատ: Դյուրին չէր երեխա մեծացնել վայրի պայմաններում:

Արեգնազն ու Փառանձեմը որոշեցին վերադառնալ գյուղ, մտածելով՝ ինչպես մյուսները, այնպես էլ իրենք: Գոնե տաք թոնիր կունենան, հաց կթխեն: Կենդանիները պահ էին տվել դրացուն, գոնե կաթ կունենա երեխան: Մոսոն էլ կիջնի սարից, իր համար ինչ-որ բան կտանի, պետք եղածը կունենա գոնե:

Այդպես էլ արեցին, երեխան արդեն երեք ամսական էր: Հարս ու տալ սկսեցին խնամել երեխային:

Հարևանները մտնում, ելնում էին: Արեգնազի ծնողները, եղբայրը՝ Վաղինակը, գալիս, օգնում էին: Երեխային սկսեցին գուրգուրել, զբաղվել նրանով, ինչ անեին. կյանքը շարունակվում էր:

Վիշտը վիշտ է, բայց սփոփանք էլ պիտի լինի. իրար սիրտ տալով՝ մեկ լացով, մեկ ծիծաղով ապրում էին. այդպես օրերն անցնում էին:

Այդ օրը գյուղում երեսուն մահ եղավ դաժան, որքան վիրավորներ, ծեծվածներ: Քանի՛ աղջիկ տարան. ո՛չ մի դատ, ո՛չ մի դատաստան, ո՛չ մի վրեժ արյան:

Դա այդպես էր լինում և հաճախ, երբ ուզեին. թուրքը ոչ մեկին պատասխան չէր տալիս:

***

Այսպես առաջանում է արտագաղթը:

Գյուղում ոչ մի երիտասարդ չմնաց, ոմանք հեռացան սարերը, ֆիդայի եղան, իսկ ազապներն ու երեխա չունեցողները որոշեցին հեռանալ երկրից, գնացին Ամերիկա կամ Ռուսաստան: Ամեն միջոց ստեղծեցին՝ գլուխներն ազատելու համար, ծնողները ամենավերջին հնարավորությունները տվեցին զավակներին, ուղարկեցին՝ տալով նաև իրենց վերջին օրհնությունը:

Պանդխտության ճամփան բռնեցին նաև իգիթ Արմենակը՝ Մոսոյի քավորը, և Արեգնազի տասնչորսամյա եղբայրը՝ Վաղինակը: Նրա ծնողները, վստահելով քավորին, լացով, ցավով ուղարկեցին, մտածելով ապագայի մասին, հաշվի առնելով այդ երկրի անկայուն վիճակը:

Արեգնազի ծնողները՝ Առաքելն ու Սաթոն, եկան մնալու Արեգնազի մոտ, որպեսզի կարողանան օգնել աղջկան, շուտով գարունը կբացվի, Արեգնազն ու Փառանձեմը գոնե պարտեզում կաշխատեն, էլ դաշտի մասին չխոսենք, պիտի անեն միայն կարելին:

Արեգնազի հայրը, վիշտը սրտում, շարունակեց խնամու գործը. ամբողջ գյուղի անասունը առաջն արած տանում էր արոտավայր, այնտեղ նստում մի քարի, գլուխն առնում ձեռքերի մեջ, ողբում ու երգում. «Լա՛ռ, վայ լըմեն» արցունք թափում, երբեմն նայում անասուններին, վեր կենում, հավաքում, նորից նստում կամ գլխարկը դնում գլխի տակ, թիկն տալիս ու մտքով սիրում կորած աղջկան՝ Վարդին, խոսում հետը, կարոտում էր արդեն իր Վաղինակին, հույս փայփայում, որ մի օր կտեսնի երևի կա՛մ մեկին, կա՛մ մյուսին:

Միայն մնացել են Արեգնազն ու իր թոռնիկը. Վահան դրեցին անունը, որ պաշտպանի երևի իրենց անհույս պահերին:

Վահանը շատ սիրուն երեխա էր, խելոք հայացքով, ժպտուն, բայց երբ տեսնում էր թախծոտ հայացքները, ինքն էլ զգացվում էր կարծես, որովհետև չափավոր էին իրեն սիրելիս, ծիծաղեցնելիս, կարող էին, չէ՞ ավելի սիրել, բայց սիրտ չունեին: Անտարբեր չէին, բայց կոտրած էր սրտները, իսկ ինքը

փայփայելու կարիք էր զգում:

Այդպես մեծանալ սկսեց, բայց ինքը մեղավոր չէր, որ իր ծնվելու օրը այդքան դժբախտ դեպքեր են եղել:

Առաքելը երեկոյան վերադառնում էր տուն՝ իր արածեցրած անասունը մեկ առ մեկ բաժանելով, երբեմն կանգնում, խոսում էր մարդկանց հետ, ինքն էլ չիմանալով՝ ինչ խոսի և ինչի մասին խոսի: Հարց տալ էլ չէին կարող, հետաքրքրվել, թե ինչպես են. բոլորը վշտացած են, այդ հարցի պատասխան չունեին:

Տուն մտնելով՝ Առաքելը կնոջ երեսին էր նայում, նստում, մի բան էր ուտում, հետո նորից նստում, իրար երես էին նայում:

Արեգնազն էլ չէր կարող իրեն ուրախ համարել, ամուսինը՝ դրսում, երեխան էլ ցավ էր պատճառում իրեն. նա էլ երջանկություն չբերեց: Վիշտ, ամենուր վիշտ, որ կողմը նայես՝ վիշտ, ներս ու դուրսը՝ վիշտ:

Էլ ինչ ըրավ մըզի թուրք,
Մըր գլուխ բերավ բուք,
Ըրավ մըզի ընչազուրկ,
Ինչ ինք ըրած իրարու:

Մոսոն սարերում իր ընկերների հետ էր. իրենք էլ չգիտեին՝ ինչ են անում, նստում, ելնում, խոսում, ելք չէին գտնում, այն, ինչ անում էր թուրքը, հայը անել չէր կարող:

Հայ են, քրիստոնյա, ազնիվ, անմեղ մարդիկ. ինչ մեղք են գործել: Եթե պարտադրեն էլ, ինքնապաշտպանության կդիմի. եթե ոչ, հայը չի կարող անտեղի մարդ սպանել, սպանել հաճույքի համար, ինչպես անում է թուրքը:

Մոսոն չկարողացավ թողնել կնոջը, ծնողներին, գնալ ավելի հեռու, մնաց:

Մնաց այնքան, որ եկավ 1915 թիվը, ու թանձր ամպը կապեց հայ աշխարհին:

Բոլորին՝ հայ մտավորականին, հայ քաղաքացուն, գյուղացուն, ահել-ջահելին՝ տարիք չհարցնելով, սեռ չհարցնելով՝ կոտորեցին: Ջարդ զանգվածային կամ ընդհանուր:

Ֆիդայիները իրար հետ կապ ունեին:

Տեղեկություններն ահավոր էին: Ընդհանուր հավաք սկսեցին անել, քշել, սպանել:

Մինչ այդ արածները ոչինչ համարեցին, հիմա օրենք հայտարարեցին՝ վերջ տալ հայերին: Հայաստանը իրենցը պիտի լինի՝ թուրքերին:

***

Մոսոն մեծ հուզմունքով մտավ տուն, բերանը չէր բացվում, որ խոսի, լավ չէր զգում:

Նայեց կնոջը, երեխային, բոլորին, հազիվ բարևելով՝ ընկավ մի աթոռի. կարծես ոտքերն ուժ չունեին: Գլուխն առավ ձեռքերի մեջ ու սկսեց լաց լինել: Բոլորն իրար նայեցին՝ անզոր հարցնելու պատճառը:

Դուռը բացվեց, ներս մտավ Առաքելը շնչակտուր, նա էլ ասելու բան ուներ, բայց ինչպե՞ս ասել: Բոթ է, գույժ:

Նա էլ էր լսել, լուրը շուտ է տարածվում:

Արեգնազը, մոր ու Փառանձեմի հետ նստած, իրենց անցյալ, հերթական ցավալի, անմոռանալի դեպքերն էին փորփրում:

Կասկածանքով նայեցին իրար, և ոչ մեկը չէր ուզում նոր բան լսել, քանի որ արդեն պարզ էր՝ լավ լուր չէր:

Մոսոն իջել էր սարերից, իսկ Առաքելը թողել էր անասունը հանդում. նոր ցավ է սա:

Բոլորը նստեցին, ու Մոսոն շունչը ծանր խոսեց. «Նոր խազ կինե թուրք միլլաթ, մըզի ջնջել կուզե, տուն-տեղ, մըր կնիկ, մըր հող, մըր հայրենիք: Օրենք լի հանած ջոջեն, պըզդիկ ջելլեթ

ընել կուզի: Կախիլ կուզե մըզի, թրի անցուց քիչ էր, մըկա էլ նոր օրենք: Մըր հող թողինք էրթանք, տուն տեղ ինքը կուզի»:

Արդեն սկսել ու շարունակում է խոսել: Լսել է, որ թուրքերն ուր մտնում են, սպանում են, կախում և ամբողջ ընտանիքին վերացնում, աղջիկ, կին չեն նայում, «օրենք է» ասում են ու անում: Շատ դեպքեր են պատմել, բերանը բաց է մնացել, չէր ուզում պատմել կանանց և քրոջ մոտ. ահը սրտում՝ պատկերացնում էր իր սիրելիներին:

Ինչպես կարող է մարդ այդ տեսակ բաներ անել, անմարդկային, անխիղճ, ինչ գազաններ են դրանք:

Մոսոն հասավ, գրկեց կնոջը, քաշեց քրոջը, փաթաթվեցին, իսկ Առաքելը նայեց կնոջը, ձեռքը երկարեց, որ բռնի ձեռքից ու գլուխը ուժգին խփեց սեղանին, լաց եղավ: Սաթոն վեր կացավ, բռնեց ամուսնու գլուխն ու ասաց.

- Ընչի՞ կիլաս, ես լա կիլամ, արդեն սովրերինք, մըզի ինչեր չըրին, Աստծո պատիժ իրենց գլխուն: Արցունք լը չի գայ, աչքս չորցել:

Ու գրկեց ամուսնուն, երկար շոյեց գլուխն ու լաց եղավ:

Փոքրիկ Վահանը անուշ քնել էր իր օրորոցի մեջ: Երանի՞ իրեն, չգիտի՝ ինչ է կատարվում իր օրորոցից դուրս: Ինչ է արել այդ մատղաշ երեխան, մեղքը ո՞րն է, որ այդ անխիղճները ուզում են բոլորին ոչնչացնել՝ օրորոցից սկսած: Այդ էր հրամանը, և արեցին:

Երեխան ցնցվեց ու աչքերը բացեց, չորս կողմը նայեց, մորն էր փնտրում, ձեռքերը պարզեց ու լաց եղավ: Բոլորը միանգամից սթափվեցին: Մայրը մոտեցավ, գրկեց ու բերեց հոր մոտ: Մոսոն ժպտաց իր արցունքների միջից:

Երեխան արդեն հորը ճանաչում էր. «Ես պետք է քեզ պաշտպանեմ»:

Սաթոն ու Առաքելը իրար նայեցին ու կարծես նույն բանն էին մտածում. «Արդյոք Վաղինակը դո՞ւրս եկավ այս երկրի սահմաններից»:

Դեռ ոչ մի լուր չունեին ոչ մեկից, նրանք խմբով էին գնացել, թե ո՞ւր, դեռ շուտ էր իմանալու համար: Իսկ Վարդից ոչ մի լուր չկար: Երկուսն էլ անհայտ էին: Հիմա ինչ պիտի անեին: Արդեն գիտեին, որ թուրք կառավարությունը գործի է անցել:

Մոսոն և իր ընկերները կապ ունեին մյուս նահանգների ֆիդայի ջոկատների հետ:

Հայկական վեց վիլայեթներում էլ թուրքերը սկսել են դաժան գործողությունները:

Մոսոն մտածում էր իր ընտանիքին նորից տանել իր հետ, արդեն իր համար կարողացել էր մի հյուղակ պատրաստել անտառի մեջ, ուր մնում էր ինքը: Երբեմն ընկերների հետ էր, մինչև տեսներ՝ ինչ պիտի լինի: Մտածում էին, որ այստեղ ավելի ուշ կհանեն, իրենց գյուղը շատ հեռու էր կենտրոնից, սարերի մեջ, բայց ինչպես եղավ, որ եկան, ավերեցին, թալանեցին:

Ճիշտ էր՝ հեռվից, բարձրից հսկում էին ֆիդայիները, բայց խնդիրը բարդ էր՝ ամբողջ գյուղը ինչպես փրկեն. զինված չէին:

Առավոտյան արդեն ամբողջ գյուղը տեղյակ էր, բոլորն ահի, սարսափի մեջ էին:

Ինչ: Երկար մտածեցին, հավաքվեցին գյուղի մեյդանում ու որոշեցին: Ովքեր կարող են փախչել, քայլել, պիտի թողնեն գյուղը, տուն, տեղ ու բարձրանան սարերը, անտառները. գարուն է, տանեն իրենց հետ որոշ պաշար ուտելու համար, բայց սպասեն դեռ, քանի որ մի ճամփա կա գյուղ մտնելու համար, կհսկեն այդ ճանապարհը, երբ որ իրենք ահազանգեն, բոլորը պատրաստ թող դուրս գան ու բռնեն ամեն մեկը իր ընտրած ճամփան՝ գյուղից դուրս գալու համար: Բայց դեռ պետք է սպասեն:

Գյուղի մեծահասակները որոշեցին բեռ չլինել ջահելներին և մնալ ուզեցին: Անտանելի վիշտ էր բոլորի համար և անհավատալի նաև:

Մոսոն երկու օր հետո ընտանիքին տարավ իր մոտ, իր պատրաստած հյուղակի մեջ, որը սարքել էր քողարկված մուտքով, ծածկված այնպես, որ կողքից անցնողը չէր նկատում:

Պարզ էր, ընդմիշտ մնալու համար չէր, բայց վերադարձ էլ չէր լինելու: Մտածել էր՝ այնտեղից էլ, երբ դրությունը փոխվի, պիտի շարունակեր ու շարունակեր. ինչպես ուրիշները, այնպես էլ իրենք:

Մոսոն մտածում է. «Այո՛, լավ է հայրենիքը, իր հողը, իր ջուրը, իր ծննդավայրը, բայց ազա՛տ հայրենիքը, անկա՛խ հայրենիքը, եթե ոչ, ուր հաց, այնտեղ կաց: Երբ դու քո կյանքի տերը չես, երբ ուրիշն է որոշում՝ դու պիտի ապրես, թե ոչ, ուրեմն գլուխդ ազատի՛ր, եթե կարող ես»:

Պայմանավորված էին, պետք էր սպասել, դեռ թող վայելեն իրար: Մի մարդու նման ամբողջ գյուղը գնաց գերեզմանոց՝ մնաս բարով անելու վերջին անգամ իրենց սիրելիների շիրիմներին, քանի դեռ ժամանակ ունեին:

***

Ձմեռն իր սարսափելի ցուրտը ետևում էր թողել: Ձյունը, որ ծածկել էր դաշտ ու սար, հալվում էր ու լցնում գետ ու առուն, բայց դեռ սառնություն կար, և եղած սարսափելի լուրերի հետ մեկտեղ մարդիկ սարսռում էին:

Արդեն ջերմության չէին սպասում, կորցրել էին այն ցանկությունը, որ ունեին՝ գարնանը բացվելուն պես իրենց բաղ ու բախչան մշակելու, հանդ ու դաշտ գնալու: Մուժ ու մշուշը

կապել էր ու չէր թողնում՝ արևը թափանցի, օրը պայծառանա: Մուժը թափանցել է ամեն տեղ, նաև սրտերի մեջ: Խեղճ մշեցի, այժմ իր ճակատագիրն էր խաղի մեջ: Որոգայթ ընկած՝ փնտրում էր ելք՝ դուրս գալու այդ խաղից:

Գոնե իրենք լուրը ֆիդայիներից գիտեին նախօրոք, բայց ինչ անեին նրանք, որոնք տեղյակ չէին: Արդեն գիտեին, թե ինչի է ընդունակ թշնամին: Այսօր, ինչպես գիտենք, ոչ ոքի հայտնի չէ՝ ինչն էր պատճառը այդքան թշնամության: Հայը միշտ սիրել է գիրը, եղել է աստվածավախ: Ունեցել է մտավորականներ:

Ժողովուրդը եղել է աշխատասեր, տիրապետել է շատ արհեստների, եղել ոսկերիչ, դարբին, կոշկակար, դերձակ ...

***

Արդեն բոլորը պատրաստվում էին՝ հաշտվելով այն մտքին, որ պիտի թողնեն իրենց տունը, բույնը, բաղ ու այգի, հանդ ու դաշտ, դուռ ու փաչա, ինչպես ասում էր մշեցին: Ունեցածի ամենափոքր մասը պիտի վերցնեն՝ անհայտության ճամփան բռնելու համար:

Ֆիդայիների ահազանգով գյուղը մեկ մարդու նման ընկավ ճամփա: Փոքրիկ խմբերով, տարբեր ուղղություններով բարձրանալ սկսեցին սարերը՝ իրենց հետքը կորցնելով: Սարերը մերկ չէին, ծածկված էին ոչ այդքան փարթամ անտառներով: Ծառերը սկսել էին կանաչել. գարուն էր:

Բոլոր սրտի ցավով, աղի արցունքով հեռացան իրենց վաթանից, ոմանք, թողնելով ծնող կամ բարեկամ, անկարող քայլելու: Շատ մայրեր երեխաները կապեցին իրենց մեջքին շալերով ու ճամփա ընկան՝ վերցնելով միայն մի քանի օրվա ուտելիք իրենց հետ:

Գյուղացիները երկու օր առաջ էին արդեն գնացել, երբ թուրք

ասկյարները եկան: Ո՛չ մարդ կար, ո՛չ ջահել, ո՛չ աղջիկ. մնացել էին մի քանի մեծահասակ, որ երկար քայլել չէին կարող:

Երբ բացեցին տան դռները, տեսան՝ դատարկ է, ոչ մեկը չկար: Մեծ հույսով էին եկել՝ մտածելով մեծ ավարի մասին, բայց այն, ինչ իրենց էր հետաքրքրում, չկար:

- Գյավո՛ւր, որտե՞ղ է տղադ, ո՛ւր է ոսկին, ո՞վ ասեց, որ գալիս ենք:

Սեթոն բարձրացրեց գլուխը և ուղիղ նայեց թուրքի աչքերին:

- Եխտյա՛ր, քեզ հետ եմ խոսում, ո՛ւր է տղադ, վախենո՞ւմ ես, հա՛:

- Բուրդա՛ իմ, թո՛ւրք քյոփակ, այստեղ եմ: Ի՞նչ է ուզածդ:

Մինչև թուրքը շուռ եկավ տեսնելու, թե ով է խոսողը, որ հրացան ուղղի վրան, Ղազարը ձեռքի դանակը հեռվից նետեց ուղիղ թուրքի կրծքին:

Թուրքը աչքերը բաց ընկնավ ծնկների վրա ու փռվեց գետնին:

Սեթոն, երբ տեսավ որդուն, աչքերը փայլեցին, վազեց դեպի թուրքը, դանակը քաշեց կրծքից, ասաց.

- Լա՛ւ, լավ որ եկար, ըսի՝ մեռուկ եմ:

- Ո՞ւր մեռնիս, մեռցում հերիք եղավ ըդոնց:

Հորը թողնելով՝ հրացանը պահեց տան մեջ, դանակը վերցրեց, դուրս եկավ տանից՝ դուռը փակելով:

Կողքի տանը մարդ չկար, բաց էր դուռը: Վազելով հասավ Անգինի՝ իր կնոջ ծնողների տունը. շատ հեռու չէր: Դուռը բաց էր: Կատաղած թուրքը բարձր խոսում էր. այն ժամանակ ներս մտավ, երբ զոքանչին գցել էր գետնին ու տնտղում էր շորերը, ոսկի էր փնտրում: Մարիամը լաց լինելով խոսում էր՝ լավ

չիմանալով թուրքերեն: Ասում էր, որ չունի ոսկի, պնդում էր, բայց թուրքը չէր հավատում: Ղազարը ասաց.

- Ինչ է ուզում քեզանից այս անաստված թուրքը:

Թուրքը գլուխը թեքեց՝ տեսնելու ներս եկողին, սակայն չհասցրեց վեր կենալ, փռվեց գետնին. դանակը թիկունքից մտել էր արդեն:

Մարիամը փրկվեց, սկսեց օրհնել Ղազարին՝ փեսային:

Այդ օրը երկու ժամում նույնքան թուրք հոգի տվեց իրենց հայրենակիցների արած անընդունելի արարքների համար:

Մշեցին սիրում է արդարությունը, որքան էլ բարի լինի:

Բոլոր տղաները պայմանավորված իջել էին՝ իրենց գյուղում թողած հարազատներին փրկելու համար: Ոմանց հետ դատաստան տեսան, ոմանք էլ փախան:

***

Համագյուղացիները արդեն որոշել էին չվերադառնալ. կշտացած այդ կյանքից՝ որոշել էին տեղ գտնել, ապրել ուրիշ կյանքով: Այդ խուլ գյուղում մինչև երբ պիտի մնային, այն էլ անհանգիստ սրտով. հոգնել էին: Որոշել էին հեռանալ:

Այն քրդերն ու թուրքերը, որոնք ապրում էին այդ գյուղում՝ անտեղյակ այս որոշումներին, շուտով զարմացան, որ մնացել են մենակ: Ամբողջը՝ բոլոր արտերը, ունեցվածքը, կենդանիները, մնացին իրենց:

Գյուղացիները սովոր էին սարերին, սարի, քարի հետ կռիվ տալով՝ ամենքն էլ գտան իրենց ճամփան, բայց միայն սարերով:

Պայմանավորվել էին բոլորը, որ մի ուղղությամբ պիտի գնան, դեպի ծով: Սև ծով:

***

Մոսոն շատ ավելի շուտ էր տարել իր ընտանիքին քողարկված տնակը. այն փոքր էր, բայց ապահով: Մտածեց մի քանի օր էլ մնալ, որպեսզի հանդարտվեր, որ ճամփա ընկնեին իրենք էլ: Մոսոն էլ իր ընկերների հետ իջել էր գյուղ այդ օրը, շատ դժվարություն էին տեսել բոլորն էլ:

Իր պատրաստած դանակները մեծ օգուտ տվեցին իրենց, այն ավելի հեշտ էր օգտագործելը, քան հրացանը: Դիմացինը նույնիսկ չէր պատկերացնում, որ այդքան արագ պիտի պարտվի: Այնուհետև տղաները հավաքեցին զենքերը, տարան իրենց հետ:

Օրերը տաքանում էին: Արևը սկսեց ճառագայթներն ուղարկել՝ ճեղքելով թանձր մշուշը:

Առաքելը գտել էր երկու էշ, որոնցից մեկի վրա դասավորեցին հարմարանք երեխայի համար, որ պառկի հանգիստ, մյուսին բարձել էին ծածկոցներ, ուտելիք, ջուր: Այդպես ընկան ճամփա:

Ամեն օր անցնում էին մի քանի սար: Առաջին երկու օրը հանգիստ էր շրջապատը, ավելորդ շարժում չկար: Բայց իրենք շատ էին հոգնում, ոտքով որքա՞ն կարող էին քայլել: Նստում, ելնում, նորից քայլում:

Ուժասպառ գիշերը փաթաթվում, նստում էին ծառի տակ, կիսաքուն հսկում:

Առավոտյան, երբ լուսացավ, նկատեցին՝ հեռվից մի գյուղ է երևում: Մոսոն մտածեց մոտենալ գյուղին, բայց չհամարձակվեցին: Գիտեր, որ հայկական գյուղ է, դեռ շատ չէին հեռացել, շրջապատին ծանոթ էին: Առաքելն ու Մոսոն, իրար սիրտ տալով, ուզեցին գնալ ու տեսնել, թե ինչ վիճակում է այդ գյուղը, միգուցե նույնը չի եղել իրենց համար: Գուցե կարողանային

ուտելիք գտնել, ձի էր պետք նաև, որքա՞ն կարող են ոտքով քայլել հոգնած, սոված, ծարավ:

Ոտքերի չարոխները մաշվում էին արդեն: Կամ եթե հանդարտ լինի գյուղը, միգուցե որոշ ժամանակ կարողանային մնալ:

Երկուսով գնացին: Մինչև գյուղին մոտենալը տեսան դաշտում մի քանի ոչխար, որ արածում էին հեռացած տներից:

Ավելի մոտենալով՝ նկատեցին մի ծերուկի, որը ոտքը քաշ տալով, մռմռալով շրջում էր տան բոլորը: Ավելի մոտեցան, մարդը վախեցած նայեց, բայց չխոսեց:

Առաքելը խոսեց՝ իմանալու համար հայ է, թե ոչ: Հայ էր. մոտեցան:

Ծերուկը պատմեց դեպքերը ցավալի. ինչպես են եկել, բոլորին ծեծ ու ջարդով հանել-տարել են, իրեն էլ խփել, գցել, վիրավորել, բայց թողել հեռացել են, չիմանալով, որ ողջ է:

Երբ ուշքի է եկել, տեսել է՝ մարդ չի մնացել: Բայց հեռվից լսել է լաց ու կոծ, աղմուկ:

Չի կարողացել վեր կենալ ոտքի ցավից: Տարել էին նաև իր ընտանիքի անդամներին:

Մարդը ասաց, որ միայն թուրքերը չէին, կային քրդեր իրենց հետ. «Տարան, ո՛ւր տարան՝ չիմացա: Ոտքս շատ էր ցավում, չկարողացա իմանալ, թե արդյոք մեկն էլ ինձ նման մնացել է, թե ոչ»:

- Հիմա չըմ գինա, մարդ մացեր, սաղ, մեռուկ: Գինամ իմ կճուճ օսկին լը տարած:

Ու լաց էր լինում, մրմռում իր ընտանիքի համար:

Ոչ մի շարժում չկար շրջապատում, լուռ էր:

Մոսոն ու Առաքելը մի քիչ շրջեցին, ձայն տվեցին, պատասխան չկար: Ծերուկն ասաց, որ մի օր առաջ քրդերն են եկել, մեծ անասունները քշել-տարել: Քրդերի աչքը լույս, նրանք էլ օգնում էին թուրքերին:

Մոսոն տեսել էր մի ձի, ասաց.

- Տանենք, գոնե հերթով նստեն կանայք, հանգիստ կլինեն որոշ ժամանակ:

Ծերուկից հարցրին՝ ինչպես ճանապարհը շարունակեն:

Ասաց, թե ուզում են դուրս գալ երկրից, պիտի գնան Ստամբուլ. այնտեղից ավելի հեշտ կլինի իրենց համար:

Դեռ շատ երկար էր ճամփան, բայց մարդիկ հաղթահարում էին:

Ուտելիք գտան, հաց, տարբեր տներից վերցրին ինչ մնացել էր, բարձելով ձին, գնացին:

Ծերուկը բարի մաղթեց ու ասաց.

- Իմ նաֆար տարած, ես հոս մռնիմ, բան չկա:

Կարող էին շատ բան տանել, բայց չտարան:

***

Այդպես շարունակեցին ճամփան դեպի հյուսիս-արևմուտք, իրենք էլ չգիտեին՝ որն է հյուսիս, հարավը, արևին էին նայում ու գնում, երբեմն էլ շեղվում:

Ձին ահագին օգնեց իրենց առաջ գնալու համար. ով հոգնում էր, մի քիչ նստում էր ձիու վրա, հանգստանում: Նաև շատ չկանգնելու միջոց էր սա:

Արդեն երրորդ օրն էր, արևը մայր մտնելու վրա էր, Մոսոն ձին ու էշերն առաջն արած՝ մտան դիմացի անտառը:

Առաքելն ասաց, որ այսօր հերիք է, շատ են քայլել, բայց դեռ ժամանակ կար մութն ընկնելուն: Մի քիչ առաջացան ու կանգնեցին: Բոլորն իջան, ծածկոց փռեցին ու նստեցին: Դեռ չէին տեղավորվել, հանկարծ մոտիկից ճիչեր լսեցին:

Մոսոն ու Առաքելը, ականջները ձայնին, կամաց գնացին այդ ձայների ուղղությամբ: Ծառերի ճյուղերի արանքից տեսան մարդկանց անորոշ շարժումներ, լսեցին ճիչեր: Ուշադիր նա-

յելով՝ տեսան, որ տղամարդիկ ընկել են կանանց վրա, ծեծում, հրմշտում են, և կանայք դիմադրելով ճչում են, խնդրում, աղաչում:

Մոսոն չդիմացավ, մտածեց՝ հայ աղջիկներ են, վազեց այդ ուղղությամբ, Առաքելը՝ հետևից: Մոտենալով գոռացին, ու Մոսոյի ձեռքի դանակը ուժգնորեն մեկի ուսի վրայով խրվեց կոկորդի մեջ, սա ընկավ, մյուսը փախչել ուզեց, նա էլ Առաքելի զոհը դարձավ:

Ճիշտ ժամանակին հասան: Կանայք վեր կացան լաց ու կոծով, վախեցած՝ կարծելով, որ սրանք էլ թուրքեր են, որովհետև ծպտված էին թուրքական հագուստներով: Առաքելը ասաց, որ հայ են: Այդ ժամանակ հանգստանալով վեր կացան, և միասին գնացին:

Առաքելն ու Մոսոն տեսան հեռվից գնացող մի մեծ խումբ, որի ծայրը չէր երևում, բայց իրենք հեռու էին: Ցավելով հեռացրին իրենց աչքերը, մտածելով ուրիշ ոչինչ չէին կարող անել, գոնե այս երկու աղջիկներին տանեն իրենց հետ:

Երկու գեղեցիկ աղջիկներ էին, կարծես քույրեր լինեին: Հետո պարզվեց, որ հորեղբոր աղջիկներ են:

Մոսոն և Առաքելը ուրիշ բան չունեին ասելու, որտեղ թողնեին երկու երիտասարդ գեղեցիկ հայ աղջիկներին: Մեկի անունը Սիրուն էր, մյուսինը՝ Ալվարդ: Երբ եկան ու միացան նստածներին, Սաթոն նստած տեղը գլուխն առավ ձեռքերի մեջ, սկսեց ողբալ, մրմունջ ձայնով երգել ու գլխին խփել:

Հիշեց իր Վարդին, յարաբ ո՞ւր է հիմա, կա՞, թե՞ մեռած է:

Առաքելը մոտեցավ, նստեց գետնին ու գրկելով կնոջը ասաց. «Մի՛ լա, մեկն կորցուցեր ինք, երկուսն գտեր ինք, մի՛ լա»:

Բայց նա իրենն էր ուզում իր որովայնի պտուղն էր ուզում ու շարունակեց լաց լինել:

***

Շատ չանցավ, մթնեց. ոչ մի բան չկերած՝ բոլորն էլ շատ հոգնած էին: Տղամարդիկ հերթապահում էին, իսկ կանայք կես քուն, կես արթուն լուսացրին այդ գիշեր:

Անուշն ու Ալվարդը ոչ մի բան չխոսեցին և չիմացան նաև, թե ով այդ խմբում մյուսին ինչ էր գալիս: Փոքրիկ Վահանը միայն ուտում քնում էր, դեռ շատ փոքր էր: Պատահած ջրի կամ առվի մեջ լվանում էին կեղտոտ շորերը, կախում էին էշի չորս կողմը, չորացնում, շարունակում էին ճամփան: Աղջիկներն իմացան, որ իրենց ճամփան էլ է գնում նույն ուղղությամբ, դեռ կարգին ոչ մի խոսք չէին փոխանակել, միայն հարցրել էին անունները ու լսել. «Կերե՛ք, գնացի՛նք»:

Այդ օրն էլ դժվար անցավ, արդեն ուժ չէր մնացել: Բոլորի ոտքերը տնքում էին քարի, հողի մեջ: Չարոխները մաշվել էին, պետք էր մի բան մտածել: Դեռ ուտելու բան կար, չնայած որ ամեն ինչին խնայողաբար էին մոտենում:

Երեկոյան, երբ հարմար տեղ գտան գիշերելու, հավաք նստեցին, իրար նայեցին ու բոլորի գլխում միտքը գործում էր, տեսնում էր, լսում էր, խոսում էր: Խոսում, լսում, սիրում իրենց հարազատին՝ մորը, հորը, եղբորը, քրոջը, զավակին, ինչո՞ւ չէ, սիրեցյալին: Ու բոլորը լուռ էին: Ո՞վ պիտի խոսքը բացի, ո՞վ սիրտ ուներ խոսելու: Բոլորն էլ վշտի մեջ լողում էին:

Հանկարծ Սաթենիկը խոսքն ուղղեց աղջիկներին, ասաց. «Աղջիկնե՛ր, ուսկա՞ց գիքաք ըդմալ, կկարծի՛մ՝ ձեր գեղ հեռու չէ մըրից: Մըր գեղի անուն Չմըրլու կըսին»:

- Մենք լը կողի գեղից ինք:
- Աղչի՛, ո՞ւմ աղջիկն իս:
- Սեթոյի:

- Իմմալ Սեթոյի, մըր գեղի Աղունի աղջի՞կն իս, դու լը մեկե՞լ աղբոր աղջիկն իս:

Ու անմիջապես խնամի դուրս եկան:

Աղջիկները տխուր աչքերով իրար նայեցին, մտածեցին, որ օտարներ չեն, ու հանգստացան:

Այդ ժամանակ խոսակցությունը շարունակվեց: Աղջիկները սկսեցին պատմել, թե ինչեր են արել թուրքերը: Ինչպես են մտել գյուղ, ինչպես են հավաքել բոլորի հարստությունը՝ մարդկանց ծեծելով, սպանելով, նույնիսկ մեկին կախել են, վախեցրել, հանել-թափել են ինչ ունեն-չունեն: Այդ բոլորը հավաքելուց հետո մեկ-մեկ մտել են տները, բոլորին հանել տներից, մեծ ուժով հավաքել, ծեծ ու ջարդով համախմբել ու մտրակների տակ ստիպել քայլել ու տարել են: Վայնասունները երկինք ելան: Խլացուցիչ կանչեր՝ իրար գտնելու ու մոտենալու համար: Ընտանիքի անդամները, իրար փնտրելով, քայլում էին: Քայլում էին առանց կանգ առնելու, ուղեկցված զինված ասկյարներով, որոնք բոլորին վախի մեջ էին պահում: Ընկնողին միանգամից հրացանների կոթով խփում էին կամ խշտիկը մտցնում մարմնի մեջ, որ մեռնի:

Իրենց համար մեկը պակաս լինի, ավելի լավ, մեկ է, բոլորը պիտի մեռնեն. դա արդեն բոլորն են հասկանում:

Աղջիկները հեկեկալով պատմում էին՝ իրար հերթ չտալով, իրենք ամեն ինչ տեսել էին:

Երեկոյան դեմ, երբ արդեն արևը մայր պիտի մտներ, երկու զինվոր երկու աղջիկներին հանում են շարքերից: Երկուսը, իրար ձեռք բռնած, կարծես իրար ուժ տալով, քայլում են: Այստեղ էին մայրերն ու հայրերը, կային նաև Սիրունի երկու եղբայրները՝ Գևորգը և Գեղամը, ու Ալվարդի մի եղբայրը՝ Բենիամինը:

Մեծ ծնողները արդեն մեռցրած են եղել:

Երբ հանում են շարքերից աղջիկներին, հայրերը ընդդիմանում են, հարձակվում զինվորների վրա, նրանց խփում, գլորում են գետնին, լավ ծեծում: Աղջիկները հեկեկալով պատմում էին: Այնուհետև, իրենց քարշ տալով, մտցնում են անտառ:

Շատ երկար է տևում պայքարը իրենց ու զինվորների միջև, մինչև Մոսոն և Առաքելը միջամտում են: Աղջիկները ահագին խորացել էին անտառի մեջ, փախել ձեռքներից, բայց ապարդյուն, վերջում նորից բռնել էին: Սարեցի մշեցիները ցույց էին տվել իրենց քաջությունը մինչև Մոսոյի և Առաքելի հասնելը:

Աղջիկների խոշոր գեղեցիկ աչքերից թափվում էին արցունքները, մյուսները չգիտեին՝ ինչպես մխիթարեն, քանի որ իրենց էլ մխիթարող էր պետք:

Մոսոյի ու Առաքելի բարկությունը գնալով ատելության և ոխերիմության, գազանության էր հասնում: Իրենք իրենց նսեմացած էին զգում, անկարող. «Թուրք ծալե մըզի»: Արդյոք կմոռացվի՞ ու կներվի՞ այդպիսի անմարդկայնությունը: Ո՛չ, չի ներվի:

Եվ դա դեռ երկու գյուղերն են, բայց Մոսոն լսել էր՝ դա ամբողջ հայ ժողովրդի համար էր նախատեսված: Ինչպե՞ս կարողացան այդ հրամանը հանել և ինչպե՞ս կարողացան իրագործել:

Հետո պարզվեց, որ միայն թուրք իշխանության ու զինվորների գործը չէր դա, նրանց աջակցեցին թուրք ժողովուրդն ու քրդական ցեղը նաև:

Այդ գիշերը շատ երկար տևեց, բոլորի աչքերը բաց մնացին մինչև լուսաբաց: Բայց պիտի քայլեին, ինչպե՞ս, առավոտվա դեմ բոլորը քնեցին և երկու ժամ հանգստացան:

Երբ զարթնեցին, արևն արդեն ելել էր անհոգ:

- Օրը բացվել է, վե՛ր կացեք, պիտի շարունակենք:

Բոլորը վեր կենալով հոսող առվակի ջրով երեսները լվացին, երեխային մայրը կերակրեց, ու ճամփա ընկան:

Երեխան միշտ հանգիստ էր, երբեք լաց չէր լինում, միշտ կուշտ էր բարեբախտաբար, էշի մեջքին հանգիստ օրորվելով գնում էր՝ օրվա մեծ մասը քնած:

Փառանձեմը՝ Մոսոյի քույրը, միշտ լուռ, մտազբաղ հետևում էր խմբին, ծնողների վիշտը՝ սրտում, ուրախ էր գոնե, որ եղբայր ունի կողքին: Ինչո՞ւ մի ուրախ բան չկար, որ իրենք էլ ուրախանային. այս է հայ ժողովրդի ճակատագիրը, ինչ արած: Երեք աղջիկները կամաց- կամաց սկսեցին զրուցել իրար հետ, մտերմացան: Ավելի շատ զբաղվում էին երեխայի հետ, իսկ երբ առանձին էին, մռայլ էին, մտազբաղ, ամեն մեկը՝ իր աշխարհի մեջ, քայլում էին՝ միայն իրենց ոտքերի տակը նայելով:

Արդեն վեցերորդ օրվա վերջն էր:

Նորից հարմար տեղ էին փնտրում. հասել էին ջրի մի փոքր ավազանի:

Սարերից եկած ջրերը հավաքվում էին, գյոլեր կազմում Սասնա լեռների մեջ: Քայլո՛ւմ, քայլո՛ւմ էին, բայց գտնվում էին նույն տարածքում, որքա՜ն պիտի քայլեն, որ մի քաղաքի հանդիպեն, չգիտեն:

Փնտրում են մի բնակավայր, թեկուզ գյուղ, թուրքի լինի թե հայի, մեկ է, իրենք արդեն քողարկվել էին, ոչ մեկը չէր իմանա իրենց ազգությունը: Իրենց պետք էր ոտնամաններ գնել:

Գնում էին սարերով, անհարթ արահետներով, պետք էր, որ հասնեին ծովին: Շատ չէին մոտենում ճանապարհներին, գնում էին ավելի բարձր, ամայի տեղերով, ձորերը վտանգավոր էին, ջուր կար, գետ կար անցնելու, կանայք ու երեխա կային, դժվարություն կունենային:

Այդ գիշեր էլ անցկացրին, զով էր գիշերը:

Ամեն գիշեր Արեգնազը գրկում էր իր երեխային, սեղմում կրծքին, տաքացնում:

Մինչև այսօր ոչ մի նեղություն չտվեց ոչ մեկին, խելոք ուտում, խելոք քնում էր:

Արդեն հինգ հոգի էին իրեն գրկողները, հինգ փափուկ գիրկ, բոլորն էլ կարոտ ունեին և իրենց կարոտը երեխային գրկելով էին առնում, բոլորն էլ կարիք ունեին մեկին սիրելու:

Հաջորդ օրը մոտեցան մի բնակավայրի, վերևից էին նկատել, ստիպված ուղղությունը փոխեցին ու իջան: Այդտեղ քրդեր ու եզդիներ էին ապրում: Առաջին տեղեկությունը դա եղավ, ավել ոչինչ չկարողացան իմանալ:

Խոսում էին միայն տղամարդիկ, չնայած որ բոլորն էլ քրդերեն գիտեին: Առաջին գործը եղավ փնտրել մեկին, որ չարոխներ կարեր իրենց համար, ուրիշ բան պետք չէր իրենց. դա էր կարևորը: Այդ ժամանակ իրենց կոշիկ պետք չէր:

Բոլորի համար երկուական կարել տվեցին: Գյուղացիներից սնունդ գնեցին: Առաքելն էր վճարում այդ ամենի համար: Մոսոն ուզեց ձի գնել, եզդին երկու ձի ձրի տվեց՝ ասելով, որ կարող են տանել, արդեն ծեր են, բայց դեռ կարող են ծառայել:

Անմիջապես ճամփա ընկան, բավական շեղվել էին արդեն: Այնտեղ Առաքելը եզդուն հարցրեց, թե ինչ գիտեր հայերի մասին:

Մարդը պատասխանեց, որ սարսափելի բաներ են պատմում հայերի մասին, բայց այդ տեղերով չեն անցել, հայ չկա:

Ուրեմն, թուրք կառավարությունը լավ էլ գիտեր՝ որտեղ փնտրել հայերին:

Ամբողջ օրը քայլելուց հետո հեռվից տեսան մեկ ուրիշ գյուղ: Մոսոն ասաց, որ ուզում է գնալ, տեսնել՝ ինչ գյուղ է դա:

Արդեն ձի կար, ավելի հեշտ էր:

Գնաց, անմիջապես հետ եկավ, ասաց, որ միայն եզդիներ են

ապրում, որ խոսել է մեկի հետ, թե կարող է տանել ընտանիքը գիշերելու, քանի որ շատ հոգնած են: Եզդին համաձայնել էր:

Եզդին քրդերեն բարևեց է, շատ սիրով ընդունեց իր տանը: Կին և մի երեխա ուներ:

Երիտասարդ էր և շատ գեղեցիկ կին ուներ:

Կնոջ անունը Գյուլիզար էր: Գյուլիզարն անմիջապես գետնին՝ գորգի վրա դրված ցածր ու ծանր սեղանին լցրեց թոնրի հաց, պանիր, մածուն, կարագ, թեյ պատրաստեց և հյուրասիրեց: Ուտելուց հետո փռեց փափուկ բրդից անկողինները գետնին և թողեց, որ բոլորը, ինչպես ուզում են, տեղավորվեն, իրենք էլ՝ մարդ ու կին, երեխայի հետ միասին տեղավորվեցին թոնրատանը:

Այդ գիշեր հանգիստ քնեցին բոլորը:

Քնեցին, քնեցին անմիջապես:

Այդքան վշտից հետո այդ փափուկ անկողիններն իրենց միտքն ու հոգին մեղմեցին, հանգստացրին: Այդ գիշեր ոչ մեկը ոչինչ չհիշեց, մոռացել էին ամեն ինչ: Այո՛, շատ շուտ էր դեռ մոռանալու համար, բայց կյանքը մեկի համար կանգնում է, մյուսի համար՝ շարունակվում և այնքան շատ են մտածելու բաները, որ երբեմն ստիպված է մարդ մոռանալ, բայց այս մեր փոքրիկ խումբը դեռ չգիտեր այս դեպքերի ահռելիությունը, ո՛չ, երկու դար էլ անցնի, երեք էլ, հայը չի մոռանա:

Առավոտյան, բոլորը վեր կացան, միայն Արեգնազը գլուխը չէր կարող բարձից բարձրացնել, դեմքը՝ կարմրել, գլուխը ցավում էր:

Բոլորը խառնվեցին, մայրը սկսեց լաց լինել: Ամուսինը հարցերի մեջ կորցրեց կնոջը:

Ուզում էր իմանալ՝ ինչն էր ցավում: Պարզվեց, որ ջերմություն ունի, այն էլ բարձր:

Վերմակը քաշեց գլխին ու լաց եղավ, հիմա ինչ անի, ինչպես կուրծք տա երեխային: Ինչպես պիտի քայլի:

Տանտիրուհին ասաց. «Դուք ոչ մի տեղ չեք կարող գնալ, շատ հիվանդ է հանըմը»:

Ամուսինն անասունին տարել էր արոտ՝ կապի, գա: Շուտ վերադարձավ, որ մարդկանց ճամփու դնի: Երբ իմացավ, որ կինը հիվանդ է, նա էլ չուզեց, որ գնան, թող մնան, մինչև լավ լավանա, հետո կգնան, օրերը գնալով տաքանում են, այնպես որ չի կրկնվի հիվանդությունը:

Այստեղ էլ չէին ուզում, որ իմացվի իրենց հայ լինելը, բայց երկար չկարողացան պահել, որովհետև «թուրք ենք» ասել էլ չէին կարող:

Ավելի շուտ չուզեցին շատ ելումուտ անել, որ չտարածվի, չիմանան իրենց ներկայությունը գյուղում:

Եզդիներն էլ հասկացան, որ պետք չէ, ժամանակները խառն են: Մեծ սիրով պահեցին իրենց հյուրերին: Արեգնազը երկու օր երեխային չկերակրեց, կովի կաթ տվեցին, այնուհետև շարունակեց տալ, որովհետև ճամփան դեռ պիտի շարունակվեր:

Հինգ օր անցավ ու Արեքնազը լավացավ: Ահագին փոխվեցին, աղջիկները ավելի մտերմացան:

Նորից ճամփաներ սարերով, անտառներով:

Ամեն կերպ խուսափում էին քաղաքներ մտնելուց, միշտ շրջաններով, միայն պետք եղած դեպքում ու միշտ հյուսիս-արևմուտք: Երկար քայլեցին, քսան օրից ավելի եզդիների գյուղից դուրս գալուց հետո: Օրերն արդեն տաք էին: Երբ հասան քաղաքամերձ վայրերը, թողեցին էշն ու ձին, սկսեցին տեղափոխվել կառքերով, սայլերով: Իհարկե, շքեղ կառքեր չէին, ուղղակի փոխադրամիջոց էր, ու վճարում էին դրա համար: Եղան մի քանի իջևաններում:

Քայլում էին առավոտից իրիկուն, գրեթե առանց կանգնելու: Շատ ժամանակ փնտրում էին անմարդաբնակ, ամայի տեղեր, առանց ճամփաների, միայն ճիշտ լիներ ուղղությունը: Սարերի մարդիկ էին, կարողանում էին հնար գտնել:

Ինչպես տեսանք, ամբողջ գյուղը փախավ տարբեր ուղղություններով, բայց բոլորի նպատակն էր ծովին հասնելը: Այդքան ճամփա անցան ոչ մեկը ոչ մեկին չհանդիպեց:

Այսպես հասան Ստամբուլ՝ միշտ թուրք ձևացած ու ծպտված արտաքինով. հագնում էին թուրքի հիշեցնող մի բան, իրենք էլ՝ եկած հետամնաց գյուղից. ոչ մեկն էլ չէր կասկածում, որ հայ են: Գիտեին քրդերեն, մի քիչ էլ թուրքերեն:

Ստամբուլը մեծ քաղաք է: Գտնվում է Եվրոպայի և Ասիայի սահմանում, Բոսֆորի նեղուցի վրա, որով բաժանվում են նաև Մարմարա և Սև ծովերը:

Որոշեցին մի քիչ դադար առնել, մնալ այստեղ, տեղեկություններ հավաքել:

Հասկանալ ինչ անել, որտեղ գնալ, ում դիմել:

Մոսոն ու Առաքելը, հասնելով Ստամբուլ, իրենց կորած համարեցին: Հանգիստ քաղաք չէր, մեծությունը նախ, հետո բոլորը շտապ վազքի մեջ, իրար հանդիպելու ժամանակ իրար չէին նայում, ոչ մեկին մոտենալ չէր լինում, ոչ մեկը չէր պատասխանում տված հարցին «յո՛ք, բիլմեմ» ո՛չ, չգիտեմ, ու վերջ:

Շատ դժվար պիտի լինի հետագան. անծանոթ տեղ, մեծ քաղաք, Մոսոն և Առաքելը առաջին անգամ են լինում այսպիսի հսկայական քաղաքում: Իրենք իրենց փոքրիկ գյուղերին էին սովոր: Ճանաչում էին իրենց շրջապատի ամեն մի քարը, սարը, ծառն ու ճյուղը: Շրջապատի բոլոր գյուղերը: Հիմա անտեղյակ կանգնած՝ ո՛չ հյուսիսը գիտեն, ո՛չ հարավը: Ոչ մի հարցի պատասխանող էլ չունեն: Վախենում են հարցնել մեկին. «Հայ կա՞մ, թե՞ ոչ»:

Ո՛չ, հայ չկա, բոլորին քշել են դեպի անապատները, իրենց եկած ուղղության ճիշտ հակառակ կողմը:

Ամբողջ երկիրը մաքրել են հայերից այդ շատ կարճ ժամանակամիջոցում: Ինչպե՞ս արեցին, ինչպե՞ս հաջողվեց. այդ ի՞նչ կազմակերպություն էր: Իսկ եթե հայեր կան էլ, պահել են իրենց հայությունը, իսկ ոմանք էլ փոխել են անունն իրենց:

Ի՞նչ անեին. կյանքը քաղցր է:

Մոսոն և Առաքելը գտան մի հյուրանոց քաղաքի ծայրամասում, տեղավորվեցին:

Հետո՞, հետո ի՞նչ պիտի լինի:

Մոսոն թողեց բոլորին, որ հանգստանան, ինքը դուրս եկավ՝ մտածելով շրջել, շրջապատը ուսումնասիրել. միգուցե մեկին հանդիպի ու մի տեղեկություն մեկից պոկի:

Արեքնազը շատ է վախենում, խնդրում էր զգույշ լինել, ամեն մարդու հետ չխոսել, խոսելիս էլ ուշադիր լինել:

Շատ չանցած՝ Մոսոն վերադարձավ մի մարդու հետ՝ Ղազարի: Երբ երկուսով ներս մտան, մեծ զարմանքով դիմավորեցին նրան, ու գրկախառնվեցին: Մեծ անակնկալ էր, մեծ ուրախություն: Մենակ չէին:

Ղազարի ընտանիքն էլ մեծ դժվարությամբ փնտրել ու գտել է ծովը, տարբեր սարերի վրայով, Աստծո շնորհիվ հասել նպատակակետին:

Իրենք ինչեր են տեսել, ինչերով անցել՝ դա հետո կտեսնենք:

Այժմ կարևորը՝ ինչպես շարունակել այդ դժվարին ճամփան, դա էր կարևորը:

Նրանք էլ մեկ օր առաջ էին եկել այս խելակորույս քաղաքը: Խեղճ հայ գյուղացին իրեն կորած էր համարում այստեղ: Սովոր են եղել ազատ, օդասուն սարերին, այստեղ բարձրահարկ շենքերը խեղդում էին, ազատ տարածություն էլ չկա, որ տեսնես հեռուն: Պետք է լավ մտածել:

Ղազարը լավ լուր ուներ, մոտեցել էր նավակներին, լաստանավերին, որոնք գնում գալիս էին Բոսֆորի նեղուցով: Հաս-

կացել էր, որ դրանցով մարդկանց են տեղափոխում. դա իրեն շատ էր հետաքրքրել, որովհետև մյուս ափն էր ձգում իրեն:

Այնտեղից պետք էր շարունակվեր իրենց ճամփան: Ավելի է մոտենում, բայց տեսնում է, որ բոլորը թուրք են, բոլորը թուրքերեն են խոսում:

Դա իրեն հուսահատեցնում է, ինչպե՞ս ազատվել, ինչպե՞ս անցնել: Լողա՞լ, ինքը կլողա, ապա ընտանի՞քը, ինչպե՞ս թողնի:

Շատ բաներից է անցել, բայց սա շատ դժվար թվաց իրեն ու անհայտության մեջ նայելով՝ քայլերն ուղղեց դեպի ծովը՝ նայելու ծովի գեղեցկությանը: Այդ ժամանակ առանց նկատելու հպվեց մի մարդու:

Կանգ առնելով՝ երկուսն էլ միասին ասում են **ներողություն** և զարմացած իրար նայում:

- Հա՛յ եք,- նորից երկուսը միասին:

- Այո՛, մենք էլ կարծում էինք մենակ մենք ենք այստեղ: Հետո մի կողմի վրա մի քանի խոսքով Ղազարը բացատրում, պատմում է եղելությունը: Մարդը ասել էր՝ կարող է օգնել. միայն մի քանի օր պետք է սպասել, իսկ իրեն ամեն օր կարող է այստեղ գտնել: Դա մեծ հույս էր, ավելին ինքը չգիտեր, չէր ասել: Պետք էր մի քանի օր համբերել:

Ղազարը մի քիչ էլ մնաց ու դուրս եկավ պայմանով, որ տեղյակ կպահի Մոսոյին, ինքը կգա անպայման:

Մոսոն ու Առաքելը շատ ուրախացան համագյուղացու հանդիպելու համար: Ժամանակը կարոտ է տալիս. շատ չէր անցել, բայց հայրենակից էր, այն էլ օտար տեղ: Նույն սարերի տերը, նույն սովորությունները, նույն խոսելաձևը, եթե ոչ նույն բնավորությունը, որ գալիս է հողից, ջրից. կռվարար, կամակոր, բայց միաժամանակ անչափ բարի և ներող:

***

Արեգնազը սիրում էր իր որդուն, որը սկսել էր ցույց տալ, որ ինքը հասկանում է, հասկանում է ամեն ինչ՝ ասելով. «Ինձ նայեք, ես կամ, հերիք ուրիշ բաների մասին մտածեք, սիրով բերել եք ինձ, դեհ, հիմա ինձ սիրեք, ես ինչ եմ ձեզ արել, ո՞րն է իմ մեղքը»: Կարծես ստիպում էր բոլորին, որ իրեն սիրեն: Մեկի գրկում ինքը բոլորին էր տեսնում, գլուխը պտտում, մեկ սրան էր նայում, գղգղում, մեկ մյուսին: Այդպես բոլորի ուշադրությունը գրավելով՝ մեկ նետվում էր մեկի գիրկը, մեկ՝ մյուսի: Այդպիսով դարձավ հետաքրքրության կենտրոնը: Չենք կարող ասել, որ չէին սիրում, ուղղակի սիրտ չունեին:

Մայր ու աղջիկ ոչինչ չունեին այստեղ անելու, ճաշ եփել չկար, ամեն ինչ պատրաստի էին գնում: Շատ համեղ կերակուրներ էին բերում տղամարդիկ, նույնիսկ կերած ու տեսած չկային: Այդ կողմից այս քաղաքը շատ հարուստ էր, ծախում էին փողոցներում, խանութ մտնելու հարկ չկար: Այդ հարցը լուծված էր:

Գալու պես իրենց մաքրությանը հետևեցին: Հյուրանոցում լողարաններ չկային, բայց փողոցի անկյունում կար համամ (բաղնիք): Իրոք, լավ էր առանձին: Այնպես դուր եկավ դա բոլորին, կարող էին մի քանի ժամ անցկացնել այնտեղ, նույնիսկ ուտելիք տանել, ընդմիջում անել: Գրեթե մեկ ու կես ամիս իրենց մարմինը տաք ջուր չէր տեսել: Մեկ ամիս Ստամբուլը վայելեցին, քանի որ Մարդը խոսք էր տվել, բայց հարմար առիթի էր սպասում:

Ղազարը ծանոթացրել էր այդ հայ մարդուն. նա աշխատում էր նավերի վրա: Մի օր Առաքելը եկավ այդ մարդու հետ խոսելու և հարցրեց՝ արդյո՞ք շատ հայեր կան, որոնց օգնում է ինքը: Մարդն ասաց, որ բոլորին է օգնում ինքը և հաճախ, երբ փող չունեն, ձրի են անցնում: Այդ ժամանակ կարծես Աստված

խոսեցրեց Առաքելին ու Առաքելը բարձրաձայն հարցրեց. «Արդյոք իմ որդուն էլ ես անցկացրել»: Մարդու ուշադրությունը ուրիշ տեղ էր, բայց կրկնել տվեց հարցը, մարդը սթափվեց. շատ էր անցկացրել:

- Տղաս տասնչորս տարեկան էր, մոտ մեկ տարի է՝ դուրս է եկել մեզ ծանոթ մեկի հետ, որը խոստացավ ապահով տանել ու մարդ դարձնել նրան:

- Ինչպիսի՞ տղա էր, սև գանգուր մազեր ունե՞ր, քո նման էր, մի քիչ թուխ:

- Այո՛, ճիշտ այդպես:

- Կարծեմ անունը վ-ով կսկսեր. այդ անունը բոլորովին չէի լսած:

- Վաղինակ,- ասաց Առաքելը:

- Այո՛, այդպես էր, երկարահասակ մեկի հետ էր, նրանք վաղուց են անցել, այո՛, գնացել են:

Առաքելը քիչ էր մնում ուշաթափվեր, ուժ հավաքեց, մոտեցավ, համբուրեց մարդուն, ասաց.

- Ես քեզ պարտական եմ, իմմլ քեզ պատվեմ:

Մարդը ասաց, որ ինքն էլ այս ձևով է օգնում իր հայրենակիցներին: Բայց այդ արվում էր գաղտնի, հարմար առիթի ժամանակ:

Սպասումը դրա համար էր: Այն օրը, երբ ինքը մենակ էր նավը տանում, երկու ընտանիք կարող էր անցկացնել աննկատելի ձևով:

Ոչ մեկը չի կասկածում, որ հայ է, և ահագին ժամանակ է, որ աշխատում է այստեղ: Ոչ մեկը չգիտի անունը, իր մասին խոսելիս միշտ ասում են՝ «Մարդը»:

Շատ հաղթանդամ մարդ էր, արևից վառված, բավական թուխ, սևին խփող դեմքով: Առաքելն արդեն իրեն կորցրել էր, խենթացած վազում էր, մտածում՝ ուժը չի պատելու, տուն չի

հասնելու: Իրենց սենյակը մտնելու փոխարեն քիչ էր մնում ուրիշ տուն մտներ:

Շնչակտուր ներս մտավ: Մոսոն, նստած երեխայի մոտ՝ մահիճի վրա, ձեռքով շոյում էր երեխայի երեսը ու մտածում:

Բոլորը նայեցին դեպի դուռը, Առաքելն էր՝ այլայլված դեմքով. բավական տանջվել էր մինչև հասնելը: Նստեց աթոռին, ջուր ուզեց, խմեց ու խոսեց.

- Սաթո՛, մըր որդի ջուրն ընցե, Վաղինակ ջուրն ընցեր է կնքահոր հետ: Մարդն ըսավ:

Պատմեց իմացածը, բոլորն ուրախացան: Սկսեցին ենթադրություններ անել, վերջ ի վերջո մի ուրախանալու բան կար: Սաթոյի աչքերը փայլում էին ուրախությունից, Արեգնազինը նույնպես:

Երեք աղջիկները զբաղված էին երեխային սիրելով, հետը խոսում էին, ծիծաղում: Փառանձեմը իմացավ, թե խոսքը ում մասին էր, բայց երկու աղջիկները զարմացած իրար երես էին նայում: Փառանձեմը բացատրեց, թե ում մասին են խոսում ու երկու բառով պատմեց եղելությունը: Խոսակցությունը շատ երկարեց, այդ օրը շատ ուրախ էին:

Տղամարդիկ հաց ուտելուց հետո որոշեցին դուրս գնալ, բայց ո՛ւր, քաղաքում այնքան էլ չէր երևում, որ երկիրը խառն էր, մինչդեռ իրենք ուզում էին լսել, տեղեկություններ ստանալ, բայց ոչ մեկը չէր համարձակվում խոսել: Այն մարդու հետ էլ չէին կարող խոսել, նա խնդրել է զգույշ լինել: Հայերին երկրի բոլոր անկյուններից քշելով, ջարդ ու թալանով Դեր-Զորի անապատ են տանում ու այնտեղ մորթում: Պատերազմ է պետությունների միջև, խառն է դրությունը, զգույշ պետք է լինել: Իր ջուրն անցկացրած մարդիկ են պատմել, որոնք իրենց աչքերով են տեսել և զգացել ու կարողացել են փախչել՝ թողնելով իրենց ընտանիքները մեռած դիակների տակ, իրենք մի կերպ ողջ

մնալով: Գյուղերն ամբողջ վառում էին, մարդկանց սպանում, կախում:

Մեծ քաղաքներում էլ լինում է, բայց թաքուն, որ աշխարհի աչքերը փակեն, արդեն ամսից ավելի է՝ հայկական գյուղ չի մնացել, եթե գյուղում մի քանի հայ ընտանիք կա, նրանց էլ միանգամից սպանում են ու տանում ունեցվածքը:

Մարդն ամեն անգամ Մոսոյին ու Առաքելին պատմում էր սրտի ցավով, թե ինչեր է ինքը լսում: Հրաման կար՝ օրորոցից սկսած մինչև իննսուն տարեկանին սպանել՝ հաշվի չառնելով սեռը: Վերջին տեղեկությունները հավաքել էր Դեր-Զոր անապատ քշված և հրաշքով փրկված հայերից: Սոված, մերկ, ծարավ, ծեծ ու ջարդով, ուժով քայլեցնում են արևի տակ, քշելով տանում այն ճամփաներով, որ հայ բանտարկյալներն ու զինվորներն էին շինել արյուն- քրտինքով: Այդ վիճակից փախչողներն են պատմել վերջին օրերը այդ նավերի ուղեկցող Մարդուն:

Մարդն ասաց.

- Երեկ, ճիշտ տեղեն գիտեմ, մի խումբ ղեկավար մարդիկ էին, ջուրն անցունելեն լսեցի, որ ըսին՝ կառավարությունը բանտերուն մեջ եղած մարդասպաններուն բոլորին ազատել է, որ այդ արյունոտ գործը իրենց հետ ընեն: Եվ այն կառավար մարդիկ, որ խղճմտանք ունեն և չեն ուզեր մտնալ այդ արյունոտ գործին մեջ, բոլորին կհանեն, կմեղադրեն և կփոխարինեն, իրենց իթթիհականին մեկը կդնեն:

Փողոցներում շատ մարդ չկար, բայց այս փոքր նավերի մոտ շատ էին. մեծ խմբերով կանգնած, ցածր ձայնով խոսում էին, մի քանի բառով իրար հասկացնում միտքը: Եթե ուշադիր լսելու լինեն, միայն հայերի մասին էին խոսում, պետք էր հասկանալ: Կարծես բոլորն ուզում են անցնել այդ նեղուցը փրկության

համար: Խոսելն էլ կարճ. «Ես այսպես կըսեմ, դուն այնպես հասկըցիր»:

Կառավարությունը որքան էլ ուժեղ լինի, ինչպես կարող է բոլորի բերանը փակել, լուրը տարածվում է անմիջապես:

Նավամատույցում մարդիկ մի տեղ չէին կանգնում, որ զրուցեն, անընդհատ շրջում էին, քայլում, ցույց տալու համար, որ իրար անծանոթ են:

Երբեմն ոստիկաններ էին մտնում ամբոխի մեջ:

Լինում էր, որ քաշքշում էին մեկին, հարց ու փորձ անում, անցնում:

Ղազարը այստեղ հանդիպեց Մոսոյին ու կողքից անցնելու ժամանակ ասաց, որ վաղը նրանց հերթն է, պիտի Մարդը անցկացնի Բոսֆորը, առավոտյան ժամն էլ ասաց՝ ավելացնելով. «Մյուս շաբաթ ձեզի է կարգը, ուշադիր եղիր», ու անցավ: Մոսոն հյուրանոց գնաց՝ հայտնելու լուրը. բոլորը քարացան:

***

Հաջորդ օրը Մոսոն ֆեսը դրեց գլխին, դուրս եկավ, հասնելով նավամատույց՝ տեսավ, որ գնացող նավի մեջ էր, ճիշտ որ, Ղազարի ընտանիքը, ուշադիր նայեց, լավ տեսավ, որ այնտեղ էին նաև Ղազարի հայրը՝ Սեթոն, և Անգինը՝ Մարիամի մայրը:

Երբ գյուղն ամբողջ հեռացել էր, Սեթոն ու Մարիամը մնացել էին որպես ծերեր, հիմա եղան այդ ահռելի դեպքերի վկաներ:

Վերադառնալով պատմեց ու հաստատեց, որ, իրոք, կան քաջ հայեր, որ հերոսական սխրանք են կատարում. ինչո՞ւ չէ, իրենց կյանքի գնով, ինչպես Մարդը:

Եկավ իրենց մեկնելու օրը:

Բոլորը, ծպտված թուրքի արտաքինով, կանայք՝ չադրաներով, հազիվ աչքերն էին երևում, տղամարդիկ՝ ֆեսերով, հագուստները համանման թուրքերի:

Այսպես անցան Բոսֆորի նեղուցը, Մարդը ոչինչ չվերցրեց իրենցից:

Մարդը կանգնեց, բոլորին իջեցրեց շունչ քաշելով ու քթի տակ բարի մաղթեց:Բոլորը լուռ իջան:

Արդեն որոշված էր, պիտի անցնեին Հունաստանը, միակ ճամփան էր փրկության:

Մարդը դեռ շատ ուներ իր ծոցատետրում, իր ցուցակներում, իր սրտում գրանցված հայ ընտանիքներ կամ առանձին դժբախտներ՝ պատրաստ ամենքին տալու մի օր, մի ժամ փրկության: Կուզեր ավելին անել, բայց զգուշությամբ էր այդ անում, ու փառք Աստծո, որ հաջողվում էր դեռ:

Բոսֆոր ծովը մի գեղեցկություն էր, ինչպես են տվել այդ անուները՝ Մարմարա ծով, Սև ծով: Այդքան գեղեցկություն և այդքան բան միատեղ, և ընդամենը երեսուն կիլոմետր հեռավորություն է բաժանում երկու աշխարհամասերը՝ Եվրոպա և Ասիա:

Մեծ նավահանգիստ է, որքան նավեր են մտնում այդտեղ ամեն օր: Ծովին նայելով՝ հանգստություն ես զգում. մարդը մտածում է՝ այս ինչ հրաշք ստեղծագործություն է՝ տրված մարդուն վայելելու համար:

Բայց այս բոլորը անտեսելով՝ դիմում են ծայրահեղ վատ գործողությունների և չեն հագենում, իսկ 1915 թվականը եղավ թուրք մտածողության ամենաահռելի ոճիրը, որի իրականացման համար հնարվեցին ամենադաժան միջոցներ, բացահայտվեց անհավանական պատրաստակամություն՝ ճշգրտորեն կատարելու, օգտագործելու բոլոր հնարավորությունները:

Որքան ժամանակ էր պետք լիովին այդ նպատակին հասնելու համար: Տրված էր միայն սկզբնական ճշգրիտ ժամկետը, օրը...

Ասել են՝ եթե թողնեք, այսինքն՝ անտեսենք, ողջ թողնենք 1000 հայի, հետո, ալլահը մի արաւսցե, կարճ ժամանակի ընթացքում կդառնան 100 000 և դարձյալ փորձանք կդառնան մեր գլխին:

Հայը փորձանք էր, որովհետև խելացի էր, արժեք ուներ, աշխատասեր էր, ստեղծող: Որոշեցին ոչնչացնել, բայց երբեք չմտածեցին, որ այսօր կոշկակար չունեն. չարոխը ով պիտի կարկատի, դերձակ չունեն. բաճկոնը ով պիտի կարի, ֆեսը

կարմիր փումփուլով ոմվ պիտի անի, որ բժիշկ չունեն, որ ճրագի յուղը հանող չունեն, ճրագը ոմվ պիտի վառի:

Այդպես մնացին անկարող, միայն արյունն էր հագեցնում իրենց: Այդպես ծնվել են, ապրել թալանչիությամբ, այդպես էլ պիտի շարունակեն ապրել անիմաստ:

Ամբողջ մի ազգության ապագա խորտակեցին:

Գարուն էր, դաշտ ու անտառ կանաչել, ծառ ու ծաղիկ ամբողջ աշխարհը լցրել էին իրենց բուրմունքով: Արևն առավոտյան ծագում է, երեկոյան մայր մտնում: Բայց ոմվ նկատեց այդ գարունը, ոչ մեկը: Բոլորի սրտերը սևացած էր՝ և՛ տանջողներինը, և՛ տանջվողներինը: Խիղճ ունեցողն էլ ոչինչ անել չէր կարող:

***

Գարուն էր: Արեգնազը մի քանի ամիս առաջ էր ամուսնացել. գեղեցիկ հարսանիք էր: Երջանիկ էր՝ Մոսոյին ունենալով, որպես լավ ամուսին: Սիրել էին իրար. Արեգնազը կասկածը սրտում թանկ պահել էր սրտում իր սերը՝ իմանալով, որ Մոսոն խենթանում է իր համար, և համար վաստակել էր «Սիրահարը» անունը:

Շատ երջանիկ էր՝ իր այդ քողտիկի մեջ իրեն կարծելով թագուհի, ավելի լավ լինել չէր կարող, եթե նույնիսկ ապրեր պալատում մեկի հետ, որին չի սիրում:

Բայց երջանկությունը երկար չտևեց, քրոջ՝ Վարդի անհետանալը շատ վատ ազդեց բոլորի վրա: Մոսոն օրերով տուն չէր մտնում, սար ու ձոր ընկած՝ իր ընկերների հետ փնտրում էր Վարդին: Այնուհետև կողոպուտը, հետո Մոսոյի ծնողների մահը՝ Մոսոն ֆիդայի...

***

Այդ օրը Վարդը վերցրեց կուժը ու գնաց աղբյուր: Միշտ գնում էին ընկերուհիներով, այս անգամ մենակ էր: Հասավ աղբյուրին, ջուրը լցրեց, մի քիչ էլ ակից ջուր խմեց, երբ մեկը մոտեցավ ձիով, իջավ, մոտեցավ աղբյուրին, բարևեց: Վարդը կարծեց՝ ձիուն ջուր պիտի խմեցնի, բայց, ոչ, հեծյալը թուրքերեն մի քանի բան ասաց ու աղջկան գրկելով՝ դրեց ձիու վրա, այնքան արագ, որ Վարդը չհասցրեց պաշտպանվել. մի քանի բառ, ու ինքն էլ թռավ ձիու վրա, քշեց ձին:

Վարդը սկսեց ձեռքերով, ոտքերով խփել, գոռալ ահաբեկված, լաց եղավ, բայց տղամարդն այնքան ուժեղ էր գրկել, որ շարժվել չէր կարող: Այդպես քշեց երկար, առանց կանգնելու:

Նպատակ էլ չուներ կանգնելու ու աղջկա ականջին ինչ-որ բան էր ասում. Վարդը բոլորովին թուրքերեն չգիտեր, քրդերենին ավելի սովոր էր: Քրդերեն խոսեր՝ միգուցե հասկանար, բայց, ոչ, թուրք էր:

Վարդին թվաց, որ արդեն շատ հեռացան տանից:

Գյուղն արդեն չէր երևում: Վարդը հազար բան սկսեց մտածել, բուռ-բուռ արցունք էր թափում: Մտածում էր ծնողների և իր կյանքի մասին, արդեն տասնութ տարեկան էր և շատ բան գիտեր հայ-թուրք հարաբերությունների մասին: Ինքը մշեցու աղջիկ էր, նամուսով: Այս ինչ եղավ, ինչպես պիտի դուրս գա այս վիճակից: Ո՞ւր է տանում արդյոք, պիտի ընդունվի՞ արդյոք իր ծնողների կողմից:

Իսկ ետևում նստածը շշնջում էր ականջին առանց լռելու: Ինչ անի, եթե թույլ բռներ, ինքը կթռչեր:

Մտածում էր, որ մեռնելը լավ է, քան այս վիճակը:

Ձեռքը, որ փաթաթվել էր իրեն, այնքան ամուր էր սեղմում մեջքը, որ աղջկա շունչը կտրվում էր:

Այսպես երկու ժամի չափ քշեց ձիուն: Ձին հևում էր արդեն, երկու հոգի մեջքին, այդ սարերի վրա: Երբ շատ հեռու էին արդեն, մտածեց կանգնեցնել ձիուն: Իջեցրեց Վարդին, կանգնեցրեց ու կանգնեց դիմացը, երեսը շոյել ուզեց...

Վարդը փախավ, վազեց, վազեց: Թուրքը կանգնած մնաց ու նայում էր ետևից: Փախչի, բայց ոնւր, սարեր են չորս կողմը: Կանգնած ձիու մոտ՝ կրկնում էր. «Գյել, գյել...»: Դա հասկանում էր Վարդը: Բայց, ո՛չ, ինքը փախչում էր, ուզում էր միայն փախչել, հեռու թուրքից:

Ո՞վ է սա, որտեղից եկավ, ինչո՞ւ իրեն փախցրեց: Ինքը ինչ էր արել, գնացել էր ջուր բերելու: Իրեն ճանաչո՞ւմ էր, թե՞ տեսածին փախցնում են դրանք: Փախավ, վազեց զառիվայրով, սայթաքեց, գլորվեց, վեր կացավ, շարունակեց փախչել, բայց ոնւր: Թուրք երիտասարդը նայում էր ետևից, գիտեր, որ փախչել չի կարող:

Ձին նստեց, հետևեց, հասավ նրան, իջավ, բռնեց թևից, ասաց. «ներե՛, ներե՛...(ոնւր, ոնւր)» ու որոշ անհասկանալի բաներ, բայց կռահեց ասածը՝ ոնւր ես գնում:

Նորից նույն ձևով նստեցրեց ձիու թամբին, ինքն էլ թռավ, ետևում նստեց ու գրկեց:

Այսպես քշեց ձին մինչև ուշ երեկո, անցնելով շատ տեղեր՝ անտառ ու ձոր, գիշերը ուշ կանգնեց մի տան դիմաց:

Երևի գյուղ էր դա: Վարդը այլևս լաց չէր լինում, մտածեց տեսնես ինչ է գալու գլուխը, սա, ով գիտե, միգուցե փոշմանի

իր նման վայրի աղջկան փախցնելու համար: Դժվարությամբ մտցրեց տուն: Մի կին էր նստած գետնին՝ կարպետի վրա, մի ցածր սեղանի վրա բրինձ էր հնդրում: Երբ տեսավ աղջկան, հանկարծակիի եկած շուտով վեր կացավ ու կանգնեց՝ տեսնելով տղային: Տղան խոսեց սկզբից, ներկայացրեց աղջկան, բայց որպես ինչ էր ներկայացնում՝ Վարդը չիմացավ: Միայն մտածեց, «Ես ինչ եմ անելու, ո՞ւր եմ արդյոք, ինչպե՞ս խոսեմ, բացատրեմ, ասեմ, որ ես չեմ ուզում մնալ, թողեք, որ գնամ, ծնողներս ինչ են անում հիմա, ինչ են մտածում ինձ համար»:

Իմացան արդյոք, որ իրեն փախցրել են:

Շուտ գուշակած կլինեն, որ դա թուրքի գործ է, որովհետև հաճախ էր պատահում:

Հիմա մայրը լաց է լինում, հայրը, ընկած սար ու ձոր, իրեն է փնտրում, ինչ անի, ինքը ինչ անի:

Կանգնած սենյակի մեջտեղում՝ մեկ կնոջն էր նայում, մեկ տղային: Մտածեց, որ մայր ու տղա են երևի: Դեռ չէր հասցրել ուշադիր նայել երեսին. երիտասարդ տղա էր, թուխ մազերով, սև աչքերով, բարձրահասակ մարդ էր, որևէ արատ չուներ:

Մայր ու որդի խոսել սկսեցին, մոռացան իրեն, կանգնած մնաց, նրանք էլ կանգնած էին:

Անելանելի վիճակ էր, պարզ երևում էր, որ մայրը ոչնչից տեղյակ չէր, դա անակնկալ էր իր համար: Վարդը ոչինչ չէր հասկանում:

Կինը Վարդի ձեռքից բռնեց, ցույց տվեց աթոռը, առաջարկեց նստել: Վարդը ուրիշ ոչինչ չուներ անելու, նստեց: Մայրը հասկացավ, որ տղան փախցրել, բերել է, բայց ով է. Վարդը սկսեց լաց լինել, ինչպե՞ս պիտի դիմանա, բերելու նպատակը գիտեր. որպես կին է բերել, այդ հասկանալուն համար ոչ մի բացատրություն պետք չէր: Մնացածը չէր հասկանում: Մայրը

անմիջապես ուտելիք բերեց, դրեց սեղանին: Վարդը չմոտեցավ սեղանին, որքան էլ ստիպեցին. նրանք էլ չկերան:

Երկուսն էլ բան չէին կերել ամբողջ օրը:

Մայրը խոսում էր ու խոսում տղայի հետ, երբեմն էլ դառնում Վարդին, խոսում:

Հոգնեցին երևի, մայրը անկողինները գցեց գետնին՝ կարպետի վրա: Կրակը մարեց, որ պառկեն: Կինը Վարդին ասաց նույնն անել:

Վարդը շատ հոգնած էր: Գլուխը բարձին դնելն ու քնելը մեկ եղավ:

Այնուհետև թե ինչ եղավ, ինչպես համոզեց, ինչպես պարտադրեց, վերջը հասավ իր նպատակին: Վարդը մնաց սիրտը կոտրած, առանց զգացմունքի՝ իր մեջ մեռցնելով այն եռանդը, որ փայփայում էր, այն երազանքը, որ ուներ, ինչպես իր տարիքի բոլոր աղջիկները՝ մտածելով անմեղ սիրո մասին:

Տարին չլրացած մի տղա ծնվեց, իհարկե, սիրո արդյունք չէր: Երկար ժամանակ դուրս չէր գալիս տանից. հնարավորություն չէին տալիս: Իրենք մայր ու տղա էին: Տղան՝ Քամալը, մեծացել էր դժվարություններով, հայրը ծանր հիվանդությունից էր մահացել: Մայրը դեռ երիտասարդ էր, շատ լավ կին էր և լավ մայր: Գյուղացի կին էր, միշտ մենակ էր ապրել այդ գյուղում, որտեղ հայ չկար. թուրքական գյուղ էր: Տունն էլ շատ հեռու էր հարևան տներից: Տները պարտեզների մեջ էին:

Վարդն էլ, որ լեզուն չգիտեր, խուսափում էր հանդիպել մարդկանց, խոսել: Շատ շուտ իմացավ, որ տղան զինվորական է և աշխատանք ունի: Միշտ զինվորականի հագուստով էր նա: Այդ մի տարվա ընթացքում լեզուն բավական սովորեց ու արդեն հասկանալ էր տալիս իրեն:

Երեխայի ծնվելուց արդեն անցել է երկու ամիս, միշտ նայում

էր երեխային ու մտածում իր ծնողների մասին: Ինչպես ինքն է նայում իր երեխային, նրանք էլ սիրել, գուրգուրել են իրեն, մեծացրել ու այսօր ինչպես են հաշտվում իր բացակայությանը: Ինչպես էին սիրում իրեն, ամեն ինչ աչքի առաջ էր գալիս: Ո՞ր ծնողը չի սիրում իր զավակին, և ո՞ր զավակը չի սիրում ու մտածում իր ծնողի համար:

Արդեն կարողանում էր հասկանալ ու խոսել թուրքերեն, ստիպված էր սովորել, եթե ոչ, ինչպես խոսեր տան անդամների հետ:

Քամալի մայրը առաջին օրն իսկ մեղադրել էր տղային՝ ասելով, որ սխալ է իր բռնած գործի մեջ, քանի որ առանց ճանաչելու բերել է, այն էլ հայի աղջկա: Դարերով թուրքերը ընդունված չեն եղել նրանց կողմից, և իրենցից միշտ զգուշացել են հայերը: Ասել է նաև. «Ինչպես պիտի սիրի քեզ, առանց սիրո ինչպես ընտանիք պիտի կազմես»:

Մայրը շատ լավ տեսնում էր, որ սեր չկա, տղային շատ դժբախտ էր տեսնում, ինչ կարող էր անել: Տղան տանը չէր լինում, գնում էր առավոտյան ձիով, երեկոյան ուշ մտնում տուն, միշտ հոգնած, իսկ վերջերս էլ միշտ այլայլված դեմքով: Դժվար էր հետը խոսել. ինչպես գալիս էր, այնպես էլ առավոտյան վերադառնում իր գործին:

***

Մի օր Վարդը նկատեց հեռվից եկող մի խումբ զինված ձիավորների. զինվորներ էին:

Երբ մոտեցան, մեկը առանձնացավ խմբից, հեռացավ: Քամալն էր: Այդ ժամանակ Վարդը դրսում էր՝ երեխան գիրկը: Մոտեցավ և ասաց.

- Մարդ չէր մնացել, բոլորը գնացել էին:

Վարդը ոչինչ չհասկացավ և ուզեց ավելին իմանալ, ում մասին էր խոսքը:

Այդ ժամանակ մանրամասն բացատրեց եղելությունը. գնացել էին օրենքը իրագործելու, գաղթի հանելու հայերին ու... չշարունակեց. Վարդին արդեն հասկանալի էր, այդ մասին հաճախ էլ լսել, ու որքան ցավալի էր միշտ ընդունել: Քամալը մնաց տանը, չշարունակեց ընկերների հետ ճամփան:

Առանձին խոսեց մոր հետ, երբ Վարդը մյուս սենյակում երեխային էր քնեցնում:

Ասել էր, որ գյուղը Վարդի ծնողների գյուղն էր: Վարդի ծնողներն էլ էին գնացել, ամբողջ գյուղում մարդ չէր մնացել, բացի մի քանի ծերերից: Երբ Քամալը մտավ անկողին, Վարդն ու մայրը դեռ նստած խոսում էին: Այդ ժամանակ մայրն ասաց գյուղի անունը, երբ Վարդը լսեց, չհավատաց իր ականջներին, կրկնել տվեց. իրոք, իրենց գյուղի մասին էր խոսքը:

Սկսեց բարձր ձայնով լաց լինել ու գոռալ: Քամալը զարթնելով հասավ, փաթաթվեց կնոջը, բայց ինչ, խոսք չէր գտնում ասելու, իր ձեռքը այդ արյունոտ գործի մեջն էր: Ամբողջ գիշերը Վարդը

մտածեց, քուն չիջավ աչքերին: Ամբողջ գիշեր իր երեխային գրկած՝ նստեց, սիրեց, շոյեց, համբուրեց, խոսեց հետը, ասաց, որ թողնելու է նրան, բայց մի օր կգտնի, սիրում է, որ իր ծագուկն է, որ միշտ իր մտքի մեջ կլինի, գիտի, որ ապահով ձեռքերի մեջ է թողնում, որ մեծ տղա կդառնա, խելացի, հայրը նրան լավ կնայի, այդ իրեն ուժ է տալիս. Քամալը լավ հայր կլինի որդու համար:

Առավոտյան, երբ Քամալը վերկացավ աշխատանքի գնալու, ետևից ելավ ու բարի մաղթեց, ոչ մի անգամ նման բան չէր արել, հետո երկար նայեց հետևից, մինչև անհետացավ իր ձիու հետ:

Մայրը արդեն վեր էր կացել, դուռ ու բակ ավելել էր, երբ տուն մտավ, Վարդը ասաց.

- Աննեմ (ոչ մի անգամ այդպես չէր դիմել), ես ամբողջ գիշեր մտածել եմ, պիտի գնամ, չեմ մնա այլևս, ես պիտի գնամ, իմ ծնողներին գտնեմ ու կգտնեմ, ողջ լինեն, թե մեռած: Ես քեզ եմ թողնում իմ որդուն, գիտեմ, որ ինձանից լավ կպահես: Չեմ կարող հետս տանել: Պետք է աճապարեմ, քանի որ առաջ պետք է գյուղ մտնեմ, հաստատ իմանամ, նոր շարունակեմ իմ ճամփան, բայց կգտնեմ, վստահ եմ: Թող Քամալը ինձ ների և թող զղջա իր արածի համար: Մեղքանում եմ իրեն և իմ որդուն նաև, բայց պիտի գնամ:

Մայրը ոչինչ չէր խոսում, որովհետև ոչինչ չուներ խոսելու: Լացեցին երկուսն էլ, գրկախառնվեցին, նորից լաց եղան: Գնացին երեխայի մոտ, որի անունը Մուրադ էին դրել:

Մայրը գրկեց երեխային, սիրեց, լաց եղավ: Երեխան չզարթնեց: Այնուհետև կապեց իր շորերը մի կապոցի մեջ: Քամալի մայրն էլ հաց ու շատ բաներ դրեց մեկ ուրիշ տոպրակի մեջ:

Կրկին գիրկն առավ որդուն մի ժամի չափ, օրորեց, սեղմեց

կրծքին, կուրծք տվեց: Համբուրեց այտերը, ճակատը, քիթը: Հանձնեց տատին և սրտի ցավով ու կսկիծով, արցունքն աչքերին՝ ասաց.

-Ես Մուրադի մայրն եմ, դու տատն ես, ես չեմ ուրանում իմ զավակին, բայց թողնում եմ քեզ, քոնն է, պահի՛ր. եթե ողջ մնամ, տեղը գիտեմ, անունն էլ գիտեմ, ազգությունն էլ, կհոգամ իր համար, եթե կարողանամ:

Արցունքներն աչքերին՝ հանձնեց երեխային քնած վիճակում ու դուրս եկավ:

Այդ բարի կինը դուրս գալու ժամանակ քսակով մի քանի ոսկեդրամ տվեց՝ ասելով, որ իրեն շատ պետք կգա: Վարդը վերցրեց, շնորհակալություն հայտնեց, համբուրեց ու դուրս եկավ: Դրսում ձին արդեն պատրաստ սպասում էր իրեն՝ բեռը վրան: Բռնեց իրենց գյուղի ճամփան: Սուրում էր ձին, հետն էլ փախչում, հեռանում էր Վարդը: Փախչում էր Վարդը՝ իր սրտի մի մասը թողնելով թուրքին, ուրիշ ճար չուներ: Երեկոյան երբ Քամալը վերադարձավ, Վարդը չկար:

Քամալը առավ գլուխն իր ձեռքերի մեջ, զղջաց իր արածի համար: Հայի աղջիկը թուրքի կին երբեք չի լինի: Մայրը, երեխան գրկին, արցունքն աչքերին, դիմավորեց որդուն: Անցան տարիներ...

***

Հորեղբոր երկու աղջիկները՝ Սիրունը, Ալվարդը և Փառանձեմը մտերմացան: Իրենց սև չադրաների մեջ իրարից չէին տարբերվում:

Երեքն էլ մի բոյի, միայն աչքերն էին երևում, ոչ մի բաց տեղ չունեին, շորերը իջած մինչև սրունքները: Այսպես էր պետք, թուրքերեն մի քանի նախադասություն էլ էին սովորել, այնքան, որ մի բան պատասխանեն՝ լալ չմնալու համար:

Դժվարը ետևում էր, բայց վտանգը դեռ չէր անցել: Նորից փնտրեցին մի հյուրանոց գիշերելու, շունչ առնելու. որոշում կայացնելու համար էլ ժամանակ էր պետք: Մյուս ափին գտնվող Մարդը Առաքելին տվել էր մի անուն և տեղեկություն մի փողոցում գտնվող սրճարանի մասին, որտեղ կարող էր գտնել այդ անվան տերը:

Այդ օրը հանգստացան բոլորը, իսկ Առաքելը, ֆեսը գլխին, գնաց փնտրելու այդ մարդուն:

Մոսոն մնաց կանանց մոտ, պառկեց, քնեց, Արեգնազը իր մոր հետ Վահանով զբաղվեցին:

Երեք աղջիկները նստեցին սենյակի մի անկյունում, սկսեցին զրուցել, վերհիշել, ուրախ էին, որ կյանքը ժպտացել է Աստծո կամքով, արդեն վստահ էին, որ լավ է լինելու վերջում:

Շատ անգամ փրկվեցին հրաշքով: Երկար խոսեցին տարբեր բաներից, ու հանկարծ Սիրունը Ալվարդին հարցրեց. «Ինչ ես մտածում, Սերոբը, Սաքոն ողջ են»:

Ալվարդը հանկարծակիի եկած, ուսերը վեր քաշելով, ասաց.

«Ինչ իմանամ՝ մնացել են»: Հորեղբոր երկու աղջիկներ սիրել են երկու ընկերների՝ Սերոբին և Սաքոյին:

Տղաները նույն օրն են հայտնել իրենց սերը այս երկու աղջիկներին, իսկ աղջիկներն իրենց սրտում նույնպես համակրել էին, բայց երբեք չէին համարձակվել խոսել այդ մասին: Ու պարզվեց, որ տղաների ընտրությունը ճիշտ նույնն էր, ինչ աղջիկներինը: Շատ շուտ մտերմացան, բայց վրա եկավ ջարդը: Սերոբի և Սաքոյի ծնողները որոշեցին շատերի պես տղաներին ուղարկել պանդխտության:

Սերոբն ու Սաքոն անբաժան էին, միասին էլ թողեցին գյուղը և իրենց սերը, հազար երդում տալով ու լացելով հեռացան: Մինչև այսօր տեղեկություն չունեն նրանց ողջության մասին:

Երկու աղջիկ իրար նայեցին, արցունք թափեցին՝ Աստծուն խնդրելով, հույս փայփայելով կրկին գտնելու նրանց:

Փառանձեմը նայում էր, լսում, մտածում: Դեռ երիտասարդ էր, այդ մասին մտածելը շուտ էր: Այդ մի հոգն էլ թող պակաս լինի իր համար:

Երկար սպասեցին Առաքելի գալուն: Սաթոն արդեն սենյակի չորս անկյուններն էր չափում: Տեղը չէր գտնում:

Երեկոյան մութը չընկած եկավ, ուրախ էր, մի քիչ էլ խմել էր կարծես: Այն մարդու տված անունի տերը գտել էր ու ծանոթ էր իրեն: Այդ մարդը Ղազարի քրոջ ամուսինն է՝ Պողոսը:

Սա էլ ծանոթ էր մեկ ուրիշի, որ կարող էր օգնել՝ Հունաստանի սահմանն անցնելու համար:

Հաջորդ ուղղությունը Սալոնիկ քաղաքն էր, բայց իրենց նպատակը Ամերիկա գնալն է:

***

Վարդը թռավ, փախավ, սուրաց, դրա հետ մեկտեղ կյանքը խորտակված համարեց: Արևը մթնեց իր համար այն օրվանից, երբ հանդիպեց Քամալին, երբ Քամալը հանդիպեց իրեն աղբյուրի մոտ:

Այն աղբյուրի, որի մոտ Արեգնազը սիրել էր Մոսոյին: Ինչպես տեսնում ենք, մեկը սիրում է, մյուսը, դժվար է ասել, ատում է, այս է ճակատագիրը, որին ինչ է սահմանված: Շունչ պահած սուրում է ձին՝ վրան տանելով անհամբեր Վարդին: Այսպես քանի ժամ հետո ձին կանգնում է մի ջրի մոտ: Ջուր է խմում: Վարդը չէր մտածել կանգնել, ինքը շտապում էր: Այնուհետև առվի կողքի խոտերը լեզվով քաշում, ուտում, ծամում էր ու նայում Վարդին, որ ինքն էլ իջել էր՝ ձիուն ազատ թողնելու համար:

Եվս մի քանի րոպե, հետո շարունակում են ճամփան: Վարդն անցնում էր գյուղերի մոտով՝ չիմանալով՝ ճիշտ է ճամփան, թե ոչ, մի դաշտի մեջ հանդիպում է մի մարդու ոչ հեռու գյուղից, մոտենում և թուրքերենով հարցնում Չմըրլու գյուղը: Մարդն ասաց, որ դեռ հեռու է, բայց եթե ուղիղ գնա, կհասնի լույսով՝ ձեռքով ցույց տալով ուղղությունը: Վարդը շարունակեց գնալ, ձին անընդհատ վազում էր, չնայած որ շատ էր հոգնել:

Քամալը իրեն այդ ճամփով չէր տարել, գնացել է միայն սարերով, որ կորցնի, շփոթեցնի, որովհետև փախցնում էր իրեն:

Վարդը հիշեց նորից ու սիրտը վեր ելավ, անիծեց այդ օրը, անիծեց նաև իր ծնված օրը: Քամալը պատմել էր, թե երբ և

ինչպես էր տեսել իրեն, թե որքան ժամանակ է հետապնդել, մինչև գտել է հարմար առիթը փախցնելու: Քամալը սիրել է իրեն, օր ու գիշեր չի ունեցել տեսնելու օրվանից, շրջել է գյուղի չորս կողմը անհույս: Լավ իմացել է, որ միայն աղբյուրի մոտ կարող է տեսնել իրեն: Մի օր գյուղամիջով անցնելու ժամանակ զինվորականի հագուստներով երկու ձիավորներ կանգնում են ու ջուր են խնդրում մի կնոջից. այդ ժամանակ է Քամալը տեսնում Վարդին նույն բակից դուրս գալիս: Ուշադիր նայելով ամոթխած աղջկան՝ տեսնում է նրա գեղեցիկ աչքերն ու ...

Քամալը այս բոլորը պատմել է մի քանի անգամ, որպեսզի հասկանա ու ինքն էլ սիրի իրեն, բայց ապարդյուն:

Քամալը սիրուն երիտասարդ էր, Վարդը ուշադիր չէր նայել երևի կամ չէր ուզում տեսնել: Արժանի էր սիրվելու, բայց Վարդի համար չէր:

Թուրքերը շատ վատ են վերաբերվել հայերին, ինչպես հայը կարող է մոռանալ: Իր կինը դարձնելուց հետո Քամալը շատ բարի, սիրով, համբերատար էր մոտենում Վարդին ու երբեք, մինչև այսօր էլ հույսը չէր կտրում՝ կարծելով, որ մի օր, իհարկե, կսիրի իրեն:

Այսօր հասկացավ իր սխալը, այո՛, սխալ ասենք, քանի որ ինքը այդ քայլը չպիտի կատարեր, որքան էլ իր սիրտը այդ էր թելադրում իրեն: Սիրում էր, ինչ աներ, ինքն էլ իրեն ուժեղ էր կարծում: Միայն այսօր հասկացավ իր թույլ լինելը, նսեմանալը:

Իր թևերին մնաց մի անմեղ էակ, որը մոր սիրուն ամբողջ կյանքում կարոտ պիտի մնա իր պատճառով: Ինքն իրեն անզոր զգաց՝ երդվելով լավ հայր լինել:

Վարդը այս մտորումներով հասավ գյուղ, գյուղը՝ դատարկ էր, մտավ բակ, մտավ տուն, տեսավ՝ ամեն ինչ տեղն է, բայց տակնուվրա, միայն ոսկի էին փնտրել: Նայեց, լացեց: Մտավ թոնրատուն, ուտելու ոչինչ չկար: Դուրս եկավ, ձին նստեց,

նայեց չորս կողմը. ամայություն էր, մտածեց՝ ինչ անի, գոնե գիշերն անցկացնի իր կարոտած տանը մի վերջին անգամ: Ետ իջավ ձիուց, ձին էլ ներս առավ, դուռը փակեց ու թախտին գլուխը դրեց ու քնեց: Գիշերը երազ տեսավ, տեսավ եղբորը, հեռվից կանչում էր: Զարթնեց, արևն արդեն դուրս էր եկել: Նորից ճամփա ընկավ՝ տան դուռը փակելով: Խաչ հանեց երեսին, աղոթեց ու շարունակեց:

Քաջ էր Մշո աղջիկը, հազիվ քսան տարեկան էր:

Կյանքում մարդ որքան կարող է տանջվել, իսկ տանջանքներն իր առջևում էին դեռ:

Ո՞ւր գնար, ո՞ր ճամփով գնար, ճամփա չկա, արահետներ են, հյուսի՞ս գնա, հարա՞վ գնա:

Ո՞ր կողմն է փախել գյուղն ամբողջ. որոշեց գնալ այնքան, մինչև մի գյուղի հասնի, մեկին հարցնի, թե որ արահետը ուր է տանում:

Այդպես էլ արեց, մոտեցավ մի գյուղի: Հեռվում երկու մարդ տեսավ, խաշնարածներ էին: Խոշոր գոմեշներ կային ոչ հեռու՝ գետի մեջ: Վարդը մոտեցավ այդ մարդկանց ու նախ հարցրեց թուրքերենով՝ որ գյուղն է, հետո բնակիչներն ովքեր են, այսինքն՝ թո՞ւրք, քո՞ւրդ կամ... Պատասխանեցին՝ խառն են, բայց հայեր կային, ու պատմեցին նույն բաները. շատ հարուստ էին և շատ ոսկի ունեին. քշեցին:

Վարդը ուզեց իմանալ, թե ուր են տարել:

Այս մարդիկ լավ էլ տեղյակ էին, ասացին՝ Դեր-Զոր՝ ձեռքով ցույց տալով ուղղությունը: Վարդը թե. «Շա՛տ հեռու է այդ Դեր-Զոր անապատը»: Ասացին, որ շատ հեռու է, որ գյուղի ծայրից փոխադրամիջոցով են տարել բոլորին: Պատմեցին իրենց լսածները, թե ինչպես են տարել հայերին. այդ բոլորը Վարդի համար նորություն էր: Վարդը հարցեց՝ հակառակ կողմն ուր է տանում, ասացին՝ ծով է տանում:

Ինքը որոշեց բռնել հակառակ ուղղությունը: Եթե մարդիկ փախել են, պարզ է՝ անապատի ուղղությամբ չպիտի փախչեին: Ինքն առնում է հակառակ ճամփան: Դե գնա, որ հասնես, ճիշտ գնաս, չշփոթվես, կարճ ճամփով գնաս: Ինչ անի Վարդը մենակ:

Իրեն քողարկել է տղայի պես, բայց քնքուշ մարմնում՝ քնքուշ հոգի, շատ էլ իրեն քաջի տեղ էր դնում:

- Մշո Սուլթան Սուրբ Կարապետ

Քըզի պահապան, Վա՛րդ:

Ու այսպես շարունակ առաջ շարժվելով մեկ ուղիղ, մեկ ճիշտ, մեկ սխալ՝ գնում էր, ամեն գյուղի մոտով անցնելիս հարցնում, արդեն գիտեր, որ Սև ծով է գնում, Բոսֆորի նեղուցը պիտի անցնի, որ ազատ շունչ քաշի մի քիչ:

Այս բոլոր տեղեկությունները աստիճանաբար էր հավաքել: Ձին փոխեց, ուրիշն առավ, հոգնել էր ձին, այլևս առաջ չէր գնում: Շուտով ձիու պետքություն էլ չունեցավ, փոխադրվում էր ուրիշ միջոցներով: Անցել էր արդեն մեկ ամիս. ցերեկները առաջ գնալով, գիշերները թաքնվելով մի ժայռի տակ, մի ծառի տակ՝ անքուն, երբեմն էլ սոված, ծարավ, երբ սարերով էր գնում:

Հիմա արդեն մարդկանց մեջ էր, ինքն էլ իսկական թուրքի կերպարանքով՝ չադրայով, աչքերի դեմը քողով, որ աչքերին ոչ մեկը չնայի, վտանգավոր էին շատ իր աչքերը: Փնտրում էր ճամփան, որ Ստամբուլ էր տանում, բայց իրեն տանում էին արդեն, կարիք չկար փնտրելու:

***

Ահա Ստամբուլը: Վարդը ապշած շրջում էր, նայում, զարմանում. առաջին անգամ էր քաղաք տեսնում, այն էլ այս մեծության: Հիմա ինչպես պիտի գտնի իր ճամփան այս խառնիխուռն փողոցների մեջ: Հարցնելով գտավ իր ճամփան, թուրքերեն գիտեր, լեզու կար բերանը, և իրեն հասկանում էին:

Ոչինչ, որ թուրք չէր, ո՛վ գիտի, թե ով է ինքը:

Վարդն էլ նկատեց, որ մարդիկ խուսափում են պատասխանելուց, կարծես վախեցած են, այո՛, ժամանակները վախենալու էին: Հարց էր տալիս, երբ դեմքով բարի մարդու էր հանդիպում, միշտ մտածում էր, հայ կլինի ու մոտենում էր, հարցնում. «Այս մարդիկ ինչո՞ւ են կանգնած, ո՞ւր պիտի գնան կամ ինչի՞ են սպասում»: Այսպես անցավ առաջին օրը: Անցնում էր մի փողոցով, երբեմն կարդում էր՝ խանութներին, դռներին ինչ է գրված, շենքերը՝ բարձր, պետք է անցներ ամբողջ մի փողոց, որ նայի, թե մյուս փողոցում ինչ կա: Որքա՜ն փողոցներ անցներ, չգիտեր դեռ՝ ինչ է ուզում, ուր պիտի գնա, ուր պիտի փնտրի իր ծնողներին, արդյոք ո՞ւր են գնացել, բայց ինքը փնտրում էր:

Սիրտը կծկվում էր՝ հիշելով Մուրադին, արցունք էր գալիս աչքերից, ինքը չէր զգում:

Մտքով սիրում էր, խոսում, մրմռում: Ինչ էր փնտրում՝ ինքն էլ չգիտեր: Մի գյուղացի երիտասարդ աղջիկ այս մեծ քաղաքում ինչ պիտի անի, ո՞ւր պիտի գնա: Մի փողոցի վրա հեռվից կարդաց «Ղոնաղ օդասը». կասկածելով մտավ, հարցրեց, թե ինչ է նշանակում:

Պատասխանը եղավ, որ կարող է գիշերել, բայց պետք է վճարել:

Կարծես Աստված մի դուռ բացեց, դուրսը չի մնա, մնալու տեղ ունեցավ այսօր: Համաձայնեց. արդեն ուշ էր, ինքն էլ շատ հոգնած էր, կոշիկները ոտքերը ցավեցրել էին: Տանից դուրս գնալու ժամանակ չարոխներ ուներ ոտքերին, ամբողջ ճանապարհը դրանցով անցավ: Վերցրել էր կոշիկները նաև: Այդ գիշեր հանգիստ քնեց, ապահով: Առավոտյան դուրս եկավ ու շարունակեց քայլել, բայց դուրս գալուց առաջ հարցրեց, թե ինքը որտեղ է գտնվում, հյուրանոցին մոտիկ ինչեր կան, ծովը մոտիկ է, թե ոչ: Հյուրանոցի տերն ասաց, որ ծովին հասնելու համար իրեն երկու փողոց է մնում, որ անցնի:

Վարդը դուրս եկավ հյուրանոցից՝ չմոռանալու համար լավ նայելով տեղը, Աստված գիտի, միգուցե նորից պետք գա, բոլորովին սուղ չէր, և շատ խանութներ կային չորսբոլորը՝ օգտվելու համար:

Նավամատույցում խմբված էին մարդիկ, սպասում էին նավերին, մեկը գնում էր, մյուսը՝ գալիս: Վարդը նայում էր մարդկանց՝ չիմանալով ինչ անել: Շրջում էր մտածելով, կարող էր լսել մեկին, որ հայ է և հայերեն է խոսում:

Բոլորը կամ թուրքերեն էին խոսում, կամ չէին խոսում: Այդ օրը այդպես շրջելով, այստեղ անցկացրեց, դժվար էր ինքնուրույն մտածել, թե ինչ պիտի անի: Բայց սիրտը վկայում էր, որ անպայման մի հայի կհանդիպի ու այդպես մի քանի օր անընդհատ գնաց ու եկավ, մնաց և շրջեց ամբողջ օրը: Մոտեցավ նավերին, հեռացավ: Նայում էր մարդկանց, լսում խոսակցությունները:

Մի օր, երբ շատ էր մոտեցել նավին, բայց չէր բարձրանում ու խանգարում էր անցորդներին, հրմշտեցին, նեղվեց ու հայերեն ասաց. «Ո՞ւր էրթամ»: Մարդը շատ հեռու չէր ու լսեց,

հասկացավ հայ լինելը: Նա արդեն քանի օր էր նկատում այդ կնոջը ծպտված: Կողքից անցնելով ասաց. «Ո՞ւր կուզես էրթալ»: Վարդը ուրախացավ, ասաց. «Ծնողքս կփնտրեմ»:

- Բոլորը աստեղեն կանցնին, նստի՛ր, տանիմ,- քթի տակ մռմռաց Մարդը,- այն կողմը անցնինք, կխոսինք, նստի՛ր, շո՛ւտ:

Վարդը նստեց լուռ, նավը շարժվեց:

Վարդը առաջին անգամ ծով էր տեսնում: Ծովի գեղեցկությունը, ալյակների փայլը արևի տակ, ջրի խորությունը տպավորիչ էին շատ, այդ բոլորի հետ իր սրտի վախը ճնշում էր չդիմանալու աստիճան:

Մարդ որքա՞ն կարող է դիմանալ: Լավը զուգակցում է վատին, դրական երևույթը՝ բացասականին, շփոթվում միշտ, ինչպե՞ս կողմնորոշվել. կյանքը շարունակվում է, չի կանգնում, պետք է հետն առաջանալ: Ուրիշ ոչինչ անել չի լինի, պետք է հաշտվել, ուժեղ լինել, չխորտակվել, եթե լողալ չգիտես, պետք է սովորես:

Վարդը մտորումների մեջ էր, երբ հանկարծ նավը կանգնեց: Հիմա ի՞նչ պիտի անի, ո՞ւր պիտի գնա:

Մարդը ոչ մի անգամ Վարդին աչքից բաց չթողեց, հայ աղջիկ է, մենակ, անօգնական, ծնողներին է փնտրում, սրտի վրա ազդեց, երբ լսեց. «Ո՞ւր գնամ»: Ինքը մեծ պարտականություն էր ստանձնել՝ օգնել հայերին, քանի առիթ է, և հնարավորություն ունի: Վարդը քանի որ քաշված էր մի անկյունում, չէր կարող համարձակ նայել չորս կողմը, կորցրեց Մարդուն, այնքան էլ ուշադիր չէր նայել նրան: Նավը կանգնեց, բոլորը հրմշտելով սկսեցին իջնել՝ ուշադրություն չդարձնելով դիմացի իջնողին, բոլորը շտապում էին, բոլորը մտազբաղ էին: Վարդը ուշադրությամբ իջավ, առանց չորս կողմը նայելու, հայացքը ոտքերին անընդհատ: Հանկարծ լսեց, որ մեկը իրեն է խոսում, աչքերը

բարձրացրեց, տեսավ Մարդին՝ գեր, մուգ մաշկով, այս անգամ ուշադիր նայեց ու լսեց ասածը.

- Ո՞վ ես դուն, աղջիկս, ինչ կընես մենակդ այստեղ, ջարդեն փախած ես, ընտանիքդ կըրնամս նկարագրել, ես գրեթե բոլորին կը ճանչնամ, որուն անցուցեր եմ այս նեղուցով: Ըսե, տեսնամ, ով ունիս:

- Հայրս, մայրս և եղբայրս քույրս ամուսնացած էր: Հորս անունը Առաքել է, եղբորս՝ Վաղինակ, գանգուր մազերով տղա էր:

Այդպես որ նկարագրեց, Մարդը սթափվեց, ասաց.

- Այո՛, կը ճանչնամ, հայրդ իր ընտանիքով անցյալ շաբաթ անցուցի, բայց եղբայրդ մեկու մը հետ ամիսներ առաջ էր: Աղջի՛կս, եթե փնտրես հոս, կգտնես իրենց, դեռ գացած չեն կարծիքովս, կուզեին Հունաստան երթալ, Սալոնիկ: Մի՛ հուսահատվիր, աղջի՛կս, ես վստահ եմ, որ պիտի գտնաս իրենց, Աստված հետդ:

Վարդի ուրախությանը չափ չկար, հավատաց Մարդուն, հավատաց Աստծուն՝ ասելով.«Գիտեմ, ինձ չի թողնի»: Շնորհակալություն հայտնեց, հեռացավ:

Առաջացավ ամբոխի մեջ, շուտով բոլորը ցրվեցին, ինքը մնաց մենակ մի փողոցում, իր արտաքին սև կերպարանքով: Նորից ահը մտավ մեջը, սարսռաց մարմինը, մտքերը նորից շփոթեցրին իրեն, մնաց կանգնած, ոտքերը առաջ չէին գնում: Արդեն աղջամուղջ էր, դիմացից եկող մարդկանց իր սև քողի ետևից լավ չէր զանազանում, գլուխը պտտվեց, ընկավ. ամբողջ օրը ոչինչ չէր կերել:

Երբ աչքերը բացեց, տեսավ՝ մի սենյակի մեջ է, մի կին էլ նստած կողքին: Այդ ժամանակ ականջին հասավ. «Ինչ էլ գեղեցիկ աղջիկ է, ով է տեսնաս, ինչ ունի, որ ընկել էր փողոցը»:

Վարդը չհավատաց ականջներին, նորից փակեց աչքերը, կարծես երազի մեջ էր:

- Ինչո՞ւ այսքան երկար մնաց, բայց կարծես աչքերը բացեց, օրիո՛րդ, օրիո՛րդ, աչքերդ բաց,- ու ջուր շաղեց դեմքին:

Վարդը սոսկաց, բացեց աչքերը, երազ չէր, հանել էին գլխից չադրան, քողն ու պառկեցրել մի թախտի վրա: Վարդի՝ խաժամուժի մեջ տեսած դիմացից եկող մարդիկ էին ընկնելուն պես բռնել... իրեն փոխադրել էին, որ չմնա փողոցում, առանց իմանալու, թե ով է, բերել իրենց ժամանակավոր կացարանը: Բարի վերաբերմունք էր ընկածի նկատմամբ:

Վարդն անմիջապես ուզեց վեր կենալ, կինը չթողեց, ձեռքերով արգելեց վեր կենալ՝ կարծելով՝ չի հասկանա իրեն, եթե խոսի: Վարդը ասաց.

- Շնորհակալ եմ:

Կինը շփոթվեց, ասաց.

- Հմ՜ ես:

- Այո՛, հայ եմ:

- Ինչո՞ւ գիտակցությունդ կորցնցուցիր, չըլլա՝ անոթի ես, ինչ ընեմ, բան մը բերեմ կեր:

- Անոթի եմ, այսօր բան կերած չեմ: Արևներուն տակը քանի օր է՝ կպտտիմ, շատ հոգնած եմ:

Ու լռեց: Նորից աչքերը փակեց, բայց արթուն էր, պարզապես հոգնած էր:

- Ինչ եղավ նորեն, օրիո՛րդ:

- Լավ եմ, կլսեմ:

Կինը շուտով մի կտոր հաց բերեց, հետը քիչ պանիր, իրենք էլ ուտելու ուրիշ բան չունեին:

Վարդը նստեց, կոշիկները ոտքերին էին, հանեց, կտոր հացը կերավ, քիչ ջուր խմեց, խելքը գլուխը եկավ:

Այդժամ հարցերը թափեցին գլխին:

- Հիմա ըսե, տեսնամ, ինչ կընեիր մինակդ այս փողոցները,

չեմ տեսնար, ինչ կըլլա: Էքսուգաթակ ջահել սա թուրքերուն ձեռքեն ինչպես պիտի ազատեիր՝ մեր տղաքը քեզի չբերեին, նը:

- Ծնողքս կը փնտրեմ, Մուշեն կուգամ, ամիսներ ավելի է ճամփա կուգամ սարերեն, ձորերեն, ձիով, բնազդս այս կողմը բերավ, ինչևէ, այսօր բան մը գիտցա գոնե, որ հոս ըլլալու են իրենք: Այդպես ըսավ մարդը նավուն վրա: Ըսավ՝ նստիր նավը, ինչ կայներ ես, գրեթե բոլորը, հայերը որ ջարդեն ազատած են, աստեղեն կանցնին, նստիր, ես ալ նստա:

- Էհ, է, ինչպես գիտցավ, հայ ես, աս խլըխովդ, ով գիտնա քո հայ ըլլալդ:

- Ես, ինձի-ինձի խոսեցա հայերեն, լսեց ու ադպես ըսավ ինձի: Հետո ալ նավեն իջած ատենս հարցուփորձ ըրավ, ըսելով ինքը բոլորին կը հիշե, երբ կը տեղափոխե, ըսինը ճանչցավ, ըսավ գնա հոս կգտնաս իրենց: Եկա ես ալ:

- Ըսպասե, տեսնանք, տղաքը տեղ մը գացին, շուտ գուքան: Անոնք շատ մարդ կը ճանչնան:

Այդպես խոսում էին, երբ դուռը բացվեց, ներս մտան տղաները:

Այդ ժամանակ Վարդը նրանց ասաց հոր անունը: Պատմեց, որ քույր ունի, ամուսնու անունը՝ Մոսո: Ասաց, որ նավի Մարդը ճանաչել է նրանց, վստահեցրեց, որ նրանք էլ այստեղ են: Այդքան բանին տեղյակ է ինքը:

- Այդպես ըսավ Մարդը:

- Չըլլա՞ այն մարդն է սրճարանին մեջը,- ասաց մի եղբայրը՝ նայելով մյուսին:- Կարծեմ անոր անունն Առաքել ըսավ:

Վարդը անմիջապես տղայի ձեռքը բռնեց, ասաց.

- Ո՞ւր է, ինչպես տեսնամ անոր:

- Դուն ըսպասե հոս, մենք երթանք սրճարանը փակվելեն

առաջ, ինքը միշտ հոն կըլլա, ան գարսոնին ծանոթ է, կարծեմ շաբաթ մը առաջ եկած են:

Երկու եղբայր գնացին, Վարդը սկսեց լաց լինել, սիրտը այլևս չէր համբերում: Ուզեց ջուր խմել, շատ վատ էր զգում: Ուժգին հեկեկում էր, միտքն ու հոգին շփոթված էին, տեղը չէր գտնում:

- Արդյոք ճի՞շտ են, պիտի անոնց տեսնամ, չեմ հավատար, արդյո՞ք ինքն է, ա՛խ, հայրս:

Այլևս ոչինչ չուներ անելու Վարդը, պետք էր սպասեր, համբերեր:

Վարդի կարծիքով՝ տղաներն ուշանում էին: Տղաների մայրը հուսադրում էր՝ ասելով.

- Կուքան հիմա, երանի հայրդ ըլլար:

Այստեղ տեսնում ենք հայի բնավորությունը, մտերմիկ հոգատարությունը, այն, որ կարող է իր սեփական վիշտը մոռանալ, ուրիշ մեկին սփոփելու համար: Հիմա առաջնայինը Վարդի վիճակն էր: Այո՛, դիմացինի մխիթարությունն էր իրեն հետաքրքրում, չնայած որ ինքն էլ մեկ ուրիշի մխիթարության կարիքն ուներ:

Բոլորն այսօր տարագիրներ էին, գաղթականներ, աղճատվածներ: Խեղճ կինը մնացել էր իր երկու որդիների հետ, մնացած ընտանիքին թուրքը ջարդել, սպանել, տունը ավերել էր:

Նա էլ ճզմված սիրտ ուներ, անմխիթար, առավոտից իրիկուն արցունքն աչքերին պտտվում է այս սենյակի չորս անկյունը, սպասում հետագա ճակատագրին: Նրանք էլ երկար ճամփա էին անցել այստեղ հասնելու համար: Տղաները դուրս էին գալիս, բայց շուտ-շուտ գալիս էին իրենց մորը տեսնելու համար, մենակ թողնել չէին ուզում:

Ցավալի է, այո՛, բայց այդպես է:

***

Տղաները հասել էին այն ժամանակ, երբ սրճարանի դուռը փակելու վրա էին, մարդ չէր մնացել արդեն: Սրճարանի տերը շատ տեղեկություն չուներ, բայց ասաց. «Այո՛, մեկը կա, որուն անունը Առաքել է, կարծեմ, հետն ալ ուրիշ տղա մը կա, երկու հոգով, կուգան-կերթան: Անոնք Պողոսին ծանոթ են կարծեմ»:

Այդ սրճարանի աշխատողները տիրոջ պես հայ էին, բայց բոլորը՝ թուրքի անունով և թուրքի ձևով հագած-կապած, թուրքի շարժուձևով:

Տղաները եկան այդ բոլոր տեղեկություններով, Վարդին մնում է սպասել մինչև նոր օր բացվի՝ նոր նորություններով, այդքան համբերել է, ստիպված նորից պիտի համբերի:

Բոլորը հոգնած էին, տեղավորվեցին, քնեցին մինչև առավոտ:

Լույսը բացվելուն պես տղաները գնացին: Սրճարանը իննին էր բացվում, առավոյան բոլորը գալիս են սուրճ խմելու: Այնուհետև լսում տեղեկություններ, լուրեր հեռվից, որոշում հետագա քայլերը: Իրար հետ խոսում էին, թե որ օրը որի կարգն է Հունաստան անցնելու համար և այլն...

Եղբայրները եկան, բայց իրենց ուզած մարդն այնտեղ չէր, դեռ չէր եկել: Հարցրեցին Պողոսին, նա էլ չգիտեր, թե երբ պիտի գան: Սրճարանում արդեն շատ մարդ կար, բոլորն էլ թուրքերեն էին խոսում: Սուրճ էին խմում, երբեմն կամաց, երբեմն էլ բարձր սուրճ էին պատվիրում:

Կարծես սուրճ խմելը չէր բոլորի նպատակը, այլ տեղեկություններ քաղելն էր: Ու այդպես շարունակվում էին հաղորդակցվել: Եղբայրները մտահոգ ստիպված էին սպասել՝ աչքերը դռանը հառած, մտածում էին՝ երանի նրանք լինեին:

Ներս մտավ Առաքելը՝ ֆեսը գլխին՝ փումփուլը կողքից կախ

տված: Եղբայրները մոտեցան՝ կասկածանքով հարցնելով, թե Առաքելն է: Այո՛, ինքն էր:

Տղաներն ասացին, որ կուզեն նրան տանել իրենց հետ՝ մեկի հետ ծանոթացնելու համար: Առաքելը կասկածանքով հարցրեց.

- Ո՞վ կըլլա այդ մեկը, ես կը ճանչնամ:

- Ինքը կըսը, օր տի ճանչնաս, և կխնդրե, օր գաս մըր հետ, քանի օր ինքը չի կրնա գալ անձամբ. կին է:

Որ ասացին՝ կին է, որոշեց գնալ:

Երբ դուռը բացվեց, կարծես արևը բացվեց:

Առաքելը աչքերին չէր հավատում, թևերը բացած հասավ, գրկեց աղջկան: Վարդն ընկավ հոր թևերի մեջ լաց լինելով: Մոր և որդիների ուրախությանը չափ չկար. երկար ժամանակ էր՝ չէին ուրախացել այդքան:

Այս տեսակ անակնկալ շատ քիչ է պատահում, այսքան ժամանակ Առաքելը կասկածանքով էր ապրել՝ կարծելով, որ այլևս չի տեսնելու աղջկան:

Այսօր իր երջանիկ օրերից մեկն էր:

Վարդը հագավ հագուստը, չադրան ու սև քողը քաշեց աչքերին, հագավ սոլերը. արդեն չէին ցավում ոտքերը, ոչինչ, ցավեն էլ, չի զգա ուրախությունից:

Առաքելը ֆեսը դրեց գլխին ու շնորհակալություն հայտնելով, գնացին՝ արդեն բարեկամացած:

Շատ երկար չքայլեցին, մի քանի փողոց միայն:

Դուռը բացվեց, ներս մտավ Առաքելը՝ մեծ հարգանքով ճամփա բացելով հետևի մտնողին:

- Աս ինչ է,- եղավ Սաթոյի արտահայտությունը խոժոռ դեմքով:

- Կնի՛կ, նստի՛, խոսելեդ առաջ քաղաքավարությո՛ւն ունեցի, մընք մըր գեղում չենք:

Սաթոն նստեց՝ կարծելով նստելը քաղաքավարություն է:

Այդ ժամանակ Առաքելը աղջկա քողը բարձրացրեց: Բոլորը քարացած սպասում էին, երբ Վարդի դեմքը տեսան, սկսվեց մի ահավոր գոռում-գոչյուն, գրկախառնություն, լաց:

- Ամեն, կամաց բոռացեք, զգույշ խոսեք, նստեք,- ասում էին աջ ու ձախից՝ իրար նայելով: Բոլորը լաց էին լինում, խոսել չէին կարող, չգիտեին՝ ինչ խոսեն, ինչ հարցնեն, որտեղից սկսեն, ուզում էին ամեն ինչը միանգամից իմանալ, այնքան բան կար, այնքան տրտում բաներ տեսան՝ եթե մի դար պատմեն, չի վերջանա:

Առաջին հարցը հայրը տվեց.

- Ինչպես եղավ, որ եկար և ոնւր էիր այսքան ժամանակ:

- Փախա, հայրս, փախա, երեխաս թողեցի, փախա,- ու բուռ-բուռ արցունքները թափեց աչքերից:

Հայրը փաթաթվեց աղջկան, ուրեմն երեխա էլ ունի. «Վայ, վայ իմ աղջիկը»:

Բոլորը լուռ լաց էին լինում. կարծես սգո տուն լիներ: Թուրքն էլ ինչ կարող էր անել, ինչ մնաց, որ չի արել:

- Ես փախա, թողեցի սիրտս այնտեղ, լինի թուրք, թե հայ՝ իմն է, թողեցի եկա, թող իրեն մնա, իր արյունն է, իրեն տվեցի, իմ ջահել կյանքս գողացավ, տարավ, չթողեց, որ ես էլ ընտրեմ իմը, որ մեզանից եղածն էլ իմը լիներ, թող իրեն լինի և չեմ ուզում հիմա, հետո էլ Աստված մեծ է: Որոշ ժամանակ անցնելուց հետո մայրը խոսակցությունը փոխելու նպատակով սկսեց, իր սովորության համաձայն, իրար հետևից ուրիշ հարցեր տալ, նախ՝ առողջություն մասին, հետո ինչպես եկավ, որքան ժամանակ տևեց գալը, որ տեղերով եկավ, ինչով եկավ և հետո ինչպես իմացավ, որ այստեղ կտեսնի իրենց:

Վարդը այս բոլոր հարցերին պատասխանեց միայն մի քանի բառով, շատ երկար կլիներ, եթե մանրամասնորեն պատմեր.

այս բոլորին դեռ ժամանակ շատ կար, հիմա կարևորը, որ գտան իրար:

Այդ րոպեն շատ աղմկալից անցավ, արթնացրեց փոքրիկ Վահանին, որն աչքերը բացեց ու սկսեց անհանգիստ շարժումներ անել գղգղալով:

Արեգնազը մոտեցավ երեխային ճիշտ այն ժամանակ, երբ քույրը սրտաճմլիկ ձևով պատմում էր իր երեխային կորցնելու մասին: Գրկեց ու փութով սեղմեց կրծքին վախի զգացումով:

Այդ ժամանակ երկու աղջիկները մոտեցան, և մեկը վերցրեց ձեռքից Վահանին ու համբուրեց:

Բայց Վարդի աչքից չվրիպեց, լավ տեսավ ամեն ինչ. համբուրեց քրոջը՝ մտածելով, դու ինչ մեղք ունես, կամ քո երեխան: Մոսոն ուրախացավ, շատ էր փնտրել, հույսը կորցրել էր: Մի քանի րոպեով անհետացավ սենյակից: Վերադարձավ մի շիշ գինի և մի տուփ խմորեղեն ձեռքին, դժվարությամբ կարողացավ դուռը բացել ու փակել. ձեռքերը զբաղված էին: Բոլորը ետ նայեցին, միայն ինքը կարող էր այս անակնկալն անել. բոլորը զբաղված էին, բոլորը՝ հուզված: Տեսնելով բերածները՝ ուրախացան, անմիջապես սեղանի վրա դրեցին խայտաբղետ բաժակները՝ մեկը մեծ, մյուսը փոքր, խմեցին գեղեցիկ հանդիպման առիթի համար: Շատ խոսեցին, անցյալը թողեցին անցած, նոր անելիքների մասին խոսեցին:

Վարդին էլ տեղյակ պահեցին իրենց նպատակների մասին, նախ գնալ Հունաստան, այնուհետև՝ Ամերիկա, որովհետև Վաղինակին այնտեղ պիտի գտնեին:

Առաքելը փող ուներ, բայց տեսան, որ այնքան շուտ էր դատարկվում քսակը, որոշել են անցնել Հունաստան, աշխատել, որ գնան Ամերիկա, բայց Հունաստանն անցնելու համար էլ պետք է սպասեն, շատ մարդ է ցուցակագրվել արդեն. դա լինելու է գաղտնի ճամփով: Մնացին մեկ ամիս այնտեղ մի թաղամասում՝

շատ մոտ Հունաստանի սահմանին: Առանց աշխատանքի միայն ծախսում էին շատ խնայողաբար, ամեն ինչին ուշադրություն դարձնելով: Ընտանիքը մեծ էր, ծախսերը՝ շատ: Մոսոն արհեստ ուներ, բայց ուր գործ գտներ: Տեղափոխվել էին այստեղ՝ մեծ տուն, բայց իրենց ընտանիքի համար սա էլ փոքր էր: Այստեղ նոր մարդկանց ծանոթացան, բոլորն էլ նույն ձևով էին ապրում: Տղամարդիկ շարունակում էին գնալ նույն սրճարանը, ուր ամեն օր նոր մարդիկ էին մտնում, ամեն նոր մարդ նույն ցավից էր խոսում, պատմում: Ճիշտ են ասում, որ ցավոտ սիրտն է խոսել տալիս, եթե չխոսի, կպայթի:

Այնպես է, որ չլսել էլ չես կարող, չես կարող անտարբեր անցնել:

Ինչպես չլսել, երբ ողջ մի ազգ վերացնելու մտքով ամբողջ Փոքր Ասիայի հայությանը աքսորի անվան տակ քշում են դեպի Դեր- Զորի անապատները՝ ճամփա հանելով օրորոցի երեխայից մինչև իննսունամյա ծերունու՝ սոված, ծարավ, հայ հարսներին ու կույսերին առևանգելով, թալանելով ունեցվածքը բոլորի:

Ընդունելի պիտի մնա՞ ամբողջ աշխարհի կողմից, եթե այո՛, մինչև ե՞րբ:

Հայկական խնդիրը, որ իրենց խանգարում էր, միայն վեց նահանգները չէին (Կարին, Վան, Բաղեշ, Խարբերդ, Սեբաստիա, Տիգրանակերտ), նաև սրանցից դուրս՝ ուրիշ գավառներ էլ, և ամբողջ երկրում իրագործվեց իր օրենքը՝ բնաջնջել հայերին:

***

Առաքելի ընտանիքը, ինչպես տեսանք, գնալով մեծացավ, բազմանդամ դարձավ, առանց աշխատանքի մնացին երկար ժամանակ, ու դեռ հայտնի չէր գնալու ժամկետը:

Ընկերների և ծանոթությունների շրջանակը գնալով մեծանում էր, բայց իրար հանդիպում էին առանձին օրերի, տարբեր ժամերի, խմբով ոչ մի բան չէին անում կասկած չառաջացնելու համար: Բայց ծանոթության շրջանակը իրոք մեծ էր: Երբ մտնում էին տուն, խոսում, պատմում էին այնքան, որ տան անդամներն էլ գիտեին, թե ինչ է կատարվում չորս պատերից դուրս:

Այսօր Մոսոն պատմեց երկու ընկերների մասին, որ առաջին անգամ էին եկել սրճարան՝ իմանալով, որ շատ հայեր են լինում այնտեղ:

Նրանք գիտեին, ճանաչում էին Պողոսին:

Որտեղ որ ապրում էին, հայ չկար, և շփում չունեին հայերի հետ:

- Որ տեսնես, ճիշտ թուրքի նման հագված, չես տարբերել թուրքեն: Նրանք շատ ժամանակ է, որ թողած են իրենց գյուղը, իրենց գյուղեն հեռացել են երկրեն դուրս գալու նպատակով, բայց մինչև հիմա հոս են: Այդ ժամանակ դեռ այս խնդիրները չիկար ըսին, չեն գիտեր իրենց ծնողքը ինչ եղած են, կան թե մեռած են: Լավ մարդիկ էին, հայրի՛կ, դուն ինչպես տեսար անոնց:

- Երիտասարդ տղաք էին, ըսին կաշխատին թեյարանի մը մեջ, փող կվաստակեն, Բուլգարիա կուզեն երթալ: Ամերիկայի մասին խոսեցանք, ըսին շատ հեռու է:

Բոլորը հետաքրքրված հետևում էին խոսակցությանը, որովհետև նոր ծանոթներ էին:

- Մեկ ընկերը ըսավ, շուտ էր լսած այս սրճարանի մասին, որ այնտեղ շատ տեղեկություններ կարող եք ունենալ, մենք ալ մեր ծնողների մասին կուզենք իմանալ.

- Ան մեկը, նամանավանդ Սերոբը:

- Սերո՛բ, հա՛, Սերոբ ըսավ, գիտեմ:

- Հա՛, Սերոբ էր, մեկելի անունը չգիտցա:

- Սերո՛բ, ի՞նչ Սերոբ, իսկ մյուսի անո՞ւնը...

Երկու աղջիկները իրար նայեցին

- Ինչ Սերո՛բ, լսեցի՞ր, Ալվարդ, Սերոբ ըսավ,- վրա տվեց Սիրունը:

- Ինչպիսի՞ տղաներ էին, իմ գիտեցած Սերո՞բն է արդյոք:

- Ինչպե՞ս բացատրեմ, նիհար, քիչ մը կապույտ աչքեր ուներ:

Այդ լսելով՝ Սիրունը գույնը փոխեց, ձեռքը մեկնեց Ալվարդին, ուրախությունից միայն ժպտաց:

- Երանի մյուսի անունն ալ Սաքո ըլլար:

Հորեղբոր երկու աղջիկները իրար մոտեցան ու սեղմվեցին, կարծես սարսուռ անցավ իրենց մարմնով, ջերմություն էին ուզում իրարից:

Կյանքը որքան ակնկալիքներով լի է, որ ստանում ենք անակնկալներով:

Այդ ժամանակ բոլորը իրար նայեցին, ոչ մի բան չէին հասկանում, միայն Մոսոյի քույրը ժպտաց, քանի որ միայն ինքը գիտեր աղջիկների գաղտնիքը: Բայց դեռ մեծ կասկած կար, ոչինչ հայտնի չէր: Աղջիկները սկսեցին լաց լինել ուրախանալու

փոխարեն, ոչինչ չասեցին և մնացին իրենց մտորումների մեջ: Հիշեցին իրենց անցած ճանապարհը, գյուղից դուրս գալը, իրենց ծնողներին, ընտանիքին ամբողջ:

Շուտով քնելու ժամն էր. բոլորը պառկեցին:

***

Այդ գիշերը երկու աղջիկները չքնեցին՝ ամեն մեկն իր տեղում պառկած: Վերհիշեցին իրենց լավ օրերն ու երջանիկ սերը, լավ թե վատ օրերը իրենց օջախում ծնողների, եղբայրների հետ:

Առավոտյան Առաքելն ու Մոսոն գնացին սրճարան, այսօր պարտականություն ունեին. պետք է իմանային, թե այդ տղաները ովքեր էին:

Իսկ տանը աղջիկները մեծ հույսով սպասում էին՝ Աստված կանչելով:

Նորից շատ դեպքեր հիշեցին, մեծ ծնողներին ինչպես են սպանել ջարդի ճամփին, հիշեցին ծնողներին և եղբայրներին, ու ողբում էին, միայն իրենք էին մնացել, այն էլ այս ընտանիքի շնորհիվ:

Սաթոն, Արեգնազը, Վարդը և Փառանձեմը նստած տրտում դեմքով և արցունքոտ աչքերով հետևում էին ամեն մի տեսարանին և պատկերացնում. իրենք այդքան չէին տեսել, ճիշտ է, տանջանքով են հասել այդտեղ, բայց ոչ այդպես: Այս ցավն ընդհանուր է, ցավը բոլորին է:

Այո՛, ողջ ես մնացել, բայց ինչ է լինելու վերաբերմունքը կյանքի նկատմամբ:

Արդյո՞ք այդ անմարդկային արարքը պիտի կարողանան վերլուծել, ինչպե՞ս պիտի կարողանան ներել այն մարդկանց, որ սառնասրտությամբ աչքիդ առաջ վերջ է տվել քեզ համար շատ թանկ էակների: Ինչպես ասում են, «Կրակը ընկած տեղն է վառում»:

Կրակը հայերի վրա էր ընկել, ինչպես հասկացնենք ուրիշներին, որ մենք վառվում ենք դեռ և ներել չենք կարող:

Առաքելն ու Մոսոն նստած էին սրճարանում. երբ այդ տղաները ներս մտան, բարևեցին ու նստեցին մի սեղանի մոտ: Սուրճ ուզեցին, ինչպես գիտենք, ճանաչում էին Պողոսին: Երբ նստեցին, Մոսոն մոտեցավ, հարցրեց.

- Ներեցեք, դուք Սերոբն եք:

- Այո՛,-պատասխանեց Սերոբը:

- Դուք ով կըլլաք, ներողություն:

- Ես, Սաքո է իմ անունը, ինչո՞ւ կհարցնեք:

- Կուզեի ստույգ իմանալ, քանզի երկու հոգի կճանչնամ, որ կարծիքովս ձեզի ծանոթ են, չեմ գիտեր՝ եթե անունները տալու ըլլամ, պիտի ճանչնա՞ք արդյոք:

- Ըսե՛, տեսնանք:

- Երկու օրիորդներ են. մեկուն անունը՝ Սիրուն, մյուսը՝ Ալվարդ:

Երկու տղաների բերանները բաց մնացին, ապշած իրար երես նայեցին, ժպտացին, և երկուսը միասին ասացին.

- Այո՛, կճանչնանք, ուր են, կրնանք տեսնալ: Երա՛զ կտեսնանք, ինչ է:

- Իրենց տեսնելու համար մեզի պետք է գաք:

Երկու տղաները ոտքի ելան:

- Հայդե, գացինք, հիմա կրնանք գալ, մենք պատրաստ ենք, աս ինչ անակնկալ է:

Առաքելը հեռվից հետևում էր խոսակցությանը. որքան էլ նրանք ցածր էին խոսում, զգաց, որ համաձայնեցին մի հարցի շուրջ: Սրճարանից դուրս եկան թուրքերեն խոսելով դատարկ բաների մասին, գնացին:

Դուռը բացվեց, խոսակցությունը ընդհատվեց, Մոսոն ներս

մտավ, այնուհետև Առաքելը կանգնեց դռան շեմին, բայց երևում էր, որ ետևում մարդիկ կան:

- Հիմա տեսնանք, իրար պիտի ճանչնա՞ք, աս տղաքը ո՞վ կըլլան ձեր կարծիքով,- ասաց ու հեռացավ դռնից:

Աղջիկները հավատացին, իսկ տղաների աչքերը փայլեցին: Մոտեցան, և ամեն մեկն իրենն առավ թևերի մեջ, ու համբուրվեցին, այնուհետև զույգերը փոխվեցին՝ կրկին համբուրվելով: Մի քանի վայրկյան լռություն էր, խոսելը մոռացան: Բոլորին հայտնի եղավ, որ այս զույգերի մեջ զգացմունք կար ժամանակ ի վեր. դրանից հետո սակայն կարոտը վառ է պահել սերը: Չգիտեին որտեղից սկսել խոսակցությունը, երբ Առաքելը խոսեց՝ ասելով.

- Ըսեք տեսնանք՝ դուք ինչ եք իրարու և երբվանի՞ց իրար կճանչնաք, որտեղի՞ն: Մնացածը թողնենք, հետո կխոսինք: Մի քիչ ուրախ բաներ խոսինք: Հատե, խեր ըլլա, ըսեք տեսնանք՝ իրարու ինչ կըլլաք:

Տղաներից մեկը բացատրեց, որ իրենք երկու ընկեր են և սիրահարվել են այս աղջիկներին, որ հորեղբոր աղջիկներ են: Իրենք իրենց ծնողների համաձայնությամբ թողել են գյուղը, հասել այդտեղ և նպատակ ունեն Բուլղարիա գնալու և հաստատվելու այնտեղ: Արդեն երկու տարուց ավելի է, որ այստեղ են, որովհետև աշխատանք ունեն, բայց արդեն բավարար փող ունեն ծախսերը վճարելու համար և պիտի գնան:

Տղաներից մեկն ասաց.

- Հիմա տեսնանք՝ այս նոր վիճակը ինչպե՞ս պիտի հարթենք:

Սերոբն ու Սաքոն շատ ուրախացան, բայց չգիտեին ինչ անել: Որոշեցին առայժմ մնալ ով որտեղ է, մինչև կարողանան ամեն ինչը անել կարգով: Բոլորն էլ անորոշ վիճակի մեջ էին, այդ կարճ ժամանակամիջոցում հնարավոր չէր ամեն ինչ հասկանալ, օրինակի համար՝ այս աղջիկներն ինչ գործ ունեին այդ մարդ-

կանց տանը, արդյոք բարեկամական կապ կա և մնացյալ բաները:

Այնքան իմացան, որ կան, ողջ են և որտեղ են: Մոսոն, Առաքելը ճիշտ համարեցին որոշումը. եթե իրենց տանն են, ուրեմն հանդուրժել են, և տղաները ոչ մի պաշտոնական նախաձեռնություն դեռ չեն ունեցել: Այդ ամենը պետք է որոշվի և, իհարկե, պետք է լավ մտածել ճիշտ լուծում տալու համար, այդ դժվար խնդիր է և հատկապես հիմա: Միայն կարող էին մի քիչ դրամով օգնել աղջիկներին, այն էլ շատ չնչին, որովհետև նրանք էլ նույն վիճակի մեջ էին:

Խոստացան այդ մասին մտածել՝ հավաստիացնելով, որ իրենց զգացմունքները պահպանած ունեն իրենց սրտում: Հուսադրելով բոլորին՝ գնացին: Գնացին՝ ստույգ ժամկետ չտալով հաջորդ հանդիպման մասին:

Սիրունին ու Ալվարդին մնում էր համբերել, ավելի ստույգ, երազել, որ իրականություն դառնա իրենց փշրված սրտի այդ միակ հույսը՝ վստահ, որ այդ էլ սփոփանք լինել չի կարող: Շատ խորն է վիշտը...

Ամեն գիշերվա մի մասը մտքով դեռ գնում էին աքսոր բոլորի հետ, զգում մտրակների հարվածները, ցնցվում՝ ցավ զգալով: Դեռ չէր լավացել իրենց մարմնի՝ հարվածների սպիները՝ ուռած, դեռևս կարմիր, և դրանք մնալու են իրենց ամբողջ կյանքում, ապացույց չարչարանքի, Քրիստոսի ձեռքերի բևեռների նման:

Ինչո՞ւ, ինչ մեղք էր գործել այդ անմեղ հայ օրիորդը և հազարավոր իր նմանները...

Մտածում էին իրենց եղբայրների մասին, ողբում անհայտ մտորումների մեջ, արդյոքների և միգուցեների միջև: Մատղաշ տղաներ՝ 12, 14, 15 տարեկան, դեռ արբունքի չհասած, գնում էին մատաղ լինելու՝ կյանքի գեղեցկությունը չտեսած: Հիշում են, որ ծնողները կրկնում էին.

«Գևո՛րգ, Գեղամ, Բենիամի՛ն, առիթ եղած ատեն փախե՛ք, մեզի մի՛ նայեք, կտեսնաք՝ ինչ կընեն», միշտ «Փախե՛ք, փախե՛ք, մեզի մի՛ նայեք, իրար չըկորսնցնեք, իրարու տե՛րը եղեք, դուք հայ եք, դուք քրիստոնյա եք, ձեր ոտքերին ուժ կա՝ փախեք»:

Այդպես անցնում էին օրերը, ամիսները ու միշտ նույն տեղում էին. իրենց հերթը չէր հասնում, պիտի սպասեին:

Սերոբն ու Սաքոն լավ տեղեկացել էին, թե Առաքելի ընտանիքը ինչպես և որտեղով պիտի անցնի Հունաստան: Դեռ որոշված չէր, թե երբ իրենք էլ կլինեն Բուլղարիայում, թեպետ աշխատանքը խոստացել էին. մնում էր՝ մի քիչ աշխատեն, տեղավորվեն, հետո մտածեն ամուսնանալ, այդ բոլորի մասին խոսել էին Առաքելին, որ Առաքելը վստահ լինի աղջիկների ճակատագրի մասին:

Վարդի օրերն էլ շատ դժվար էին անցնում: Զբաղվում էր Վահանով: Վահանը մեծանում էր, սիրում էին բոլորը նրան, մի գրկից մյուսին էր անցնում, արդեն լավ ճանաչում էր բոլորին և շատ անգամ ինքն էր զբաղեցնում բոլորին, երբ տեսնում էր, որ իր վրա ուշադրություն չէին ուզում դարձնել:

Վարդը գրկում, սիրում էր, խոսում հետը, օրվա մեծ մասը ինքն էր ուշադրություն դարձնում, եթե չասենք էլ այդ մասին, պարզ էր, որ սրտում նաև սիրում, գուրգուրում էր իր երեխային: Տրտում էր միշտ ինքը, աչքերի մեջ երևում էր միշտ արցունքի մի փայլ, բայց այլևս չէր կաթում:

Երբեմն քույրը խոսում էր հետը Մուրադի մասին՝ հուսադրելով, որ կմեծանա ու կփնտրի, կգա մոտը, կամ ինքը կգնա, կտեսնի, եթե կարողանա, կօգնի: Դաժան են երբեմն կյանքի հորձանքները, ոմանց միշտ հորդորում էր, ասում.

- Տե՛ս, որքան բաներ են կատարվում բոլոր հայերի գլխին, որ դեռ շարունակվում են, մի՛ նայիր, որ մենք փախանք այդ ճակատագրից, քո երեխան էլ չի տեսնի դա, վստահ պետք է

լինես: Այդքան ճամփա եկար, ճիշտ է, չտեսար, բայց չլսեցիր՝ ինչեր ըրած են թուրքերը, հղի կնոջ երեխան հանել են խշտիկի ծայրին, մայրը մեռել է, այդ անմեղ երեխային էլ չեն թողել, որ աչքը բացի, լույսը տեսնի:

Ուրախ չե՞ս՝ քո երեխան ապահով մեկի ձեռքին մեջ է, հայր էլ ունի, թուրք-մուրք, ինչ որ է: Կապրի, մի՛ մտածիր, դու մեղք չունես, ու մեկը քեզ չի մեղադրի, քո կամքով չես առել այդ թուրքին, ինքն է քեզ փախցրել առանց հարցնելու՝ սիրո՞ւմ ես, չե՞ս սիրում, լաց մի՛ լինիր:

Արեգնազը այդպես խոսեց քրոջը: Վարդը լուռ լսում էր ու ոչինչ չպատասխանեց, ճիշտ էր քույրը, բայց մայր է և շատ ջահել, դեռ քսան տարեկան չկար: Բոլորը գրկում, սիրում էին իրեն, հայրը, մայրը գտել էին իրենց կորած զավակին, չէին հավատում, որ կրկին կտեսնեն: Իրենք էլ իրեն թողեցին, փախան, գրեթե նույնն էր իր ծնողների համար, դեռ ինքը գիտի, թե որտեղ է երեխան, ում խնամքի տակ է գտնվում:

Մոսոն ու Արեգնազը սիրով ամուսնացան, բայց հետագա պայմանները շատ դաժան ազդեց իրենց վրա: Ամուսնության օրվանից չէր անցել շատ ժամանակ, թալանները վրա եկան, այդ բոլորը այնքան անսպասելի ու վատ հետևանք ունեցան, սիրելու և սիրվելու ժամանակ էլ չունեցան: Մտածում էին միայն՝ վախն էր գերիշխում ամեն ինչին, փախուստ, ճամփաներ, հոգնություն:

Ամեն տեսակի բացասական երևույթները հաղթահարելով՝ մեծ դժվարությամբ հասան այստեղ, ու դեռ շարունակվում է:

Իթթիհատական միությունը, թուրք ազգային կոմիտեն ընդունեցին հայ ժողովրդի բնաջնջման եղերական ծրագիրը՝ ով որ հայ է, կեցած տեղը մնա, իրավունք չունի ուրիշ քաղաք կամ ուրիշ վայր տեղափոխվելու:

Բոլոր հայ պաշտոնավորներին ազատել գործից:

Ձինաթափ անել հայի:

Աքսորի անվան տակ բոլոր հայերին քշել Դեր-Զոր բոլոր հայկական նահանգներից: Գեղեցիկ հարսերին, աղջիկներին տանել հարեմները:

Թալանել հարստությունը՝ ոսկի արծաթ ու թանկարժեք իրեր:

Այս սև գործը հաջողությամբ կատարելու համար պետք է մասնակցեին բանտարկյալները և այլազգիները իրենց երկրի:

Այնպես որ, Առաքելի ընտանիքը, ինչպես նաև բոլոր հայերը վտանգի մեջ էին, մինչև որ չթողնեին երկիրը: Այս է, որ այսքան սպասումի առիթ տվեց: Մնացած հայերը, իրար թև- թիկունք եղած, օգնում էին ամեն կերպ ելք գտնելու, թեկուզ ուշ:

Երկու ընկերները՝ Սերոբն ու Սաքոն, այլևս չերևացին: Առաքելի ընտանիքը երկու օրվա մեջ անցավ սահմանը և մտավ Հունաստան, այսինքն՝ կես-կես, նախ Մոսոն իր ընտանիքով, հաջորդ օրը՝ Առաքելը կնոջ և աղջիկների հետ:

Այսպիսով, փրկվեցին և փրկեցին նաև երկու կամ, կարող ենք ասել, երեք հոգի, Վարդն էլ հետը:

Նա ճիշտ ժամանակին հասավ: Եկավ այն ժամանակ, երբ պիտի տաներին ընտանիքի անդամների անունները: Դա էլ համարեցին բախտավորություն, այնպես որ, միշտ ուրախանալու մի բան գոնե կա, որ սփոփում է մարդուն:

Երկրում շարունակվում էր սպանդը նույն ուժով:

Շունչը բերնին պահի՛ր,
Վերջին հայի ճիչը
Դու լսի՛ր, ո՛վ Տեր,
Որ հոգին չավանդի:

Նրանք արդեն թոթափեցին իրենց վախը, բայց միլիոնավոր հայեր շարունակում էին հետևել անպաշտպան այն թափորին, որն իրենց տանում էր Գողգոթա՝ մեկ-մեկ հանգցնելով օջախների կրակն ու ճրագները:

Մշեցի Առաքելն ու մշեցի Մոսոն, առաջին անգամ տեսնելով Ստամբուլը, նախ ապշեցին մեծությունից, հետո անընդհատ մտածում էին՝ ինչպես պիտի կարողանան այդտեղից դուրս գալ առանց նշմարվելու: Ամեն տեղ ոստիկաններ, մարդիկ վախեցած, բոլորի վրայից սառնություն էր փչում: Այս քանի ամսվա ընթացքում շատ բաներ տեսան, շատ բաներ իմացան այն էլ միայն լսելով: Ստամբուլի մեծությունը արդեն վախ էր ներշնչում իրենից, երբ ծանոթ էլ չեն և զգուշությամբ պիտի շարժվեն մեջը, որ չնշմարեն իրենց: Համեմատելով իրենց տեսած Մուշ քաղաքին, ասենք գյուղաքաղաքին, տեսնում էին՝ անհամեմատելի էր: Մուշը իր դաշտով փոքր տարածություն էր զբաղեցնում Բաղեշի վիլայեթում՝ Վանա լճի հյուսիսարևմտյան մասում, ոչ հեռու Վանա լճից:

Խեղճ մշեցին հիմա հասել է Հունաստան, բայց ինչպես մոռանա իր Մուշը, հիմա, երբ վտանգից հեռու է, ավելի շատ է հիշում իր երկիրը, իր վաթանը: Լավ էր, վատ էր, իրենն էր, պատմություն ուներ, հիշողություն, քաջություն:

Այստեղ էր գրչության կենտրոնը՝ Մշո Առաքելոց վանքի դպրոցը: Այնտեղ XIII-XV դդ. ընդօրինակել են Աստվածաշունչը...

Մուշի հայ բնակչությունը մեծ մասամբ զբաղվում էր երկրագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ: Նաև արհեստավորներ էին՝ կոշկակարներ, դերձակներ, ոսկերիչներ, բրուտագործներ:

Մշեցիներն ու սասունցիները խիզախ էին, մարտնչող, մղել են շատ ինքնապաշտպանական մարտեր կեղեքիչների դեմ:

1915 թվականի կեսերին դաժան մարտերը շարունակեցին թուրքերի, չեթեների դեմ, մինչև վրա հասան ռուսական զորքերը և փրկեցին մահից մոտ վեց հազար հոգի, որ գաղթեցին Արարատյան դաշտ, ոմանց էլ իրենց հետ տարան ուրիշ ուղղություններով՝ փրկելու նպատակով:

***

Այդ գիշեր Քամալը, ինչպես Վարդը, չքնեց մինչև առավոտ, մինչ օրը բացվեց: Վարդը վեր չկացավ, մնաց անկողնում:

Քամալը ելավ անկողնուց, հագնվեց, լվացվեց, դուրս գալու ժամանակ չոքեց գետնին, համբուրեց Վարդի երեսը ու դուրս եկավ: Վարդը աչքերը չբացեց, մինչև չզգաց Քամալի ձի նստելը, հետո վեր կացավ և բարի մաղթեց հետևից: Արդեն ամեն ինչ որոշել էր գլխում, հեռանալու է, փախչելու է, թողնելու է...

Սիրտը մաշվում էր կարծես, սիրտը քամվում էր, սիրտը մարում էր կարծես, բայց Մշո աղջիկը որոշել էր: Իրեն չպիտի փախցներ:

Թողնելով իր ամանաթը, իր գանձը, իր ճագը՝ հեռացավ առանց ետ նայելու, եթե ետ նայեր, հետ կգար: Ո՛չ, նա գնաց

Երեկոյան ժամանակից շուտ Քամալը տուն վերադարձավ, երբ իմացավ Վարդի որոշումը, ծնկները կոտրվեցին, գլուխն առավ ձեռքերի մեջ, անզոր սգալով՝ընկավ աթոռին:

Մայրը, երեխային ամուր սեղմած կրծքին, կրկնում էր.

- Յավրո՛ւմ, առանց մայր մնացիր:

- Ինչ անեմ, աննե՛մ, ո՞ւր գնամ, նորից փախցնեմ բերեմ, ո՞ւր գտնեմ:

- Ինչո՞ւ արեցիր, ինչո՞ւ, հարցնեիր՝ ուրիշ ձևով կարող էինք բերել,- ասաց մայրը ու լաց եղավ աղիողորմ, արցունքներով ողողելով երեխայի շորերը:

- Ուրիշ ինչ ձևով, անե՛մ, ես թուրք եմ, ո՞վ կտար ինձ աղջիկ, հայը իր աղջկան չի տա թուրքին, հասկացի՞ր, աննե՛մ, ես թուրք եմ, Քամալ է իմ անունը:

Մայրը տեղը չէր գտնում, սիրտը ուզում էր իրեն դավաճանել, ինչ անի, որ տակից դուրս գա. մեղավոր է ինքը:

Քամալը տեսավ, որ մայրը վատ է զգում՝ երեխան գրկին, հասավ, գրկեց մորը երեխայի հետ միասին, հանգիստ նստեցրեց մի աթոռի, երեխային գրկից վերցնելով՝ դրեց օրորոցը, մի բաժակ ջուր բերեց, խմեցրեց մորը.

- Աննե՛մ, հիմա էլ դու՛ ինձ չթողնես, ինչ ես անում, ես ինչ պիտի անեմ մենակս, իմ երեխան մեղք է, խղճա՛, աննե՛մ, խղճա, իմ երեխան մայր չունի: Ես ինչ հայր եմ, որ չկարողացա մորը պահեմ, որ տղաս մայր ունենար, աննե՛մ:

Ու մղկտում էր Քամալը, շրջում տան մեջ, գնում դեպի երեխան, գալիս մոր մոտ, խփում ծնկներին, լացում, մրմռում: Երիտասարդ էր, քսաներեք տարեկան գեղեցիկ երիտասարդ:

- Դու այդպես չպիտի անեիր,- կրկնում էր մայրը, լաց լինում:

- Ինչպե՞ս, աննե՛մ, ինչ անեի, սիրեցի, ինչ անեմ, սիրում էի, խելքս գնում էր, ուրիշ ձև չկար, ինձ չէր առնի ինքը, չէին տա, թուրք եմ ես:

- Դու թուրք չե՛ս, դու հայ ես, որդի՛, դու հայի զավակ ես:

Տղան լայն բաց արեց աչքերը, շփոթված բռնեց մոր ուսերը, թոթովելով ասաց.

- Ինչ ասացիր, աննե՛մ, ինչ, ես հա՞յ եմ, ինչո՞ւ մինչև հիմա գիտեմ, որ թուրք եմ ես: Պատմիր տեսնեմ՝ այս ինչ պատմություն է, որ ես չգիտեմ:

Ուրեմն իմ հայրը, որին թուրքերը մեռցրեցին, հա՞յ էր: Թուրքերը գիտեի՞ն՝ հայ էր:

- Ո՛չ, չգիտեին, բայց իրենց համար թուրք էր, հայ, ինչ նշանակություն ուներ:

Թուրքը միայն՝ որպես թալանող, կեղեքող, սպանող, ավերող, քանդող, կարող է առաջին մրցանակը ունենալ մարդկային բոլոր ցեղերի մեջ:

Մի ցեղ է, որ դարեր ի վեր քանդել է իր դրացիների շինածը, ստեղծածը: Եթե շինել չգիտի, գոնե քանդելու հատկությունը ունի:

Ասված է՝ եթե ուզում ես մի բան շինել, քրիստոնյա բանվոր բեր, եթե քանդել կուզես, թուրք բանվոր բեր:

***

- Հայրդ՝ Օրհանը, ինքը չի ընտրել այդ անունը, իր հայրն էր ժամանակին փոխել, որովհետև միշտ հայը այս վիճակին է եղել, թուրքը միշտ հալածել է, կողոպտել ու կոտորել է:

Այդպես էլ հայրդ թաքնվեց, ու քեզ էլ պաշտպանելու համար մինչև այսօր ոչինչ չենք ասել: Քեզ ուղարկել ենք ուսում առնելու, ու այսօր աստիճան ունես: Դու գնացել ես Մուշի ամենալավ դպրոցը, ունեցել ես շատ հայ ընկերներ, այնուհետև շարունակել ես ուսումդ: Հիմա գիտես, ինչ որ գիտես, մենք խրվել ենք: Սա մեր հայրենիքն է, ոչ մի տեղ գնալ չկարողացանք:

- Ես աստիճան ունեմ, ինչ պիտի անեմ այդ աստիճանը, եթե ինձ ստիպում են սպանել, կողոպտել, այն էլ իմ ազգին, իմ եղբորը, իմ քրոջը: Փառք Աստծո, որ մինչև հիմա չեմ կարողացել ձեռք բարձրացնել որևէ մեկի վրա:

Ես փախցրի Վարդին, հազար անգամ եմ ինձ մեղադրել, թե ինչու արեցի:

Ես հասկացա, որ նա ինձ չսիրեց ու մեկ օր էլ ասաց. «Երանի թուրք չլիներիր»: Ասացի.

- Ես մեղք չունեմ, որ թուրք եմ ծնվել: Հիմա ինչ եղավ, ինչ անեմ, աննեմ: Հրաման ունեմ կատարելու, պիտի գնամ և ուր պիտի գնամ: Հայերին պիտի տանեմ Դեր-Զորի անապատները՝

մեռնելու: Ես գնալու եմ և չգիտեմ՝ երբ կվերադառնամ: Աննեմ, սիրում եմ քեզ, սիրում եմ Մուրադին, սիրում եմ Վարդին: Աստված անի, որ ողջ մնա, հետո կփնտրեմ իրեն ու կգտնեմ անպայման:

Հիմա ես գնում եմ պարտքս կատարելու, լավ, որ թուրք եմ, շատ լավ է:

Մոտեցավ երեխայի օրորոցին, գլուխը իջեցրեց, համբուրեց, շոյեց ու ասաց. «Դու պիտի հպարտ լինես, որ ինձ նման հայր ունես»:

Արդեն հագել-կապել էր համազգեստը, վերցրեց հրացանը, մորը համբուրեց ու դուրս գնաց:

Մայրը օրհնեց տղային ու լաց եղավ՝ հետևից ասելով. «Դու գործ չունես, եղի՛ր, ինչպես որ ես քեզ դաստիարակել եմ, Քամա՛լ»:

Քամալը պիտի ներկայանար իր աստիճանավոր համագործակիցների հետ՝ իրենց պարտադրված գործը կատարելու: Պիտի փոխարինեին ոմանց, որ արդեն քանի օր է՝ ճամփա էին գնացել՝ հայ գաղթականներին քշելու և հետևելու նրանց ճամփան դեպի մահ:

Չգիտի մարդ՝ քանի օր կդիմանա այդ չարչարանքներին, երբ կավանդի հոգին, որը միակ նպատակն է այդ «շքերթի»:

Քամալի սիրտը տակնուվրա է լինում, խղճում է այդ մարդկանց, որ քանի օր արդեն սոված, ծարավ, այդ քարքարոտ, խորդուբորդ ճամփաներով գնում էին լուռ, արդեն ո՛չ լալիս էին, ո՛չ խոսում, միայն տնքում էին, ընկնում, ելնում, ընկնում մնում էին, ջուր խնդրում: Հերթապահները որոշ հեռավորության վրա էին կանգնում ու անխղճաբար հսկում էին: Քամալը խղճահարված նայում էր ահել, ջահել, մատղաշ երեխաներին

տասնչորս, տասնհինգ տարեկան, ավելի փոքր, կամ իրար ձեռք բռնած, կամ մորը, կամ հորը. սրտաճմլիկ մի տեսարան: Արդեն որոշել էր, պիտի աներ:

Երբ նկատում էր, որ իր հետի զինվորները վազում էին մի դեպքի վրա, իր կողքից գնացող հայերին շուտ հայտարարում էր թուրքերենով՝ ջահելները ինձ մոտենան, ու մնացածներին ձեռքով հանգստացնում՝ ասելով.

- Ուզո՞ւմ եք, որ ազատվեն, ուրեմն լո՛ւռ:

Ջահելները՝ աղջիկ, տղա, շուտ հավաքվում էին իր մոտ, ու ինքն էլ գնում էր կողքից. երբ պիտի անցնեին մի տեղով, որտեղ ծառեր կամ ժայռեր կային, ու մնացողները զբաղված էին ուրիշ բաներով, որ հաճախ էր պատահում. ընկնում էին, կամ միանգամից մեռնում, կամ հավաքում էին գազանի պես սպանելու համար:

Քամալը մեկից հրամայում էր, բայց մինչև ասելը պատրաստում էր նրանց բոլորին, որ պիտի փախչեն, նրանք էլ պատրաստվում էին քաջությամբ:

- Վազե՛ք, վազե՛ք, մտե՛ք քարերի, ժայռերի հետևը, շուտ:

Ու ամեն անգամ, երբ հաջողվում է մի քսան հոգու կամ ավելիին փախցնել, մի անգամ կրակում էր օդ՝ ցույց տալու, որ մեկը սպանվում է: Մեկ շաբաթ պիտի քայլեր հետները, ամեն անգամ տեղը փոխում էր: Քարավանը շատ երկար էր:

Նա նույն մեթոդով հասկացնում էր, ու հայերը շուտ հասկանում էին, թե ինչ պիտի անեն, հավատում էին իրեն, այդպես շարունակ մեկ շաբաթ:

Քամալը այնպիսի դեպքեր տեսավ, այնքան ահռելի տեսարանների ներկա եղավ: Բայց այնքան մարդ փրկեց, բացի երիտասարդներից, շատ մարդկանց, կանանց նաև, որ կարող էին դեռ վազել: Եվ վստահ էր, որ բոլորն էլ պիտի գտնեն իրենց

ազատության ճամփան, հերիք էր այդ թափորից նրանց դուրս գալը: Երկիրը լեռնային էր, այդ վիճակից դուրս գալն արդեն մեծ բան էր: Ծնողները, որոնք ուժասպառ էին արդեն, ուրախանում էին, որ իրենց ջահելները պիտի ազատվեն, այլևս իրենց մասին չէին մտածում, գիտեին՝ արդեն իրենք մեռնելու են գնում, պատրաստ էին մահը դիմավորելու: Օրհնում էին, ասում. «Ամեն ազգի մեջ լավ մարդ կա»:

Քամալը այդ մի շաբաթվա ընթացքում տեսածը ամբողջ կյանքում չի մոռանա:

Ատեց թուրքին, իր օրենքին, իր դավանանքին, և եթե թուրքը համարում է, որ այդ երկիրը իրենն է, ատեց նաև այդ երկիրը:

Այդ օրը մտածեց, որ այլևս այդտեղ չի ապրելու, վերցնելու է իր մորը, իր երեխային, գնալու է, որտեղ էլ պատահի, բայց չի մնալու այդ երկրում:

Քամալին մեկ շաբաթ հետո հերթափոխեցին:

Վերադարձավ տուն, պատմեց մորը իր տեսածի և իր արածի մասին: Այդ մի շաբաթվա ընթացքում գրեթե ոչինչ չէր կերել, այն, ինչ տվել էին իրեն ուտելու և խմելու, տվել էր անճարներին ու միայն օրհնանք էր լսել ու հավաքել: Պատմում էր մորը, հետն էլ լաց լինում:

- Աննե՛մ, նայում եմ բոլորին, վախենում եմ, փնտրում եմ, Վարդին եմ փնտրում,- ու լաց եղավ:

Մայրը գրկեց տղային, համբուրեց, ու ինքն էլ օրհնեց՝ ասելով.

- Աստված քո երեսը թող նայի, տղա՛ս, դու արեցիր, ինչ կարող էիր, Աստված իրենց էլ թող օգնի: Մի՛ փնտրիր Վարդին, այնտեղ չէ, հավատա՛, հավատա՛, նույն ճամփով չի գնացել: Ազգն էլ որքան ուզեն բնաջնջել, չեն կարող, մեկ ծիլ էլ մնա՝ աճելու է, բազմանա:

***

Վարդը լուռ հետևում էր ծնողների ամեն մի քայլին, ենթարկվում ամեն ասածին: Միշտ օդերի մեջ, միշտ մտազբաղ, միշտ ենթակա: Կամ միշտ ներկա, կամ միշտ բացակա: Երկրից դուրս գալը երբեք չուրախացրեց իրեն, ինչպես մյուսներին: Ինքը կորցրեց իր երեխային:

Երբ խորը մտածում էր, կարծես բացի իր Մուրադից, Մուրադի հայրն էլ ինչ- որ մի տեղ ունի իր սրտում: Բայց երբ հիշում է, որ թուրք է, ցնցվում էր ու ասում.

- Ինչո՞ւ իմ բախտը այսպես ուզեց, որ լինեմ: Ես ինչ մեղք ունեմ, նա ինչ մեղք ունի: Հազարներով մարդիկ են մեռնում ամեն օր, ես էլ թող մեռնեմ, այս ինչ ապրել է: Որքան ապրեմ, ես մտքիս մեջ ամեն րոպե պիտի հիշեմ: Ես էլ ոճրագործ եմ, ես փախա, եկա, որ ծնողներիս գտնեմ, իմ երեխան որքա՞ն պիտի չարչարվի, որ ինձ գտնի, կապրի՞ արդյոք, կարոտին կդիմանա՞ արդյոք. դեռ չի հասկանում, փոքր է:

Այս ամբողջը օրական մի քանի անգամ կրկնվում էր իր գլխում: Երևակայությամբ գրկում էր Մուրադին, համբուրում, սիրում, բայց չորացել էին արցունքները կամ թե չէր ուզում լալ, որ չնեղի ծնողներին:

Սաթոն միշտ խոսում էր հետը Մուրադի մասին, որ ինքը չամաչի, պետք էր խոսել, ինքն էլ բաժին ուներ այդ երեխային սիրելու, փայփայելու մեջ:

Խոսում էին, երբեմն ժպտալով մտածում, թե որքան մեծացած

կլինի, գիտեին, որ տատիկը լավ է պահում. նա արդեն ցույց էր տվել իր սերը թոռան հանդեպ:

Վարդը գիտեր դա: Այդ կինը կորցրել էր ամուսնուն, որին թուրքերն էին խփել ինչ-որ վեճի ժամանակ: Այդքան մանրամասն չէր պատմում Քամալի մայրը. երբ հասնում էր այնտեղ, որտեղ պատճառը պիտի ասի մահվան, կանգ էր առնում ու չէր շարունակում:

Վարդը սիրում էր Քամալի մորը՝ Գյուլվարդին: Վարդը այդքան ուշադիր չէր եղել, որ այդ անունը ունեն նաև հայերը, արդեն Վարդ բառը շատ բան էր խոսում: Ոչինչ, նեղված է եղել, ուշադրություն չի դարձրել, և այդքան էլ այն չի օգտագործվել տանը:

Վարդը գրկում, սիրում էր քրոջ՝ Արեգնազի տղային, բայց իր սերը չէր կարող ամբողջապես նրան տալ: Երկու քույր միասին լողացնում էին Վահանին: Երկուսով հագցնում էին շորերը, ողջ օրը զբաղվում երեխայով. այսպես օրերն անցնում էին:

***

Վերջապես օրը որոշվեց, երբ պիտի Թուրքիայի սահմանը անցնեն: Իհարկե, անլեգալ ձևով, ինչ- որ մեկի օգնությամբ. բոլորը, վախի մեջ կծկված, ուրիշ բանի մասին մտածելու ժամանակ չունեին: Հարմար օրը եկել էր, դրա համար մի շաբաթ է, որ պատրաստվում էին: Բայց այդ օրը լինելու է իրենց ազատագրման օրը: Արդեն նորից գարուն էր, շատ շուտ էին գարունները բացվում:

1916 թվականի գարունն էր, մեկ տարուց ավելի է, ինչ թաքնված, անհույս ապրում էին, չնայած, որ հուսադրել էին առաջին օրվանից, երբ մտել էին Ստամբուլ: Արդեն մոտ էին անցման տեղին, մեծ մեքենա նստեցին բոլորը՝ խաչ հանելով, Աստված կանչելով, մնում էր միայն մի քանի հարյուր մետր, որ

փրկվեն: Դրա առաջին օրը անցել էին Մոսոն, կինը, երեխան, քույրը: Նրանք արդեն սահմանի մյուս կողմում էին: Մի կարճ ճամփա կար, որ վազելով պիտի անցնեին, այդ էր վախեցնում բոլորին: Վերջապես իրենց էլ հաջողվեց անցնել: Բոլորն էլ արդեն Հունաստանում էին:

Ճիշտ սահմանի վրա Վարդի սրտի թելը ասես կտրվեց. լաց լինելով, արցունք թափելով անցավ, բայց անցավ:

Հեռվից երևում էին այգիներ, իսկ այգիների մեջ կանգնած սպասում էր Մոսոյի ընտանիքը: Նրանք ամբողջ գիշեր մնացել էին խաղողի թփերի տակ՝ բաց երկնքի աստղերի տակ՝ աղոթելով հաջորդ օրվա համար: Իրար հանդիպելով՝ համբուրվեցին, նստեցին խաղողի թփերի տակ՝ հետագա ճամփան որոշելու համար:

Ամբողջ ընտանիքը միավորված էր կրկին:

Շատ ժամանակ էր պետք դեռ, որ ամբողջ ընտանիքը վերամիավորվի, ճրբ կլինի դա: Կյանքը և՛ քաղցր է, և՛ դառն է: Կյանքի դառնությունները ճաշակել էին, թող լավ օրերին սպասեն այսուհետև:

Ձմեռը նոր էր վերջացել, օրը զով էր, արևը դեռ լավ չէր տաքացնում, չնայած որ այդ երկիրը տաք երկիր է: Ծառերը նոր էին բողբոջում, այգիները դեռ էտած չէին:

Բոլորը վեր կացան ու սկսեցին քայլել, հեռվից երևում էին տներ. երևի գյուղ էր, թե ոչ, ապա ումն էին այդ այգիները: Բռնեցին գյուղի ուղղությունը ու քայլեցին:

Արդյոք ինչ լեզվով պիտի իրար հասկացնեն: Մոտենում էին գյուղին, երբ հանդիպեցին մի մարդու, որ մենակ քայլում էր հակառակ ուղղությամբ: Կանգնեցին բոլորը, շրջապատեցին մարդուն, հայերեն, թուրքերեն բարև տվեցին՝ մտածելով, որ չպիտի հասկանա, բայց մարդը լավ էլ հասկացավ, թուրքերեն

գիտեր: Ապրում էր սահմանի մոտ. թուրքերեն քիչ սովորել էր: Բոլորն ուրախացան, Առաքելը շարունակեց.

- Մենք, ...

Մարդը չթողեց շարունակել.

- Գիտենք, որ հայ եք, մենք ամեն ինչ գիտենք, գնացեք գյուղ, այնտեղ պատմեք, ձեզ բոլորն էլ կլսեն, ձեզ կտեղավորեն, մի՛ մտածեք:

Սա հունական գյուղ է, մեզ էլ շատ են նեղել այդ թուրքերը:

Երբ գյուղ հասան, ամեն ինչ պարզ եղավ. հայերին օգնում են, շատ հայեր, որ աղքատիկ քսակ ունեն, աշխատում են որոշ ժամանակ, փող աշխատում հետագա ծախսերի համար:

Աշխատանք կար խաղողի այգիներում, ծխախոտի դաշտերում և անասունները պահելու համար հովիվների կարիք ունեին: Իսկ եթե արհեստավոր են, կարող են իրենց արհեստով զբաղվել:

Առաքելն ու Մոսոն անմիջապես որոշեցին մնալ որոշ ժամանակ, մինչև մի գումար վաստակեն շարունակելու համար:

Տեղեկացան, որ աշխատանք կլինի բոլորի համար, դաշտի աշխատանքները շատ են. վարել, ցանել: Բանջարանոցները և այգիները, պտղատու ծառերը շատ էին, նաև խաղողի այգիների էտելու ժամանակն էր շուտով:

Այս լուրը Առաքելին շատ ուրախացրեց, և կանայք հանձն առան աշխատել նաև:

Հաստատվեցին այդ փոքրիկ գյուղում, երեքսենյականոց բնակարանի մեջ՝ փոքրիկ պարտեզով, շատ չնչին վարձով՝ համեմատած իրենց աշխատանքին:

Նախօրոք ամեն ինչ պայմանավորվելուց և տեղավորվելուց հետո, անմիջապես աշխատել սկսեցին:

Տանը մնաց միայն Արեգնազը՝ Վահանի հետ:

Մոսոն էլ աշխատանք գտավ. երբ իմացան, որ դարբին է, ուրախացան, նա էլ գործ ունեցավ:

Ազատ էին, ուրախ էին, վախ չունեին այլևս:

Այստեղ հսկայական հողային տարածություններ, անծայրածիր դաշտեր, այգիներ, մրգատու ծառերով խաղողի այգիներ: Ավելի հեռու ձիթապտղի ծառեր ամենուրեք: Այս շրջանում միայն մեծ ու փոքր գյուղեր էին: Ընդհանրապես քաղաք չկար, շատ հեռու էին քաղաքները:

Այստեղ կային ամեն տեսակի խանութներ, շուկա, բաղնիք, եկեղեցի, գյուղապետարան, որը լուծում էր բնակչության սոցիալական հարցերը:

Առաքելի ընտանիքը մոտ երկու տարի մնաց այդ շրջանում, տեղափոխվեցին մի քանի գյուղ ավելի հեռու՝ խորանալով դեպի երկիրը, սահմանի վրա չմնալու համար, բայց ամառ-ձմեռ աշխատանք ունեին. ապրելակերպը փոխվել էր, և իրենց ավելի մարդ էին համարում, իրենց վրա ճնշում չկար:

Արեգնազն էլ շատ գործ ուներ, ամբողջ օրը տան գործերով, խոհանոցով էր զբաղված: Վահանը արդեն քայլում էր, խոսում, ուրախ մանկություն էր սպասվում իրեն:

Սկսեց հույն երեխաների հետ խաղալ ու հասկանալ նրանց:

Մեծերն էլ արդեն հասկանում էին հունարեն. պետք էր գալու իրենց, դեռ չէին մտածել Ամերիկա գնալու մասին, դա այդքան էլ հեշտ չէր:

Այդ շրջանում կային շատ հայ ընտանիքներ: Խոսելով, լսելով հայտնվում էին: Հայը առանց հայի չի կարող ապրել: Գյուղերը շատ մեծ չէին, գտնվում էին տասնյակ կիլոմետր հեռավորության վրա:

Նրանք էլ նույն ճամփով էին անցել, հետևաբար, բոլորը ճանաչում էին իրար: Եկած օրվանից ծանոթացան այդ ընտանիքների հետ: Իրար հյուր էին գնում կիրակի օրերը,

հյուրասիրում, հյուրասիրվում ավելի բազմատեսակ ուտելիքներով, խմորեղենով ու մրգերով:

Մոսոյի և Առաքելի ընտանիքները առանձնացան տարբեր տներում՝ շատ մոտիկ: Երկու զարմիկներն էլ առանձնացան մեկ ուրիշ երկուսենյականոց բնակարանի մեջ. նրանք էլ շատ մոտիկ էին, միշտ միասին էին անցկացնում, այնքան, որ ամեն մեկն ունեցավ իր առանձնությունը, հանգիստ ունենալու տեղը: Այլևս իրարից քաշվելու և ամաչելու պայմանները վերացան, ամենքը ունեցան իրենց բույնը, իրենց հանգիստը:

Հարևան գյուղում ապրում էին երկու ընտանիք: Նրանք էլ մի քանի ամիս առաջ էին եկել: Նրանք էլ սիրել էին այդ տեղը, և քանի որ աշխատանք կար, մնացել էին: Զավակներ ունեին:

Հովհաննեսն ու Մաիամը ունեին մի տղա՝ Արսենը՝ 23 տարեկան:

Սիմոնն ու Աշխենը ունեին երկու տղա՝ Մկրտիչն ու Մարգարը, և աղջիկը՝ Սոնան:

Այս երկու ընտանիքները Էրզրումից էին: Սրանք էլ անտանելի դեպքեր էին պատմում թուրքերի մասին: Մարդիկ երբ տեսնում էին իրար, առաջին խոսելու նյութը դա էր, առանց արցունքի չէին կարող պատմել իրենց անցկացրած պահերը այդ թուրք անգութ զինվորների բռնության մասին:

Պատմում էին, որ ունեցել են լավ դիրք իրենց ապրած տեղում:

Էրզրումը (Կարին) Երզրումի վիլայեթի վարչական կենտրոնն էր: Այնտեղ են ծնվել, մեծացել, ապրել:

Էրզրումը գտնվում է Էրզրումի դաշտի հյուսիս-արևելքում, հնագույն քաղաք է, կովախնձոր է եղել միշտ պարսիկների և բյուզանդացիների միջև: Այնուհետև ռուսական զորքերը հաճախ գրավել և քանի անգամ վերադարձրել են թուրքերին: Գտնվում է Մուշի հյուսիսային մասում:

Էրզրումի վիլայեթն ունի հարթ մակերևույթ, ունի նաև նշանավոր լեռնագագաթներ (Մարիամը, Սուրբ Նշանը...): Եվ ունի գետային մեծ ցանց:

Վիլայեթը հայտնի է իր աղբյուրներով և հանքային ջրերով: Այնպես որ, բխում են փողոցներում, նույնիսկ առանձին տների բակերում:

Այսպես, այս երկու ընտանիքները պատմելով չէին դադարում վերհիշել իրենց անցած կյանքը, հույս չունենալով վերադարձի. արտաքսված, կեղեքված, մերկ, վռնդված էին իրենց բնակարաններից, ինչպես բոլոր հայերը՝ նույն ճակատագրին մատնված:

Այսօր Սաթոն և Առաքելը հրավիրված են Մարիամենց տուն, կիրակի օր է:

Հովհաննեսը՝ Մարիամի ամուսինը, աշխատում էր իրենց պարտեզում. ամռան վերջին շաբաթն էր, բերքահավաք էր, և շատ գործ կար պարտեզում:

Հյուրերի գալուն պես լվաց ձեռքերը, մոտեցավ, բարևեց մեծ հարգանքով, հրավիրեց նստելու բակում գտնվող սեղանի շուրջը: Կինն անմիջապես բերեց բաժակները, խմիչք ու քաղցրավենիք, քանի որ արդեն համբուրվել էին մինչև Հովհաննեսի մոտենալը:

- Ինչպե՞ս եք, ինչպե՞ս են ընտանիքի մյուս անդամները, աշխատո՞ւմ են, լավ է, այստեղ աշխատանք միշտ կա, լավ էլ վարձատրում են, ճի՞շտ եմ: Բերքը այս տարի լավ էր, գոնե այստեղ մեր վիճակը հասկացան, այնքան մեր նմանները տեսած էին՝ բացատրելու կարիք չունեինք: Ամեն ինչը կարգադրեցին, ամեն ինչ արեցին, որ մեզ լավ զգանք, տուն տվեցին, աշխատանք տվեցին, խոսելու, խնդրելու հարկ չունեցանք,- ասաց Առաքելը:

- Մենք այս տեսակ բան չէինք տեսել,-ասաց Սաթոն,- բերանս բաց մնաց, երբ Առաքելը եկավ ասաց. «Գիտե՞ս, կնի՛կ, աշխատանք ալ տվին», արդեն տունը կար, մեջն էինք արդեն:

- Տեսա՞ր թուրքը մեզի ինչ ըրավ, աս ազգը ուրիշ է, անոնց պես չեն, անոնք վայրենի ցեղեր են, անոնք երբեք մարդ չեն դառնար, ես այդպես գիտեմ,- ասաց Մարիամը ու ստիպեց վերցնել խմորեղեն, որ ինքն էր պատրաստել, փախլավա էր շերտ-շերտ: Խմել էին արդեն օղին՝ ասելով.

- Թող մեր կենացը ըլլա:

Երկար խոսեցին տարբեր բաներից, նոր երկրի օրենքներից, իրենց ունեցած առավելություններից, այն բաներից, որ նոր էր իրենց համար, և շատ հարգելի էր այդ ամենը և զարմանալի, քանի որ վտանգ չէր բերում իրենց կյանքին:

- Երբ կմտածեմ, որ դա կշարունակին, ու չեն հագենար, այդքան բարբարոս ազգ է ոխերիմ, բան մը չըրած տեղերնիս, ինչե՞ր կընեն, անպես բաներ տեսանք, պատմել չեմ ուզեր, բայց սիրտս կպայթի, հիմա միակ խոսելիքը եղավ մեր: Մենք դեռ երեք հոգի էինք, ինչեր անցուցինք, հետևս բարեկամ չունեի, բայց բոլոր հայերը իմ բարեկամներս չէի՞ն, ըսե տեսնամ, Առաքե՛լ: Ինչ ըսեմ, որ սիրտս հովնա, այդ անիրավներուն ըրածը աշխարհը պիտի մոռնա՞մ, ըսե տեսնամ, Առաքել:

- Այդ խեղճ Սիմոնին հայրը իր աչքին դեմը մեռցուցած են, ինքն ալ փախեր է, չի կրցած թաղել նույնիսկ, այդ ժամանակ չէ կրցեր, հետո ալ չէ կրցեր գյուղ վերադառնալ: Իրեն հարցուցի, հարցուցի, օր մը պատմեց, անքան լացավ, փոշման եղա հարցնելուս: Ամա ինչպե՞ս չհարցնես, գոնե մխիթարական խոսք մը չըսե՞ս մարդուն, հայրն է վերջապես:

- Աս բաները դահա կշարունակվի,- ասաց Առաքելը- իմ փեսայիս՝ Արեգնազիս ամուսինին ծնողքը ադպես չմեռցուցի՞ն:

Խեղճերը տունը նստած, թուրքերը կմտնան, թալանած են, հարցուցեր են տղան ուր ըլլալը, անոնք ալ չեն ըսեր, անխիղճները մայրը մեկեն կմեռցնեն, Մոսոն ալ երբ կըսեն թալան է, կուգա, ինչ տեսնա. մայրը մեռեր է, հայրն ալ շատ չանցած կմեռնի: Եկեք լավ բաներու մասին խոսինք, աս բաները մենք չենք մոռնար ու պիտի պատմենք քանի դար ալ անցնի:

- Ճիշտ կըսես, տղադ ուր է, Արսենը, շատ բարի է Արսենը, անցյալները եկեր էր մեզի, Մոսոյի հետ բան մը խոսեցավ, սուրճն ալ խմեց, գնաց: Ձեզի հարցուցի, ըսավ լավ են, դուք ալ մեզի հրամեցեք:

Այսպես երկար բարակ խոսելուց հետո սեղան դրեցին. Մարիամը ամառային տոլմա էր եփել՝ բադրիջանով, պղպեղով, լոլիկով, շատ համեղ:

Սեղանը զարդարեց սուջուխով, զեյթունով, զեյթունը նամանավանդ այդ երկրի արդյունքն էր՝ տարբեր տեսակի ու մեծության:

Կերան, խմեցին, իրար բարի ցանկանալով՝ վերադարձան իրենց տուն:

Այս երկու գյուղերը շատ հեռու չէին իրարից, ավելի հեռու գյուղեր գնալու համար մեքենա կար, որով տեղափոխում էին, ավելի շուտ բեռնատար կարելի էր ասել:

Այսօր Հովհաննեսը չխոսեց, չպատմեց իրենց տեղահանության մասին, որովհետև կինը արգելել էր խոսել. եթե ուզում է պատմել, չի ուզում, որ իր մոտ լինի, արդեն չի կարող մոռանալ, ասում է, որ նորից չի ուզում վերապրել այդ տանջալից օրերը:

***

Մեկ ուրիշ անգամ Հովհաննեսի ընտանիքը հյուր եկավ Առաքելենց տուն, այն ժամանակ. երբ կանայք զբաղված էին կերակուր պատրաստելով՝ տղամարդիկ խոսեցին ցավալի բաների մասին, կրկին և կրկին նույն բաները՝ վայրենի, բայց տարբեր նկարագրություններով:

Հովհաննեսը խոսում էր, բայց կարծես ինքը չէր խոսողը, դեմքը այլայլված էր, ձայնը՝ փոխված, շարժումները՝ դիվային, վերապրում էր այն բարկությունը, որ չէր կարողացել թափել այն ժամանակ, ձեռքերի շարժումները նյարդային էին:

Պատմեց, թե ինչպես ներս են մտել հարևանի տունը, ինքը պատուհանի մոտ կանգնած է եղել, ու անմիջապես հասկացել է, թե ինչ է կատարվում, ուրիշ անգամներ շատ են եղել, ու անընդհատ խոսվել է այդ մասին: Ասաց.

- Կնիկ, շուտ պատրաստվիր, թուրքերը կքշեն, ճիշտ կըսեմ, լսեր եմ: Հագիր, պատրաստ եղիր, չվախնաս, տեսնանք՝ ինչ կուգա մեր գլուխը:

Կինը սկսում է լաց լինել, տղան տանը չէր:

Հովհաննեսը հագնում է, կապում գոտին՝ իր ունեցած բոլոր դրամով, ոսկիներով, շուտ մի տոպրակ հաց և ուտելիք, ինչ կար տանը, լցնում է մեջը, ամեն ինչ արագ պատրաստում, կանգնում:

Երկուսով նստում են աթոռին ու աղոթում:

Արսենը չկար, լացեցին, պատուհանից դուրս նայեցին, տեսան, որ հարևանին տանից դուրս են քշում խփելով, նրանք էլ լացով, ճիչով, քաշքշվելով ոստիկանների կողմից, ուրիշ անելիք չունեին, պետք է առաջանային: Դրանց տանն էլ երեխա չկար, մարդ ու կին էին: Այսպես մտնում էին բոլոր հայերի տները:

Հետո իրենց հերթն էլ հասավ: Նույն ձևով մտան, թալանեցին, իհարկե, շատ բան չգտան, չմտածեցին, որ այդպես արագ կարող էին թաքցնել ունեցածը:

- Լավ որ ճարպիկ գտնվեցա, թե չէ ինչ պիտի ընեինք, բավական ժամանակ մեզի օգտակար եղավ, դահա ալ ունիմ, ինչ ընեի, իրենց թողնեի: Արդեն բոլոր հայերի ոսկիները, արծաթները, դրամները տարին, կողոպտեցին, դարեր ի վեր ատ կընեն արդեն:

- Ես ալ ունեցածս վերցուցի, հետս առի, խեղճ փեսաս լումա մը չուներ գրպանը, ան ատեն, երբ ծնողքը մեռցուցին, մեռցունելեն առաջ թալնեցին անոնց,-ասաց Առաքելը:

- Հետո ինչ պատմեմ, եղբայրս, մեզի խումբ- խումբ, փողոց-փողոց հավաքեցին, ըսին աքսոր պիտի երթաք, չըսին մեռնելու կերթաք, ադ շատ ուշ ըսին, երբ դահա շատ պիտի քայլեինք Դեր- Զորի անապատը հասնելու համար: Հա՛, երբ բավական հավաքեցին, կառքերը լեցուցին, մեզի տեղ մը տարին իջեցուցին, համա երկար մեզի տարին, քանի մը ժամ, ո՛չ հաց, ո՛չ ջուր, ո՛չ ալ կխոսեին: Մինակ, հրացանը ուսին, երկու ասկյար փայտի պես կայներ էին ու չէին պատասխաներ մեր տված հարցերուն, մենք ալ չենք գիտեր՝ ինչ պիտի ըլլանք:

Համա կնիկս կուլա, ես ալ չգիտեմ՝ ինչ ընեմ, տղանիս չիքա, ո՛ւր է արդյոք: Ա՛խ, ադ ինչ վիճակ էր: Աստված տանե, չբերե: Քանի մը ժամ երթալեն ետքը կառքը կանգնեց: Հիմա ալ, հադե իջեք: Իջանք, ինչ տեսանք, անքան մարդ են հավաքեր, բոլորը՝ հայ: Մեզմե առաջ ուրիշ մեքենա ալ կերթար, անոնց ալ իջեցուցին: Մեյմն ալ տեսնամ տղաս կայներ է, ափուբերան աս կողմ, ան կողմ կնայի: Բոռացի՝ Արսեն, տեսնամ՝ տղաս ձայնս առեր է, սկսավ լալ, բոռալ, փնտրել զիս:

- Հոս եմ, յավրում, հոս,- ինձի նայեցավ, վազեց, մորը լեզուն

կապվեր, չէր կռնար խոսիլ, ոչ ալ բոռալ: Հետո շարունակեց պատմել, որ կայներ են երկար, անընդհատ բերել են ու բերել նոր մարդիկ: Գիշերը վրա է եկել, հետո որոշել են նստել, մեկը լաց էր լինում, մյուսը՝ անիծում թուրքերին: Շատ զինվորներ են եղել.

- Աս դահա՛ փառք էր՝ անկե անդին ինչեր եղան...

Պատմեց, արևը չծագած՝ բոլորին ոտքի են հանել ու քշել: Այլևս չեն կանգնել, այդպես շարունակ ամեն օր՝ քանի օր այդ ուղղությամբ խորդուբորդ ճամփան ելնելով: Ծերերը ընկնում էին, մեռնում, հետևից եկողները կոխկոտելով անցնում էին, իրար հետևից ընկնում: Զինվորները հանում, սպանում էին, եթե մեռած չէր: Խղճալի վիճակ, ամսից ավելի քայլել են Հովհաննեսը, կինը և տղան: Որքան մնացել են այդ ճամփաներին, կնոջ արցունքը չի կտրվել:

Այնքան մահ են տեսել, ամեն վայրկյան դիակների վրայով են քայլել: Բոլորը սոված, ծարավ: Դեռ շատ պիտի քայլեին մինչև անապատին հասնելը: Բոլորի վերջն էր. Հովհաննեսը սփոփում էր կնոջը, տղային: Տղան ոչինչ չէր խոսում, ամբողջի վիշտը աչքերով հավաքելով՝ քայլում էր՝ մոր ձեռքը բռնած:

Մեկ-մեկ համբուրում էր մոր ձեռքը, բայց չէր խոսում: Ծնողները միայն տղայի մասին էին մտածում:

Տեսնում են, որ տրակտորով հսկայական փոսեր են փորել, դիակները հրելով լցնում են փոսերը, ծածկում: Խեղճ հայեր. քանի օր արևի տակ մնալուց հետո թուրքերի կիսատ թողած գործը ագռավներն ու գիշատիչ թռչուններն էին լրացնում: Հովհաննեսը պատմում էր ու պատմում սրտի ցավով:

Հազարավոր հայերով քարավանները գնալով նվազում էին, մնացողն էլ՝ սոված, ծարավ հյուծվում: Օրվա մեջ էլ կանգ-

նեցնում էին բոլորին, ստիպում, որ դիակները հանեն ճամփի եզերքը, որ հետո թաղեն փոսի մեջ: Որքան առաջ էին գնում, մնացողների թիվը քչանում էր, բայց հետևից գալիս էին ու գալիս: Այդպես ամսի չափ գնալուց հետո մի դեպք պատահեց. մի օր մի զինվոր, ձիու վրա նստած, նայեց վերևից՝ թուրքերենով հասկացնելով բոլորին, թե ով կուզի և կարող է դեռ փախչել, հատկապես բոլոր երիտասարդները, մի խոսքով, ով կարող է, թող մոտենա իրեն, որովհետև շուտով անտառի մոտով պիտի անցնեն, և երբ հրամայի, ասի, միանգամից մտնեն անտառ, փախչեն: Այդ ձևով շատ մարդ ազատվեց մահից: Առաքելը դա ուրիշից էլ էր լսել:

Հովհաննեսը պատմեց, որ տղան քանի օր չկարողացավ խոսել, լեզուն վախից ու դաժանություններից կապ էր ընկել:

Հաջորդ օրը հանդիպում են Սիմոնին, կնոջը և երեխաներին, նրանք էլ նույն ձևով այդ թուրք զինվորի միջոցով են ազատվել:

Անտառում մի քանի օր մնալուց հետո, խոտ ուտելով, կանաչ ուտելով, կամաց- կամաց մոտենում են գյուղերին: Այսքան բանը պատմելով՝ Հովհաննեսը իրեն մի փոքր թեթևացած զգաց, ասաց.

- Գիտես, Առաքել, բան չեմ խոսիր Մարիամին դեմը, տղաս ալ լսել չուզեր, ես ալ չպատմեմ նը, սիրտս չի դիմանար:

Այդ ժամանակ կինները սեղան էին պատրաստում:

Կերան, խմեցին ու վերադարձան իրենց գյուղը:

Այդ սեղանները բոլորի համար էին: Մասնակցում էր նաև Մոսոյի ընտանիքը, ներկա էին լինում երկու զարմիկները, էլ ո՞վ ունեին:

Արդեն մեկ տարի էր, որ այդտեղ էին, այդ գյուղում: Վարդը իր տեղը չէր գտնում, ո՛չ ցույց է տալիս՝ տխուր է, ո՛չ էլ գիտի՝ տխուր է: Միշտ մտազբաղ, ուշադրությունը՝ այլ տեղ:

Հասկանալի է, միշտ մտածում էր իր Մուրադի մասին: Մուրադը մեծանում է, ինքն էլ՝ ծերանում իր պատկերացումով: Այնինչ, գեղեցիկ հայացքով, գեղեցիկ արտաքինով, հղկված շարժուձևով, երկար մազերով սիրուն աղջիկ է ինքը:

Առիթ չի ունեցել, բայց շատ-շատերին կարող է հրապուրել: Իր սրտի մեջ ամեն իղձ մարած էր համարում, որքան էլ որ Արեգնազը իրեն հույս էր տալիս, ինքը չէր ընդունում:

Տանջվում էր Մուրադի համար, որ իր հոգում ամենամեծ տեղն էր գրավում, մտածում էր Քամալի մասին, պատկերացնում անընդհատ մտազբաղ, մտամոլոր, որովհետև շատ լավ գիտեր նրա սիրո խորությունը իր նկատմամբ և Քամալի մորը՝ Գյուլվարդին, տեսնում էր՝ միշտ Մուրադը գրկում: Այս պատկերը երբեք չի դուրս գալիս իր ուղեղից: Իսկ իրեն տեսնում է հեռուհեռու մշուշի մեջ, կարծես Մշո մշուշը իր հետ է միշտ: Այս պատկերները իրեն հետևում էին գիշեր ու ցերեկ և միշտ: Ոչ մի բանը իրեն չէր ուրախացնում, եթե ուրախանում էր, միայն շրջապատի մարդկանց հուզմունք չպատճառելու համար:

***

Գալով Քամալին՝ իր մի շաբաթվա միսիան կատարելուց հետո պիտի հանգստանար, որ նորից ստանձներ իր աշխատանքը, այդպես շարունակ մինչև հայերի վերջը տալը:

Հետևաբար, ուներ աշխատանքային հերթափոխ, թե որ օրերը պիտի փոխարիներ, և որտեղից է սկսում իր թափորի ուղեկցելը, մինչև որտեղ, և մեկ շաբաթ պետք էր գնար ինքը ձիով, հայերը՝ ոտքով:

Պարզ է, թուրքի համար շատ ճիշտ է կազմակերպված, պատշաճ է նաև զինվորների համար, միայն պետք է լինեին անխիղճ, անողոք հայերի նկատմամբ:

Քամալը այդ բոլորը գիտեր, իր պարտականությունն էր դա: Նայում էր խեղճ հայերին. հյուծված, հալված, հոգնած թափվում էին իրար հետ գետնին, վեր չէին կենում: Նայում էր. ինչ գեղեցիկ տղաներ, աղջիկներ հիասթափված, քայլել էլ չէին ուզում կարծես, ոտքերը օրորվում էին, բայց մտել էր հոր կամ մոր թևը, որ իր չունեցած ուժն էլ տար նրան:

Լաց էին լինում, երբ ընկնում էր ծնողը ուժասպառ ու վեր կենալ չէր ուզում: Բայց հետևի եկողները ճամփա էին ուզում, ստիպված թողնելով, իրենք էլ էին առաջանում:

Լավ է, որ Քամալին անտառն էր բաժին ընկել, ինքն իրեն ուժ տալով՝ հազիվ զսպում էր իր արցունքները, երբեմն խիստ ձևանում, որ հեռվից եկող զինվորները նկատեն, որ ինքն էլ է թուրք...

Բայց եթե նույնիսկ ինքը չիմանար էլ, որ ինքը հայ էր, չէր կարողանալու լինել անողոք թուրքի պես: Իր արյունը հայի արյուն էր:

Ժառանգականությունը երբեք չի դավաճանում, քաշում է, այն էլ ինչպես: Քամալը որքան աշխատեց, իր միսիան համարեց կատարված, մեկ հոգին ինչ կարող էր անել ավելի:

Հետո դուրս եկավ այդ իր պաշտոնից, մորը և Մուրադին վերցնելով՝ տեղափոխվեց Մուշ, ուրիշ գրասենյակային աշխատանք անելու համար: Երբեք չմոռացավ Վարդին, ինչպես Վարդն էլ չէր մոռանում իրեն:

***

Երկու ընկերները՝ Սերոբն ու Սաքոն գնացին Բուլղարիա, անմիջապես աշխատել սկսեցին մի բարի մեջ, մեծ հարգանք ու ճանաչում ունեցան, քանի որ համեստ, լավ կազմակերպված և հաճելի երիտասարդներ էին: Ավելի առնական և քաղաքավարի դարձած՝ Թուրքիայի հետամնաց գյուղից դուրս: Ահագին վաստակելուց հետո մտածում են գտնել իրենց ընտրած աղջիկներին՝ մտածելով, որ խոստացել են, հիմա կսպասեն իրենց, ճիշտ որ անկեղծ են իրենք:

Այդ մեկ տարվա ընթացքում կարգավորեցին իրենց թղթերը, որոնցով պիտի կարողանային առանց դժվարության ճամփորդել:

Նրանք գիտեին Առաքելի գնալու ուղղությունը մոտավորապես: Մտածեցին, առանց Թուրքիա մտնելու իրենք ուղղակի մտնեն Հունաստանի այն մասը, ուր կարծում էին՝ կգտնեն նրանց: Հետևեցին իրենց բնազդին ու հաջողվեցին:

Մի գեղեցիկ օր կանգնեցին Առաքելի տան դռան առաջ: Այդ օրը կիրակի էր. տանը ոչ մեկը չկար, դրսում կանգնած հարևանն ասաց, որ գնացել են եկեղեցի: Դռները բաց թողել գնացել էին, որոշեցին դրսում նստել, սպասել, շատ չանցած՝ բոլորը եկան: Մեծ անակնկալ էր, բոլորն ուրախացան: Աղջիկները երևի աղոթել էին եկեղեցում Աստծուն:

Ընկերները՝ Սերոբն ու Սաքոն, եկել էին կարևոր նպատակով, եկել էին՝ տանելու աղջիկներին, բայց բոլորովին խոսք չկար ամուսնանալու մասին: Երբ Սիրունն ու Ալվարդն իմացան նրանց նպատակը, Սիրունն ասաց.

- Շատ ուրախ ենք, որ մեզ տանելու նպատակով եք այստեղ և այսքան ճանապարհ եք արել, բայց մենք պատրաստ չենք, մենք չգիտենք՝ ինչ են եղել մեր ծնողները: Մենք չգիտենք՝ ուրախանանք հիմա, թե ողբանք, ես անձամբ կուզեմ ասել, որ մինչև մի լուր չունենամ իմ ծնողներից, չեմ կարող գալ, քանի որ մենք լավ մարդկանց խնամքի տակ ենք և արդեն ունենք մեր ինքնուրույնությունը:

Այդ ժամանակ ընկերները չկարողացան ավելի երկար պահել գաղտնիքը, որ մինչև այդ րոպեն չէին ասել:

Հայտնեցին, որ ծնողները, ինչպես և եղբայրները, ողջ են և փրկություն են գտել հրաշքով, մի թուրք ասկյարի միջոցով: Մանրամասնությունների մեջ չմտնելով՝ պնդեցին, որ նախ իրենք վաղուց էին որոշել գալ, բայց այսօր եկել են նրանց ծնողների խնդրանքով, որ մնացածը, այսինքն՝ ամուսնությունը հետագայի գործ է:

Աղջիկները ուրախության մեջ էին, ինչպես նաև բոլորը: Մեկ շաբաթ հետո հարազատորեն իրար հրաժեշտ տվեցին՝ շնորհակալություն հայտնելով:

Եթե կյանքում իրար չհանդիպեն էլ, միշտ սրտով մոտիկ պիտի մնան, անշուշտ: Հայտնեցին նաև, որ իրենց ծնողներն էլ նույն ձևով, նույն ժամանակ, միասին մտել են՝ փախչելով մոտիկ անտառները ու ազատվել են:

Աղջիկների գնալուց հետո կարծես փնտրում էին նրանց, շատ համեստ ու բարի անուն թողեցին:

Առաքելն ու Մոսոն հպարտ էին իրենց կատարած բարի գործի համար, անվախ նետվեցին ու փրկեցին երկու անզոր էակների, որ դեռ ծաղիկ՝ արմատախիլ էին ուզում անել այդ թուրքերը անխիղճ ձևով:

***

Առաքելը միշտ մտածում էր բոլորի մասին, ինքն իրեն խոսում, մրմնջում անպես, որ ոչ մեկը չիմանա, չլսի:

Նա շատ էր մտածում Վարդի մասին, նրա բախտի մասին, չնայած ուրախ էր, աղջիկն ապրում է. դա արդեն լավ է:

«Մուրադը կմեծանա, ես կերթամ կբերեմ, չեմ թողուր»,- կիսաձայն ասում էր ինքն իրեն, միտքը դրել էր:

Քաջ և առողջ տղամարդ էր Առաքելը. Սաթոն բախտավոր էր՝ նրա նմանին ունենալով:

Առաքելը մտածում էր Վաղինակի մասին, արդեն մեծ տղա է. եթե վատ լուր չկա, ուրեմն լավ է, միշտ ասում էր ինքն իրեն, կրկնում էր ցածր ձայնով, որ մենակ ինքը լսեր:

***

Քավորը՝ Իգիթ Արմենակը, կտրիճ տղա էր, ինչպես գիտենք, մայրը շուտ էր մահացել, հորը դաշտում թուրքերը սպանել էին, և նրան խնամել էր իր հորաքույրը, հետո ֆիդայի էր դարձել, ուզում էր հոր վրեժը լուծել, բայց թողեց մտադրությունը, գնաց Ամերիկա՝ Առաքելի տղային տանելով հետը: Վաղինակը, հնազանդվելով ծնողներին, հեռացավ, բայց շատ երիտասարդ էր, կարոտը իր տանջում էր: Շատ դժվարություններով երկար ժամանակ հետո հասան Ֆրեզնո՝ Կալիֆոռնիա: Այդ ժամանակ բազմաթիվ հայեր, որ արտագաղթում էին, երազում էին գնալ այնտեղ, ուր հսկայական խաղողի այգիներ կային, և աշխատանք կար բոլորի համար, այգեգործ էին դառնում:

Չամիչի արտադրությունը չափազանց արդյունավետ գործ էր: Ամեն ինչը մեքենայացված ձևով էր կատարվում: Հայերը մեծ արդյունքների էին հասնում, հարստանում: Իրենց համար հողագործությունը ամենահեշտ գործն էր:

Սկսնակի համար առավել ևս: Այստեղ միայն խաղողագործությունը չէր, կարող էին զբաղվել տարբեր արհեստներով, աշխատել ուրիշ բնագավառներում:

Իգիթ Արմենակը ոչ մի արհեստ չուներ, բայց հասկանում էր հողի լեզուն. սկզբում սկսեց աշխատել որպես բանվոր այգիներում:

Դպրոց ուղարկեց Վաղինակին, որ բավական առաջադիմություն ունեցավ. իրենց գյուղում գնացել էր դպրոց, հիմա պետք է անգլերեն սովորեր ու շարունակեր ուսումը: Շատ խելացի էր և ընդունակ: Արմենակը չուզեց տղային անուսում թողնել, սիրում էր Վաղինակին մեծ եղբոր պես:

Ֆրեզնոյում հանդիպեցին շատ հայերի, ծանոթացան, գործընկեր դարձան: Նոր կյանք սկսեց՝ նոր մարդկանցով, նոր կենցաղով, նոր միջավայրում:

Վաղինակը ծնողներից հեռանալու պահից երդվեց հնազանդ լինել Արմենակին՝ իմանալով, որ իր միակ պաշտպանը պիտի լինի, իր միակ ապավենը: Տասնչորս տարեկան տղա էր և հասկանում էր, որ ծնողներին կրկին տեսնելը կամ կլինի, կամ ոչ:

Եթե լինի, տարիներ պիտի տևեն: Շատ անգամ զղջաց՝ իրեն մեղավոր համարելով, միշտ ասում էր. «Ես չպիտի թողնեի իմ ծնողներին, մորս լացը ես չեմ մոռանա»:

Բաժանման օրից ի վեր ոչ մի լուր չունեին: Իրենք էլ շատ վատ օրեր անցկացրին մինչև այդտեղ հասնելը, իսկական հերոսություն էր: Արմենակը փող ուներ, ծնողներն ունեցել են, եթե դա էլ չլիներ, երբեք նպատակի չէին հասնի:

Նրանք այն ժամանակ դուրս եկան, երբ երկիրը պատրաստվում էր իր ախոյանական գործը կատարելու, դեռ չգիտեին, որ դա բնաջնջում պիտի լինի մի ազգի՝ եղեռն կոչվող:

Դեռ ինչ-որ տեղ աչք էին փակում երկրից դուրս եկողների նկատմամբ:

Վաղինակը ոչ մի օր չէր մոռացել իր ծնողներին, հիշում էր քույրերին, մանավանդ Վարդին, որին փախցրել էին, ու այդպես էլ չիմացան՝ որտեղ է:

Այդ բոլորը սրտի ցավով էր հիշում, երբեմն պառկած տեղը լաց էր լինում: Հետո այնքան դեպքեր պատմեցին ջարդի մասին, որ զանգվածային էր. մտածում էր՝ իրենք ինչ եղան ողջ են արդյոք, թե մեռած: Երբեմն ողջ մնացողն էլ ասում էր. «Երանի՛ ես էլ մեռած լինեի»:

Ինչպես ապրի մարդ այդքան ցավ տեսնելուց հետո: Ուրիշները լուրեր էին լսում լավ թե վատ, բայց իրենք ոչ մի լուր չէին լսում, չունեին:

Իրենց տեղը ոչ մեկը չգիտեր, ինչպես լուր ուղարկել, եթե երկիրը խառն էր:

Վաղինակը միշտ մտածում էր. «Երբ մեծանամ, ես պիտի իմ ծնողներին պահեմ, ես եմ տղան, իրենց հույսը ինձ վրա է»:

Այդպես օրերն անցնում էին, ոչ մի լուր չունեին:

***

Մոսոն ու Արեգնազն էլ գտան իրենց հանգստությունը, իրենց ինքնությունը, ընտանիքը և առանձնությունը:

Մոսոն ուներ լավ աշխատանք, երկաթի հետ էր գործը, ուներ ավելի կատարելագործված գործիքներ աշխատելու համար:

Փառանձեմն էլ էր աշխատում, նա այլևս դաշտում չէր, այլ կար էր անում մի արհեստանոցում, ուրախ էր: Արեգնազը չէր աշխատում, իր տղային էր մեծացնում, որն արդեն ընկերներ ուներ, հույն էին, և հունարեն սկսել էր խոսել:

Արեգնազը սիրում էր տալոջը. շատ բարի, համեստ բնավորություն ուներ, տասնութ տարեկանը նոր էր լրացել: Գյուղի դպրոցում էր սովորել մինչև այս դեպքերը: Այստեղ՝ Հունաստանում, լեզվի դասերի գնաց ու հիմա արդեն կարդալ, գրել գիտի հունարեն:

Հույն հարևաններ ունեին, առնչվում էին, հունարենով ազատ խոսում, նրանք էլ հայերի նման ջերմ բնավորություն ունեն, սիրում են հյուրասիրել և հյուրասիրվել:

Դեռ գյուղի մեջ են, դեռ մեծ քաղաքներ չեն տեսել: Մտածում են գնալ Սալոնիկ, երևի շուտով կորոշվի դա էլ:

Առաքելը ուզեց Մոսոյի հետ գնալ նախապես ուսումնասիրել, տեսնելու համար, թե կարող են աշխատանք գտնել այնտեղ՝ Սալոնիկում, մեծ քաղաք է, գործարաններ կլինեն անշուշտ: Միանգամից գնալ չուզեցին, պետք էր բնակարանի մասին մտածել նաև, եթե ծանոթ չունենան, ինչ պիտի անեն: Բայց

ավելի մտածում էին գարնանը տեղափոխվել, որ դեմը ամառ լինի, ավելի դյուրին կհարթեն իրենց գործերը:

Ամերիկա գնալը դեռ շուտ էր, շատ գումար էր պետք դրա համար:

Երբ գնան Սալոնիկ, կմտածեն հայտարարություն տալ՝ Արմենակին և Վաղինակին գտնելու համար: Անորոշ վիճակ էր, շատ դժվար կացություն էր բոլորի համար:

***

Սերոբն ու Սաքոն գնացին՝ իրենց հետ տանելով Սիրունին և Ալվարդին: Երկու զարմիկները ցնծության մեջ էին, նոր լուրը, որ երազանք էր իրենց համար, իրականություն դարձավ, խանդավառեց այս երիտասարդ աղջիկների սրտերը, որ երկար ժամանակ կոտրված էին եղել:

Այո՛, երբեմն պետք է լավատեսությամբ գոտեպնդվել՝ ցավը հաղթահարելու համար:

Աղջիկների անհետանալն այն անտառի ծառերի սաղարթների տակ, նրանց ճիչերը, լացը մնացել էին ծնողների հիշողության մեջ ու ամեն անգամ շարժել իրենց ատելությունը այդ պահին թուրքերի նկատմամբ:

Հանդիպումը շատ հուզիչ էր, գրկախառնություն՝ ուրախության ճիչերով, խնդությամբ՝ տխրությանը միախառնված, մի անբացատրելի իրադրություն:

Այդ օրը հիշատակելի օր պետք է համարել իրենց ամբողջ կյանքում:

Այս տեսակ անթիվ դեպքեր եղան ամեն տեղ, տարբեր ժամանակներում:

Թուրքը կարծում էր իսպառ վերացրել է հային, բայց դա իրեն չհաջողվեց:

Այն բոլոր մարտիրոսվածները կանգնելու են՝ արդարություն

պահանջելու դեռ, և պիտի խոստովանեն իրենք ու պատասխան տան իրենց արածների համար Աստծու դեմ: Եթե մարդը չի կարող պատժել, Աստված պիտի պատժի:

Սերոբն ու Սաքոն մինչ օրվա վերջը մնացին միասին, կերան, խմեցին ու գնացին իրենց տուն, որ շատ հեռու չէր գտնվում, մի քանի փողոց հեռու էր միայն:

Երկու եղբայրը՝ Սեթոն ու Սասունը՝ աղջիկների հայրերը, ընտանիքներով նոր էին եկել Բուլղարիայի այդ քաղաքը, հարց ու փորձով հայերի էին փնտրել, և պատահաբար տվել էին երկու ընկերների անունները՝ Սերոբի և Սաքոյի:

Այսպես գտել էին իրար, դա մեծ բախտավորություն էր:

Սեթոն ու Սասունը միասին էին ապրում, քանի որ նոր էին եկել, մինչև կարողանային հետագա անելիքների մասին մտածել:

Տունը մեծ էր, հարմարավետ, մնացին:

Սիրունի հայրն ու մայրն էին Սեթոն և Աղունը, իսկ եղբայրները՝ Գևորգը, Գեղամը:

Ալվարդի ծնողները Սասուն և Սուսանն էին: Եղբայրը՝ Բենիամինը, որ մինչև հիմա չէր խոսել, ասաց.

- Ես չէի՞ ըսեր, որ ողջ են: Քանի կար, կբոռային, կկանչեին, ձայները կլսեինք, մեկեն կտրվեցավ, ու այդ թուրքերն ալ հետ չեկան: Ինչ ըսել էր, որ անոնց մեռցուցին: Աղջիկներն ալ փախան, ճիշտ ըրին, կըսեի միշտ: Ինչո՞ւ ետ գան, եթե ազատեր են: Միշտ կուլայիք, կըսեի՝ ողջ են անոնք, մի՛ լաք: Տեսա՞ք հիմա, ես ճիշտ էի:

Բենիամինը իրավունք ուներ, ճիշտ էր:

Իսկ Գևորգն ու Գեղամը գլուխներն էին շարժում, որ նշան էր իրավունքի:

Բոլորն անչափ ուրախ երեկո անցկացրին, որ վաղուց չէին ունեցել:

Բենիամինը մեծացել էր, տասնհինգ տարեկան էր այն ժամանակ, հիմա երեք տարի է անցել այդ օրվանից:

Հաջորդ օրը, երբ արդեն բոլորը հանգիստ նստած էին ընտանիքով, ամեն մարդ պատմեց իր գլխին եկածը: Ալվարդն ու Սիրունը պատմեցին՝ ինչպես մարդիկ եկան ու ազատեցին իրենց՝ սպանելով թուրքերին: Իսկ ծնողները պատմեցին, որ ինչպես թուրք զինվորը առիթ տվեց հարյուրից ավելի գերի հայերին փախչել անտառի մեջ:

Նրանք էլ այդ ձևով են ազատվել: Շատ խոսեցին, շատ վերհիշեցին բոլորին, թե որը ինչպես տանջվելով մեռավ, որն ընկած էր, չէր մեռած, թուրքերը սպանեցին և այսպես տեսակ-տեսակ վայրագ միջոցներ օգտագործելով՝ մեռցնում էին անզեն, անզոր խեղճ հայերին:

Անհուշ չենք կարող ասել, քանի, որ միշտ հիշյալ պիտի մնան մեր մտքերի ու սրտերի մեջ:

Սիրունն ու Ալվարդը խոսեցին Մոսոյի ու Առաքելի քաջության մասին, գովեցին ընտանիքի բոլոր անդամներին, որ մինչև այսօր եղել են իրենց նեցուկ, հարազատ՝ իրենց ամբողջ խնամքը վերցնելով, իսկելով իրենց ապահովությունը: Ծնողի պես հոգատար խնամք են տարել, ընդունել հարազատ աղջիկների պես:

Հարկ համարեցին առանձին-առանձին նամակ գրելու և իրենց շնորհակալությունը հայտնելու բոլոր արածների համար: Ծնողներն էլ ուզեցին խորը շնորհակալություն հայտնել: Գիտեին հասցեն, այդ արդեն մեծ առաջադիմություն էր, նամակը, վստահ էին, որ տեղ կհասնի:

***

Երկու տարուց ավելի մնացին այդ բնակավայրում Հունաստանի սահմանն անցնելուց հետո:

Առաքելի, Հովհաննեսի և Սիմոնի երեք ընտանիքները պայմանավորվեցին նույն օրը դուրս գալ իրենց գյուղերից՝ Սալոնիկ գնալու համար:

Առաքելն ու Մոսոն երբ վերադարձան Սալոնիկից, որտեղ գնացել էին՝ պայմաններին ծանոթանալու, շատ լավ տպավորություններով էին վերադարձել: Հանդիպել էին շատ հայերի, նաև իրենց գյուղացի Ղազարին: Ղազարը տարել էր իրենց տուն ու խոստացել էր օգնել իրենց ամեն ինչով:

Շատ վստահ էին, որի համար հանեցին ոտքի նաև Հովհաննեսին և Սիմոնին:

1919 փետրվար ամիսն էր, շուտով գարուն էր, մտածում էին, որ ճիշտ ժամանակն է տեղափոխվելու: Առանձնապես մեծ դժվարություններ չքաշելով՝ հասան Սալոնիկ:

Սալոնիկը Հունաստանի երկրորդ մեծ քաղաքն է և մեծ նավահանգիստ՝ հիմնադրված Ք. ա IV-դարում: Դարեր ի վեր տիրապետել են թուրքերը, բայց 1913-ին վերադարձվել է հույներին: Մեծ առևտրական և արդյունաբերական քաղաք է: Շատ հայեր ունեցան իրենց հանգրվանը այդ քաղաքում. քանի որ նավահանգիստ էր, շատերը այստեղից գնացին տարբեր երկրներ:

Առաքելն ու Մոսոն կարողացան աշխատանք գտնել, ինչպես բոլորը, ապրեցին այդտեղ չորս տարի և ուրախ էին, միայն

դեռ անհոգ չէին, Վաղինակի հարցը կար, որ մտատանջում էր իրենց:

Վարդը որքան հեռանում էր տանից, այնքան անտարբեր էր դառնում կյանքի նկատմամբ:

Շատ հոգնեց մտածելուց, հյուծվեց, մոլորվեց ու մի օր էլ հիվանդացավ:

Արդեն շատ եղան իր հուզումները, երկու տարի էր, որ ապրում էին Սալոնիկում: Երբ զգացին, որ լուրջ է, ջերմությունը շատ բարձր է, և արդեն զառանցում է, անհասկանալի բառեր է օգտագործում, երբեմն լսում են «Քամալ» ու կանգնում և նորից, այս անգամ «Գյուլվարդ», հետո քնում է, երկար դադարից հետո նորից՝ Քամալ: Այդպես մինչև առավոտվա չորսը, վերջում «Մուրադ» է կրկնում երեք-չորս անգամ, հայրն ու մայրը չեն դիմանում:

- Յավրում, յավրում, անբախտ յավրում,-կրկնում էր մայրը, բռնում էր ձեռքը, անընդհատ ջանում էր զարթնեցնել՝ ասելով. «Վարդ, ձագս, Վարդ, ինչ եղավ քեզ»: Բայց Վարդը միայն առավոտյան բացեց աչքերը:

Ջերմությունը նորից բարձրացել էր, ջուր էր ուզում խմել անընդհատ:

Բժիշկ կանչեցին, դեղ նշանակեց՝ չհասկանալով հիվանդության ճիշտ պատճառը...

Երկու օր հետո տեղափոխեցին հիվանդանոց, այնտեղ էլ չիմացան՝ ինչով կարող են օգնել:

Որոշեցին, որ կարող է հոգնությունն է պատճառը, այդպես տևեց 15 օր, որից հետո կամաց- կամաց կազդուրվեց:

Այդ առիթով բոլոր ծանոթ հայ ընտանիքները եկան Առաքելի տուն՝ հիվանդատեսության: Սաթոն բոլորին հարգեց, պատվեց, ճամփու դրեց:

Արդեն Վարդը շատ լավ էր, ինքն էլ խառնվեց Փառանձեմի հետ հյուրասիրելու եկած հյուրերին:

Այսպես, մի քանի ծանոթ հայ ընտանիքներ հաճախ տեսնում էին իրար: Հայերը շատ էին, հաճախ փողոցում լսում էին հայերեն:

Բոլորը, ինչպես տեսանք, այդ նույն ճամփով էին անցել, ինչպես սահմանի բերանին այն հույնը ասել էր Առաքելին:

Հայերը այստեղ էլ սրճարան էին գտել, հայկական էր և գնում էին այնտեղ: Հաճախում էին ընտանիքներով: Մի որոշ ժամանակ պահանջվեց՝ հայ կնոջը ճաշարան տանելու և վարժեցնելու այդ կենցաղին, բայց համոզեցին վերջապես, որ զվարճանքը միայն տղամարդու համար չէ:

Մոսոն կնոջ և Փառանձեմի հետ հաճախ սկսեց գնալ սուրճ խմելու կամ ճաշելու կիրակի օրերը: Այստեղ ծանոթանում էին նոր մարդկանց, առնչվում, մոռանում էին առօրյա հոգսերը, նոր նյութեր փնտրում հինը մոռանալու համար:

Այստեղ եկողները բոլորն էլ Եղեռնից փրկվածներն էին, ամեն մեկը մի ձևով: Կային շատ երիտասարդներ առանց ընտանիքի, կամ հայր ու աղջիկ, որը մայր չունի, բոլորն էլ մի բան ունեն, աղճատված ընտանիքներ էին:

Առաքելի ընտանիքը չորս տարի է, որ այստեղ էր, որոշ քայլեր արել էր Ամերիկա գնալու թղթերի համար, բայց դյուրին չէր, երկար ժամանակ էր պահանջվում դրա համար:

***

Վարդն ու Փառանձեմը արտաքնապես հմայիչ աղջիկներ էին, և դժվար թե սուր աչքը կարողանար անտարբեր անցնել նրանց մոտով առանց նկատելու:

Պարզ էր, որ օրերից մի օր երկրպագուներ պիտի ունենային: Այդպես էլ եղավ:

Մի օր Հովհաննեսը եկավ Առաքելենց տուն, ուր հաճախ էր գալիս, նստեց, սուրճ խմեց ու ասաց, որ եկել է մի նպատակով՝ հայտնելու, որ մի երիտասարդ կա, որին լավ են ճանաչում, անունը՝ Մինաս. «Ըսեք նե, Մոսոն կճանչնա»:

- Ես ալ գիտեմ,- ասում է Առաքելը,- ինչ է եղել այդ տղային:

- Ինձ հայտնեց, որ կհամակրի Վարդին, ինքը կամչնա մեկեն ըսելու ձեզի:

Առաքելն և Սաթոն ոչինչ ասել չկարողացան, գիտեին, որ օրերից մի օր պիտի լսեին այդպիսի առաջարկություն: Միայն ասացին.

- Աս մեր գործը չէ, կարծենք, պետք է Վարդին հարցնել, ինքը միայն կրնա պատասխանել:

Բանից պարզվեց, որ միայն դա չէր ասելիքը, շարունակեց խոսքը՝ ասելով.

- Վարդի համար պատասխանը առի, հիմա մեկ ուրիշ բան մըն ալ ունիմ ըսելու:

- Էհե, ըսե տեսնանք:

- Իմ տղաս ալ՝ Արսենը, ըսավ, որ սիրահարվեր է Փառանձեմին, ադոր ինչ կպատասխանեք,- ասաց, և բոլորը սկսեցին ծիծաղել: Հետաքրքիր հարսնախոսություն էր՝ մի քիչ քաղաքավարությամբ համեմված:

- Եթե կհամաձայնին, մենք բան մը չունինք մերժելու, կյանքը չի կայներ, ջահել են, ինչու չունենան իրենց զույգը, թող ընտանիք կազմեն, շատնան, մենք դեմ չենք:

Փառանձեմի համար կասկած չունեին, բայց Վարդը կասկածելի էր, դժվար պիտի լիներ իրեն համոզելը: Նամանավանդ, որ Վարդի ամուսնության մասին ոչ մեկը չգիտեր, ոչ մի անգամ չէր խոսվել: Սա հայկական գաղտնապահություն է, չնայած որ գաղտնի ոչինչ չի մնում:

Երիտասարդները թև առան, և ամեն մեկը իր հերթին ուզում էր նկատվել աղջիկների կողմից:

Բայց շատ նուրբ մոտեցան, մեկը կհաջողվի, բայց մյուսը հարցական է:

Առաքելն ու Սաթոն ոչինչ չասեցին աղջիկներին, ուզեցին, որ ինքնուրույն որոշեն իրենց անելիքը: Շատ երկար չտևեց, երկուսն էլ շուտով իմացան տղաների նպատակը այդքան քնքուշ վերաբերմունքի:

Փառանձեմը շատ չեմուչում չարեց, բայց Վարդը քարայծի պես չհանդուրժեց այդ համարձակությունը:

Ինքը չկար այդ գործում, ինքը մեկ անգամ արդեն մեկն ունեցել էր, որին ո՛չ սիրում էր, ո՛չ էլ մոռանում, անբացատրելի, հարցական մի զգացում, և դրա հետ մեկտեղ, երեխա ուներ, տղա՝ Մուրադը, ինց մոռանա ձագուկին՝ իրենից ձնված: Դեռ այսքան էլ դիմանում է, այստեղից էլ չի փախչում, որ գնա բերի իր ձագին: Պետք է ասել, որ շատ է անցել մտքով, բայց չի արել, զսպելով իրեն՝ միշտ ասել է. «Համբերի՛ր, Աստված մի օր մի դուռ կբացի քեզ համար, Վա՛րդ»:

Միանգամից հրաժարվեց ներքուստ, բայց կտրուկ չմերժեց տղային, թողեց, որ տղան՝ Մինասը, հասկանա ինքը: Բայց տղան, կամաց մոտենալով, քնքուշ վերաբերմունքով այնպես էր անում, որ Վարդը չկարողացավ անողոք ձևով մերժել, նա էլ իր հերթին, չհասկանալու տալով, շրջանցում էր ասածները:

Եվ ընկերություն արեցին շատ երկար, Մինասը երեսուն տարեկանի մոտ էր, բարձրահասակ, ցորնագույն, սև մազերով հաճելի տղա էր, ոչ մեկը չուներ: Ոչ մեկը դեռ չգիտեր, թե ով է, որտեղից է եկել, և ինչպես է, որ այդտեղ է: Մինասը սկսեց այցելել իրենց տուն, Առաքելը նրան լավ էր ընդունում, ոչ մեկը չուներ, հարազատ էր գտել իր համար:

Արսենի վիճակը ավելի լավ էր: Որովհետև իրենք՝ Փառան-

ձեմը և ինքը, վաղուց էին նկատել իրար, ամեն մեկը իր սրտում վաղուց էր փայփայում այդ միտքը՝ հարմար առիթի սպասելով:

Համենայն դեպս, նրանց ամուսնացնելն էլ հարմար չէր, քանի որ Ամերիկա պիտի գնային, ու սպասում էին դեռևս: Որոշեցին այնտեղ ամուսնանալ:

Մինասը չկարողացավ համոզել Վարդին, բայց հույսը չէր կտրում՝ ընկերությունը շարունակելով, որքան անցնում էին օրերը, այնքան խորանում էր սերը Մինասի:

***

Սիրունը և Ալվարդը՝ հորեղբոր աղջիկները, գալով Բուլղարիա՝ չէին մոռանում Առաքելի ընտանիքին, միշտ նամակցում էին: Մի նամակում ուղարկել էին հարսանեկան հրավերները: Որոշել էին նույն օրը անել երկու հարսանիքները:

Առաքելը և Մոսոն չկարողացան ներկա լինել, գոնե իմացան, որ իրոք ամուսնանում են:

Նամակով, բարի մաղթանքներով շնորհավորեցին իրենց միությունը:

Հարսանիքը արեցին մի փոքր սրահում հիսուն հոգու մասնակցությամբ, այնքան, որ նշվեր օրը ամուսնության: Մասնակիցները բոլորը հայեր են եղել, և բոլորը վշտով լցված, դեռ ուրախանալու սիրտ չունենալով այդքան:

Հարսները գեղեցիկ էին՝ ճերմակ հարսի հագուստների մեջ, իրենք շատ ուրախ էին:

Այդքան վշտից և հոգեկան տանջանքներից հետո հազիվ շունչ քաշեցին և իրենց աղջկական իղձը պիտի կատարվեր՝ իրենց սիրած երիտասարդ տղաների հետ ամուսնանալով: Արդյոք այդ երջանկություն չէ՞ր իրենց համար:

Այո՛, ուրախ էին հարսն ու փեսան, անհամեմատ, բոլոր ներկաներից:

Հարսանքավորները որոշեցին այդ օրը հիշել: Բոլորն էլ հագած-կապած, հարսանեկան հագուստներով եկեղեցի գնալուց հետո սրահ եկան: Սրահը զարդարված էր, սեղանները՝ լեցուն ուտելիքներով, գեղեցիկ շարված էին: Ամեն ինչ պատ-

րաստ էր՝ նշելու այդ օրվա գեղեցիկ երկու զույգերի հիշատակելի օրը:

Բաժակները լցրեցին և առաջին բաժակով խմեցին մեր հայ նահատակված հոգիների հանգստության համար, բոլորը, լուռ կանգնած, ըմպեցին և հետո կերան, խմեցին, ուշ գիշերով վերադարձան իրենց տները:

Ճիշտ է, նման չէր գյուղի հարսանիքներին, որոնց ամբողջ գյուղն էր մասնակցում աղմուկ-աղաղակով, դհոլ-զուռնայով: Փոխվել էր ապրելակերպը, փոխվել էր նաև կենցաղի ըմբռնումը:

Հարսներն ու փեսաները որոշել էին գնալ հարսանեկան ճամփորդության մի քանի օրով:

Ընտրել էին մի գյուղ՝ անցկացնելու իրենց այդ քաղցր օրը, հիշելու համար իրենց գյուղը, մաքուր օդը, որ առավոտյան արթնանան աքաղաղի կանչով:

Այդ նույն օրը Առաքելի ու Մոսոյի ընտանիքները միացան, սեղան դրեցին, բաժակ բարձրացրին, իրենք էլ խմեցին ազնիվ սիրով նոր ընտանիք կազմած այդ զույգերի կենացը՝ ցանկանալով բոլոր հայ երիտասարդներին հետևել նրանց օրինակին: Նկարվեցին և նկարները ուղարկեցին:

Ներկա էր Արսենը նաև, որովհետև հատկապես խոսքը իրենց էր ուղղված: Որոշ ժամանակ հետո նշեցին Փառանձեմի և Արսենի նշանադրությունը:

Կամաց-կամաց ուրախ շունչ էր մտնում հայ ընտանիքներում՝ բավ համարելով տրտմության օրերը վերհիշել: Շուտով 1922 թվականը պիտի լրանար:

***

Գալով Վարդին՝ անդրդվելի էր, իր խոսքին ու մտքին կառչած, իսկական մշեցի, մշեցու ինադը մեջը:

Բայց ընկեր էր համարում Մինասին, չէր նեղացնում, չնայած հասկացրել էր, որ երբեք չի լինի, հույսը չպահի իր վրա, կգտնի մի օր իրեն հարմար մեկին և կմոռանա:

Մինասը ամեն ինչին հոժար էր, միայն թե իրենից երես չդարձնի Վարդը, մնա ընկերուհի միայն, որ տեսնի իրեն, երբ ուզի:

Չխոսենք, թե ինչ բուռն էր սիրում իր մեջ, խենթի նման, գիշեր-ցերեկ չուներ, մտքից հանել չէր կարող, ցույց չէր տալիս, որ չզրկվի իրենից:

Այսպես անցնում էին օրերը:

Իրենց Ամերիկա գնալու օրերն էին հաշվում, բայց խոսքը Վարդին չէր վերաբերում:

Նա շատ տխուր էր ընդունում այդ լուրը, որքան հեռու էր, այնքան իրեն թեթև էր զգում:

Որքան հեռու էր լուրը մեկնման, ինքն իրեն մոտ էր զգում իր երեխային՝ Մուրադին, Ամերիկան շատ հեռու էր, ինքը չէր ուզում հեռանալ իր ծագից այդքան:

Մինասը շատ համեստ տղա էր: Երբեմն գալիս, խնդրում էր, որ Վարդը իրեն ուղեկցի, դուրս գան զբոսնելու. գեղեցիկ պարտեզներ կային Սալոնիկում, գնան ծովափ, նավահանգիստ, նստեն մի տեղ՝ սուրճ խմելու: Շատ հարմարավետ տեղեր ուներ Սալոնիկը: Մինասը ամբողջ շաբաթ աշխատում էր մի

գործարանում, ազատ էր միայն կիրակի օրերը: Վարդը չէր աշխատում:

Հայրն էր աշխատում միայն: Ամբողջ օրը տանն էր, զբաղվում էր տան գործերով, ուրիշ շատ բան չունեին անելու:

Մինասի հրավերքները չէր մերժում, հաճույք էր ստանում՝ տանից դուրս գալով, շրջապատը տեսնելով, ասում, խոսում էին, օրն էլ անցնում էր այդպես:

Մի օր, գարնան վերջին օրերից մեկն է, վաղուց ծառերը բողբոջել էին և ծաղիներով զուգված՝ ծածկվում էին գեղեցիկ, փոքրիկ տերևներով, այդ ամենագեղեցիկ եղանակն էր տարվա: Պարտեզներն այնքան գեղեցիկ էին, ամբողջապես ծաղիկների մեջ: Վարդը և Մինասը նստում էին հարմար մի սեղանի մոտ՝ մի ծառի հովանու տակ: Սուրճ էին խնդրում, միշտ գտնում նյութ խոսելու: Այդ օրը Մինասը խոսեց, որովհետև կարիք ուներ խոսելու, պատմելու իր անցյալի մասին, որովհետև ոչ մի անգամ չէր ունեցել մեկը, որ ուզեր լսել իրեն, ինչպես կլսեր Վարդը:

Որոշեց բացել սիրտը, թափել իր թախծոտ վիշտը, որ իրեն ստիպում էր խոսել:

Վարդի համար էլ շատ տարօրինակ թվաց, երբ հանկարծ սկսեց խոսքը, սկսեց անցյալից, կարծես ոչ մեկը չկար, և թվում էր, թե վերացած հեքիաթ է պատմում, որ ինքն իրեն է պատմում:

Տպավորությունը այսպիսին էր. «Ես պատմում եմ, որովհետև պատմել եմ ուզում, եթե լսում ես, լսի՛ր, եթե ո՛չ, մի լսի՛ր, մեկ է, ես պատմելու եմ»:

Վարդը, այս բոլորը հասկանալով, ձեռքը տարավ, բռնեց Մինասի ձեռքը, ասաց, «Պատմե՛, ես կլսեմ»:

Պատմեց, որ ինքը փոքր հասակից ծնող չի ունեցել, մնացել է հորաքրոջ հովանավորության տակ: Ծնողներին առաջին ջարդերի ընթացքում իրենց տան շեմին սպանել են թուրքերը՝ թալանելով ունեցվածքը, ինչպես և շրջապատի բոլոր հարուստ

հայերին: Հայրը վաճառական է եղել, մեծ կապեր է ունեցել շատ հարուստ դիրք ունեցող մարդկանց հետ, անվանել են Լորդ Սամսոն: Մայրն էլ հարուստ ընտանիքից է եղել: Երբ ծնողներին սպանել են, ինքը օրորոցում քնած է եղել, անցել -դարձել են, չեն նկատել, մնացել է քնած:

Երբ թուրքերը մտել են, հարցրել ոսկիների տեղը, հայրը անմիջապես ցույց է տվել, որ առնեն ու գնան, թող չփնտրեն, եթե փնտրելու լինեն, երեխայի օրորոցն էլ տակնուվրա կանեն: Եվ այդ բոլորը հավաքելուց հետո ատրճանակով սպանում են և՛ հորը, և՛ մորը: Այդպես ինքը ողջ է մնում: Հարևանները հավաքվում են, լաց ու կոծով երեխային հանում են օրորոցից: Գալիս է հորաքույրը, իրեն տանում, մեծացնում է իր երեխաների՝ երկու տղաների հետ: Ուղարկում է դպրոց, հետո ավելի բարձր դպրոց, ինքը միշտ սովորել է գերազանց:

Երբ լինում է քսան տարեկան, հորաքույրը ասում է. «Մինա՛ս, շատերը կերթան օտարության, եկուր դուն ալ գնա, անոնց հետ ընկերացիր, գլուխդ կազատես գոնե, երիտասարդ տղա ես, գիտեմ, որ թուրքերուն աչքը հիմա վրադ է»: Շրջապատի շատ երիտասարդներ հավաքել էին և Մինասին էլ վերցրին իրենց հետ, այդ ճանապարհով հասել է Սալոնիկ: Օտարությունը դյուրին չէ, դիմանալ է պետք, այն էլ մենակ, առանց ընտանիքի: Այնուհետև լսել էր, որ հորաքրոջ ամբողջ ընտանիքը քշել են մյուս հայերի նման, և լուր չուներ:

Այսպես խոսելով, մտքերը իրար խառնելով, մեկ դեպքը մյուսից առաջ ասելով՝ պատմում էր Մինասը, խոսում էր արագ, վախենալով, որ կարող է կիսատ մնա խոսքը: Վարդն այդ բոլորը նկատեց ու մտքի մեջ ասաց. «Դու դեռ չգիտես՝ ինչեր եմ ես քաշել ու ինչեր ունեմ իմ սրտի մեջ պահած: Ես ինչպե՞ս պատմեմ քեզ, եթե պատմեմ, շահս ի՞նչ է, ինչո՞վ ինձ պիտի

օգնես: Դու քոնը պատմեցիր, վերջացավ, բայց եթե ես պատմեմ իմը, չի վերջանա»:

Այդ օրը հերիք էր, Մինասն ասաց.

- Բավական խոսեցի իմ մասին, քիչ մըն ալ քո մասին պատմե:

- Ուրիշ օր,- ասաց Վարդը՝ կարճ կապելով:

Քիչ նստելուց հետո վերադարձան տուն:

Այդ օրը տուն վերադառնալով՝ պատմեց այդ բոլորը Սաթոյին: Նա էլ վատ ընդունեց, բայց ոչինչ անել չեն կարող, եթե Վարդը որոշել է իր կյանքը անցկացնել սպասելով, ով ինչ կարող է անել: Սաթոն, ինչպես և Առաքելը, երկար մտածում էին այդ մասին, ելք չէին գտնում, ինչպե՞ս կարող են համոզել, որ իրեն ամուսին է պետք, չի կարող ամբողջ կյանքը այդպես ապրել, սպասել, բայց ո՞ւմ սպասել, սպասել մեկին, որից փախել է, որին չկարողացավ հանդուրժել, որը թո՞ւրք է:

Այո՛, իր համար թուրք է եղել, ինչո՞ւ սպասել մեկին, որին չէր ուզում: Թողնել չի կարող այն միտքը որ փախել է, ոչ թե լքել է, ուրիշ կերպ անել չէր կարող, չի ուրացել իր երեխային, բայց ինչպե՞ս պիտի կարողանա վերջում ապացուցել, արդյո՞ք պիտի ընդունվի իր բացատրությունն իբրև արդարացում:

***

Մուրադը երկու տարեկան էր, երբ Քամալը մոր հետ տեղափոխվեց Մուշ՝ թողնելով տունուտեղը, ինչպես որ կար: Իրենք էլ քշված էին ապրում հեռու մի գյուղում՝ կորած սարերի մեջ:

Քամալի հայրը տեսնելով, որ Քամալը կարող է իրեն դրսևորել, տեղավորեց Մուշում՝ բարձր դպրոցում սովորելու: Այստեղ ապահովեց նաև մնալու տեղն ու սնունդը և շաբաթվա վերջում մեկ օրով բերում էր տուն ու նորից տանում: Այնտեղ երկու տարի սովորելուց հետո տեղավորում է Վանում՝ զինվորական դպրոցում: Արդեն մեծ էր, նոր էր ավարտել դպրոցը, երբ հանդիպեց Վարդին և հրապուրվեց:

Մուշում Քամալի նոր աշխատանքը չենք կարող ասել, որ իրեն դուր էր գալիս: Նորից զինվորական էր, բայց հաշվապահական խնդիրների մեջ էր, ավելի լավ էր՝ թվերը, քան այդ կառավարական գործերը, դավերը, խորամանկությունները:

Ավելի լավ էր վարձատրվում և շատ ազատ ժամեր ուներ, կարող էր թվերը տուն բերել և աշխատել: Մայրն ամբողջ հոգով, սրտով խնամում էր թոռանը՝ լրացնելով հոր և մոր կիսատ թողած հոգատարությունը: Երեխան ինչ իմանար՝ մայրն ինչ է, եթե չի տեսել, չի զգացել գուրգուրանքը մոր, հոտն ու սերը մոր: Ճիշտ է, մեծանում էր: Քամալի այս նոր աշխատանքը թույլ էր տալիս ժամանակ ունենալ երեխայի հետ զբաղվելու, սիրելու, մորը օգնելու նաև:

Քամալն ամեն րոպե հիշում էր Վարդին, սիրում որդուն, սիրում Վարդին: Այն ժամանակ չէր կարող համարձակ սիրել՝ իրեն մեղավոր զգալով, հիմա զգում էր, որ Վարդը սիրում էր իրեն: Նա այնքան քնքուշ էր ուզում մոտենալ, որ Վարդը հասկանա իր հայ լինելը: Գիտի հիմա, որ չէր վանի իրեն, չէր մերժի իրեն, չէր փախչի երբեք, եթե իմանար: Ո՞ւր գնա, ո՞ւր փնտրի, ո՞ւմ հարցնի, բոլորը մեռան, կարող է՝ ինքն էլ չկա հիմա, ո՞նց անի: Կուզի գնալ փնտրել, բայց ո՞ւր, ինչպե՞ս թողնի իր ձագին, իր մորը: Այստեղ աշխատեց մի քանի տարի ու ոչ մի անգամ չէր վերադարձել գյուղ, լքել էր իր տունը հայրական:

- Քամա՛լ, այս երեկո պիտի հավաքվենք, դու էլ արի, կտեսնես՝ լավ երեկույթ է, սեղաններ էլ կան, մենք պիտի վճարենք, բայց ոչինչ, գոնե կուրախանանք, ոչ մի անգամ ներկա չես մեզ հետ,- մոտենալով ասաց աշխատակիցներից մեկը, ուրիշներ էլ պիտի լինեն, կանայք, աղջիկներ նաև: Մենք մենակ չենք: Քամալը լսել է, ճիշտ է, ոչ մի անգամ չի մասնակցել այդ տեսակ հավաքույթների: Միշտ մտածել է. «Գնամ, երեխային գրկեմ, սիրեմ, ավելի լավ է ինձ համար»:

Այս խոսողը քուրդ տղա էր: Նա էլ հաշվետար էր, Քրմո էին կոչում նրան:

Քամալը համաձայնեց, բայց որոշեց գնալ տուն, տղային սիրել, որովհետև եթե ժամանակին տուն չէր մտնում, պետք է լրջորեն պատասխան տար, թե ինչու է ուշանում:

Հայրը երբեմն մտածում էր. «Այս տղան վերջում դատավոր պիտի դառնա երևի»:

Մուրադը արդեն չորս տարեկան էր: Երբ տեսավ հորը, անմիջապես վազեց, թռավ հոր բազուկների մեջ, ուր կարծես ապահով էր զգում իրեն: Ինքը մենակ էր, քույր, եղբայր չուներ: Գյուղվարդը ոչ մի անգամ մենակ չէր թողնում իրեն դրսում խաղալ, ընկերներ չուներ: Հայրը արգելել էր թուրք երեխաների

հետ խաղալ, բայց հայերն էլ չէին ուզում, որ իրենցը թուրքի հետ խաղա: Մուրադը թուրք էր բոլորի համար, ինչպես թուրքերը՝ իր համար: Այդպես մեծանում էր երեխան՝ ավելի շատ ապավինելով հոր գուրգուրանքին:

Քամալն այդ երեկոն անցկացրեց իր աշխատակիցների հետ, բոլորն ուրախ տրամադրությամբ ուտում, խմում էին՝ խոսելով, ազատ ծիծաղելով: Քամալն էլ ցույց տվեց, որ շատ ուրախ է, տեսնելով, որ մարդիկ տրամադրվում են ուրախ լինելու, նույնիսկ, երբ ուրախ էլ չեն: Այդ շրջանում ոչ մի հայ չկար, բոլորը թուրք և քուրդ էին, իհարկե, թուրն իրենց ձեռքն է, աջ ու ձախ կոտորեցին, մտածում էր Քամալը: Իրենց պահում էին անդարդ, մեծամիտ, ինքնավստահ:

Հայերին թրի անցկացրեցին, հայ աղջիկներին հավաքեցին իրենց հարեմները, իրենց անկողինների մեջ: Բոլորին թուրքացրին, կրոնափոխ արեցին: Քամալը խոսում է երբեմն իրենց հետ, բայց այս բոլորը գիտի և մոռանալ չի կարող տեսածները: Երբեմն էլ չէր լսում նույնիսկ՝ ինչ էին խոսում:

-Հա՛, Քամալ դու ինչ կասես...

Քամալը չի լսել, ինչպե՞ս պատասխանի, ինքն այդտեղ չէր: Ստիպված ուսերը վեր էր քաշում, պատասխանը անորոշ էր:

Այսինքն՝ իր խելքի բանը չէ դա:

Ուշ երեկոյան տուն վերադարձավ՝ մի քանի բաժակ խմած, այդ օրը առաջին անգամ էր խմել ու լավ չէր զգում:

Քամալը երբ տուն մտավ, Մուրադը քնած էր վաղուց: Մայրը նստել գուլպա էր գործում, բայց ավելի տղային էր սպասում: Այս աշխարհում էլ ոչ մեկը չուներ, միայն տղան էր և թոռնիկը, ոչ մի բարեկամ չուներ: Ինքն էլ որբ էր, Օրհանն էլ: Երկուսի ծնողներին էլ թուրքերը սպանել էին: Երկուսն էլ սրա- նրա դուռն էին մեծացել, թափած հացը կերել: Երբ մեծացել են, իրար ձեռք բռնել, հեռացել են իրենց ապրած գյուղից, շատ երկար քայլելով՝

մի քանի շաբաթ անց հասան այդ գյուղը և այդտեղ ոչ մեկը չիմացավ, որ թուրք չեն, մնացին: Օրհանը տունը սարքեց, և ունեցան Քամալին:

- Յավրո՛ւմ, լավ անցուցիր երեկոն:
- Լավ էր, աննեմ:
- Ինչ կխոսեին, ինչ կըսեին:
- Աննեմ, կուրախանային, շատ բան ալ ես չէի լսեր:

Բացատրում է, որ իրեն հաճելի չէ դրանց նիստուկացը, որ կուզեն իբր իրենց զարգացած ցույց տալ, բայց երբևէ կքաղաքակրթվի՞ արդյոք այդ ազգը, այնքան չարություն կա մեջը:

Քամալը մտավ անկողին՝ բռունցքը սեղմած կրծքի վրա, երկու կաթիլ արցունք թափվեցին աչքերից:

Առավոտյան՝ աշխատանք, ու այդպես շարունակ, տարիները անցնում էին:

***

Եկավ այն օրը, երբ Առաքելը ստացավ այն լուրը, որին երկար սպասում էին՝ իրավունքը Ամերիկա գնալու համար: Ուրախ էին և տխուր միաժամանակ, քանի որ մեծ վախ ունեին, դեռ լուր չունեին Վաղինակի մասին: Եկեղեցու միջոցով հայտարարությունը եղել էր, ու պատասխանը չկար դեռ:

Գնում էին Ամերիկա, բայց ո՛ւր, և ո՛ւր է իր տղան միևուճար: Արդեն դեմքն էլ են մոռացում, մեծացել է հիմա, փոխվել, տղամարդ է դարձել: Նկար էլ չունեն, որ նայեն, հիշեն: Գյուղում նկարիչ էլ չունեին այն ժամանակ. այդ խուլ գյուղերում ինչ կար, որ դա լիներ: Լույս էլ չկար, մութն ընկած անկողին էին մտնում, աքաղաղի կանչով վեր կենում: Հիմա ինչ է լինելու, ժամկետ են տվել պատրաստվելու, օրն ու ժամը նշված է արդեն: Բոլորի սիրտը դող էր, մինչև այստեղ հասնելը արդեն դժոխային էր, հազիվ մի քիչ հանգստություն էր իջել վրաները, նորից տեղափոխություն: Սա էլ ուրիշ տեսակ գաղթ էր, բայց երբ այնտեղից լավ լուր են ստանում, գոտեպնդվում են: Լավ է, երբ հուսադրում են, և լավատես լինելն էլ քաջություն է:

Իրենց մնացել էր մեկ ամիս: Նավով պիտի ճամփորդեն: Քանի ընտանիք ընդունվել են, բոլորն էլ սկսեցին պատրաստվել, ծանոթ ընտանիքներն իրար հետ միասին պիտի գնային և բոլորի բերանից Ֆրեզնո բառն էր հնչում:

Առաքելը, ինչպես մյուսները, իրար ուժ տալով, իրար խելք տալով, աշխատում էին ճիշտ օրը պատրաստ լինելու: Շատ բան չունեին տանելու, մի քանի ճամպրուկ, ոչ ավելի:

Այն էլ, եթե նայենք Առաքելին, Ամերիկայով բոլորովին չէր հետաքրքրվում, եթե տղան այնտեղ չլիներ, այստեղ՝ Հունաստանում էլ լավ էին զգում, վարժվել էին երկրին:

Վարդը շատ տխուր էր, գնալով հեռանում էր իր տղայից, արդեն գիշեր- ցերեկ չուներ, ձեռքը ոչ մի բանի չէր բռնում: Օրերը մոտենում էին, ինչո՞ւ ինքը լուր չուներ, արդյո՞ք մի բան է պատահել իր տղային, որ չեն ուզում հայտնել, արդյոք տեղափոխվե՞լ են, արդյոք Քամալի՞ն է բան պատահել, ոստիկան էր ինքը:

Վարդը մի քանի նամակ էր ուղարկել գյուղ, տարբեր ժամանակներում, և ոչ մի պատասխան չուներ, դա էր իրեն անհանգստացնում ու տանջում: Ինչպե՞ս չմտածեր, եթե իր երեխան իր հույսին է թողել: Այսպես հիշում է, երազում, պատկերացնում, կարոտում, փայփայում, չի խոսում, մրմնջում է, չի լացում, հեկեկում է: Առաքելը նայում էր աղջկան, տեսնում էր այդ բոլորը: Ինքը գնում է Ամերիկա, որ մոտենա իր տղային, Վարդը հեռանում էր իր տղայից, ինչ անի, ո՞րն է ճիշտը: Վարդը գիտեր, որ իր տղան լավ ձեռքերում է, բայց լռությունը ինչի՞ համար է: Դրությունը այդ երկրում անկայուն է. ամեն ինչ կարող է պատահել:

Այլևս մտածելու ժամանակ չունեին, օրը եկավ մեկնումի, բոլորը նավահանգստում պիտի լինեն մի քանի ժամ առաջ: Այդ օրը շատ մարդիկ էին եկել ճանապարհ դնելու, եկել էր նաև Մինասը: Նավը պիտի շարժվեր կեսօրին, բոլորը նավի վրա պիտի լինեին մեկ ժամ առաջ:

Մինասը խնդրեց Վարդին գնալ մոտիկ սրճարանը, նստեն սուրճ, խմեն, դեռ շատ ժամանակ կար: Գնացին, նստեցին, շատ խոսեցին, սուրճ բերեցին. ժամանակը շուտ էր անցնում:

Մինասը հարց տվեց Վարդին՝ ասելով.

- Դու քո կյանքի մասին ոչինչ չպատմեցիր, շատ կուզեի իմանալ, մեկը կա՞ արդյոք քեզ սիրող, որ չուզեցիր լսել իմ առաջարկը, չուզեցիր իմանալ, թե որքան է ինձ տանջել քո այդ անտարբերությունը: Վա՛րդ, դու գնում ես այսօր, գոնե իմացի՛ր, որ ես քեզ շատ եմ սիրել, եթե ես կարողանայի մեկ ուրիշին սիրել, ինչպես քեզ եմ սիրում: Գիտեմ, որ արդեն ուշ է, իզուր են այս իմ խոսքերը, գոնե մի խո՛սք ասա, խնդրում եմ:

- Ես կընդունեի, դու արժանի ես շատ բանի, ես հարգում եմ քեզ, բայց...,- ու լաց եղավ:

- Վար՛դ, ինչ է նշանակում «բայց», Վա՛րդ, խոսի՛ր, ժամանակը քիչ է, խոսի՛ր:

Վարդը այլևս չդիմացավ, պատմեց սկզբից մինչև վերջ իր կյանքի պատմությունը, որ շատ երկար էր, պատմեց ու լաց եղավ, պահել մինչև ե՞րբ, պահել ինչո՞ւ, եթե այդպես է: Հազիվ էր շնչում արդեն, այնքան արագ էր ուզում պատմել և ամբողջը պիտի պատմեր, ամենավերջում էլ չդիմացավ.

- Փախա՛, Մինաս, փախա՛, երեխայիս թողեցի, փախա՛: Ես ինչ անեմ, ես երեխա ունեմ. եթե հայրը թուրք չլիներ, շատ լավ էր, Մինա՛ս, շատ լավ էր: Թուրք էր, դրա համար չուզեցի սիրել, թե ոչ, շատ արժանի էր սիրվելու:

Չեմ մեղադրում, ինչ աներ, որ թուրք էր, իրավունք չունե՞ր սիրելու: Մինա՛ս, խոսի՛ր, հիմա, դու մի բա՛ն ասա ինձ: Երեխայիս թողած՝ ավելի եմ հեռանում, ինչ անեմ, ասա՛:

Մինասը այլևս խոսք չուներ խոսելու, Վարդի սիրտը կոտրված էր, բեկորները՝ ցաքուցրիվ եղած ամեն մեկը մի կողմի վրա:

Բայց Մինասը ինչ անի, եթե ինքն էլ է սիրում, իր մեղքը ո՞րն է այսքանի մեջ:

Մինասը հանկարծ նայեց ժամացույցին, նավի շարժվելու ժամանակն էր: Վազեցին, բայց նավին չհասան: Նավը հեռացել էր արդեն նավահանգստից:

Վարդը մնաց, ծնողները գնացին:

Վարդը հեկեկում էր: Մինասը գրկեց Վարդին, գլուխը դրեց ուսին, որ շարունակի լաց լինել:

Մինասի հույսին մնաց Վարդը: Բայց շատ ազնիվ տղա էր Մինասը, հարգեց Վարդին, նրա զգացմունքներին ու մնաց ազնիվ ընկեր նրա համար՝ զգալով, որ Վարդը անտարբեր չի եղել Քամալի նկատմամբ, որ զգացմունքերն այդքան ուժեղ են հիմա էլ, ու Վարդը ինքն էլ չի պատկերացնում այդ:

Վարդը մնաց կանգնած ծովեզրին այնքան ժամանակ, մինչև նավը աներևույթ եղավ:

Մինասը նմանապես, այլևս ուրիշ ոչինչ չունեին անելու, պիտի վերադառնային: Այս նոր վիշտը ճզմեց Վարդի հոգին, Մինասը մխիթարելու ոչ մի խոսք չէր գտնում, բռնեց Վարդի ձեռքը, ասաց.

- Վա՛րդ, մի՛ մտածիր, հույսդ կարող ես ինձ վրա դնել, ես քեզ չեմ թողնի, ես քեզ կպաշտպանեմ, կլինեմ քո հարազատը: Այսօր կմնաս ինձ մոտ, վաղը կմտածենք, թե ինչ պիտի անենք:

Վարդը հետևեց Մինասին, միասին գնացին տուն:

Մինասը եկած օրվանից մի շենքի երկրորդ հարկի երկուսենյականոց մի բնակարանում էր ապրում: Մաքուր էր, լավ հավաքված, խոհանոցի փոքրիկ անկյունը՝ դասավորված:

Վարդը, ներս մտնելով տուն, անմիջապես զգաց այդ մաքրությունը: Քաշված էր իրեն զգում, շատ տխուր էր: Նեղվում էր իր անմիտ այս վիճակից, նեղվում էր, որ նեղեց իր ծնողներին կրկին՝ ամենևին չուզելով, և ամեն անգամ դա իր կամքից անկախ էր ստացվում: Ինչ է անելու հիմա, ինչպես պիտի մնա մենակ այս օտար երկրում անօգնական:

Մինասը հուսադրում է իրեն, որ չմտածի, աշխատանք կգտնի նրա համար, տուն էլ կգտնի, որ ինքը փող ունի, կօգնի և այլն:

Վարդը ճանաչում էր Մինասին, լավ մարդ է ինքը, ազնիվ:

Հաջերդ օրը անմիջապես ամեն ինչ արեց, բարեխոսեց ու անմիջապես աշխատանք գտավ Վարդի համար կարի գործարանում, և խոստացան նաև բնակարան էլ գտնել, որ մոտիկ լինի իրեն:

Վարդը հույսը չկորցրեց ու միշտ մտածում էր, որ Աստված մի դուռ կբացի իր համար:

Այսօր փոխվեց իր կյանքի ուղղությունը, ինչո՞ւ, ամեն ինչում մի իմաստ պետք է փնտրել, ինչպե՞ս իմանա՝ որն է սրա իմաստը: Մինասը այս անգամ փոխեց մտադրությունը, ավելի շուտ, ուզեց փոխել. Վարդին տեսած օրվանից սիրել էր, շատ երկար ժամանակ պահանջվեց մինչև կարողացավ իր զգացմունքները հայտնել: Իրոք, լավ, քնքուշ էր Վարդը, բայց հիմա զգաց, որ իր համար չէ: Վարդն ունի մեկը, որ հեռու է, բայց դեռ իր մեջ է, մեկը, որ դեռ մտածում է կամ արդյոք, թե՞ ոչ:

Մինասը հասկացավ, որ Վարդը տեղ չունի երկրորդի համար իր սրտում: Հետ կանգնեց իր մտքից, չուզեց ավելորդ հոգ դառնալ Վարդին, ինքը Վարդին շատ էր սիրում: Վարդը հիմա շատ ուրիշ մտքեր ուներ, բավարար չէ՞ այդ ամենը, ինչ ապրել էր, նոր նեղություններ պետք չէր ավելացնել:

Նոր աշխատանք, չնայած կյանքում գործարան չէր տեսել, նոր տուն, ինքն էլ մենակ:

Շատ դժվարությամբ բնակարան գտան մի քանի շենք հեռու, մեկսենյականոց երրորդ հարկում: Ուրախացավ Վարդը, որ գոնե շատ հեռու չէր Մինասից: Սալոնիկը մեծ քաղաք է, շատ հայեր կային, բայց իրարից հեռու են ապրում:

Բոլորն աշխատում են՝ կին թե տղամարդ:

Իրար տեսնելը խնդիր է, օտարը սրտացավ չէ, և ամեն րոպե կուզես, որ մեկը քեզ լսի, եթե պետք է, օգնի: Վարդը ստիպված պիտի լարեր ուժերը ինքնուրույն լինելու, մինչև այսօր ծնողին էր հարել այս օտար երկրում, այսուհետև...

Երկու օրից Վարդը գնաց ներկայանալու, ծանոթացրեցին գործին, ոչինչ, շատ դժվար չթվաց իրեն, ուզեց աշխատել: Այդ օրը մնաց, նայեց, ուսումնասիրեց, օգնեց: Հաջորդ օրվանից սկսեց աշխատել: Այդտեղ անմիջապես իրեն ներկայացավ մի հայ աղջիկ՝ անունը Արևհատ. առաջին հայացքից լավ տպավորություն թողեցին միմյանց վրա: Պարզվեց, որ նոր է եկել Թուրքիայից ծնողների հետ, և երկու ամիս է, որ աշխատում է այդ գործարանում, լավ չգիտեր լեզուն, բայց գործի մեջ է եղել միշտ, որի համար էլ ընդունել են աշխատանքի:

Երկու աղջիկները շատ ուրախացան ծանոթանալու համար: Արևհատն էլ նույն թաղամասում էր ապրում: Հոր անունը Գուրգեն էր, մորը՝ Սիրուշ, եղբայր էլ ուներ՝ Երվանդ անունով: Արևհատը փոքր էր Վարդից:

Երեկոյան աշխատանքից դուրս գալով՝ տեսան Մինասին. կանգնած էր մուտքի դռան մոտ, իրեն էր սպասում: Մինասը հարցրեց աշխատանքի մասին, թե ինչպես է անցկացրել այդ օրը, ուրախ է, թե՞ ոչ: Վարդը ուրախությամբ պատասխանեց: Պատմեց նաև Արևհատի մասին, Մինասը ուրախացավ, որ արդեն ընկերուհի է գտել:

- Տեսա՞ր, որ ասում էի՝ մի՛ հուսահատվի, Աստված մեծ է, մի դուռ կբացի, աշխատանք ունես արդեն, տուն ունես, ընկերուհի էլ գտար քեզ համար:

- Ճիշտ ես, Աստված մի դուռ փակում է, ուրիշ դռներ է բացում, շնորհակալ եմ, ուրախ եմ արդեն, ավելի լավ չէր կարող լինել: Ես սիրում եմ այս քաղաքը, արդեն հարմարվել եմ, տեսնենք՝ մինչև մի նոր դուռ բացի Աստված, կհամբերեմ:

Դե, լավ, գիտենք՝ նոր դուռը որն էր իր համար: Դա անհույս մի դուռ է, որ դեռ չի երևում, նշույլը չկա հորիզոնում, բայց հույսը

չի կտրում: Մինասը Վարդին առաջարկեց գնալ սուրճ խմելու. սրճարանը փողոցի անկյունում էր:

Այդտեղ Մինասին տասը տարուց ավելի ճանաչում են, իր սրճարանն է, ամեն կիրակի առավոտ սուրճ է խմում, մնում մի ժամի չափ, խոսում մարդկանց հետ, որոնց լավ ծանոթ էր արդեն, այնուհետև վերադառնում տուն: Երեկոներն էր լինում, որ գնում էր թղթախաղի: Շաբաթվա բոլոր օրերը պիտի աշխատեր, կիրակի հանգստի օրն էր, ոչինչ, շատ ուրախ էր Վարդը, մենակ էր, ինչ պիտի աներ տանը, գոնե այնտեղ մարդկանց մեջ կլինի: Գոհ էին արած գործից, արագ էր ձեռքը, որը շատ կարևոր էր շղթայի վրա աշխատողի համար: Ամեն մեկը մի գործի վրա է, իր արագությունը առիթ չէր տալիս մյուսին սպասելու:

Այնտեղ հայտնեցին, որ շատ ուրիշ հայեր էլ կան աշխատող:

Վարդը արդեն մենակ չէր, թիկունք ուներ: Մինչև ամիսը լրանալը Մինասը Վարդին ամեն ինչով պահեց: Երբեմն երեկոները միասին գնում էին ճաշարան, ասում-խոսում, հետո բերում էր տուն, ինքն էլ գնում իր տուն, մինչև Վարդը ինքնուրույն դարձավ:

Վարձած տան մեջ կար ամեն պետք եղածը, հարմարավետ չէր, իհարկե, բայց անհրաժեշտը կար: Վարդը, ինչպես գիտենք, ոչ մի ուրիշ հագուստ չուներ իր հետ, ուներ միայն իր անձնագիրը, ոչ շատ գումար և իր պայուսակի մեջ իրեն վերաբերող մի քանի իրեր: Շաբաթվա սկզբից սկսեց աշխատել, վարձատրում էին շաբաթական: Այնպես որ, շուտով կյանքը մտավ իր հունի մեջ:

Կյանքը ուրախ էր, հույները սիրում են երգ- երաժշտություն, երեկոները ճաշարաններից հնչում են ուրախ երգեր:

- Այս երեկո իջի՛ր, գնանք սուրճ խմելու,- ասաց Մինասը Վարդին աշխատանքից հետո: Վարդը համաձայնեց:

Դեռ լույս էր, ամռան երկար օրերը հաճելի են ման գալու համար: Արևը մայր էր մտնում, արևի վերջին ճառագայթները մայրամուտին փայլեր են տալիս ծովի օրորվող ջրերի վրա: Նայած երկինքը ամպոտ է, թե կապույտ՝ տարբեր է տեսարանը:

Այդ երեկո հիանալի էր, որոշեցին մնալ ծովափին մինչև արևի մայր մտնելը, հետո գնալ սուրճ խմելու: Նստեցին ավազների վրա, երկար խոսեցին, նայեցին, հիացան: Ինչպես Վարդը, այնպես էլ Մինասը, ուրախ էին իրար ունենալու համար, փոխադարձաբար բախտավոր էին իրենց համարում: Մենակ չէին, մինչև ե՛րբ պիտի տևեր այդ անկեղծ ընկերությունը: Երևի միշտ, հավիտյան, այդպես էր թվում իրենց:

Երբեմն իրար հետ խոսում էին իրենց ծննդավայրից, իրենց անցկացրած մանկությունից. որքան էլ փնտրում էին ուրախ միջադեպ, կարծես չէին գտնում, բայց դառը բանը պատմելու ժամանակ միշտ ժպտում էին, երանի տալիս այդ ժամանակին, երբ ընտանիք կար, հայրենիք կար, ամեն ինչ միասին էին անում:

Օրինակի համար՝ Մոսոյի և Արեգնազի հարսանիքին ամբողջ գյուղը օգնում էր և հետո բոլորը քեֆ արեցին միասին:

Հիշում էին նաև վատ օրերը, որոնց սկիզբը կար, վերջը չկա...

Մտան սրճարան: Սրճարանը լեփ-լեցուն էր, կային մարդիկ տարբեր ազգերի՝ հույներ, ռումինացիներ, բուլղարներ, հայեր, կային նաև գնչուներ: Սրանցից ամեն մեկն ուներ իր նստելու անկյունը, գրեթե միմյանց չէին խառնվում, բայց բոլորն իրար ծանոթ էին: Քեֆ անելիս բոլորն էին մասնակցում, սիրում էին պարել սիրտակի:

Ամառվա տաք օրերին, կեսօրին բոլոր խանութները փակում էին, հանգստանում, երեկոյան նորից բացում, ամբողջ գիշեր բաց էին պահում և աշխատում:

Վարդը և Մինասը մոտեցան մի սեղանի, որն ազատ էր, նստեցին, անմիջապես մատուցողը մոտեցավ, սուրճ պատվիրեցին: Կողքի սեղանից մի մարդ մոտեցավ, ծանոթ չէր, Մինասին բարևելով՝ ասաց.

- Ինձ ասացին, տիկի՛ն, որ Առաքելի աղջիկն ըլլալու եք, ես ճի՞շտ եմ:

- Այո՛, կճանչնամք հորս:

- Այո, շատ լավ, ես Ղազարի փեսան կըլլամ՝ Մարոյին ամուսինը, ես Պողոսն եմ:

- Ես անունները լսած եմ, բայց հիմա չեմ հիշեր: Ինչպե՞ս եք, ո՞ւր կապրիք, ես ձեզի տեսած չեմ, բայց գիտեմ:

- Մենք Իստամբուլեն նոր եկած ենք: Ալ տեսա, որ հայերի հոսքը կամաց-կամաց քիչցավ, ըսի, կնի՛կ, մեր երթալու ժամանակը եկավ, երթանք, մենք ալ ազատինք, հերիք թուրք մնանք: Ան ալ, եկանք տեսանք՝ Ղազարը ընտանիքով անցած է Ամերիկա, բան չիկա, ես ալ ասպես կպտտիմ, ուր ծանոթ մը կա, կխոսիմ, տեսնամ ի՞նչ ընելըս: Այսպես աշխատանք մը գտնեմ նը, լավ կըլլա:

Այս լսելով՝ Վարդը դարձավ, Մինասին նայեց, կարծես մի կարծիք էր իրենից սպասում:

- Ի՞նչ ընել գիտես,- հարցրեց Մինասը:

- Ես, հոն գարսոն կաշխատեի, հոս չեմ գիտեր, կրնամ բարին մեջ աշխատիլ, ամեն ինչն ալ լավ գիտեմ:

Մինասը տեղից վեր կացավ, գնաց դեպի բարը: Անմիջապես աշխատանքը եղավ, քանի որ սրճարանի տերը Մինասին ասել

էր, որ փնտրում էր մեկին՝ գործը վստահելու, ինքը հոգնել էր արդեն այդ գործից, չէր ուզում աշխատել:

***

Պողոսը՝ բարմենը, հագած-կապած, տպավորիչ արտաքինով մարդ էր: Շատ ուրախացավ Վարդն էլ, որ կամաց- կամաց մի գեղեցիկ պաշտպանողական ցանց էր հյուսում իր չորս կողմը: Բոլորը սիրում էին Վարդին: Պողոսն անցյալը լսել էր, բայց նա ոչնչով մեղավոր չէր, դա էլ գիտեր, հիմա մենակ կին է, պետք է պաշտպանել հետագա վտանգներից:

Պողոսը ծնող չունի, շատ վաղուց նրանց էլ նույն ձևով սպանել են թուրքերը: Որբ էր, մեծացել էր հարևան մի քրդի ձեռքի տակ, մեկ օր քաղցած, մեկ օր կուշտ օրերն անցկացրել՝ դաշտերում ոչխարներ արածեցնելով:

Այդպես ապրել է, մինչև մի օր, զզվելով իր կյանքից, հեռացել է շատ հեռու սարերով, ձորերով, հասել Չմըրլու, կորած մի գյուղ, որտեղ աշխատել է որպես հողագործ մեկի մոտ, այդպես, երբ խելքը հասել է, սիրահարվել է Մարոյին՝ Ղազարի քրոջը, և իր համեստությամբ ու աշխատասիրությամբ կարողացել ապացուցել, որ արժանի է Մարոյին: Մարոն էլ չէր թաքցրել իր սերը Պողոսի հանդեպ: Այսպես մատղաշ-մատղաշ Ղազարը ամուսնացրել է քրոջը՝ տալով անտուն Պողոսին:

Շատ չտևեց, ունեցան մի աղջիկ, անունը՝ Քնուշ:

Այնուհետև, ինչպես բոլորը, անցան բոլոր դժվարին որոգայթների միջով՝ սարքված թուրքերի կողմից, հասան օտար երկիր, արտաքսվեցին իրենց հայրենիքից:

Պողոսը ճիշտ որ մեծ փորձ ուներ այդ գործում, շատ շուտով բոլորը սիրեցին իրեն: Մի քանի քաղաքավարի նախա-

դասություններ սովորեց սկզբում հունարեն, այն միայն, ինչ վերաբերում էր իրեն ու աշխատանքին, հետո շատ լավ սովորեց իր գործի լեզուն: Բոլորը գոհ էին իրենից: Պողոսը կարողացավ այդ թաղամասում՝ իր գործի մոտ տուն գտնել, որ դյուրին լինի գնալ-գալը:

Այսպես բոլորը մտերմացան, ու հարևանությունը շարունակվեց: Վարդն էլ մտածելու բան չուներ:

Պողոսը և Մինասը իրար լավ էին հասկանում, ծանոթացան նաև Արևհատի ընտանիքի հետ:

Նույն թաղում էին ապրում, ամեն հարցում իրար էին հասնում: Կազմակերպում էին հյուրասիրություններ, զբոսանքներ:

Ամռանը նույնիսկ գնում էին կղզիները՝ մի քանի օր անցկացնելու համար:

Գնում էին ծով ամեն ինչով պատրաստ, լողում, ուտում, խմում ամբողջ օրը, վերադառնում:

***

Շեփորը հնչեց, նավը շարժվել սկսեց:

Առաքելն ու Սաթոն խենթի պես վազում էին նավի կողերով, փնտրում էին Վարդին նավամատույցի վրա, գոռում, գոչում:

Նայում էին նավի վրա գտնվող ուղևորներին, Վարդը չկար ու չկար: Արդեն Սաթոն ծնկներին էր խփում: Մտածում էին, որ Վարդը նորից փորձանք բերեց գլխներին:

Նավը ահագին հեռացել էր, երբ Առաքելը տեսավ Վարդին՝ Մինասին հենված, բայց արդեն ուշ էր: Նորից կորցրեցին իրենց աղջկան, նորից բաժանություն եղավ:

Առաքելը խոսեց նավաստիների հետ, ինչ կարող են անել նրանք, նավը չէին կարող կանգնեցնել: Վերջ, գնացին:

Լացը, կոծը արդեն չէին փրկի, կամաց-կամաց հեռանում էին իրարից, Սաթոն և Առաքելը շատ էին տանջվել մեկ անգամ արդեն, այս էլ երկրորդն էր, բայց նույնը չէ, հիմա գիտեին՝ ուր է, և ընկերն ով է: Երբ ուզեն՝ իրար կարող են տեսնել, այս անգամ ինչո՞ւ ողբալ:

Մտածեցին նաև, եթե չի եկել, միգուցե որոշել է Մինասի հետ մնալ: Շատ մտածեցին, հետո որոշեցին չողբալ. դա ոչինչ, որ չի եկել, գուցե նպատակն ուրիշ է եղել, արդեն մեծ է, կարող է ղեկավարել իրեն: Հանգստացան՝ բոլոր հոգսերը թողնելով Աստծուն:

Նավը, սահելով օվկիանոսի ջրերի վրայով, հանդարտ տանում էր բոլորին դեպի Ամերիկայի ափերը: Այս նավի վրա

շատ հայ ընտանիքներ կային, բոլորն էլ թուրքի յաթաղանից ազատվածներ էին:

Բոլորն էլ ունեին իրենց սեփական պատմությունը, ինչպես նաև իրենց տեսած և զգացած սարսափելի հիշողությունները:

Բոլորն էլ փախած, արտաքսված էին իրենց վաթաններից, իրենց ծննդավայրերից, իրենց հայրենիքից, եթե ճիշտը նայենք, Հայաստանից:

Որքան էլ ուզեն մոռանալ, հնարավոր չէ, և նույն բաները անընդհատ պիտի կրկնվեն ու պիտի կարդացվեն և պիտի լսվեն, որովհետև այդպես է եղել, եղել է իսկապես, մի ազգ դա զգացել է իր մաշկի վրա, յուրաքանչյուրն իր սեփական աչքերով է տեսել ամենասարսափելին, որ մարդու ուղեղին չի հասնում, տեսել է, ինչպե՞ս չհիշել, պետք է, որ բոլորն իմանան, և մի օր պիտի դատապարտվի դաժանաբար իր արածների համար: Թուրք կառավարությունը լավ գիտի, որ աններելի են իր արածները, ինչպե՞ս պիտի պատասխան տա այդ օրը:

***

Նավի վրա այդ մի քանի օրը, որ միասին պիտի անցկացնեին, միայն և միայն խոսեցին այդ մասին՝ իրենց ապրածը վերապրելով կրկին:

Պատմում ու պատմում էին, չէր վերջանում: Երեկոյան, երբ շատ հայեր էին հավաքվել ճաշարանի մի անկյունում, Սողոմոնը պատմեց իր անցկացրած դաժան օրերի մասին անապատի ավազների մեջ: Երկու ամիս անընդհատ քայլելուց հետո ամբողջ ընտանիքը մահանում է՝ կինը, տղան, երեք աղջիկները, ծնողները, երեք օր էլ չեն դիմացել, ընկել, մեռել են, այնքան ցավալի էր լսել մանրամասները, թե ինչպես թուրք զինվորները հասնում, ջարդում էին բոլորին, իրեն հրացանի կոթով խփում

են, ընկնում է ծնողների վրա, ուշագնաց է լինում, երևի կարծում են՝ մեռած է, բոլորին քշում են, երբ ուշքի է գալիս, տեսնում է, որ իրեն կոխկռտելով՝ անցնում են, ծնողները կողքին պառկած են, խենթի պես վեր է կենում, թողնելով դիակները՝ առաջանում արագ-արագ՝ կնոջը և երեխաներին գտնելու:

Կարողանում է գտնել, հասնում է նրանց և լացով-կոծով, նրանց ձեռքերը բռնած, շարունակում ճամփան:

Այնուհետև բոլորին ճանապարհին կորցնում է, երբ կինը ընկնում է, ինքն էլ ընկնում է վրան՝ գոռալով, զինվորները հասնում են: Միշտ կար մեկը, որ մոտենում էր, վերջացնում ընկնողին: Այս անգամ էլ վիրավորում են իրեն: Հետո էլ երեխաներին է կորցնում, նորից վեր է կենում, ու՛ր քշում են, ու՛ր քշում, ո՛չ ուժ կա, ո՛չ ոտք, սոված-ծարավ, արևների տակ, ուզում է մեռնել, չի լինում, ընկնում է, նորից ստիպում են՝ քայլի:

Ընկնողներին գիշերը բորենիներն ու գայլերն են հոշոտում, ցերեկը՝ գիշատիչ թռչունները:

Այլևս մարդկային մարմին չէր մնացել, բոլորը՝ մերկ, ճիվաղների պես ոսկրացած, չորանում էին արևի տակ: Փոսերի մեջ էին լցնում մարդկային զանգվածները դեզ արած:

Երիտասարդ աղջիկներին սկզբից ջոկել, տարել էին, նրանց էլ առանձին ինչ֊որ ասես չէին արել, անպատմելի: Մնացածներին էլ, որ քշվածների հետ են եղել, առանձին էին հանել, տարել և այլևս լուր չունեին:

Այսպես հրելով տանում, հասցնում էին անապատ. ո՛վ կարող էր դիմանալ, բաց էին թողնում այնտեղ, արդեն գիտեին, որ բոլորը պիտի մեռնեն:

Սողոմոնը պատմում է, որ ինքը այդպես ընկել է, մնացել, չգիտի որքան ժամանակ, բացել է աչքերը՝ ինչ տեսնի. ագռավը իջել է վրան, կտցահարում է:

- Կարծեմ ագռավը վրաս չիջնար նե, ես այդպես ալ պիտի մեռնեի: Աչքերս բացի, թևերիս ուժ չկար, որ քշեմ վրայես: Կերպով մը կըրցա քշել: Հիմա ի՞նչ պիտի ընեմ:

Խելքիս եկավ, որ մենակ չեմ, չորս բոլորս դիակներ են, հոտ մը կա անտանելի, շատերու վրա ավազը եկեր, ծածկեր է:

Միտքս ընկավ ընտանիքս, կմտածեմ հիմա՝ ես ինչո՞ւ մնացի ու կուլամ, արցունք բիլա չելլար ինձմե: Ալ չեմ հիշեր՝ վերջին անգամ երբ եմ բերանս բան դրած: Ուժեղ մը բոռացի, ըսի.

- Ողջ մեկը կա՞, թե՞ չէ:

Տեսնամ՝ երկու թև վեր ելան, ես տեսա, որ մինակ չեմ: Երեք տղամարդ էինք հոդ, այդքան տեղը, ամա դիակները ամբողջ անապատը բռնած էին, անտեղը գիտեմ, որ շատ մարդ կար դեռ, որ մեռած չէր, բայց բոլորն ալ պիտի մեռնեին:

***

Այդ երեք հոգին, մի կերպ իրար ուժ տալով, իրար բռնելով, մի քիչ նստելով, մի քիչ քայլելով, չիմանալով, թե ուր են գնում, քայլում են ու քայլում: Այնպես է լինում, մեկը մի ագռավ է բռնում, որ ուզել է նստել իր վրա, մյուսը ասում է. «Բռնե՛, բռնե՛, չթողնես» ու բռնում է, արյունը խմում, միսն էլ մի կերպ ծամում, կուլ տալիս: Սկսում են քայլել, դժվարությամբ այդպես դուրս են գալիս ու ապրում են:

- Ինչ ընեինք,- ասաց Սողոմոնը,- ես մինչև հոդ հասա, ինչ֊որ տեսա, որ ադ ուտելնիս դեռ փառք էր: Ի՞նչ արժե ապրելս, ամբողջ ընտանիքս մեռավ աչքերիս դեմը: Բայց բան մը ըսեմ. մեռնելե ավելի դժվար բան չիկա, երբ մեռնել կուզես ու չես մեռնիր:

Բոլորը լուռ լսում էին, ոչ մեկը խոսք չէր գտնում միջամտելու, մարդն այնքան հուզմունքով էր պատմում, տակավին իրեն

այնտեղ զգալով, այն ավազների մեջ և, պարզ էր, իր հարազատներին պիտի սգա ամբողջ կյանքում:

Մի քանի հոգի արձագանքեցին՝ խախտելով լռությունը.

- Ես ալ ունիմ բաներ պատմելու, այսօր արդեն շատ ազդվեցանք, ես ալ վաղը կպատմեմ:

Մեկ ուրիշը մեղմ ձայնով ասաց.

- Ես ալ ապրած եմ այդ մահվան սարսափը. 13 տարեկան էի:

- Ես ալ կպատմեմ իմ լսածը վարդապետ Կոմիտասի մասին:

Բոլորը հուզված էին ու քուրայի կրակը մարելու փոխարեն անընդհատ ավելի էին թեժացնում:

Այնպես է, որ պահելու բան չէ, և պետք է, որ բոլորն իմանան, հայը չպետք է մոռանա իր մեծերի վիշտ ապրածը, անտարբեր անցնել չենք կարող. սա աննշան բան չէր:

***

Հաջորդ օրը Հակոբը պատմեց, թե ինչպես են իրենց հետ էլ նույն վայրագ ձևով վարվել, հավաքել, տարել են շատ հեռու հավաքատեղի, այնտեղ գեղեցիկ աղջիկներին, կանանց առանձնացրել են՝ իրենց զվարճանքի առարկա դարձնելու համար:

Փոքր տղաներին ու աղջիկներին առանձնացրել են թուրքացնելու, դավանանքը փոխելու նպատակով՝ բարձրաձայն հայտնելով իրենց անելիքը: Պետք էր լսել ծնողների աղիողորմ լացն ու ճիչերը, անեծքները:

Հակոբն այդ բոլորը տեսել է, ներկա է եղել, ասում է, որ իր յոթ տարեկան տղային էլ քաշել են ձեռիցը, տարել: Պատմեց հեկեկալով, մարում էր սիրտը, ջուր տվեցին, որ կարողանա շունչ քաշել:

Պատմում էր ու պատմում՝ ուզենալով բոլոր դեպքերը ներկայացնել, պնդում էր, որ մնացող ազգերն էլ պետք է իմանան

հայի քաշածը այդ անաստված թուրքերի ձեռքեն, բոլոր տեսակի վայրենությունները, որ միայն նրանք կարող էին անել:

Այնուհետև մնացողին քանի օր սոված-ծարավ հասցրել են մի կամուրջի, որի տակ հսկայական փոսեր էր փորված: Այդ քարավանը կանգնեցրել են այդտեղ, և հետևից եկել են մի խումբ վայրենի թուրքեր, քրդեր երկաթներով, դանակներով, մուրճերով, եղաններով, կոտորել, աջ ու ձախ հրելով՝ բոլորին լցնել փոսը՝ որը մեռած, մեռնելիք, ողջ, տրակտորով փոսը լցրել: Իրավ, որ աններելի է, եթե մարդը ողջ է, անհնար է, որ տակից կարողանա դուրս գալ և դժոխային պայմանների մեջ պիտի մեռնի:

Հակոբը պատմում էր, վերապրում իր այդ մի քանի ժամը.

- Երբ աչքերս բացի, աչքերս հողով լցվեցան, մտքիս մեջ ըսի «Ես ո՞ղջ եմ», ու ամբողջ մարմինս կցավեր, աչքերիս ցավը ավելի ուժեղ էր. հող կար մեջը, ձեռքս շարժել ուզեցի, տեսա կշարժի, բայց տեղ չի կար, որ թևս հանեմ, մի կերպ հանեցի, համա չորս կողմս դիակ է, փոսիս վրա ալ խոշոր քար մը կար: Ձեռքովս տեսա, որ ծանր բաներ են վրաս, ինչ ընեմ, քարը տեսակով մը հրեցի վրայես, ես մտածեցի, որ աստեղ պիտի հոգիս տամ, եթե չմտածեմ՝ ինչպես ելնեմ, ու կրնամ ըսել՝ ահագին ժամանակ տրամադրեցի մինչև մակերես ելնելու: Լավ էր, որ շատ վարը չէի ու ահագին հող կար վրաս ալ: Կերպով մը դուրս ելա, վիճակս պիտի տեսնայիք: Մարդ մը չիկար, ես ըսկսա բոռալ, կանչել, լալ, ըսի ես ալ մեռած ըլլայի երանի:

Այնուհետև փորձում է իրեն հավաքել ու հեռանալ հայ մարտիրոսվածների հսկայական գերեզմանից: «Միլիոն ու կես հայ նահատակների գանգերից եթե մի լեռ բարձրանար, ապահովաբար շուք պիտի տար այն սուրբ Արարատի հավիտենական ձյունի երկնաբերձ կատարին»

(Գրիգորիս Շ ԵՊԻՍԿ. Վրդ ՊԱԼԱՔԵԱՆ)

(ՀԱՅ ԳՈՂԳՈԹԱՆ)

Հաջորդ օրը Վերժինեն պատմեց իր ապրած զարհուրը: Նա այդ ժամանակ 13 տարեկան էր. 1915 թվականն էր, երբ հրամանի համաձայն՝ թուրք զինվորները և բանտերից ազատած մարդասպանները քաղաքներից հավաքում են 12-80 տարեկան տղամարդկանց, հանում քաղաքից դուրս, վայրագ ձևով, ինչպես Հակոբն էր պատմում, ջարդում, սպանում են՝ ջախջախելով գլուխները ինչով հասնում են, լցնում փոսերը:

Այնուհետև նույնը անում կանանց ու երեխաների հետ. ավելի քան 400 հոգուց բաղկացած խումբ էր, Վերժինեն իր մոր և երկու քույրերի հետ էր, չորս- հինգ ժամ հետո բոլորին փռել էին գետնին:

Գիշերը վրա է գալիս, բոլորը՝ մեռած, պառկած մեկը մյուսի վրա: Սառը օդից գիշերվա և ցողից Վերժինեն սթափվում է, ինքն էլ նվազ, կիսամերկ, բոլորովին նվաղած, սկսում է փնտրել մորը և քույրերին, որոնք իրար կողքի ընկած են՝ ամբողջապես ջարդված, արյան լճերի մեջ պառկած: Սկսում է կանչել անուններով, բայց ոչ մի պատասխան, այդ ժամանակ խուճապի մատնված՝ սկսում է գոռալ, կանչել ու իրեն զգում է մենակ այդ հսկայական դաշտում հարյուրավոր ննջեցյալների մեջ:

Այսպես է դիմավորում արշալույսը՝ նստած իր մոր և քույրերի մոտ:

Առավոտյան վաղ հեռվից հովիվներ են անցնում, զարհուրում են, երբ տեսնում են այդ տեսարանը: Նրանցից մեկը շարժում է տեսնում հեռվից: Հետաքրքրությունը ստիպում է մոտենալ, գալիս է, գտնում մի աղջկա՝ այդքան մեռելների մեջ նստած:

- Մարդը չմոտեցավ, ըսավ՝ եկուր քեզի տանիմ, ես ալ գացի հետը: Քուրդ հոտաղ էր, ինձ տարավ, հորը հանձնեց: Սա «գըզըլբաշ» էր, ասոնք չեն սիրեր թուրքերուն, քրիստոնյաներուն բարեկամ են: Աս ալ ինձ տարավ Չանգըրը քաղաքը, իր վաղեմի բարեկամին հանձնեց ինձի, ասոնք թուրքի անունով հայեր էին:

Այնուհետև ամուսնացրել է իր նման հարուստ մի հայ ընտանիքի տղայի հետ ու այսօր ամուսիններով գնում էին Ամերիկա:

Ամեն երեկո մեկը պատմում էր՝ որքան հայ է փրկվել, և որքան պատմություններ կարող էին պատմել, եթե ողջ մնային հայերը. միլիոն ու կես հայի պատմածները, զգացածները թե գրի առնվեին, որքան գրքեր պիտի հրատարակվեին այդ արյունարբու ոճրագործների նկարագիրը տալու համար:

***

Մեկ ուրիշ օր ճամփորդ հայերից մեկն ասաց, որ թուրքերը որքան մեծ, նշանավոր հայ մարդկանց՝ գրողների, գիտնականների, բժիշկների են վերացրել ու պատմեց, որ իր դպրոցական ընկերը պատմել է, թե ինչպես 1915թ-ի ապրիլ ամսվա առաջին կիրակի օրը Չանգըրը քաղաքի հայկական առաքելական եկեղեցին լեփ-լեցուն էր հայ քրիստոնյաներով, պաշտոնյաներով, տարբեր խավերի պատկանող մարդկանցով, հայ մտավորականներով, որոնք եկել էին լսելու պատարագը, որը պիտի վարեր Կոմիտաս վարդապետը: Այդ օրը եղավ Կոմիտաս վարդապետի վերջին պատարագը, և այդ օրը երգեց իր վերջին երգը:

Եկեղեցին շրջապատված է եղել ոստիկաններով որոնք սպասում էին վարդապետին ձերբակալելու համար: Կոմիտաս վարդապետը, որն ուներ համաշխարհային ճանաչում, եղավ Մեծ Եղեռնի վկաներից մեկը, ինքն էլ ճաշակեց տանջանքները նահատակված իր բոլոր հայրենակիցների նման, միայն այն «առավելությամբ», որ մարմնապես չտանջվեց մյուսների նման, այլ հոգեպես տանջվեց՝ զգալով իր հետ քայլող տանջահարի վրա իջած հարվածների ուժգնությունը:

Այս վկայությունն է Չանգրեցի

Հովհաննես Չալիկյանի, որը այդ
Պատարագրի ժամանակ եղել է ներկա,
Սարկավագ է 13 տարեկան հասակում

Կոմիտասը՝ Սողոմոն Սողոմոնյանը (1869-1935), եղել է հայ կոմպոզիտոր, երաժշտագետ, երգահան, երգիչ: Համաշխարհային արժեքավոր դեմք:

Առանց քաշվելու աշխարհից՝ թուրքը ուզեց ցույց տալ, որ կարող է խենթացնել առանց խղճի խայթ զգալու, բայց չի հասկացել, որ իր անմարդկայնության գնահատականն ունի ինքը:

***

Այսպես շարունակ, մինչև Ամերիկա հասնելը վերհիշեցին հայ նահատակներին, վերհիշեց ամեն մեկը իր անցկացրած դաժան օրերը, որի պատճառով այսօր բոլորի համար շարունակվում է նույն գաղթի ճամփան, մի տարբերությամբ, որ սպասում են տարբեր ապագայի, հեռու իրենց հայրենիքից և ավելի ուշ միշտ պիտի երգեն Կոմիտասի «Կռունկ» երգը.

Կռո՛ւնկ, ուստի՞ կուգաս,
Ծառա եմ ձայնիդ,
Կռո՛ւնկ, մեր աշխարհեն
Խաբրիկ մը չունի՞ս:

***

Նավը հանգիստ սահում էր ջրերի վրայով, ծովի վրայով, կապույտ երկնքի տակ, հեռվում՝ գեղեցիկ հորիզոնը, որի խորքում կապույտ երկինքը, միանալով ծովին, մեկ է դառնում:

Երբեմն ձկները պար բռնելով թռչում են ջրից դուրս ու հետո սուզվում՝ նայողին զարմացնելու համար կարծես, ինչ է մտածում ձուկը այդ պահին, թռչում է, արծաթագույն թեփուկները փայլում են արևի տակ, այնքան գեղեցիկ է, որ շփոթեցնում՝ տեսնողին, զարմացնում:

Գեղեցիկ է ծովը, անծայրածիր, միաժամանակ վախ է ներշնչում բոլորին, նույնիսկ լողալ իմացողին:

- Աս ջուրին մեջը իյնաս նը, ինչպե՞ս կելլես, ես շատ կը վախնամ, դուն ինչ կը մտածես,-ասաց Փառանձեմը:

- Ես ալ նույնը կը մտածեմ, մենք այսքան ջուր ո՛ւր տեսած ենք,- պատասխանեց Արսենը:

- Եկուր ադոր մասին չխոսինք, ես չեմ ուզեր, որ քեզի բան պատահի, Արսե՛ն,- ասաց Փառանձեմը:

Արսենը երկու տարի է, որ սիրահարված էր, Փառանձեմն էլ իր մտքի մեջ փայփայում էր նույնը՝ չուզելով մատնել իր աղջկական հպարտությունը, մինչև մի օր Արսենի հայրը՝ Հովհաննեսը, պարզ ձևով, գրեթե կատակով հայտնեց Առաքելին իր տղայի տանջող սերը Փառանձեմի նկատմամբ: Առաքելը դեմ չեղավ, շատ ուրախ էր նույնիսկ, բոլորը համամիտ էին՝ իմանալով, որ Փառանձեմի ուզածն էլ դա էր:

Այդ ժամանակ նշանեցին օրինավոր ձևով ու որոշեցին ամուսնությունն իրականացնել Ամերիկայում:

Նավի վրա միշտ իրար հետ էին, ասում, խոսում, կատակում էին, շատ բան ունեին իրար պատմելու՝ իրար լավ ճանաչելու համար:

Մոսոն և Արեգնազն էլ ուրախ էին, իրենց տղան՝ Վահանը, արդեն մեծ տղա էր՝ մոտ 9 տարեկան: Հունաստանում մեկ տարի դպրոցում տառաճանաչ էր դարձել, շատ լավ խոսում էր հունարեն: Ծնողները մտածում են, որ լավ մարդ պիտի դառնա, քանի որ շատ ընդունակ է և հետաքրքրասեր: Սիրում է լսել, իմանալ ամեն ինչը մանրամասնորեն:

Մոսոն և Արեգնազը վերջապես հանգստացան, այլևս չէին ուզում մտածել վատ բաների մասին: Սիրում էին իրար, ինչպես շատ վաղուց էին սիրում, բայց տխուր միջադեպերը շեղեցին իրենց այդ գեղեցիկ զգացումից: Հիմա այլևս մտածելու ոչինչ չունեին, գիտեին՝ քիչ ժամանակում ամեն ինչ հունի մեջ պիտի մտնի: Դեռ երիտասարդ են, դեռ կյանքը առջևում է:

***

Առաքելն ու Սաթոն բավական մեծացել էին, բայց նրանց էլ չի կարելի ծեր ասել, ոչ, մինչև հիմա կյանքը դառն անցավ, այսօր մտածում են՝ իրենք էլ վայելեն, ինչո՞ւ չէ: Դառն օրերը անցան, նորի մասին են մտածում, երազում են տեսնել իրենց տղային՝ Վաղինակին:

Նավեզրի բազրիքին հենված, Առաքելը թևը գցեց Սաթոյի ուսին, հուսադրեց. գալիք օրերը խոստանում են վայելք, որ չեն ունեցել ամբողջ անցյալում:

Տեսնում են մտքով իրենց տղային, մեծացած, բայց դժվար է պատկերացնելը, մտածում են, որ գեղեցիկ էր, չկա պատճառ, որ հիմա գեղեցիկ երիտասարդ չլինի:

Մտածում էին Վարդի մասին:

Նավը ինչպես կանգնեցնեին, տանում էր իրենց:

«Ամեն չարիքի մեջ բարիք կա»,- ասում է ասացվածքը. սպասենք այդ բարիքին:

***

Գալով Սիմոնին՝ նա հոր մահից հետո, որին չկարողացավ թաղել նույնիսկ, փախչում էր օրերով, հեռանում գյուղից, թուրքերից այն առաջին թալանի ժամանակ: Վերջը հասավ քրդական մի գյուղի, որտեղ ապրում էին նաև եզդիներ:

Հայերը գիտեին, որ եզդիները մոտ են եղել հայերին, Սիմոնն էլ դա գիտեր. այդ ժամանակ 14 տարեկան տղա է եղել: Մոտենում է մի տան և տանտիրոջը խնդրում է իրեն աշխատանք տալ:

Այն ժամանակ ինչ աշխատանք պիտի լիներ, կամ խաշնարած, կամ մշակ:

Այդ մարդը եզդի էր, անմիջապես զգում է, որ տղան հայի զավակ է, ասում է.

- Դու ինչ ես անում այստեղ, ծնողներդ ո՞ւր են:

Տղան բացատրում է, որ մահացել են, էլ չի խորանում:

Եզդին տեսնում է, որ տղան ազնիվ է երևում, ինքն էլ խղճով մարդ, պահում է որպես գառնարած:

Առավոտյան գառներին տանի դաշտ, երեկոյան բերի, մի կտոր հաց, հետն էլ ինչ որ պատահի, ուտի, քնի, այսպես շարունակ:

Սիմոնը մեծանում է, լինում 18 տարեկան, սկսում է փնտրել,

նայել չորս կողմը՝ ինչ գյուղեր կան: Շրջապատը լավ ուսումնասիրելուց հետո իմանում է, եթե մեկ օր քայլի, կգտնի մի հայկական գյուղ:

Երեկոյան, երբ վերադառնում է, գառներին տուն բերում, եզդուն ասում է.

- Ես ուզում եմ գնալ, եթե մեկ օր քայլեմ, կհասնեմ մի հայի գյուղ, ուզում եմ գնալ մեր հայերի մեջը:

Սիմոնը լավ թուրքերեն գիտեր, այդտեղ էլ քրդերեն սովորեց: Եզդին ոչինչ չասաց, դեմ չկանգնեց: Սիմոնը գնաց:

Հայի գյուղը շրջեց, հետո կանգնեց աղբյուրի մոտ, նայեց մարդկանց, առանց խոսելու, չիմանալով ինչ խոսել: Այդ ժամանակ մեկը, որ ահագին երկար հետևել էր տղային, զգալով նրա անհամարձակությունը, մոտեցավ նրան, ասաց.

- Տղաս, դուն հայ ես, ով ես, անծանոթ կերևաս, որուն տղան կըլլաս:

- Ես հայ եմ, ծնողք չունիմ, մեռած են ծնողքս, հոս եկա՝ ըսելով, որ հայի գյուղ է, ինձի աշխատանք մը կուտան:

- Ինչ գիտես ընել, ուր էիր մինչև հիմա:

Տղան բացատրեց, որ ոչինչ անել չգիտի, բայց կարող է սովորել և այլն...

Մարդը, որի անունը Գարեգին էր, անմիջապես որոշում է, որ տղան կարող է իր տանը մնալ, որ ինքը մենակ է, նրան էլ կտա մեկի մոտ՝ արհեստ սովորելու: Սիմոնը շատ է ուրախանում, անմիջապես հավատում է այդ պարզ և պատրաստակամ մարդուն: Սիմոնը միշտ մնաց իր մոտ: Սովորեցրեց կոշկակարություն: Ամուսնացրեց գյուղի հարուստ մի ընտանիքի աղջկա՝ Աշխենի հետ: Ունեցան երեք զավակ՝ Մկրտիչ, Մարգար և Սոնա անուններով:

Ջարդը վրա եկավ, նրանց էլ բոլորի նման քշեցին Գողգոթայի ճամփաներով:

Սիմոնը ուշիմ տղա էր, Գարեգինը մի քանի տարի հետո իր ծերունական մահով մահացավ, ունեցած հարստությունը մնաց Սիմոնին, ինքն էլ աշխատեց:

Այդ բոլորը տեղավորել էր մի կաշվից կարված գոտու մեջ ու կարողացավ պահել իր վրա:

Դուրս գալուց առաջ մի տոպրակի մեջ միայն հաց դրեց ու ուսն առավ: Կինը և երեխաները քայլող ուժեղ երեխաներ էին, միանալով համագյուղացիներին՝ քայլեցին երկու օր, որից հետո մեքենաներով հասան թափորին այն մարդկանց, որ քայլում էին, մինչև հերթով գտնեին հավիտենական հանգիստը:

Քայլեցին մոտ մեկ ամիս: Հացը լավաշ էր, լավ ծալած, սեղմած, խնայողաբար ուտելով օրական երկու բերան՝ շարունակում են քայլել: Գիշերները կանգնում էր քարավանը, պառկում, ով ինչպես կարող էր: Պետք չէ նորից կրկնել, թե ինչպես էին թափվում գետնին, ու վերջ:

Այդպես մի օր էլ մի թուրք զինվոր, ձիուն նստած, հրամայում է փախչել: Հենց դրա համար էլ հանդիպում են այդ նույն անտառում Հովհաննեսին իր ընտանիքի հետ, որ ավելի առջևի մասում էր նույն քարավանի մեջ: Սիմոնն ու Հովհաննեսը էրզրումից էին:

***

Այսօր Սիմոնը երեխաների ու կնոջ՝ Աշխենի հետ գնում էր Ամերիկա՝ նոր, ավելի հարմարավետ կյանք փնտրելու և գտնելու համար:

- Այս երեկո նավուն տախտակամածի վրա նվագախումբ պիտի ըլլա եղեր, պիտի նվագեն, մարդիկ ալ պիտի պարեն,- ասաց Հովհաննեսը:- Մենք ալ երթանք, հավաքվինք հոն, սեղան մըն ալ մենք առնենք, նստինք: Տրամադրությունիս փոխենք մենք ալ: Բան մը կխմենք, սուրճ մըն ալ հետը, լավ կըլլա:

Տախտակամածը լավ զարդարել էին, սեղաններ էին դրված, բոլորը կողքի վրա դրված խմիչքներով, քաղցրավենիքով: Այդ նավում կեսից շատը հայեր էին, տեղահան եղած հայեր:

Երաժշտությունը հնչեց, հույն երաժիշտներ էին, երևում էր, որ երեկոն շատ լավ և աշխույժ պիտի անցնի: Մարդիկ գալիս էին խումբ-խումբ. այն, որ եվրոպացի էր, երևում էր, լուրջ, հանդարտ խոսելով, առանց աղմուկի մոտենում էր սեղանին, հանգիստ քաշում աթոռը, նստում: Որտեղ աղմուկ կար, պարզ էր, որ հայեր են, չնայած որ արդեն շատ սովորություններ ընդօրինակելի էին: Հայը մեղք չունի, նախ չի տեսել, ամենավերջին վայրենություններն էլ հանել էին բոլորին համբերությունից:

Այդ երեկո բոլորն ուրախացան՝ նայելով պարողներին, լսելով գեղեցիկ երաժշտություն: Այս մի քանի ծանոթ ընտանիքները միայն ուշ գիշերին գնացին քնելու:

Նավի վրա օրը երեք անգամ իջնում էին ճաշարան, կուշտ ուտում, ուրախ, հանգիստ, ոչ մի նեղություն չունեին: Օրվա ընթացքում հավաքվում, խոսում կամ թղթախաղով էին զբաղվում: Կանայք հանգստանում էին:

Սիմոնի երեխաները նոր ընկերներ էին գտել, նավի բոլոր հարկերը վեր ու վար էին անում:

Երեխաների համար էլ հաճելի էր ծովի վրա. գեղեցիկ ճամփորդություն էր:

Երբեմն հեռվից նկատում էին ուրիշ նավերի, բայց երբեք չէին հանդիպում, ամեն մեկը իր ճամփան ուներ:

Առաքելը, Հովհաննեսն ու Սիմոնը նստած միասին մտածում էին, թե նավից իջնելուց հետո ինչ պիտի անեն, ոչ մեկը չկա իրենց դիմավորող, եկել են ինքնագլուխ, առանց որևէ մեկին զգուշացնելու:

Առաքելն ամեն օր հետևում էր իր տված հայտարարությանը, պատասխանի էր սպասում:

Արմենակից կամ Վաղինակից էր սպասում այդ լուրը: Լուրը չստացած՝ ճամփա են ընկել:

Ո՞ւր են, ոչ մի լուր չկա. արդեն ինը տարի է, ինչ գնացել են:

Միայն գիտեին, որ Ամերիկա գնացողներից շատերը գնում են Ֆրեզնո՝ Կալիֆոռնիա:

Մնում է, որ իրենք բռնեն այդ ուղղությունը, այնտեղ հասնելով՝ հարցուփորձով կգտնեն երևի, հայերը կարող է իրար ճանաչեն: Այդպես, իրար հույս տալով՝ որոշեցին հետագա քայլերը:

Բայց Առաքելի սիրտը չէր հանգստանում, բնական չէր համարում այդքան երկար լռությունը:

Իգիթ Արմենակը՝ կնքահայրը. Ամերիկա մտնելով, ինչպես մյուս հայերը, ձգտեց գնալ Ֆրեզնո, Վաղինակի ուսման մասին մտածեց, աշխատեց ուրիշի ձեռքի տակ քանի տարի, հմտացավ խաղողագործության և չամիչի արտադրության մեջ և իր սեփական գործը բացեց: Ունեցած փողով գնեց տասը հեկտար հողամաս, այգի՝ արդեն խաղողի վազերով, որ դեռ մատղաշ էին, խնամեց երկու տարի էլ ու կամաց-կամաց ստացած բերքով շարունակեց ավելացնելով հողատարածությունները, մի քանի տարի հետո դարձավ ագարակատեր և հմուտ չամիչագործ:

Վաղինակը մեծ առաջադիմություն ուներ ուսման մեջ: Համալսարան ընդունվեց առևտրականի մասնագիտությամբ: Արմենակը վճարում էր նրա ուսման վարձերը, նա մեծ հենարան էր Վաղինակի համար:

Արմենակը շատ զբաղված էր իր աշխատանքով և աշխատավորներով:

Ավելի ուշ զբաղվեց գինեգործությամբ նաև, դա անհրաժեշտ էր:

Արմենակը անընդհատ հետաքրքրվում էր նոր եկողներից, որ գալիս էին Ֆրեզնո, արդյոք ճանաչում են Առաքելին: Մի օր լսեց, որ իրենց գյուղացի մեկն է եկել, արդեն քանի ամիս է: Անմիջապես հանդիպեց նրան: Ամեն ինչ պատմեց սկզբից մինչև վերջ, թե որ օրը որ նավով պիտի հասնեն Նյու Յորք:

- Առաքելը հաջորդ նավուն պիտի քար, իմ մտածելովս գալ շաբաթ հոդ՝ Նյու Յորք պետք է, որ ըլլան:

Արմենակը և Վաղինակը առանց հետաձգելու գնացքով գնացին Նյու Յորք:

Նավահանգստում տեղեկացան, որ հունական նավը հաջորդ օրը պիտի հասնի նավահանգիստ:

***

Առաքելն իր ընտանիքով զգույշ իջավ՝ մտազբաղ նայելով միայն ոտքերի առջև, քանի որ գիտեին իրենց դիմավորող չկա:

Վաղինակը անմիջապես տեսավ հորը, բղավեց.

- Հայրիկ...

Առաքելը լսեց տղայի ձայնը, Սաթոն կասկածեց, բայց երկուսով նայեցին, փնտրեցին ամբոխի մեջ իրենց ծանոթ ձայնը:

Վաղինակը և՛ գոռում էր, և՛ ձեռքի շարժումներով հայտնում իր տեղը: Նավամատույցում շատ մարդիկ կային, բոլորը եկել էին դիմավորելու իրենց բարեկամներին, շատերն էին ձեռքի շարժումներ անում, շատերն էին գոռում անուններն իրենց ծանոթ, աղմուկ էր: Առաքելը փնտրում էր, չէր կարող ճանաչել, միայն իր «հայրիկ» ասելու ձևից իմացավ, որ իր Վաղինակը պիտի լինի, բնազդը հուշում էր, բայց ինչպե՞ս հավատա: Կանգնել է ու չի շարժվում, փնտրում էր, հեռվից եկողներին խանգարում:

Վաղինակը տեսավ, որ հայրը շփոթվեց, ինքն էլ, ամենքից ներողություն խնդրելով, առաջանում և ավելի մոտիկից էր հորը կանչում, այդ ժամանակ հսկա Առաքելը ընկավ, ծնկները ծալվեցին, գիտակցությունը կորցրեց, բոլորը խառնվեցին, Վաղինակը հասավ, գրկեց հորը: Մայրը երբ տեսավ Առաքելին գետնի վրա և Վաղինակին, որն իրենից շուտ գրկել էր հորը, ուժը հատած նստեց գետնին ու գրկեց ամուսնու գլուխը՝ դնելով ծնկներին, ու լաց եղավ: Հետևից գալիս են Մոսոն, Արեքնազը, փոքրիկ Վահանի հետ միասին:

Շատ սրտաճմլիկ տեսարան էր: Նավից իջնողներին ճամփա տալով՝ մի կողմի քաշվեցին, անմիջապես բժիշկ եկավ, տեղափոխեցին նավամատույցի Կարմիր խաչ հիվանդանոց:

Առաքելը չդիմացավ, տեսածները շատ եղավ արդեն: Մեծ դժվարությամբ ուշքի բերեցին, անմիջապես հիվանդանոց տեղափոխեցին:

Երբ ընկավ Առաքելը, այդ ժամանակ մարդկանց մի հսկա շրջանակ հավաքվեց չորս կողմը անցորդներին ճանապարհ տալուց հետո: Ներկա բոլորը կանայք լաց էին լինում:

Երբ Արմենակը տեսավ այդ, հայերեն ասաց.

- Ասոնք ինչո՞ւ կայնեցան, կուլան: Ու անգլերեն շարունակեց՝ առաջացեք, մի՛ կանգնեք:

Այդ ժամանակ Հովհաննեսը առաջանալով ասաց.

- Ո՞ւր երթանք, մենք միասին ենք, Առաքելը մեր ընկերն է, մենք միասին ըլլալ կուզինք, ինքն ալ մեր նման չի գիտեր ուր պիտի երթար: Դուն ո՞վ ես, մեզի կհրամայես, ինքը ինկեր է, մենք պիտի անոր հոգանք:

Այդ ժամանակ Արմենակը տեսավ, որ Առաքելը այստեղ էլ առաջնորդ էր այսքան մարդու համար:

- Մենք տեղ չենք երթար, անոր հետ ենք, ուր տանիք, մենք հոդ ենք: Մոսոն բացատրեց բոլորին, թե ով է Արմենակը:

Բոլորը քայլելով հասան մինչև բուժկայան ու կանգնեցին դռան առջև:

Առաքելը, երբ բացեց աչքերը, տեսավ՝ ինչպես բժիշկները պտտվում են չորս կողմը՝ օգնություն ցույց տալով, սթափվեց, հարցրեց, թե որտեղ է գտնվում, ոչ մեկը իրեն չհասկացավ, ուզեց վեր կենալ:

Բժիշկներից մեկը բացեց դուռը, կանչեց ընտանիքի անդամներից մեկին:

Սաթոն մտավ, տեսավ, որ Առաքելը փնտրող աչքերով նայում է դռանը. որքա՜ն ծանոթ դեմքեր կան դռան ետևում:

Սաթոն մոտեցավ, համբուրեց ամուսնուն, ասաց, որ շատ են վախեցել, բոլորը այնտեղ են, մտահոգ են:

Առաքելն ասաց, որ լավ է, բայց չգիտի դեռ, որ հիվանդանոց պիտի տեղափոխեն: Հիվանդանոցը շատ հեռու չէր:

Արմենակը հավաքվածներին ասաց, որ սպասեն այնտեղ՝ նավամատույցից դուրս մի տեղ:

Առաքելին տեղավորելուց հետո զբաղվեցին իրենցով:

Ուրախացան, որ Առաքելը լավ է, բոլորը մնացին այդտեղ, նաև Մոսոն և Արեգնազը:

Մեկ ժամ հետո Արմենակը վերադարձավ, տեսավ, որ այդքան մարդ իր հույսին են, ինքը պիտի զբաղվի իրենցով, որ լեզու չգիտեն և հասցե էլ չունեն: Անմիջապես որոշեց տեղավորել նավահանգստին կից հյուրանոցում, մինչև Առաքելի ապաքինվելը:

Այստեղ էին Հովհաննեսի, Սիմոնի ընտանիքները, որ իրեն անծանոթ էին: Սրանք վստահեցրին, որ կարող են հոգալ իրենց ծախսերը:

Հետևաբար բոլորը տեղափոխվեցին հյուրանոց մի քանի օրով: Միայն Սաթոն մնաց Առաքելի մոտ:

Երեկոյան բոլորը հավաքվեցին հյուրանոցի ճաշարանը ու այնտեղ միայն իմացան, որ Վարդը չկա, և բացակայության պատճառը չգիտեն, գիտեն միայն, որ նավից ուշացել է: Ամեն օր տղամարդիկ գնում էին Առաքելին այցելելու, ասում-խոսում, հետ գալիս:

Ուրախ էին բոլորը, որովհետև քննության արդյունքները լավ են, և շուտով պիտի դուրս գա հիվանդանոցից:

Հաջորդ օրը Վաղինակը փոխարինեց մորը՝ հոր մոտ մնալու համար: Այնքան շատ էին կարոտել իրար, չնայած բժիշկները

արգելել էին շատ խոսել հիվանդի հետ, բայց կարոտը ինչպես հագեցնել: Երկու բառով ինչպե՞ս ցույց տալ այդ քանի տարվա կարոտը: Առաքելը մեկ շաբաթից առողջացավ: Արմենակը առաջնորդեց բոլորին, գնացքով ճանապարհվեցին Ֆրեզնո:

Աստված կարծես ուղղորդում էր Արմենակին՝ հանձնարարելով այդ ընտանիքների ապահովությունը ստանձնել:

***

Հասնելով Ֆրեզնո՝ Արմենակը տեղավորեց բոլորին, ապահովեց բնակարանով, իսկ մեկ ամիս հետո բոլոր տղամարդկանց, որ հանգստացել էին, աշխատանքի տեղավորեց իր մոտ: Բոլորն ուրախ էին և շնորհակալ Արմենակից, նաև Առաքելից, որ միշտ իրենց հուսադրելով՝ հասցրեց այստեղ:

Առաքելը և Սաթոն իրենց տղային նայելուց չէին կշտանում: Վաղինակն առնական երիտասարդ էր դարձել, ավարտել էր բարձրագույն հաստատությունը և աշխատանքի էր անցել արդեն արտաքին և ներքին առևտրական մեծ հիմնարկությունում որպես գրասենյակի ղեկավար:

Առաքելը շնորհակալ էր Արմենակից, այդքան համբերատար, հետևողական և հոգատար լինելու համար:

Երբ Վաղինակին պահ տվեց Արմենակին, Արմենակն էլ ջահել էր այդ ժամանակ, բայց ինքը սրտի խորքում ընդունել էր, որ տղային տալիս է ուրիշին՝ իրեն անզոր տեսնելով այդ անելու:

Ճիշտ դուրս եկավ իրոք, սրտի վկայությունը ճիշտ է երբեմն, բայց, ինչպե՞ս, ինչպե՞ս իմանալ, թե երբ է ճիշտ:

Իգիթ Արմենակը աշխատանք տվեց յուրաքանչյուրին իր ցանկությամբ, համոզված էր, թե ով ինչի է ընդունակ, բոլորն էլ գյուղացի էին և գիտեին հողի հետ աշխատել: Հողի աշխատավորներ էին: Իր մոտ շատ հայեր էին աշխատում և բոլորին հարցնելով, գոհացնելով՝ շահում էր բոլորի վստահությունը իր նկատմամբ: Իսկական մարդ էր՝ Աստծո սիրով օժտված, հարգում էր բոլորին և նաև իրենց աշխատանքը:

Առաքելին և Մոսոյին նշանակեց ղեկավար:

Չուզեց, որ Առաքելը աշխատի մյուսների նման՝ հարգելով և՛ նրան, և՛ նրա վիճակը: Նա վստահել էր որդուն իրեն, դա արդեն մեծ պարծանք էր իր համար, քանի որ այդ պահին ինքը ընչազուրկ էր, թափառական ֆիդայի:

***

Վաղինակին շատ մտատանջեց Վարդի չգալը իրենց հետ: Շատ էր կարոտել, փախցնելը արդեն կոտրել էր իրեն ու երբեք մտքից դուրս չէր գալիս, բայց ուրախ էր, որ գտնվել է գոնե:

Երեկոները հավաքվում էին մեծ սրահում, նստում, պատմում, խոսում, ամեն օր մի քիչ իրենց տեսած, լսած ճշմարիտ դեպքերի մասին: Պատմում էին ապրած չարչարանքների մասին մինչև իրենց այստեղ հասնելը:

Վաղինակը խղճում էր ծնողներին, նայելում նրանց և մտածում, որ հայրը, իր ձայնը լսելով, հուսահատության մեջ ընկավ, երբ չգտավ իրեն հավաքված ամբոխի մեջ, և անհամբերությունից էր, որ այդ վիճակում հայտնվեց:

Վարդի պատմությունն ուրիշ էր, խղճալի էր շատ, որ վերջ չուներ: Ինչպես պիտի ամբողջ կյանքում մնա անորոշության մեջ՝ հիշելով իր երեխային, ուրիշի հույսին թողած, միշտ դառնացած՝ ինչու իրեն փախցրեց այդ թուրքը: Վաղինակը մեծ ցավով էր լսում այդ բոլորը, բայց և այնպես ուրախ էր, որ գտնվել է Վարդը, ողջ է գոնե, ի տարբերություն այն հազարավոր կույսերի, որոնք մարտիրոսվեցին այդ նույն ժամանակամիջոցին:

Արմենակը սիրեց իր սանիկին՝ Վահանին, որ արդեն մեծ տղա էր: Վահանին տեսնելով՝ անմիջապես մտածեց կնքելու մասին, այդ երեխան հայ պետք է դառնա և շուտ, հաստատ որոշեց կնքահայրը:

Վահանին անմիջապես տեղավորեցին ամերիկյան դպրոցում, որ մոտ էր իրենց: Շատ ուրախ գնաց դպրոց և երեկոյան արդեն շատ ընկերներ էր ձեռք բերել:

Բազմաթիվ հայ երեխաներ կային այդ դպրոցում, որոնք մեծ առաջադիմություն ունեին: Վստահ էին, որ Վահանը լավ կսովորի՝ իր քեռու նման լավ մարդ դառնալու համար:

Մոսոն շատ ուրախ էր այդպիսի ազնիվ բարեկամներ ունենալու, լավ շրջապատի համար, քրոջ համար: Նա էլ ծնողների մահից հետո Արեգնազի պատրաստակամ, հեզ բնավորության շնորհիվ ունեցավ իրեն նեցուկ և հենարան:

Առանց Արեգնազի ինչպես պիտի կարողանար հաղթահարել այդ վիշտը:

Արեգնազի ծնողներն էլ, իհարկե, իրենց լուման ունեին այդ գործում:

Փառանձեմը ուժգնորեն սիրահարված էր Արսենին, չնայած պաշտոնապես նշանված էին, բայց ուշանում էր ամուսնությունը, որի մասին էլ պետք էր մտածել արդեն:

Դա Արսենն իր ծնողների հետ պետք էր մտածի:

Սիմոնն էլ շտապում էր տղային ամուսնացնել, Արսենի երազանքն էր դա՝ Փառանձեմի հետ ամուսնանալ, թեկուզ ուշ, բայց գեղեցիկ հարսանիքով, Փառանձեմը՝ հարսի գեղեցիկ սպիտակ հագուստով, ինչպես ընդունված է Ամերիկայում. նայել էին նկարներ և գիտեին արդեն:

***

Առաքելը մտածել էր գալուց առաջ վերցնել Մինասի տան հասցեն և ճիշտ էր արել. միայն Մինասը կկարողանա տեղեկություններ հասցնել Վարդին:

Վարդը ուրիշ մեկը չուներ ավելի վստահելի. նրանք լավ ընկերներ էին այն ժամանակ, իսկ հիմա՝ ինչ իմանան:

Վաղինակը մի գեղեցիկ, սրտառուչ նամակ գրեց քրոջը, ուղարկեց և սպասում էր պատասխանի՝ ամեն օր նայելով նամակատուփի մեջ:

Մեկ ու կես ամիս տևեց Վաղինակի գրած նամակի պատասխանի գալը: Վաղինակը դողացող ձեռքերով բացեց Վարդի նամակը, կարդաց մի շնչով, բոլորը շատ ուրախացան՝ լսելով նորությունները. աշխատում է, նոր բնակարան ունի, պարզ երևում էր, որ ուրիշ կապ չկա Մինասի հետ, մնացել էր ընկեր, ինչպես որոշել էր սկզբից:

Ներողություն էր խնդրում, որ կրկին ցավ է պատճառել իրենց նավին ժամանակին չհասնելու պատճառով:

Ոչինչ չի խոսում իր հետագա անելիքների մասին, բայց հույսը չի կտրում՝ համոզված որ. «Աստված մեծ է, իր կամքը թող լինի»:

Նամակը վերջանում էր այսպես.

«Սիրում եմ ձեզ, հայրիկ, մայրիկ, Արեգնազ, Մոսո՛, Վաղինա՛կ, սիրում եմ նաև բոլորին- բոլորին:

Ձեր աղջիկ՝ Վարդ

Ուղարկում եմ նամակս՝ հուսալով, որ կգտնի ձեզ բոլորիդ ողջ ու առողջ»:

Հակիրճ մի նամակ, բայց բովանդակալից, որ արդեն փաստում էր Վարդի հասցեն:

***

Առաքելն ու Սաթոն հասկացան, որ շատ պիտի տանջվեն Վարդի պատճառով: Շատ խոսեցին, շատ վերլուծեցին և հետո բնական համարեցին՝ եզրակացնելով. «Մենք այսքան ճամփա եկանք մեր տղայի կարոտի համար»: Եվ բնական համարեցին Վարդի վերաբերմունքը, նա էլ իր տղայի համար էր անում: Նա իրեն շատ մեղավոր էր զգում նախ, որ փոքր երեխան թողել, փախել է՝ երկար չմտածելով:

Նա ոչ թե փախել է երեխայից, այլ փախել է թուրքից՝ իրեն առևանգված զգալով, այդ երեխան ինչ մեղք ունի, որ հայրը թուրք է, ինչպես Քամալն էր ասել. «Ես ինչ մեղք ունեմ, որ թուրք եմ ծնվել», ուրեմն, սիրելու իրավունք չունի՞ մարդը:

Իսկական սերը ուզելով կամ չուզելով չէ, երբ անկեղծ է սերը, տանջում, հետևում է քեզ, մոռանալ անկարելի է: Կամքից ուժեղ է սերը, ստիպում է կատարել անկարելին:

Այս բոլորը Քամալը կամացուկ բացատրել էր, հասկացրել Վարդին, բայց չհամոզվեց Վարդը, որ հպարտությունը կոտրված էր համարում, իր համար կամքն էր ուժեղ ավելի, քան սերը:

Այսօր Վարդը դոփում էր նույն տեղում. ո՛չ առաջ է կարողանում գնալ, ո՛չ էլ հետ:

Սալոնիկը իր համար եղավ անվտանգ մի տեղ:

***

Ամերիկա մտնելուց մի քանի ամիս հետո՝ աշնանամուտին, մի կիրակի օր Վահանի կնունքը արեցին, մյուս կիրակի՝ Փառանձեմի և Արսենի պսակադրության արարողությունը նույն հայկական եկեղեցում: Երկու ուրախ պատեհության քավորը եղավ Իգիթ Արմենակը: Ամեն ինչ ինքը կազմակերպեց, բոլոր ծախսերը հոգաց:

Ուրախ խնջույք, ուրախ տրամադրություն՝ ճոխ սեղաններով: Որքան հայ կար շրջապատում, հրավիրված էր, ամեն ինչը արվեց բարձր մակարդակով: Այսպես բոլորը ուրախ էին երկարատև տխրությունից հետո: Վերջիվերջո, ըստ արժանվույն վայելեցին բոլորն էլ իրենց մարդ զգալու երջանկությունը: Իգիթ Արմենակը Արսենին և Փառանձեմին նվիրեց մի քանի օրով Սան Դիեգոյի բարձրորակ մի հյուրանոցի հարսանեկան ճամփորդության ուղեգիր: Հարս ու փեսան մեծ բավականությամբ հետ վերադարձան՝ շատ նվերներով բոլորին հաճույք պատճառելով:

Շնորհակալություն հայտնեցին իրենց քավորին մի գեղեցիկ նվերով:

Արմենակը զգացվեց ու ասաց. «Ինչով որ դուք անցել եք, ես չեմ անցել անձամբ և հարգում եմ ձեզ ըստ արժանվույն: Երբ դուք այդ ճամփով գնում էիք, ես այստեղ իմ կարիերան էի պատրաստում, ստեղծում, դիզում էի, հիմա ես ուզում եմ, որ միասին վայելենք, բոլորիդ հալալ թող անի Աստված»:

Փառանձեմը պատմում էր, պատմում, չէր ավարտում ու Արեգնազին հորդորում էր.

- Արեգնազ, մեկ օր էլ դու կգնաս, կտեսնես, թե ինչ աշխարհ կա և վայելելու ինչ տեղեր կան այս աշխարհում:

Արսենն էլ ուրիշ երջանկության մեջ էր, նա էլ ծնողներին էր պատմում իր տեսածներն ու զգացածները: Սիրով պատմում էր իր հարսի մասին, հմայված ներկայացնում նրան՝ երանի տալով այն րոպեն, որ իր կորցրած հույսը կյանքի նկատմամբ փայլեց:

Երբ այն թուրք զինվորը իրենց կյանքի ճամփան փոխեց: Օրհնում են այն թուրքին և միշտ հիշում դեմքը բարի:

Իրենք լավ տեսան, թե ինչ հոգի կար մեջը:

***

Վահանը շատ կապվեց քեռու հետ: Քեռին իր համար հսկա էր, ուժեղ, աշխարհի ամենախելացին: Ամեն ինչում նրան էր լսում և ուզում էր նմանվել նրան հետագայում: Քեռին նույնպես շատ սիրեց Վահանին. շատ հարցասեր և խելացի էր նա, շուտով անգլերենին տիրապետեց շնորհիվ Վաղինակի, որ սովորեցնում էր լեզուն շուտ ըմբռնելու գաղտնիքները:

Մնացած առարկաները խնդիր չէին իր համար, կարող էր հետևել ծրագրերին:

Վահանին սիրեցին նաև Սիմոնի տղաները՝ Մկրտիչը, Մարգարը: Մտերմացավ նաև Սոնյային՝ նրանց քրոջը: Արդեն երիտասարդներ էին դարձել բոլորը: Ամերիկայում մտան արհեստավորական դպրոցներում սովորելու: Գնում էին նաև անգլերենի դասընթացների:

Բոլորն ուրախ էին, գոհ իրենց կյանքից:

Արմենակի խորհրդով էին նրանք շարժվում՝ հետ մնալ շատ անլուրջ հաճույքներից, որոնցով կարող էին խորտակել իրենց կյանքը:

***

Մոսոն և Արեգնազը մտածեցին երկրորդ երեխայի մասին, քույր կամ եղբայր՝ իրենց Վահանին: Շուտով Վահանին հայտնի եղավ այդ զարմանալի լուրը, ցնծության մեջ էր, սիրում է հորը, համբուրում, մորը համբուրում, դեռ շատ երեխա էր ծնողների համար, չնայած որ արդեն մեծ տղա էր: Այդ լուրը շատ շուտով տարածվեց, և ընտանիքը, ամբողջ գերդաստանը ուրախացան: Հայ ընտանիքները աճում էին արդեն երկար դադարից հետո:

Պետք էր մտածել Արմենակի մասին, քանի որ ինքը ժամանակ չուներ այդ անելու: Մեծանում էր՝ մեծացնելով իր ունեցվածքը:

Բայց իրեն ընտանիք էր պետք, թե ոչ, ինչ պիտի աներ այդքանը, որ կուտակել էր:

Առաքելը սկսեց զբաղվել այդ հարցով՝ առանց հարցնելու պատվական քավորի կամքը:

Երկար ժամանակ հարցուփորձով էր զբաղված՝ ովքեր են նոր եկողները: Առաքելին մի օր հայտնեցին, որ նավ է եկել Սալոնիկից, և շատ հայ ընտանիքներ տարբեր քաղաքներ են ընտրել ապրելու համար:

Հայտնեցին նաև, որ իրենց համագյուղացի Ղազարի քույրը՝ Մարոն, ընտանիքով գնացել է Լոս Անջելես քաղաք, նրանք նույնպես այդ նավի մեջ են եղել: Առաքելը անմիջապես հիշեց, որ Պողոսն ու Մարոն ունեին մի աղջիկ՝ Քնուշը:

Պողոսը նա է, որ Թուրքիայում Բոսֆորը անցնելուց հետո բոլորին օգնում էր սահմանը անցնել դեպի Հունաստան: Առաքելը լավ ճանաչում էր նրան, բայց չէր տեսել կնոջը և աղջկան՝ Քնուշին:

Շատ մտածեց Քնուշի մասին, որքան հիշում է, հիմա 26 տարեկանին մոտ պետք է լիներ, բայց արդյոք ամուսնացել էր,

այդ հարցին դժվար է պատասխանել, բայց կասկածում էր. չէ՞ որ ժամանակն ու պայմանները մինչև հիմա բարենպաստ չեն եղել երբեք:

Բայց նրանց Լոս Անջելես մնալն էլ դժվարացնում էր գործը, ինչպե՞ս կարող է ստանալ տեղեկություններ այնտեղից, ինչպե՞ս այդ մասի խոսեր Արմենակին:

Ինչպես գիտենք, Պողոսը Վարդին հանդիպել էր այն սրճարանում, ուր Վարդը միշտ մտնում էր Մինասի հետ: Հենց այնտեղ էր, ուր Մինասը բարեխոսել էր բարմեն աշխատելու համար: Որոշ ժամանակ հետո, երբ տեսավ, որ բոլոր հայերը գնում են Ամերիկա, շատերը՝ Լոս Անջելես, ինքն էլ ուզեց այնտեղ գնալ:

Առաքելը փնտրում էր Պողոսի մասին տեղեկություն, դեռ չի խոսում Արմենակի հետ այդ մասին: Շատ չանցած՝ տեղեկացավ՝ Քնուշը կա և դեռ ամուսնացած չէ:

Պողոսն էլ գտել էր իր աներձագին՝ Ղազարին, ընտանիքներով ապրում են իրար մոտ:

Առաքելը այդ մասին խոսում է Արմենակին:

Հետագա գործողություններով զբաղվեց Արմենակը: Իր համար դժվար ոչինչ չկար, անմիջապես տեսավ Քնուշին և հավանեց:

Ուզեց արագ անել ամեն ինչ, որ իրեն ամուսնացնելու խոսակցությունները շուտ վերանան, բայց չասենք, որ իր սրտովը չէր Քնուշը:

Քնուշը չքնաղ աղջիկ էր, գեղեցիկ, բարձրահասակ, երկար, շեկ մազերով, կապույտ աչքերով:

Արմենակը տեսնելուն պես «այո» ասաց, էլ սպասելու ոչինչ չուներ, հազիվ էր գտել Քնուշին:

Եթե չտային, Քամալի նման պիտի փախցներ: Գալով Քնուշին՝ նա գանձ էր գտել, երիտասարդ, առնական, կոփված ամեն

ինչով, նա նույնպես «ոչ» ասելու առիթ չունեցավ: Այդ է ճակատագիրը, խուսափել չես կարող, հարթ գնում է ամեն ինչ: Մեկ ամիս տևեց հարսանիքը լավ կազմակերպելու համար. Ամերիկայում դա խնդիր չէր:

Արմենակը ոչ մի բան չխնայեց բոլորին հաճույք պատճառելու համար՝ չմոռանալով նաև իրեն:

Վարձեց Ֆրեզնոյի ամենագեղեցիկ սրահներից մեկը, որի տնօրենը պիտի զբաղվեր՝ ամեն ինչը կատարյալ կազմակերպելով:

Մեկ օր առաջ Լոս Անջելեսից եկան բոլոր հյուրերը, տեղավորվեցին մի հյուրանոցում:

Արմենակը գնաց, մեծ շուքով բերեց իր հարսին, նախ կատարեցին քաղաքացիական ամուսնությունը, այնուհետև եկեղեցու պսակը, որից հետո հարսանիք արեցին հայկական ձևով:

Հարսանիքից առաջ Արմենակի հյուրասիրություններից Պողոսը մեծ բավականություն ստացավ՝ փեսայի հարգանքները ընդունելով, տեսնելով՝ ինչ հիանալի մարդ է նախ, քանի որ իր ունեցվածքը բոլորովին չէր շփացրել նրան. հասարակ էր, բարի, համեստ, հեզ, բոլորի նկատմամբ հարգալից:

Իսկ բոլոր ներկաները, որոնք Պողոսին էին ճանաչում, նրան՝ Պողոսին, մեծարեցին իր մարդասեր լինելու համար, քանի՛ տարի որքան հայերի օգտակար է եղել Թուրքիայից Հունաստան անցնելու գործում:

Այդպես բոլորը գոհ էին. ջերմ մթնոլորտ էր տիրում, երբ վերլուծում ենք, տեսնում ենք՝ եթե փախել են իրենց հայրենիքից, մարդիկ ամեն մեծ ու փոքր ծառայության համար ամեն ինչից և ամեն մարդուց գոհ են, գոհ են նրանից, ինչը առիթ է տվել ազատվելու անօրենից, անմարդկայինից՝ ազատելով իրենց անձը, պատիվը, հոգին, կրոնը, թեկուզ ընտանիքը թողնելով ետևում. ամբողջը մի կյանքի արժեք:

Այսօր օտար երկրում իրեն զգալով մարդ, արժեք՝ անընդհատ պիտի վերհիշի իր հողը, իր ջուրը, այն բոլորը, ինչ արժեք ուներ իր աչքին իր հայրենիքում:

Ճոխության կողքին, որ ունի այսօր, պիտի գնահատի իր անցյալի թանկ արժեքները, որոնք այլևս չի ունենալու՝ հայրը, մայրը, եղբայրն ու քույրը, իր հայ ժողովուրդը, որոնք մատաղ եղան մայր հողի վրա, այլևս վեր չկենալու համար:

***

Վարդը սկսեց սիրել իր աշխատանքը, երբ զգաց իր աշխատանքի արդյունքը: Առաջին անգամ էր աշխատում գործարանում, առաջ միշտ վախ ուներ մեջը, բայց հիմա ուրախ էր արդեն:

Երեկոյան, երբ թողնում էր աշխատանքը, թեթև էր զգում իրեն: Ամեն ինչ մտավ հունի մեջ: Երբ ստանում էր աշխատավարձը, զգում էր, որ լիովին բավարար է ապրելու և նույնիսկ մի կողմ դնելու համար:

Նա մենակ էր, բայց իր հոգում մեկն էլ կար թաքնված, որ հայտնի չէր ոչ ոքի: Նա մենակ իր համար չէր ապրում, նա ցանկություն ուներ, նա մուրազ ուներ, որի անունը՝ Մուրադ էր:

Օրերն ու տարիները անցնում էին, բայց իր մուրազը մնում էր իր սրտում: Վարդն ինքն իրեն միշտ կրկնում էր.

- Ես կհասնեմ մի օր իմ մուրազին, Աստված մեծ է:

Երեկոները ընկերները երբեմն հանդիպում էին իրար: Մինասը միշտ ներկա էր ամեն տեղ, ամեն ինչում: Ուժեղ թիկունք էր Վարդին: Արևհատը նույնպես սիրում էր Վարդին: Շատ է պատահել, որ երկուսին հրավիրել է իրենց տուն: Մայրը՝ Սիրունը, հյուրասեր կին էր, պատրաստում էր համեղ կերակուրներ, իսկ հայրը շատ էր հավանում Մինասին:

- Այս կիրակի չգնանք ծովեզերք,- ասում է Գուրգենը՝ Արևհատի հայրը,- մի քիչ ման կգանք այնտեղ, նավերին կնայենք: Գեղեցիկ է ծովը, օդն էլ լավ է, տաք: Այնտեղ, եթե ավելի շուտ լինենք, կարող ենք ձուկ գնել ափից ոչ հեռու, գիշերվա՝ ծովից

հանած ձկները թարմ-թարմ ծախում են, ձուկ կբերենք, այդ օրը ձուկ կուտենք:

Բոլորը համաձայնեցին, այդ կիրակի ձուկ խորովեցին, կերան: Ամեն կիրակի մի միջոցառում ունեին անելու: Միշտ երեկոյան գնում էին սրճարան, տարբեր մարդկանց հանդիպում, սուրճ խմում:

Վարդը սիրում էր առանձնությունը, Մինասն այդ գիտեր. երբ մնում էր մենակ, լաց է լինում, Մինասը գիտեր, շատ անգամ էր հանդիպել:

Ինչ արժեք իր լաց լինելը, իրեն է վնասում:

Մինասը շատ էր հոգում Վարդի մասին, թվում էր, թե նրան վերցրել է իր խնամքի տակ, չէր թողնում Վարդին մենակ: Վարդն ուզեց, որ մնան ընկերներ, ուրեմն ընկերներ էլ կմնան:

Միշտ մտածում էր, երանի գնար իր ծնողների հետ, կամ իրեն էր մեղադրում՝ ասելով, որ եթե ինքը հարց չտար, նա էլ չէր ուշանա նավից:

Այդ օրվանից Մինասը խուսափում էր այդ մասին խոսելուց, չնայած Վարդը կուզեր խոսել. նա դեռ ամեն ինչ չէր պատմել, Մինասին շատ բան ուներ ասելու, իրոք, իրեն խոսակից էր պետք, ամոքող, սիրտ տվող, հուսադրող:

Եթե ուզում է տեսնել Մուրադին, ինչպես պետք է անի մենակ:

Մայր էր, շատ ուշադիր նայել էր, ամեն ինչը ուսումնասիրել. հորն էր նման երեխան: Հիմա ինչպես է, այս հարցը միշտ տանջում էր իրեն:

«Երանի մայր չլիներ»,- մտածում էր:

Մինասը նույնպես մենակ էր, արդեն հոգնել էր այդ կյանքից, երեկոները տուն մտնելով՝ ինքն էր անում ամեն ինչ, մեկը չկա, որ խոսի հետը:

Նրան էլ պետք էր մեկը, որ իր մասին մտածեր:

Մի օր Վարդն ասաց.

- Մինա՛ս, ինչո՞ւ դու քո մասին չես մտածում, պետք է ամուսնանաս, մեկին գտնես, մինչև երբ մենակ պիտի մնաս, մայր էլ չունես կողքիդ, կինը անպայման պետք է քեզ: Ընտանիք պետք է կազմել, ասա՛ տեսնեմ՝ ինչ ես մտածում:

Մինասը նայեց Վարդին, ինքը չէր համարձակվում այդ մասին մտածել նույնիսկ, որ առաջարկություն աներ Վարդին, ու հիմա ընկերն է Վարդի, ինչպես միտքը փոխեր հանկարծ, ուրիշին նայեր կամ ուզեր:

Բայց Վարդը բոլորովին վատ չէր զգա, նա երբեք չի ուզել Մինասին, չնայած որ հավանում էր նրան անչափ: Վարդն ասաց.

- Ինչ ես մտածում Արևհատի մասին, լավ աղջիկ է, չէ՞, ինչո՞ւ չես ուզում, լավ ընտանիքի աղջիկ է, որքան ժամանակ է՝ ճանաչում ես արդեն,- ու հարցական նայեց Մինասին:

- Ես բոլորովին չեմ մտածել այդ մասին,- ասաց Մինասը՝ աչքերը հառելով Վարդին: Նա աղջիկներին ընկերներ էր միշտ համարել և մտքով ոչ մի անգամ չի անցել նման բան: Լավ մարդ էր Մինասը:

Վարդը ուզում էր Մինասին ավելի հեռացնել իրենից, որ իր կյանքը դասավորի և հասկանա, որ ինքը ոչ մեկին չի ուզում:

Վարդն այնպես խոսքն ուղղեց Մինասին, որ նա էլ համոզվեց, իրոք, Արևհատը լավն էր, միշտ հավանել էր, բայց երբեք չէր մտածել:

Անցան օրեր, Մինասը համարձակություն չունեցավ խոսելու Արևհատին, որովհետև Արևհատը գիտեր, որ նա Վարդի հանդեպ անտարբեր չէր եղել, իսկ Մինասին էլ ժամանակ էր պետք, որ կարողանար հարմարվել այդ մտքին, մոռանար Վարդին:

Մարդ երբ ազնիվ է, շուտ չի կարող կողմնորոշվել այնպես, որ ոչ մեկին չնեղացնի:

Այո՛, Մինասը չէր ուզում նեղացնել, Վարդն այդ հասկացավ,

բայց ինչպե՞ս համոզել Մինասին, որ ինքը ուրիշին է սպասում, բայց ո՛ւմ է սպասում և որքա՞ն դեռ պիտի սպասի:

Նորից երկար ժամանակ անցավ, ընկերները միշտ իրար հետ էին: Նրանց միացավ, նաև ընկերացավ Երվանդը՝ Արևհատի եղբայրը: Եղան չորս հոգի, ուրախ էր, ամեն տեղ միասին էին:

Գնացել էին այգու սրճարանը, հանկարծ Վարդը բռնեց Երվանդի ձեռքը, ասաց. «Գնանք միասին մի քիչ այգու խորքը, տեսնենք՝ ինչ կա ավելի հեռու»:

Երվանդը ուրախ վեր կացավ, միասին կամաց- կամաց զրուցելով հեռացան:

Մինասն անմիջապես հասկացավ Վարդի նպատակը, մտքի մեջ ասաց. «Նա ինձ հաղթեց, ինձ երբեք չի ուզելու, այդ է նշանակում սա»: Ուրեմն հիմա էր խոսելու կամ երբեք: Այդպես սկսեց պատմությունը և շատ հաջող վերջացավ:

Արևհատն անմիջապես պատասխան տալ չկարողացավ, բայց պարզ էր, որ համաձայն էր:

Առաջարկությունը ծնողներն էլ լավ ընդունեցին, գիտեին, որ Վարդն էլ ոչ մի անգամ չի ուզել, ուրեմն սիրտ կոտրելու ոչինչ չկար: Ամեն ինչ լավ էր:

Վարդը շատ ուրախացավ, ինքն իրեն ավելի ազատ զգաց և թեթևացած, այլևս մտածելու բան չուներ: Ամեն ինչ շատ արագ կատարվեց, ծնողները տվեցին իրենց համաձայնությունը: Հիանալի նշանադրություն կատարեցին, այնուհետև ամուսնության օրը որոշեցին:

***

Վարդը միշտ մնաց ընկերուհի, ամեն ինչին իրեն տեղյակ էին պահում, բայց Վարդը փորձ չուներ, շատ քիչ բանով կարող էր օգնել նրանց: Նա ո՛չ նշանվել էր, ո՛չ էլ ամուսնացել շնորհքով և ոչինչ չէր հասկացել ո՛չ իր օրիորդ լինելուց, ո՛չ էլ իր կին լինելուց, իրեն լիովին անբախտ էր համարում միշտ:

Թևերը կտրած մի թռչուն, որ մինչև հիմա փախուստի և օտարության մեջ էր:

Հիմա ուրախ էր, որ նամակագրության մեջ էր իր եղբոր և քրոջ հետ, փառք էր տալիս Աստծուն, որ իր ընտանիքը գոյություն ունի, հեռու են, բայց կան:

Արևհատը երբ իմացավ Մինասի մտադրությունը, հանկարծակիի եկավ, քանի որ բոլորովին չէր մտածում այդպիսի շրջադարձի մասին: Նա գիտեր, որ Մինասը պաշտում է Վարդին, մի պահ մտածելու առիթ տվեց, չնայած շատ ուրախացավ նաև: Գիտեր, որ Մինասը Վարդին չի հետաքրքրում, դա շատ զարմանալի էր: Հարկ համարեց հարցնել համենայն դեպս.

- Վա՛րդ, դու ինչ կարծիքի ես, արդյոք քեզ չե՞մ նեղացնում:

- Ո՛չ,- պատասխանեց Վարդը,- ես ավելի ուրախ եմ, որ մի հայ ընտանիք պիտի կազմվի, կուզեմ, որ երջանիկ լինեք, Արևհա՛տ, հավատա՛:

Որոշված կիրակի եկեղեցի գնացին, պսակադրություն, հարսանիք արեցին իրենց սրճարանում, որտեղ հավաքվեցին թաղի հայերը՝ իրենց ընտանիքներով:

Արևհատը շատ գեղեցիկ հարս էր, և շատ հմայիչ էին հարսն ու փեսան միասին:

Կերան, խմեցին, հույն երաժիշտները նվագեցին ուրախ, երգեցին ու պարեցին մինչև ուշ գիշեր:

Պողոսը՝ բարմենը, հագած-կապած եկել էր ընտանիքով, բայց ինքը կանգնած էր բարում և իր գործն էր անում: Այդ ժամանակ Պողոսը հայտնեց, որ շուտով պիտի գնա Ամերիկա, Լոս Անջելես քաղաքը Ղազարի՝ աներձագի մոտ, արդեն որոշված է, և շատ ուրախ էր:

Պողոսի մեկնումի օրը եկավ, մի երեկո բոլոր հայերը հավաքվեցին սրճարանում՝ բարի ճանապարհ մաղթելու Պողոսին:

Մի քանի օր հետո սրճարանը լիքն էր մարդկանցով, նոր մատուցող էին ընդունել, բարի նոր աշխատողն էր բերել: Շուտով հասկացան, որ նոր մատուցողը հայ է, մշեցի, անունը՝ Անդո: Երիտասարդ էր, քսաներկու տարեկանին մոտ, միջահասակ, թուխ, սև մազերով: Արագ էր շարժվում ու շատ քիչ բան էր հասկանում հունարենից:

Բարի աշխատողը քուրդ էր, բայց երկար ժամանակ էր Հունաստանում, լեզուն լավ գիտեր, ինքն էր Անդոյին բերել, որ միասին աշխատեն:

Սրճարան շատ քրդեր էին մտնում. Անդոն էլ որոշ չափով քրդերեն գիտեր, այնքան, որ հաճախորդներին հասկանար և հասկացներ:

Մինասի և Արևհատի ամուսնությունից շատ չէր անցել. մի օր Անդոն ասեց Մինասին, որ Մինաս անունով մեկին են փնտրում, և փնտրողը մեծ կին է: Նկարագրեց, բայց անունը չգիտեր:

Կինը ասել է նաև, որ Մինասը իր եղբոր տղան է: Մինասը խառնվեց՝ մտածելով իր հորաքրոջ մասին, բայց շատ երկար ժամանակ է անցել այն օրից, որ դուրս է եկել, դրանից հետո ջարդն է եղել, հորաքույրն այն ժամանակ արդեն մեծ կին էր:

Մինասը ուզեց ճիշտն իմանալ, թե ով է ասել, և որտեղ է ապրում այդ կինը: Թե ոչ, ինչպե՞ս իմանար իրոք, որ իրեն են փնտրում:

Մինասը գնաց և տեսավ, որ իսկապես իր հորաքույրն է: Շատ ուրախացավ, միշտ մտածում էր հորաքրոջ և նրա երկու տղաների մասին: Սամսոնը և Սերոբը, տեսնելով Մինասին, գրկախառնվեցին, անսպասելի էր և հուզիչ այդ հանդիպումը:

Մինասը գրկել էր հորաքրոջը, որն իր համար մայր էր, մեծացրել էր իրեն իր երկու փոքր տղաների հետ միասին:

Մինասը այլևս մենակ չէր, ուներ ընտանիք:

Երկու եղբայրները դեռ ամուսնացած չէին, հնարավորություն

չեն ունեցել, հազիվ կարողացել էին դուրս գալ երկրից: Իրենք էլ ծանր պատմություն ունեին, ինչպես բոլոր հայերը

Հորաքույրը շատ ուրախացավ, երբ լսեց Մինասի ամուսնության մասին, ասաց.

- Մեր ճակատին գրված է դժվար ապրել, ու ոչ մի բանի ժամանակ չունեցանք:

Հորաքույրը ծերացել էր, բայց դեռ երիտասարդության ցոլքեր կային նրա դիմագծերի վրա:

Մինասը շատ էր ափսոսում, որ իր հորը՝ Լորդ Սամսոնին, չի ճանաչել, գոնե նկար էլ չեն ունեցել այն ժամանակ:

Հորաքույրը շատ էր սիրել իր եղբորը և տղաներից մեկի վրա նրա անունը դրել դրա համար:

Մինասը հորաքրոջը և մի քանի ծանոթ ուրիշ ընտանիքների տեղափոխել տվեց իրենց թաղամաս: Այդ ընտանիքները միշտ իրար հետ էին եղել ամբողջ ջարդի ընթացքում, և՛ հետո, և՛ հիմա: Ինչպես տեսնում ենք, դեռ հայերի հոսքը կար, փախչում են ու փախչում, իրոք, չունեն հայրենիք, ոչ մեկը այնտեղ իր հայկական անունով չէր ապրում, խաղաղ կյանք չունեին: Մեկը մյուսին նայելով՝ հեռանում էր՝ ձեռք քաշելով ամեն ինչից:

Այն քիչ մասն էլ, որ մի կերպ փրկվել էր ջարդից, իրեն դուրս է նետում այսօր՝ ամեն միջոց ձեռնարկելով:

Հայերը ուր գնում են, ջանում են համախմբվել, մոտենալ իրար՝ իրենց ավելի ապահով զգալու համար:

Իրար օգնում են, օտարության մեջ ապրելը դժվար է, երբ լեզվին ծանոթ չեն:

Բոլորը ուրախ էին այսօր, ընտանիքները՝ իրար մոտ, ամեն ինչը հունի մեջ էր մտնում կամաց- կամաց:

Արևահատին՝ նոր հարսին, բոլորը սիրում էին, և ափսոսում էին, որ հարսանիքին ներկա չեն եղել:

Մինասը շատ կուզեր իմանալ, թե ինչեր են եղել գյուղում

նրանց հետ իր դուրս գալուց հետո: Հորաքույրը մտածեց ավելի ուշ պատմել՝ մեկ ուրիշ օրվա թողնելով այդ սարսափելի հիշողությունները:

Սալոնիկի արևոտ օրերը, ծովից եկող զով օդը, ապրուստի լայն միջոցները, վայելքի գեղեցիկ տեղերը կյանքն ավելի գունեղ էին դարձնում: Ուրախ էր ժողովրդի տրամադրությունը, երեկոյան երգ ու երաժշտությունը, ազատ հարաբերությունը մարդկանց միջև, այդ բոլորը մեծ սփոփանք էին նեղված, մթագնած սրտերը թեթևացնելու համար: Հազիվ դեմքերի վրա ժպիտ եկավ խեղճ հայերի:

Վարդը շատ բան ուներ մտածելու, կարոտը հողմահար էր արել սիրտն ամբողջապես, ոչ մի լույս չէր տեսնում ոչ մի տեղից: Մութ էր իր կյանքը նույնիսկ այս երկրում, ուր մարդն իրեն ազատ էր զգում, ամեն ինչ տեսնում էր գունեղ և ապագան՝ փայլուն: Իր մոտ առաջխաղացում չկար, նոր միտք չկար, միայն կարոտ էր զգում սիրտը մարելու չափ:

Տղան արդեն շուտով տասը տարեկան պիտի լիներ, հաշվում էր բոլոր տարիները օրերով, ամեն մի օրը ավելացնում էր իր սերը: Դրա հետ միասին չէր մոռանում Քամալին, առնական կեցվածքը ձիու վրա: Տեսքը նրա միայն կարելի էր պատկերների վրա տեսնել:

Մտածում էր իր եղբոր մասին, որին վերջին անգամ տեսել էր իր տանից գնալու օրը, չէր իմացել նույնիսկ, որ գնալու էր պանդխտության:

Հիշում էր բոլորին ու մի ճյուղ չուներ, որից բռնվեր, որից կառչեր. թիթեռ էր թեթև, նստելու տեղ չուներ:

Այդ իր վիճակը հայտնի չէր ոչ մեկին, բայց քաշված էր ամեն տեղ, խոսքն՝ էլ սակավ, կարծիք ուներ, բայց չափավոր: Ինքնուրույն որոշում չէր անում ոչ մի անգամ, որովհետև արել էր արդեն մի անգամ և հետևանքները քաշում էր մինչև հիմա:

Հիմա արդեն բոլորը սիրում էին, չէին թողնում մենակ, ներկա պիտի լիներ պարտադիր բոլոր միջոցառումներին, բոլոր սեղաններին, մի խոսքով, ամեն ինչին, այդ շրջանակի հայերի համար թագուհի էր:

***

Ամեն օր նոր ընտանիքներ էին այդ քաղաք գալիս՝ վստահ՝ «փնտրողը գտնում է»: Եթե ասում են, այդպես է: Ամենահարմար տեղն էր Հունաստանի Սալոնիկը:

Այս քաղաքը նավահանգիստ էր, և հետո այստեղ եկողները հեշտ էին կողմնորոշվում որ ուղղությամբ գնալ՝ Ֆրանսիա, Ամերիկա, Ավստրալիա:

Գնալ ու գնալ, միայն հեռանան թուրքերից: Թուրքերից, պետք է ճիշտ հասկանալ, ոչ թե հայրենիքից:

Ամբողջ կյանքում, եթե հարյուր տարի էլ անցնի, և ապրի մարդ, մինչև իր մահվան օրն էլ հայրենիքը պիտի հիշի ու կարոտի:

Մինասի ապրած թաղամասը քիչ ժամանակում հայկական թաղամաս դարձավ, բոլոր հայերը իրար սկսեցին լավ ճանաչել և ավելի աշխույժ ապրել:

Սիրեցին հույներին, ընդունեցին նրանց նիստուկացը, ինչպես նրանք էլ՝ հայերինը:

Սիրեցին երգը, երաժշտությունը, բոլորը սովորեցին սիրտաքի և քոչարի պարել:

Վարդն ավելի մոտեցավ Արևհատի ծնողներին, Վարդին շատ լավ էին ընդունում՝ տեսնելով նրա ազնվությունը:

***

Սրճարանատերը, գործը մեծացնելով, այսօր իր նոր ճաշարանի բացումը պիտի աներ: Վերցրել էր կողքի սրահը,

դուռը լայն բացել ու գեղեցիկ ձևավորում տալով՝ դասավորել նոր ճաշարանը: Հրավիրել էր իր ամբողջ հաճախորդներին՝ անվճար նախուտեստ տալու համար:

Երեկոյան բոլորը, մեկ մարդու նման, եկել էին՝ շնորհավորելու, այնուհետև բոլորն էլ որոշել էին ճաշել այնտեղ՝ սրճարանատիրոջը հաճույք պատճառելու համար:

Անդրանիկը մեկ ուրիշ երիտասարդի հետ արագ-արագ մատուցում էր պետք եղածը, բոլորը գոհ էին: Հնչում էր երաժշտությունը, երգեցին հայերեն, պարեցին հունական պարեր, հատկապես սիրտակի, պարում էին սկզբում դանդաղ, հետզհետե արագ, որ ուրախ մթնոլորտ էր ստեղծում ծափերի տակ:

Հավանեցին ճաշատեսակները և խոստացան հաճախ գալ օգտվելու համար, իրենց զվարճանքի տեղն էր: Երեկոյան ոմանք շուտ գնացին, ոմանք՝ ուշ, բայց բոլորն էլ սուրճ խմեցին գնալուց առաջ:

Մինասի հորաքույրն առաջին անգամ էր լինում ճաշարանում, իր համար նորություն էր ու շատ հավանեց այդ երևույթը, ասաց.

- Շատ լավ է, այսուհետ, երբ ճաշ եփելու սիրտ չունենամ, ճաշարանը պատրաստ է, էլ հոգ չունեմ անելու:

Այսպես փոխվում են բոլոր սովորությունները, կյանքը ավելի հանգիստ էր դառնում բոլորի համար:

***

Առաքելն ու Սաթոն Արմենակի հարսանիքից հետո ընդունեցին իրենց որդուն իրենց տունը:

Արմենակը ու Քնուշը երբ վերադարձան հարսանեկան ճամփորդությունից, Վաղինակը արդեն տեղափոխվել էր իր ծնողների տուն:

Մի քիչ նեղվեց Արմենակը, բայց և այնպես բնական համարեց, արդեն ծնողներ ուներ, և այդ էր ճիշտը:

Առաքելը լիարժեք համարեց Արմենակի անձնազոհությունը այդքան տարվա, շնորհակալական խոսքեր չէր գտնում արտահայտվելու համար: Նա իր զավակին եղել էր թիկունք ամեն ինչով ու վերադարձրել ողջ և առողջ, կրթված, նաև ուսում առած:

Արմենակին նկարագրել պետք չէ, Արմենակը ինքն արժեք է, ուրիշ ոչինչ: Նա դեռ պատանեկությունից այդպես էր, եթե ոչ, ինչո՞ւ Առաքելը պիտի վստահեր այդ երիտասարդին իր տասնչորս տարեկան որդուն: Հոգին պարզ, անձնվեր, քաջ տղա էր, օժտված մարդկային բարձր արժանիքներով, «Աստված» կասեր ու առաջ կգնար, միշտ և միշտ, ինչպես տեսնում ենք, Աստված մեկը հազար էր արել իր աշխատասիրության շնորհիվ:

Քնուշը բախտավոր աստղի տակ էր ծնվել, երջանիկ ամուսնություն ունեցավ, ինքն էլ լավ մարդու երեխա էր: Պողոսը, տարիներով իր կյանքը վտանգելով, հազարներով մարդ էր անցկացրել Թուրքիայի սահմանից դուրս՝ Հունաստան մտնելու համար:

Ամենավերջում որոշեց փախչել ինքն էլ, կնոջը ասելով. «Կնի՛կ, հիմա մեր կարգը եկավ երթալու»:

Պողոսը Սալոնիկում էլ հայտնի դարձավ իր բարեհամբույր բնավորությամբ, աշխատելով մեզ հայտնի սրճարանում: Բարի մարդու զավակը բարի կլինի: Ուրեմն, երկու բարի հանդիպելով, բարի պտուղ կունենան:

***

Առաքելը, Հովհաննեսը և Սիմոնը սերտ կապի մեջ մնացին: Տղաները՝ Արսենը, Մկրտիչը և Մարգարը, լավ ընկերներ էին, Սոնան արդեն մեծ աղջիկ էր: Բոլորն էլ ուսում ստացան, և ամեն մեկը գտավ իր լավ, հարմար աշխատանքը գրասենյակներում:

Կանայք՝ Սաթոն, Մարիամը, Աշխենը, նմանապես շատ մոտ էին: Փոխել էին իրենց ապրելաձևը, նիստուկացը, հանդերձանքը: Հագնում էին ավելի վայելուչ և ճաշակ էին բանեցնում: Ուրախ էին, որ գոնե մի բանի հասան այդքան տանջվելուց հետո: Հայ կնոջ ինքնաշխարհը նույնը մնաց, արտաքին հագուկապը և արդուզարդը փոխվեց:

Դուրս են եկել այն վախի շրջանից, իրենց հալածող չունեին այլևս, միայն կարողանային սթափվել և մտածել, որ կյանքը շարունակվում է ապրողի համար: Դժբախտ վախճան ունեցան, անմոռանալի հուշեր թողեցին մնացողներին, բայց ապրողն էլ թող վայելի, բավականություն ստանա իրեն հասանելիք բարիքներից:

Հայերն իրենց հայրենիքում էլ աշխատում էին, շատերը դիզել էին ոսկի, արծաթ, բայց ոչ մի անգամ վայելել չկարողացան: Թուրքերը ինչ-որ ձևով միշտ տարել են անխիղճները, իրենց պետք չի եղել աշխատավոր, խելացի մարդը, որը շուք է գցում իրենց վրա:

Հայն այդ երկրի ծայրահեղ հետամնացության մեջն էլ տարբերվում էր իրենցից:

Այժմ նույնը չէր. հայ ընտանիքներն ունեին իրենց ինքնուրույնությունը և ամեն ինչը նոր ձևով էին վայելում, ավելի բարձր մակարդակով, որից բավականություն էին ստանում: Հետևաբար, երկիրը երկրի վրա տարբերություն ուներ, յուրաքանչյուրը ուներ իր հատուկ սովորություններն ու հատուկ ապրելակերպը:

Հանկարծ մի օր Մոսոյին նամակ տվեցին, որը մեկն էր բերել Բուլղարիայից: Բաց անելով տեսավ, որ երկու նկար կա մեջը և մի նամակ:

Սիրունն ու Ալվարդը իրենց ամուսինների հետ էին. հարսանեկան նկարներն էին ուղարկել: Նամակի մեջ շնորհակալություն էին հայտնում, որ այսօր արժանացել են այս ուրախ պահերին նրանց շնորհիվ:

Պատմում էին իրենց մասին. բոլորը լավ են և բարևում են: Իրենց հասցեն պարզ է, կուզեն ստանալ տեղեկություններ բոլորի մասին:

Հայտնում են նաև, որ եթե Աստված կամենա, գալող տարի ցանկություն ունեն նրանց այցելելու, քանի որ կարոտել են բոլորին: Որ գալու են իրենց երեխաների հետ: Ալվարդը մի տղա ունի արդեն, Սիրունը՝ մի աղջիկ:

Մոսոն և Առաքելը ուրախ պատասխանեցին նամակին, իսկ նկարները անցան ձեռքից ձեռք:

Բոլորը հիշեցին դառն օրերը, լավ օրերը նաև:

Մարդու ճակատագիրը ջնջել չի լինի, որտեղից որտեղ և ինչից ինչ կարող է պատահել: Այդ օրվանից սկսած՝ բոլորը սպասում էին հաջորդ տարվա գալուն: Իրար հարազատ էին դարձել, յոթն օտար էին, այսօր սրտատրոփ սպասում էին, որ նորից իրար տեսնեն:

Մոսոն իր նամակի մեջ պատմեց նաև Վարդի մասին, թե ինչպես է մնացել Սալոնիկում, գրեց նաև Վարդի հասցեն, եթե կուզեն նամակցել, Վարդին հաճույք կպատճառեն:

Վարդը եղավ իրենց մտածմունքի նյութը գրեթե ամբողջ կյանքում, եթե այսպես շարունակվի, անկայուն կլինի կյանքը, վիշտ եղավ և իր. և բոլորի համար:

Այսպիսով, նամակները շարունակվեցին գնալ-գալ, տարբեր տեղեկություններ տարածել և ընդունել, այսպես ցանցի նման սկսեցին տեղեկանալ բոլորի մասին:

Վարդը երբ ստացավ Սիրունի և Ալվարդի նամակները, կարծես կյանք մտավ մեջը: Սիրում էր այդ երկու աղջիկներին, լավ մտերմացել էին իրար, երբ գնացին, կարծես շատ բան կորած լիներ:

Ինչ լավ եղավ, որ գտան իրենց սիրած տղաներին: Բոլորովին հույս չունեին, որ կգտնեին նրանց այս մեծ աշխարհում: Այսօր նամակ է ստացել իրենցից և շատ բաների մասին տեղեկություններ են գրել, ուրախ էր, որ իրեն չեն մոռացել: Նամակների մեջ իրեն էլ նկարներ էին ուղարկել, խոսել էին իրենց ընդհանուր վիճակի, ապրելակերպի մասին, ծնողների մասին, այդքան:

Վարդը պատասխանեց, պատմել սկսեց՝ իրենց գնալու պահից եղած բոլոր տեղեկությունները տալով, մինչև իր՝ նավին չհասնելը, մանրամասն պատկերով պատմելով ամեն ինչը, Մինասի և Արևհատի ամուսնությունն ամբողջապես, ծանոթացնելով նաև, թե ովքեր են իրենք:

Վերջում տեսավ, որ մի քանի թերթ նամակ է գրել, գրեց, որ սպասում է անհամբեր իր նամակի պատասխանին՝ավարտելով «Համբույրներով՝ Վարդ»:

Տեսնում ենք, որ ծանոթությունը, լավությունն ու բարեկամությունը երբեք չեն կորչում, անվերջ հիշվում է, ինչպես և տխուր, և ուրախ օրերը:

Վարդը շատ ուրախացավ, այդ օրն աշխատանքից հետո պիտի հանդիպեր Մինասին և Արևհատին սրճարանում, Վարդը

շատ էր պատմել իրենց մասին: Մինասը արդեն ճանաչում էր աղջիկներին: Նամակը տարել էր հետը՝ ցույց տալու նկարները, ասաց.

- Տես, Մինաս, քեզ պատմում էի հորեղբոր երկու աղջիկների մասին, տես, սրանց մասին էի պատմում: Երեկ աշխատանքից վերադառնալիս նամակատուփի մեջն էին նամակները: Տես՝ Բուլղարիայից են եկել, դեռ այնտեղ են: Տղաները ասում էին, որ կմնան այնտեղ, Ամերիկան շատ հեռու է:

***

- Վարդ, երեկոյան տարեդարձ ունենք տոնելու, չգիտենք, թե ում, սրճարանի գարսոնը՝ Անդրանիկն է ասել, որ հրավիրված ենք, ուզում են՝ բոլոր հայերը ներկա լինեն,- ասաց Արևհատի հայրը Մինասին:

Այդպես իրար հայտնելով՝ հաջորդ օրը երեկոյան թաղամասի բոլոր հայերը մեկ մարդու նման ներկա գտնվեցին տարեդարձին. քանի որ չգիտեն՝ ում տարեդարձն է, ոչ մեկը նվեր չուներ տալու:

Բոլորը մտածել էին գումար նվիրել:

Սեղանները գեղեցիկ շարված էին, նախուտեստը դրված էր, ափսեներն ու բաժակները՝ դասավորված, դանակ-պատառաքաղ, վերջապես, ամեն ինչ տեղն էր:

Բոլորը նստած էին, Անդրանիկն էր բաժակները լցնում գինով: Բոլորը նստած իրար երես էին նայում, թե որ մեկի ծննդյան օրը պիտի նշեն այդ բաժակով: Ձայն չկար, բոլորը լուռ էին, սպասողական հայացքներով, երբ արդեն բոլոր բաժակները լցված էին, մի մարդ ոտքի կանգնեց ու սկսեց խոսել: Այդ մարդուն բոլորը ճանաչում էին դեմքով, նոր եկած մարդկանցից մեկն էր, չգիտեին անցյալը, բայց գիտեին, որ ընտանիք չունի: Այդ մարդը խոսեց՝ շատ հուզիչ դեմք ընդունելով.

- Իմ անունը Մարկոս է, այսօր ես տոնում եմ իմ ծննդյան տասը տարեկանը. եթե խորը մտածենք, բոլորովին անակնկալ չէ, տասը տարի առաջ՝ ճիշտ այս օրը, այս ժամին գտնվում էի

Դեր-Զորի ճամփու վրա, մի խորը փոսի մեջ, մի քանի տասնյակ հայերի հետ, երբ ես գիտակցության գալով տեսա, որ շատերի հետ գտնվում եմ մութ տեղում, հողի ու փոշու մեջ, ոտքիս մեկը մի կողմ, մյուսը՝ մյուս կողմ, թևերս տարբեր կողմեր, զգացի, որ ցավերի մեջ եմ, բայց գիտակցությունս տեղն է, մտածեցի. «Ինչո՞ւ, ես ալ մեռած չեմ այս բոլորի նման»: Ու ես որոշեցի, անմիջապես ոտքերս ու թևերս հավաքել, որ տեսնեմ ինչ ընելս, չպատմեմ ինչպես, ավելի լավ է: Վերջապես դուրս եկա, և այսօր լրացավ իմ տասը տարին վերապրելուս:

Ըսեմ նաև, որ ես տեսա լույսը, բայց երբեք իմ կնոջն ու տղային, ինձ հետ միասին էին, և քիչ էր մնացել, որ հասնեինք անապատին:

Այսպես շարունակում էր խոսել՝ ասելով, որ չի ուզում այդ օրը մենակ նշի, և շարունակեց.

- Այսօր ինձ հետ եղեք, կխնդեմ: Ուզում է, որ միասին ուրախանան, թե ոչ, այսպես էլ տխուր կմնան: Այս վիշտը ամբողջ ազգությանն է պատկանում, ճիշտ է, բայց պետք է, որ այդ ազգը դեռ լավ օրեր ունի տեսնելու և այդ օրերը տարբեր ձևով պետք է վայելի:

- Սիրելի՛ հայեր, ես չէ, որ քարոզ պիտի կարդամ ձեզի, բայց կյանքը լավ և վատ օրերից է բաղկացած, եկեք զանազանենք այդ երկուսն իրարից, եկեք հիշենք, բայց չխորանանք, մեղք ենք մենք ալ:

Նստեց Մարկոսը: Քանի խոսում էր, լուռ էր սրճարանը, երբ Մարկոսը նստեց, բոլորը տեղերից բարձրաձայնեցին. «Ճիշտ է Մարկոսը, պետք է մի քիչ էլ դադար ունենանք, չնայած մոռանալն անհնար է»:

Կերան, խմեցին, երեկոյան ուշ ամեն մարդ վերադարձավ իր տունը, ու պատմություն դարձավ այդ մարդու վկայությունը:

Նորից գարուն է, օրերը՝ գեղեցիկ, երբեմն անձրևում էր, բայց շատ քիչ, այնուհետև անմիջապես արև էր փայլում երկնքում:

Կիրակի օրերը, երբ բոլորը տանն էին, չէին աշխատում, ուզում էին այդ օրը ճիշտ օգտագործել: Սիրում էին գնալ ընտանիքներով, երբ ծովը հանդարտ էր, հաճելի, կարելի էր լողալ, որից հետո ուտում էին այն, ինչ վերցրել էին իրենց հետ, լավ տրամադրությամբ անցկացնում օրը: Ծովն ուներ յուրահատուկ հոտ, ոմանց համար հաճելի էր, հատկապես տեղի բնակիչների համար, բայց կային մարդիկ՝ չէին սիրում: Այդ քաղաքը շատ մոտ էր ծովին, դրա համար շատ արտահայտված էր այդ ծովի հոտը: Բայց մեր ճանաչած ընտանիքները սիրում էին, լավ հանգստանում էին:

Այդ օրը շատվոր էին՝ Մինասի ընտանիքը, հորաքրոջ ընտանիքը, Վարդը, Արևհատի ծնողները, եղբայրը, բոլորը լավ բեռնավորված էին, ամեն մեկը մի պայուսակով, գնացին ծով:

Շատ հեռու չէր, մոտ կես ժամ պիտի քայլեին, բայց գեղեցիկ էր ճանապարհը, կրպակների մոտով էին անցնում, որոնց մեջ շատ բան կար տեսնելու և առնելու:

Այնտեղ հասնելով՝ տեղավորվեցին, որտեղ սեղան և աթոռներ կային, անմիջապես դրեցին պայուսակները, հետո հագնվեցին հատուկ հանդերձարաններում ու մտան ջուրը:

Այնուհետև կերան, խմեցին, հանգստացան տաք ավազների վրա, նորից լողացին, չորացան մինչև մութն ընկավ, հետո վերադարձան հոգնած ու գիշերը հանգիստ քնեցին:

Վարդը չէր մտնում ծովը, բայց երկար նայում էր ծովին, նստում էր և առանց խոսելու ժամերով նայում ու նայում հեռուները: Իրեն պատահել էր այդ անել, երբ մենակ էր գալիս, առանց ոչ մեկին հարցնելու:

Կարծես նայում էր մի նավի հետևից, որ չէր տեսնում, փնտրում էր՝ ձեռքը դնելով ճակատին, մտքով էր հեռու, հազար բան էր մտածում:

Նայում էր և մտքով տեսնում դեռ այն սպիտակ նավը, որին չհասավ: Այդ նավը տարավ իր ծնողներին սիրելի, որոնց համար փախավ իր տանից՝ թողնելով իր բալին: Ոչինչ չէր տեսնում, մտքով էր հեռու, հիշում էր Քամալին, տեսնում՝ ինչպես են աչքերից արցունքները վազում, պատկերացնում է նրան՝ Մուրադին գրկած, որ կանչում էր. «Մի՛ գնա, ես քեզ կպահեմ, սիրում եմ քեզ»: Ու միշտ նույն պատկերն է աչքի առաջ գալիս, միշտ նույնը, չէր փոխվում:

Միշտ Մուրադին փոքր էր տեսնում, ուզում էր մեծ պատկերացնել, չէր կարողանում, բայց լավ գիտեր, որ մեծացել է, և հորն է նման. թիկնեղ, բարձրահասակ, գեղեցիկ:

Վարդն իրեն չէր գերադասում, ո՛չ, միայն այն, որ իր ազգից չէր և նույն կրոնը չուներ, ու ոչ մի անգամ չհասկացավ, թե Քամալի մայրն ինչ էր մրմռում քթի տակ, այդքան բան չգիտեր Վարդը ու երբեք չէր անդրադարձել այդ թեմային:

Ծովն է օրորում,
Օդն՝ ինձ բարուրում,
Ալիքը՝ շորորում,
Միտքս է մոլորվում:
Արևն է փայլում,
Շողերն են իջնում,
Ջուրն իր մեջ առնում,
Աչքիս մեջ մարում:
Փնտրեմ երկնքում,
Տեսնեմ երազում,
Ծովի անդունդում,
Ո՞ւմ եմ ես փնտրում:
Նայում եմ հեռուն,
Ո՞ւ եմ շտապում,
Ո՞ւր է, չեմ տեսնում,
Նավիս եմ սպասում:

Այսպես, արդեն քանի տարի է՝ Վարդը սպասում է առանց իմանալու, թե ինչու է սպասում և ում է սպասում: Եթե այդքան տարի չի եկել սպասածը, այլևս չի գա երևի: Այսպես կասկածներով, համբերանքով ապրում էր Վարդը, տեսնում՝ ինչպես տարիները սահում, գնում են իրար հետևից, հույսը չի կտրում: Ո՞ւմ է սպասում:

Երբ Մինասը տեսնում է Վարդին այս վիճակում, սիրտը ճմլվում էր, նախանձ էր մտնում մեջը Քամալի հանդեպ, ատում էր այդ մարդուն, ինչպես էր իրեն զգում հեռու այդ հրեշտակի նման կնոջից՝ այդպես անհույս վիճակում թողնելով նրան: Ինքը սիրում է Վարդին:

Վարդը միշտ գնում էր՝ տարբեր ընտանիքների ճանապարհ դնելու, տարբեր նավերով, որ տարբեր երկրներ էին գնում: Ինքը

ոչ մի անգամ ցանկություն չունեցավ գնալու: Ո՞ւր գնա, չի ուզում ավելի հեռանալ, նա կարծես իր խարիսխը գցել էր Սալոնիկի նավահանգստում: Ո՞ւր էր իր հատուկ տեղը նավամատույցին. միշտ ներկա էր այնտեղ, ուշադիր նայում էր գնացող և եկող նավերին:

Այդտեղից տանող ճանապարհները մոլոր էին թվում իրեն, խուոոր էին իր համար:

Ու մի օր տեսավ նավ, որը գնալու էր Ստամբուլ, նայեց, շատ նայեց ետևից ու ասաց.

- Կուզեմ, որ ինձ էլ տանես, բայց գալ չեմ կարող, ես հայ եմ, ինձ հալածեցին, իմ ազգին հալածեցին, իմ ծնողներին՝ նույնպես: Միշտ իրեն առևանգված էր զգում:

Ամեն անգամ նավը հեռանում էր՝ իր հետ տանելով Վարդի սիրտն ու հոգին:

Վարդը, երբեմն սթափվելով, ուզում էր հետևել կյանքի ռիթմին՝ ուշադրություն դարձնելով իր արտաքին արդուզարդին, թեև բնավորության մեջ զգույշ էր ամեն ինչի հանդեպ:

Իրեն սովորեցնելու կարիք չուներ, ճաշակը բարձր էր, նուրբ, ինչպես հոգին:

Նա տարուց ավելի ապրեց Քամալի տանը, շատ համերաշխ, առանց թթու խոսքի: Գյուլվարդը միշտ հիշում էր իրեն, սիրում էր Մուրադին, ասում. «Կուզեմ, որ մորդ բնավորությունը ունենաս»: Բայց դա չգիտեր Վարդը:

Վարդը շատ բան չգիտեր և չէր ուզում լսել սրտի կանչին, վկայությանը: Ինքը առևանգված էր, թուրքի էր ճանաչել ինքը, դա էր իր միտքը խանգարում այդքան երկար, անվերջ:

***

Քամալի վիճակը բացատրելու համար շատ ուժ է պետք, պատկերացում, դժվար է շատ նկարագրել այդ անմեղ, պարզ երիտասարդի սիրտը, նրա զգացումները, անաղարտ սերը Վարդի նկատմամբ:

Փայփայում էր իր սերը, խոսում հետը, երբ էլ որ լինի, ուր լինի, օրվա տարբեր ժամերին:

Փնտրում էր ամեն տեղ, ամեն փողոցի անկյունում, կարծում էր՝ հետևում է իրեն, բայց չի համարձակվում իրեն մոտենալ:

Հիվանդ էր, երևակայությամբ լի: Շատ անգամ է որոշել խոսել մոր հետ, կիսվել, բայց չի համարձակվել, մայրը զբաղված էր. թոռ էր մեծացնում, նորածին, մի քանի ամսական, լավ տեսնում էր դժվարությունները իր ունեցած գործերի հետ միասին:

Տուն, դուրս, անասուն, դաշտ, պարտեզ. այդ բոլորը մորն էին նայում:

Դժվար գործ էր, հոգեպես ճնշում էր իրեն. շաբաթով գնում էր, մայրը տեղյակ չէր, թե ուր է գնում, ինչ է անում:

Շաբաթը մեկ գալիս էր հեռու ճամփից՝ կեղտոտ ոտքից գլուխ, հոգնած, դադրած:

Լողանում, մաքրվում էր ամբողջ շաբաթվա փոշուց: Երեք օր հետո նորից գնում ու ոչ մի անգամ մորը չէր բացատրում կամ խոսում իր արած գործի մասին: Այդ երեք օրը, որ տանն էր մնում, ամբողջապես իրեն նվիրում էր Մուրադին՝ իր երեխային, որը միայն հայր ուներ և տատի խնամքի տակ պիտի մեծանար: Քամալը գժի պես էր սիրում իր տղային: Երբ արդեն Մուրադը

սկսեց հասկանալ շատ բան, ճանաչել, լավ գիտեր իր հորը, նայում էր հետևից, նետվում գիրկը, բերանը հպում թքոտ շուրթերով հոր երեսին:

Համբուրում էր Մուրադին, Վարդի հոտն առնում իրենից: Մի այտից հազար համբույր առնում, չէր կշտանում ասում էր.

- Վարդի հոտ եմ առնում այս երեխայից:

Ու չէր անդրադառնում, թե ինչ է ասում, բայց մայրը մտքի մեջ ասում էր. «Այո՛, Վարդի հոտն ես առնում»:

Որքան էլ որ չէր խոսում Քամալը, մայրը տեսնում էր նրա հեգեկան տանջանքը: Հոգատար էր, սիրով իր տղայի նկատմամբ:

Տեսնում էր խղճալի հայացքը՝ հառած իր տղային: Որքան մեծացավ տղան, առավել ուժեղացավ հոգատարությունը: Ուշադրություն դարձրեց դաստիարակությանը, կոփվածությանը, կերակրելուն, հագցնելուն հետևողականորեն: Այնուհետև ուսման խստապահանջությունը մտցնելով իր ուսման ռեժիմի մեջ:

Երբ Մուրադը սկսեց հասկանալ, պաշտում էր հորը, օրենք համարելով նրա բոլոր պահանջները՝ լավ տեսնում էր, որ հայրը զինվորական է զինվորական հագուստների մեջ, և հայր էր՝ հագուստները փոխած ժամանակ: Սիրում էր իր հորը և վերջում հարգել սկսեց:

Գյուլվարդը լավ մայր է եղել: Քամալը մորից միայն լավ բան կարող էր սովորել: Հայ գեղջուկ կին՝ համեստ, հնազանդ, աշխատասեր:

Ամուսնու մահից հետո ոչ մի տեղ չկարողացավ գնալ, տղան՝ Քամալը, տանը չէր, բարձր զինվորական դպրոցում էր սովորում, պիտի դառնար զինվորական. հայրն էր որոշել:

Զինվորական լինի, որ ոչ մեկը չհամարձակվի ձեռք տալ իր տղային: Շաբաթը մեկ գալիս էր տուն, տեսնում մորը, օգնում շատ բանով՝ կրկին վերադառնալու համար:

Երբ ավարտեց և կոչում ստացավ, երկիրը խառնվեց, իր կյանքը ընկավ ոլորապտույտի մեջ, խճճվեց ու անհնար դարձավ իր դուրս գալը այդ հորձանքից, այդպես շարունակվեց ու շարունակվեց:

Որքան ուզում էր մոտենալ Վարդին, այնքան հեռանում էր, բայց ինչպե՞ս մոռանար, որտե՞ղ, ինքը մի վարդ՝ միլիոնավոր փշերի մեջ, ո՞ւր է արդյոք: Կարող է՝ անցել է իր առջևից այդ հազարավոր աղջիկների հետ միասին ու չի տեսել: Սիրտն ինչպե՞ս է դիմանում այդքան վշտին, ինքն էլ չգիտի: Թույլ է այնքան սիրտը մարդու: Երբեմն, այո՛, դիմանում է, երբ հույս ունի, ու նպատակը մեծ է, պայքարում է, հաղթահարում:

Քամալը շատ էր սիրում մորը, միակ զավակն էր հորն ու մոր, միամիտ մեծացած: Հայրը ոչ մի անգամ չէր պատմել իր ծագումը, իր ծնողների մասին, ինչպե՞ս էր, որ այդ գյուղում էին:

Քամալը միայն գիտեր, որ լավ պիտի սովորի ու մեծ մարդ դառնա:

Գյուղի դպրոցում տառաճանաչ դառնալուց հետո ուսուցիչ էր վարձել՝ տանը սովորեցնելու համար, երբ եղավ տասնչորս տարեկան, տարավ Մուշ, իր ծանոթներից մեկին վստահեց, որ մնար իրենց տանը, կերակրեն երկու անգամ օրը: Այսպես ավարտեց, հոր մահից հետո արդեն ինքնուրույն դարձավ:

Քամալը կարդաց նաև Ղուրանը, երբ արդեն մեծ էր, բայց չհետևեց մոլորությանը, հայրը, երբ ինքը փոքր էր, միշտ ասում էր. «Ես չեմ սիրում այս ազգի մոլորությանը, չափազանց բաներ չեմ սիրել երբեք, հավատա Աստծուն, քանի որ մեկ Աստված կա բոլորի համար, բայց այդքան էլ խանգարել չեմ կարող:

Տղա՛ս, դու իմացիր՝ Աստծուն պետք է հավատաս, և Աստված մեկ է բոլորի համար, մուսուլման թե քրիստոնյա, մեկ է, բայց մի խորանար իզուր, քո մեկ աղոթքն էլ կլսի Աստված»:

Քամալը վերջում հասկացավ, թե հայրը ինչու էր այդքան բան խոսել հետը: Ինքը քրիստոնյա էր, ինքը հայ էր:

Քամալը, ինչպես գիտենք, Մուշում՝ զինվորական գրասենյակում, հաշվապահ էր աշխատում, այդ ժամանակ մեկին գտավ, որ իրեն հայերեն կարդալ-գրել սովորեցնի, նաև խոսել, այդ անում էր գաղտնի, որ ոչ մեկը չիմանա: Նա շատ էր լսել, խոսել իր ընկերների հետ, որոշ բառեր գիտեր: Սկսեց մոր հետ խոսել հայերեն: Մուրադը երբ մեծացավ, սկսեց հարցեր տալ, թե ինչու ընկերները մայր ունեն, ինքը չունի, ուր է իր մայրը: Այդ հարցերին չգիտեր ինչ պատասխանել: Շատ ձևերով ուզեց շեղել երեխային, բայց որքան մեծացավ, պնդեց՝ ճիշտ պատասխանը ստանալու համար: Հայրն ասաց, որ մի օր դուրս է եկել տանից ու չի վերադարձել:

Տղան հանկարծակիի եկած ասաց հորը, թե նա ինչու չփնտրեց, նա զինվորական էր, ինչպես եղավ, որ չգտավ, թե որտեղ է: Շատ նեղվեց, լացեց, խռովեց, որ չի կարողացել մորը գտնել:

Քամալը գրկեց, խոստացավ, որ անպայման գտնելու է մորը, որտեղ էլ որ լինի, բայց հիմա ծառայության մեջ է, դեռ փնտրում է, թե որ տեղերում կարող է գտնել՝ հաստատ իմանալով, որ Թուրքիայում չէ: Տղան համոզվեց. հավատում էր հորը:

Քամալը շատ զգացվեց անկեղծ սիրո ուժգնության վրա, որ չճանաչելով հանդերձ՝ շտապում է գտնել մորը: Հարցնում էր, թե ինչպիսին էր մայրը, գեղեցիկ էր, բացատրություններ, նկարագրություններ էր ուզում: Բայց ինչպես նկարագրել, որ տղան հասկանա: Նկար չուներ, որ ցույց տար: Քամալը գտավ մի նկարիչի և իր բացատրություններով Վարդի յուղաներկ պատկերը նկարել տվեց, շատ նման և գեղեցիկ մի նկար, Վարդն էր իսկական:

Երբ նկարը բերեց տուն ու բացեց, մայրը զարմացավ՝ ասելով. «Վարդն է, որտեղից բերիր, Վարդն է, տեսամ իրեն, ինչպես են նկարել առանց տեսնելու»:

Մայրը ուրախացել էր, կանգնած հիանում էր, շոյում երեսը ու լաց լինում: Մուրադը նույնպես տեսավ, սկսեց լաց լինել, երբ տեսավ, որ հայրն ու տատը, նկարի առաջ քարացած, արցունքներ են թափում:

- Ինչ է, մեռել է, ինչու՞ եք լաց լինում մորս նկարի առջև, ասեք, եթե չկա, և այլևս չեմ տեսնելու, պապա՛, ասա՛, գտնելու՞ ես իրեն, թե՞ չէ:

Մուրադը հիացած նայում էր մոր նկարին, արձանացած մտածում, թե ինչ գեղեցիկ է իր մայրը, ինչպե՞ս է, որ չկա հիմա, ինչպե՞ս է դուրս եկել և չի վերադարձել, չի՞ սիրել արդյոք իր հորը, բայց ինքն ինչ մեղք ունի, որ թողել է իրեն:

Ոչ մի բացատրություն չուներ:

Քամալն այնուհետև միշտ կանգնում էր կնոջ նկարի առաջ, սիրում, շոյում ու գնում իր գործին:

- Գտնելու եմ, տղա՛ս, քեզ խոստանում եմ:

Այդ եղավ, Քամալը որոշեց գործ գտնել ուրիշ տեղ: Իրեն առաջարկեցին Ստամբուլ անձնագրերի գրասենյակում ղեկավարի պաշտոն, որպես լավ աշխատողի և հավատարիմ կառավարությանը:

Ինքը ձեռք էր բերել այդ հավատարմությունն ու վստահությունը շատ զգույշ կերպով:

Տեղափոխվեցին Ստամբուլ:

Նախօրոք եկել էր, տեղեկացել աշխատանքի մասին, տուն էր վարձել մոտիկ աշխատանքին:

Մայրը վստահում էր որդուն, նա միայն կարող էր հետևել, իր կարիքն ուներ:

Քամալի պաշտոնը շատ կարևոր էր. միշտ զինվորական էր և զբաղվում էր անձնագրերով:

Մուրադը շարունակում է ուսումը այստեղ էլ:

Գյուլվարդը միշտ զբաղված էր տան գործերով, անհրաժեշտ գնումներով: Այստեղ արդեն Քամալը ավելի շատ ազատ ժամանակ ուներ:

Մոր և տղայի հետ միասին այցելում էին Ստամբուլի տեսարժան վայրերը: Նավով անցան Բոսֆորը և վերադարձան, այցելեցին Սոֆիա տաճարը և շատ ուրիշ կոթողներ: Կյանքը ավելի աշխուժացել էր, նույն դրությունը չէր, ինչ մի քանի տարի առաջ էր՝ ջարդի ժամանակ:

Փողոցները լցված էին վաճառականներով. իրենց խանութների առաջ կանգնած՝ հրավիրում էին ապրանք առնելու, ապրանքը փռված էր դռներից դուրս, փողոցների վրա:

Տեսակ-տեսակ ուտելիքներ, մրգեր, խմորեղեն ծախվում է ամեն տեղ: Այստեղ էլ ուրիշ տեսակ էր այս բոլորը ներկայացված:

Քաղաքը եռուզեռի մեջ էր:

Այստեղ էլ Քամալը թուրք մնաց իր ընտանիքով: Այդ վիճակում միայն ինքը չէր, բայց ոչ մեկը ոչ մեկին չէր ճանաչում: Շատ քչերը, եթե բարեկամներ էին:

Այստեղ էլ, ինչպես ամեն տեղ, Քամալը սկսեց լավ անուն վաստակել, բոլորը հարգում էին իրեն:

Հրավիրում էին շատ տեղեր՝ երեկոների, ճաշկերույթների, բարձր կարգի ժողովների, կոնֆերանսների: Ապրելակերպը փոխվեց:

Իր գործի մեջ ինքը ղեկավար էր. և՛ կարևոր գործը, և՛ վերջին խոսքը իրենն էր միշտ:

Մարդիկ ընտանիքներով ներկայանում էին իր մոտ անձնագրերի հարցով, ստանալու կամ փոխելու, և շատ անգամ հարցեր տալու կամ փաստաթուղթը չտալու հարցերը ինքն է որոշում:

Որոշ ժամանակ հետո նկատեց, որ իր մոտ մտնում են հայ ընտանիքներ թուրքի անունով:

Իրեն չիմանալու է դնում ու կարգավորում է ամեն ինչը նրանց ուզած ձևով: Այսպես աշխատեց որոշ ժամանակ, շատ չէին հայերը, իսկույն իմանում էր, կարծես արյունը քաշում էր, զգում էր իրենց քաշվածությունից, ինքը համեստ խոսում էր հետները, լավ վերաբերվում էր, բայց ոչ մի անգամ չլսեց հայերեն խոսք, գոնե մի բառ, ո՛չ, բոլորը զգույշ էին. իրենց դիմաց թուրք կառավարական աշխատող էր նստած՝ ոստիկանի հագուստով:

Բոլորը վախեցած էին, երբ թուրք էր մտնում, անմիջապես գիտեր, որ թուրք է, բայց հայը այլ կերպ էր հարցերը տալիս, որ իր ուզածով պատասխանը ստանա: Քամալը անմիջապես զգում էր դա: Միշտ բավարարում էր, պատասխանում այնպես, որ գոհ դուրս գան՝ իմանալով հանդերձ, որ դա այդպես չէ, եթե ճիշտը նայի: Երկար աշխատեց այդպես՝ միշտ օգնելով, խորհուրդներ տալով:

Հատկապես այդ թղթերը նրանց պետք էին՝ երկիրը թողնելու համար, փաստաթուղթ, վկայագիր, համաձայնագիր: Եղավ մի ժամանակ, որ հայերի թիվը շատացավ, և բոլորն էլ իրեն էին ուզում տեսնել, ամեն ինչ անում էին, որ ինքը վերանայի գործը, երբ ներքևում բավարարված չէին, ասում էին. «Մենք մեծավորին ենք ուզում տեսնել»: Այդպես շարունակվեց շատ երկար ժամանակ:

Քամալը ուրախ էր, որ գալիս են ու գալիս, մտածելով՝ որքան հայեր կարողացել են փրկվել եղեռնից, բայց ինչ է այսքանը միլիոն ու կեսի մոտ: Այս քիչ մասն էլ չի կարող շարժվել իր շապիկի մեջ, բոլորը փախչում են օտար երկրներ՝ իրենց հայրենիքը թողած:

Հայերն արդեն գիտեին տեղը, իրար ասելով՝ գալիս էին,

ոչ մեկը ձեռնունայն չէր վերադառնում: Քամալը փնտրում էր սրանց մեջ իր Վարդին, չէր գտնում:

Երեկոյան անկողին մտնելուց առաջ կանգնում էր Վարդի պատկերի առաջ, ասում. «Վա՛րդ, ո՛ւր փնտրեմ քեզ, ի՞նչ անեմ, որ քեզ գտնեմ»: Շոյում էր երեսը, տխուր մտնում անկողին, խնդրում Աստծուց, որ գոնե երազում տեսնի իր Վարդին:

Մի պատկեր ես՝ հմուտ վարպետի ձեռքին վստահված,
Քո հմայքը՝ սիրով լի, կենդանացած, շունչ առած,
Պատկեր ես դու, բայց սեր ես, խոսում ես ինձ անվերջ,
Ժպտում և խոստանում ես մնալ ինձ հետ հավերժ:

Այսպես շարունակ Քամալը զգում էր իրեն լքված, անտեսված մեկը, դեն գցված, վիրավորված էր իրեն զգում՝ մտածելով, որ թուրք էր, այո՛, բայց մարդ էր ինքը, սիրում էր, և սերը արժեք չունեցավ:

Հասկանում էր նաև, որ թուրքն այնքան արտահայտված ատելություն ուներ իր մեջ, որ մտածում էր, թե սերն ինչ գործ ունի թուրքի մեջ:

Այսպես էին հասկանում հայերը և իրենց անարգված ու միշտ առևանգված էին համարում:

***

Տարին լրացավ, ծնվեց Իգիթ Արմենակի իգիթ տղան: Քնուշը շատ երջանիկ էր՝ ամուսնանալով Արմենակի հետ, որ հիանալի ամուսին էր և պարզ էր նաև, որ ուշադիր հայր պիտի դառնա: Մի տարին շատ շուտ անցավ: Անընդհատ ուրախ օրեր անցկացնելով, գեղեցիկ սեղանների ներկա լինելով, կատարյալ երջանիկ կյանք վայելեցին բոլորը, որովհետև Արմենակը մենակ նստել չէր սիրում և շատ էր երազել այս օրերի մասին: Մինչև այսօր չէր ունեցել բարեկամ իր չորս կողմը, միշտ եղել է մենակ, այս օտար երկրում միայն աշխատել է, մտածել աշխատել խեղճ չմնալու համար, եթե հնարավոր է, ինչո՞ւ առիթը չօգտագործել:

Այսօր հայր է և հնարավորությունները հսկայական որդուն նվիրելու համար, իր հայրն էլ շատ ուներ, ինչպես գիտենք, բայց ի՞նչ արեցին իր հորը՝ Սահակին, թուրքերը ջախջախեցին, իսկ ունեցվածքը չտարան, որովհետև տեղը չիմացան: Իր և հոր ձգտումները նույնն են, ինչպես կյանքը ցույց է տալիս, գոնե ճակատագիրը նույնը չլինի: Ամբողջ շրջապատի մարդկանց օրհնանքը վրան է, այնքան մարդու է օգնել:

Աստված էլ գիտի իր բարության չափը:

Այն օրը, երբ տղան՝ Սահակը, ծնվեց, այնքա՜ն շնորհավորանքներ ստացավ, այնքա՜ն նվերներ:

Առաքելն ու Սաթոն երջանկության մեջ էին, միշտ մաղթում էին, որ առողջ զավակ ունենա և անարատ լինի, փառք տվեցին Աստծուն իր նվիրածի համար: Բոլորը երեկոյան հավաքվեցին, շնորհավորեցին, ճաշակեցին Արմենակի նվիրած մեծ սեղանին դրված ուտելիքները:

Մեկ շաբաթ հետո Արմենակը կնքել տվեց իր Սահակին նորից մեծ արարողությամբ քաղաքի հայ Ավետարանական եկեղեցում, և Սահակի կնքահայրը եղավ Առաքելի տղան՝ Վաղինակը:

Վաղինակը երջանիկ էր զգում իրեն՝ հասկանալով, որ ինքը մեծ արժեք ունի Արմենակի աչքին, եթե ոչ, չէր ուզի իր ծառայությունը, որն այնքան հետաքրքիր էր իր համար:

***

Միշտ նորանոր հայ ընտանիքներ էին գալիս Ամերիկա, շատերը տեղավորվում էին Լոս Անջելեսում, երբեմն Նյու Յորք էին նավով գալիս, այնտեղ էլ մնում, եթե ծանոթ կամ բարեկամ էին ունենում:

Այս ընտանիքները այլևս Հունաստան չէին մտնում, միանգամից հնարավորություն էին ստանում Ստամբուլից գալ, առանց ավելորդ ծախս անելու և ճանապարհ կտրելու, դա ավելի կարճ էր լինում իրենց համար, հոգնությունը՝ քիչ:

Պետք է արդեն գուշակենք, թե ում շնորհիվ էին ընտրել այդ կարճ ճամփան: Այս հայ ընտանիքները բոլորն էլ պարտական էին այդ մարդուն, այն թուրք սպային, որը, նստած այն գրասենյակում, ստորագրում և կնքում էր իրենց փաստաթղթերը, և ինքն էլ ուղղություն էր տալիս, որ ուղին լինի կարճ և մատչելի: Այդ ընտանիքները տեղահան գնում էին ու գնում՝ ազատվելով իրենց այդ մղձավանջային կյանքից, որ ապրել էին, անընդատ փրկելով իրենց երեխաներին: «Աչքը տեսածից է վախենում»: Ամեն մարդ օրհնում էր այն մարդուն, այն թուրքին, որն իրենց աչքին հրեշտակ էր երևում, գեղեցիկ, վայելուչ, բարձրահասակ, գրեթե հայի նման բարի և միաժամանակ, այնքան նման մեկին. կասկածը սրտներում էր միշտ, ոչ մեկը չէր համարձակվում բարձրաձայն արտահայտել՝ մտածելով.«Այն

զինվորը հուր, այդ սպան հուր»: Ու այդտեղ կանգ էին առնում հետևաբար. «Այն որտեղ, այս որտեղ», ավելի երկար չէին մտածում: Այնինչ, որքան հայերի հոսքը ավելանում էր, Քամալը՝ այդ սպան, աթոռն ավելի էր ամրացնում:

Սալոնիկ. 1925 թվական: Հայերի նոր ընտանիքներ էին գալիս գրեթե ամեն օր: Դժվար չէր այստեղ գալը, ամենամոտ տեղն է Թուրքիայից շուտ դուրս գալու համար: Մինասի ապրած տեղը արդեն՝ որպես հայկական թաղամաս, բոլորին հայտնի էր:

Շատ արագ հնարավոր էր բնակարան գտնել, և այդտեղից արագ ընտրում էին երկիրը, որտեղ ուզում են տեղափոխվել:

Երեկոյան սրճարանը լեփ-լեցուն էր սովորականի պես, խոսում էին բարձրաձայն, եթե որևէ մեկը բան ուներ խոսելու կամ հաղորդելու:

Լսողները, եթե քիչ էլ լինեին, լսում էին, և ոչ մի խոսքը իզուր չէր անցնում: Ամենօրյա հաճախորդներին միանում էին նաև նորերը, որոնց պատմելու նյութն ավելի շատ էր:

Այդ օրը Մինասը այդտեղ չէր, բայց այնտեղ էին իր հորաքրոջ տղաները՝ Սամսոնն ու Սերոբը: Խոսքի մեջ էին մտել մի մարդու՝ Բարսեղի հետ:

Քառասունհինգն անց մարդ էր, նոր էր եկել Թուրքիայից կնոջ և տղայի հետ: Բոլորը հարցրեցին, թե ինչ նորություններ կան: Պատասխանը մեկն էր՝ եթե լավ լիներ, ինչո՞ւ դուրս պիտի գար: Այնքան բաներ էին անցել գլխով: Չորս կողմից պնդեցին. «Պատմե՛, պատմե՛, գիտես մենք ինչու ենք այստեղ, թե գիտես մենք քիչ բաներ ենք տեսել, կսխալվիս»:

Բարսեղը այդ օրը չուզեց պատմել, ուրիշ օրվա թողեց, այդ օրը նեղված էր սիրտը, կինը հիվանդ էր: Միայն հայտնեց, որ մեկ ամսից Ֆրանսիա են գնալու, չեն ուզում մնալ Հունաստանում: Այդ ժամանակ Անդրանիկն էլ հայտնեց, որ ինքն էլ պիտի գնա Ֆրանսիա, օրը որոշված է արդեն:Պարզվեց,

որ նույն օրը պիտի նավ նստեն, Մարսելի նավահանգիստը պիտի իջնեն միասին, շատ ուրախացան:

Մի քանի օր հետո Մինասը լսել էր Բարսեղի պատմածը՝ իր և կնոջ քաշածները առանձին-առանձին:

Բարսեղին թուրք կառավարությունը կանչել էր զինվորական ծառայության, երբ արդեն ամուսնացած էր և երեք երեխայի տեր: Թողել էր տանը նաև հայր, մայր, չորս եղբայրներ, մի քույր:

Այնքան մեծ էր ընտանիքը, որ կերակուրն ուտելու ժամանակ քառասուն գդալ է մտել և դուրս եկել ճաշ եփելու կաթսայի մեջ: Այն ժամանակ այդպես են ասել բազմանդամ ընտանիքների համար, երևի այդպես են կերել՝ բոլորը մի տեղից:

Թողնելով կնոջը և երեխաներին՝ գնում է բանակ, Առաջին համաշխարհային պատերազմն էր սկսվել: Բայց Բարսեղին, ինչպես բոլոր կանչված հայերին, չէին վստահել և կռվի չէին տարել: Նրանց ուրիշ բանի համար էին կանչել, կանչել էին՝ իրենց ճանապարհը հարթելու, ուղի բացելու դեպի Դեր-Զոր անապատ, բոլորն այդ նպատակով էին կանչված, որ այս հայերին էլ այս ձևով տանջեն ու սպանեն: Շատ քիչ բանով՝ ուտելիքով աշխատեցնում էին սոված, ծարավ, ամբողջ օրը քրտնաջան, ծեծի զոռով: Շատ դաժան օրեր էր անցկացրել Բարսեղը իր ողջ մնացած ընկերների հետ միասին՝ ցնցոտիների մեջ: Ընկերները իրար հետևից ընկնում էին, չէին դիմանում, հիվանդանում, մեռնում էին: Բարսեղն էլ շատ հիվանդ օրերի էլ է բանել, կերել է՝ ինչ պատահի՝ խոտ, դաշտի մուկ, մի խոսքով, ամեն ինչ: Այսպես աշխատել են բահերով, ձեռքերով, ոտաբոբիկ: Պատմելու ժամանակ Բարսեղի արցունքները թափվում էին աչքերից, դեռ մտրակների հարվածները զգում էր իր մարմնի վրա: Կեղտի, փոշու մեջ, չէր երևում աչք, երես: Իրեն պահել են քանի տարի այդ ձևով, բոլորը մահացել են, ինքը

մնացել է, փախել է շատ դժվարություններով: Փախչելը ավելի տանջալի է եղել: Տեսել է ճամփին շատ դաժան, անպատմելի բաներ: Եկել էր տուն, ընտանիքից ոչ մեկը չկար, բոլորը գնացել են այն ճանապարհով, որ ինքն ու իր ընկերներն էին հարթել դեպի Դեր-Զոր անապատ:

Այսպես մնում է մենակ՝ թաքնված ծածկանունով. թուրքի գյուղի քրդերը, տեսնելով տանջանքը և այդքան տարվա բացակայությունը, պահում են: Ինչ տանջանքով երկար ժամանակ քայլել էր նա ետ գալու համար՝ երկրում կատարվածները տեսնելով, մտածել իր ընտանիքի մասին:

Գյուղացիները որոշ ժամանակ անցնելուց հետո ամուսնացնում են մի շատ երիտասարդ աղջկա հետ, որին իրենք էին պահել:

Եվան 18 տարեկան էր. նրա պատմությունն էլ ավելի ցավալի էր:

Եվա... Երբ թուրքերը հարձակվում են գյուղի վրա, մտնում են ամեն տուն, ջարդում, փշրում, հանում են բոլորին, գյուղի կենտրոնը հավաքում, սկսում են կոտորել բահերով, եղաններով: Չորս քույր են եղել, երեքին և ծնողներին աչքի առաջ սպանում են. այդ բոլորը տեսնելով՝ փախչում է, շատ երկար վազելով՝ մտնում է անտառ, իր հետ շատ ուրիշ երեխաներ: Եվան ութ տարեկան էր այդ ժամանակ. թուրքերը հետապնդում են բոլորին, բռնում, բերում, լցնում մի ջրհորի մեջ, վրան քարերով ծածկում: Եվան կենդանի է մնում. երբ քարերը լցնում են վրաները, մի խոշոր քար ընկնում է Եվայի դաստակի վրա, կոտրում, այդ ժամանակ աղջիկը ուշագնաց է լինում:

Որքան ժամանակ է մնում՝ չգիտի, բայց Աստծո կամքով ուժեղ անձրև է տեղում, անձրևաջրերը սթափեցնում են Եվային:

Երբ արթնանում էր, գիտեր արդեն, թե որտեղ է ինքը և հնար չունի դուրս գալու հորից, սկսում է գոռալ, բարձրաձայն լաց լինել: Այդ տեղով երկու մարդ են անցնում, լսում են լացի

ձայնը, մոտենում են, տեսնում, որ ջրհորից է գալիս այդ լացը, բայց հորը քարերով լցված էր: Խղճահարվելով ամեն ինչ անում են տուժածին օգնելու համար, քարերը հանում մի կերպ, մեկն իջնում է, հայտնի չէ՝ ինչպիսի դժվարությամբ հանում են աղջկան: Մնացածից ձայն չէր ելնում:

Եվան լաց էր լինում, չէր հանգստանում, ձեռքը անտանելի ցավում էր, հետո հիշում էր ծնողներին, քույրերին: Այդ մարդկանցից մեկը ասում է, որ լավ կլինի կառավարությանը հանձնեն, մյուսը երեխա չի ունենում, մտածում է՝ տանել, պահել: Մարդը պահում է Եվային մինչև 18 տարեկան, մի օր էլ որոշում է ամուսնացնել Բարսեղի հետ, որովհետև գիտեին, որ երկուսն էլ հայ էին: Բարսեղը Եվայից քսան տարի մեծ էր, Հայաստանի Չաթից էր ինքն էլ: Երկու տարի այնտեղ մնալուց հետո ունենում են մի տղա՝ Սահակ անունով: Այնուհետև, ինչպես բոլորը, առաջանում են դեպի Ստամբուլ, այնտեղից Հունաստան են գալիս, այստեղից էլ թույլտվություն են ստացել Ֆրանսիա գնալու:

Մինասն այս բոլորը պատմելու ժամանակ զգում էր, որ կինը՝ Արևհատը, իրեն վատ էր զգում, չնայած որ լսեց մինչև վերջ: Մինասը խառնվեց, երբ զգաց կնոջ անհանգստությունը: Այլևս չէին կարողանում անընդհատ լսել այս դեպքերի մասին, Մինասն անմիջապես խոսքը փոխեց կնոջ տրամադրությունը շեղելու համար:

- Արևհատ, գիտե՞ս, երբ սրճարանից դուրս եկա, հորդ հանդիպեցի մսագործի խանութի մոտ, ասաց, որ այսօր երեկոյան գնանք իրենց տուն՝ նապաստակ ուտելու, գնա՞նք, կուզե՞ս: Հարց էր տալիս, որով զգաց, որ իրեն լավ չէր զգում քիչ առաջ:

- Գնանք, ժամը քանիսի՞ համար կանչեց, նապաստակը նո՞ր էր վերցրել մսագործի մոտից, թե՞ ուներ:

- Այդ չիմացա, բայց կանչեց, ժամն էլ չասեց, մի քիչ շուտ կգնանք, ես գործ ունեմ եղբորդ հետ, դու էլ լավ կզգաս, մամային կխոսես, սիրտս նեղվեց, որ քիչ առաջ վատ զգացիր:

Երեկոյան դեմ Մինասը խանութից մի շիշ գինի վերցրեց, ու միասին գնացին տիկին Սիրունի տունը:

Տունը գտնվում էր երկու շենք այն կողմ. շատ մոտ էին իրար: Բոլորը տանն էին, կիրակի օր էր:

Հայրը՝ Գուրգենը, դիմավորեց, համբուրեց երկուսին էլ, նստեցին: Մինասի հետ շատ լավ զրուցընկերներ էին: Պարոն Գուրգենը, այդպես էր դիմում Մինասը նրան, շատ բանիմաց, կրթված մարդ էր:

Մինասը լավ էր ընդունվում որպես փեսա: Ինչպես սիրված էր բոլորի կողմից, այդպես էլ իր կնոջ ընտանիքում: Լավ զրուցակից էր, ամեն ինչից գաղափար ուներ, համեստ էր և ցույց չէր տալիս, որ բարձր է որևէ մեկից: Սիրում էր Երվանդին, և պետք եղած դեպքում Երվանդը դիմում էր Մինասին, հավատում նրա ամեն խոսքին:

Արևհատը և մայրը խոհանոցում պատրաստվում էին սեղան դնելու և իրար հետ ցածր ձայնով խոսում էին: Հանկարծ Սիրունն ուրախ, բարձր ձայնով ասաց.

- Մինա՛ս, կնոջդ բժշկի պետք է տանես, ես կարծում եմ, որ բժիշկը պետք է տեսնի, որ իմ կարծիքը հաստատվի:

Մինասն անմիջապես հասկացավ, ուրախացավ, բայց բժշկի կարծիքը անհրաժեշտություն էր:

Շատ համեղ էր նապաստակի փլավին, հաճույքով կերան, տիկին Սիրունը շատ լավ էր եփում այդ կերակուրը՝ գինով, սխտորով կտորները կարմրացրած կարագի մեջ:

Երեկոյան ուշ վերադարձան տուն, շատ գոհ իրենց ընտանիքից: Արևհատը արդեն լավ էր զգում:

Այս մարդիկ Մալաթիայից էին: Ինչպես բոլորը, իրենք էլ ունեին իրենց անձնական և ընդհանուր պատմությունը, որը մեկը մյուսից շատ քիչ բանով էր տարբերվում, որի գլխավոր մտադրությունը ազգի բնաջնջումն էր, մահը: Այս փոքրամասնության փրկվելը չգիտենք ինչին վերագրենք՝ իրենց մտքի հմտությանը, ճարպկությանը, թե ճակատագրին:

Պարոն Գուրգենը պատմեց, որ իր և ուրիշ մի քանի ընտանիքներով որոշում են հեռանալ իրենց տներից ու գնալ որոշ ժամանակով հեռու մի անտառ, ապրել այնտեղ, կառուցել փայտե հյուղակներ և մնալ այնքան, մինչև տեսնեն՝ վերջը ինչ է լինելու, որովհետև լսել էին, տեղյակ էին թուրքերի մտադրությանը՝ քշել մարդկանց գյուղից: Այս ընտանիքները քաջաբար միասին հեռանում են մի առավոտ՝ իրենց անհրաժեշտ ունեցածով:

Շատ բան չեն տանում, ամեն ինչ թողնում են ու գնում՝ մտածելով, որ ուր էլ գնան, այսքան բանը կարող են ունենալ, երբ ուզեն. այնքան քիչ բան ունեին: Բայց բոլորն իրենց անունները փոխած էին, և ոչ մեկը հայերեն չպիտի խոսեր: Տարբեր տեղերով էին գնում, բայց նույն տեղը պիտի հավաքվեին, ինչ որ մի գյուղից հեռու՝ անտառի մեջ: Շատ դժվարությամբ, բայց համախմբվում են: Քաղաքից դուրս գալով՝ մի էշ են առնում, վրան բարձում ինչ ունեն և շարունակում են ճանապարհը: Քանի՛ օր ճանապարհ են գնում հոգնելով, հանգստանալով. դժվար էր վիճակը, բայց դիմանում էին՝ մտածելով՝ մեռնելուց լավ է, փախչում էին բոլորի նման: Այս ընտանիքների տղամարդիկ գիտեին՝ ուր պիտի գնան և ինչ պիտի անեն, շատ էին խորհրդակցել իրար հետ այդ մասին: Մի քանի օրից հետո մտնում են իրենց որոշած անտառը, սպասում իրար մինչև օրվա վերջը, ընտանիքները հավաքվում են: Որոշում են փայտե հյուղակներ կառուցել ծառերի տակ: Անտառը մութ էր, և այնտեղ

շատ մարդ չէր մտնում: Ամեն ինչին հոժար էին մարդիկ, հաշվի չէին առնում նույնիսկ, թե ինչպիսի կենդանիների կարող էին հանդիպել, միայն թե փախչեն:

Որովհետև առաջին դեպքը չէր, և գիտեին, թե ինչի է ընդունակ թուրքը:

Երկու օրվա ընթացքում ինչ- որ չափով պառկելու տեղ են ստեղծում: Գարուն էր, դիմացը ամառ, չէին մտածում, որ ձմեռը կմնան այնտեղ: Իսկ մնացածը՝ ուտելիքը, ջուրը, ամեն ինչ մի մարդու հույսին էր: Նրա անունը Ալի էր: Ալին հայ էր, ինքն էլ լավ ծանոթ էր այդ ընտանիքներից մեկին: Վաղուց անունը փոխել էր ու քաշվել իր ընտանիքով այս անտառի մոտիկ գյուղ ու ապրում էր այնտեղ՝ վախեցած ամեն ինչից, ինքն էլ հալածված թուրքերի կողմից: Հին ծանոթներից մեկն էր և մի անգամ էլ իր տուն է հրավիրել իրեն: Ալին երբ գալիս էր Մալաթիա, միշտ այցելում էր իրեն, ազնվորեն ասել էր այդ անտառի տեղը, խոստացել օգնել նաև:

Այս ձևով փրկվում են. մի քանի ամիս հետո՝ աշնան վերջին, սկսում են մոտենալ Ստամբուլին ու նույն ձևով, ինչպես բոլորը, գնում են Հունաստան, առայժմ այնտեղ են. դեռ չեն որոշել՝ ինչ պիտի անեն. շատ են հոգնել, հազիվ նստակյաց կյանք են վարում: Մտածում են, որ ամեն ինչից խուսափեցին, կյանքը առջևում է, այդ լավ էին տեսնում արդեն: Աղջիկն ամուսնացավ, դեռ տղան չի մտածում այդ մասին:

***

Երկու ընկերները գնացել էին Բուլղարիա և անմիջապես հաստատվել Վառնա քաղաքում, հենց այնտեղ, որտեղ առաջին անգամ ոտք էին դրել:

Այլևս չառաջացան, չխորացան դեպի երկրի խորքերը: Ծովեզրյա քաղաք էր, աշխատանք էլ խոստացել էին իրենց: Ժամանակներից ի վեր հայերը բնակություն են հաստատել Բուլղարիայում: Պատահական չէ, ինչպես տեսնում ենք, իրար հետ խոսելով, փնտրելով են գտնում միմյանց:

Աշխատեցին, մինչև կարողանային ստեղծել պայմաններ՝ աղջիկներին տանելու Հունաստանից, գտել էին իրենց ծնողներին, նաև Ալվարդի և Սիրունի ծնողներին՝ նույն քարավանի մեջ, որ քշվում էր դեպի Դեր- Զոր անապատը: Ազատվում են նույն կերպ, գալիս նույն ճանապարհով, Բուլղարիա հասնում ու հանդիպում: Բոլոր հայերն էլ այդպես էին անում, ասում էին. «Եթե հարցնող ունենամ, այսինչ տեղն եմ գնում»: Տեղն էին ասում ու գնում:

Երկու ընկեր երջանիկ էին հիմա, որոշել էին գնալ Ամերիկա: Առաքելին և Սաթոյին խոստացել էին գնալ: Նրանք սպասում էին այն օրվան, թե երբ պիտի հանդիպեն:

Արեգնազն ու Փառանձեմը շատ ուրախացան՝ իմանալով նրանց գալու մասին, սկսեցին պատրաստվել:

Նավով երկար ճամփա պիտի անցնեին, այդ ժամանակի համար դա առաջնակարգ էր համարվում:

Երկու ընկեր դժվար էին աշխատել երկար տարիներ, իրենց

արժանի էին համարում այդ ճամփորդությունը կատարելուն: Արեգնազն ու Փառանձեմը միշտ խոսում էին այդ աղջիկների բարության մասին, հիշում, որ միշտ վախի մեջ էին, լուռ, ընկճված: Այդ ժամանակ բոլորն էին այդ վիճակի մեջ, հիմա տարբեր է, կարծես շունչ էր մտել բոլորի մեջ, իրենց ավելի համարձակ, ինքնավստահ էին զգում:

Օրը եկավ, Արմենակն ու Վաղինակը գնացին միասին Լոս Անջելես՝ դիմավորելու եկողներին:

Վերջապես եկան՝ բոլորին բերելով լավ նվերներ:

Տրամադրությունը բարձր էր բոլորի, գեղեցիկ օրեր անցկացրեցին իրար հետ, շատ ծանոթների տեսան, հյուրասիրվեցին:

Շատ երկար նստեցին, խոսեցին Վարդի մասին, կարդացին Վարդի գրած նամակները՝ տխուր, անհույս, միշտ մերժող հոր ու մոր հրավերները: Առաքելն ու Սաթոն, ինչպես և բոլորը, դիմել էին ամերիկյան հպատակության համար, գործը ընթացքի մեջ էր: Առաքելը կրկնում էր. «Ես անպայման կգնամ, թոռանս կբերեմ»: Բայց որտեղից գտներ, կամ ով կտար, որ բերի: Մտածում էր՝ չտան էլ, գոնե կտեսնի իր թոռանը:

Ամերիկյան քաղաքացի լինի, միգուցե ձեռք չտան իրեն, այդպես էր մտածում, դրան էր սպասում, որ գնա, հաստատ էր որոշել գնալը:

Արեգնազի տղան՝ Վահանը, մեծանում էր, շատ առաջադեմ էր ուսման մեջ: Առաքելը մեծ հույսեր էր կապում նրա հետ, ասում էր. «Մեր Վահանն է». շատ դժվարություններ ունեցան իրեն մեծացնելուն: «Մեզ ինքը պիտի պահի»,- միշտ կատակում էր Առաքելը:

Սաթոն գիշեր-ցերեկ մտածում էր Վարդի մասին, ամբողջ կյանքում սիրտը կարոտով մնաց: Ինչու այդպես եղավ այդ աղջկա բախտը, մինչև երբ պիտի այդպես մնա այդ երկրում,

մենակ, առանց հարազատի, ում է սպասում, ինչպես պիտի գտնի տղային, գնալ չի կարող, փնտրել չի կարող:

Ամեն նամակում կանչում են, նա էլ միշտ հետաձգում է կամ մերժում, ասում էր. «Ոտքս առաջ չի գնում, հասկացեք, ինչ անեմ, չեմ կարող»: Վաղինակը շատ էր կարոտել քրոջը, նա տասնչորս տարեկանից չի տեսել նրան, հիմա ինքն է գրում բոլոր նամակները, այդպես է կարոտն առնում: Միշտ ասում է, որ մի օր կտեսնենք իրար, թե երբ կլինի, հայտնի չէ: Բոլորն այսպես հույսով սպասում էին, բայց գոնե գիտեին, երբ էլ ուզեն, կարող են իրար տեսնել, միջոցները բավարարում էին արդեն բոլորի:

***

Վարդը աշխատում էր, հմտացել էր իր գործի մեջ, շատ անգամ վերահսկում էր, երբ ղեկավարը բացակայում էր: Լավ հունարեն գիտեր, կարողանում էր նաև կարդալ և գրել:

Հայերն իրեն շատ էին սիրում, օգնում էր հայերին: Հրավիրում էին միշտ իրեն, այնպես որ, շատ մենակ չէր զգում իրեն:

Տիկին Սիրունը միշտ գալիս-գնում էր Վարդի տունը, ամեն ինչին տեղյակ էին պահում, Վարդը միշտ ուշադրության կենտրոնում էր: Անընդհատ լուրի էր սպասում:

Որոշում էր ընդունել՝ օրվա որոշ ժամանակը տրամադրել իր Մուրադի մասին մտածելուն, ու միշտ նույն բանը ամեն օր: Դա իր համար հատուկ ժամ էր, առանց դրա չէր կարող ապրել:

Բավականություն էր ստանում դրանից և իրեն համարում էր պարտական, գոնե այս սփոփելու միջոց գտավ: Այս էլ նոր էր հնարել, ուրիշ շատ միջոցներ փորձել էր, չեղավ. այս նոր միջոց էր:

Այս անում էր պառկելուց առաջ, որ հանգիստ քնի գիշերը, միգուցե երազին տեսնի իր Մուրադին:

Մուրադն էլ նույն վիճակի մեջ էր: Երեկոյան պառկելուց առաջ ասում էր միշտ. «Ալլա՛հ, երբ պիտի մամայիս տեսնեմ»: Ու երբ նայում էր պատից կախված նկարին, մտածում էր, թե ինչ գեղեցիկ մայր ունի, ինչ է եղել մոր հետ, ինչո՞ւ չի վերադարձել:

Հայրն ու տատը ոչ մի ավելորդ բան չէին խոսում, որ գոնե մի բան գուշակի: Անունը գիտեր, որ Վարդ է, բայց ոչ մի անգամ չէին ակնարկել ուրիշ բան: Դպրոցում գիտեին, որ մայր չունի, որ դուրս է եկել ու չի վերադարձել, բայց այդ ժամանակները այդքան վատ են եղել, այդ մասին բոլորը գիտեին, ոչինչ չէին ասում, որովհետև «թացը չորի հետ վառվել է» շատ անգամ: Այդպես Մուրադը մնաց անորոշության մեջ: Գյուլվարդը շատ անգամ էր մտածում այդ մասին, օրերից մի օր Մուրադը պիտի իմանա այդ բոլորը, ինչ են պատճառաբանելու:

Միշտ մտածել են՝ փոքր է դեռ, միգուցե գաղտնիք չկարողանա պահել, ժամանակները չեն փոխվել դեռ, ավելի ճիշտ, Քամալը դեռ գործի մեջ էր և պաշտոն էր վարում:

Բայց մի օր, դպրոցից վերադառնալով, Մուրադը ասաց Գյուլվարդին.

- Այսօր մեկը ինձ հարցրեց, ընկերներից մի տղա, թե ինչ է մորս անունը: Ես էլ ասացի՝ Վարդ:

Գիտե՞ս՝ ինչ ասաց այդ տղան, ասաց դա հայի անուն է և նշանակում է վարդ, ծաղիկ: Ես ասացի, որ ինքը սխալ է, բայց ինքը պնդեց, որ ճիշտ է:

Ասա՛, տատի՛կ, ճի՞շտ է ասածը, ես պետք է իմանամ, ինձ մի՛ խաբեք, ես արդեն մեծ եմ, ասա՛, տատի՛կ: Ես գիտեմ, որ մի բան կա, որ ինձ չեք ասում: Մայրս հայ է եղել, ու սպանել են թուրքերը, ես էլ թուրք եմ, չէ՞, ասա՛, տատի՛կ:

Գյուլվարդի լեզուն կապ էր ընկել, այլևս չէր կարող խոսել, ընկել էր երկու քարի արանքում, բերանը չէր բացվում: Իսկ Մուրադը պնդում էր.

- Ասա՛, տատի՛կ, ասա՛, ես մեծ տղա եմ, շո՛ւտ, ուզում եմ իմանալ:

Գյուլվարդը գրկեց տղային, գլուխը սեղմեց կրծքին այնպես, որ Մուրադը այլևս շնչել չէր կարող, իսկ ինքը չէր զգում այդ: Երբ բաց թողեց, Մուրադը պնդեց. «Ճիշտ եմ ես, ասա՛, տա՛տ»:

Գյուլվարդը լաց էր լինում, աչքերից վազում էին արցունքները, որ միշտ թաքցրել էր Մուրադից:

Տղան ամեն ինչ հասկացավ, այն, ինչ որ թաքցրել էին իրենից. դա էր իրենց գաղտնիքը:

- Մուրա՛դ, տղա՛ս, հորդ կհարցնես, ամենաճիշտը ինքը քեզ կասի, ես ճշմարտությունը ամբողջապես չգիտեմ:

Չուզեց խոսել, որովհետև Քամալը կուզեր ինքն ասել այդ ամենն իր տղային:

Մուրադը գնաց դեպի պատկերը, կանգնեց դիմացն ու ասաց. «Մամա՛, ես թուրք եմ, բայց սիրում եմ քեզ, իմ մայրն ես, ով ուզում ես, եղի՛ր, թեկուզ հայ, ես սիրում եմ հայերին, եթե դու հայ ես»:

Մուրադը կանգնած մնաց նկարի առաջ, լաց էր լինում ու մտածում. «Արդյոք քեզ պիտի տեսնե՞մ, թե՞ թուրքերը քեզ սպանել են, ինչո՞ւ չվերադարձար տուն, ես փոքր էի, ինձ ինչո՞ւ թողեցիր»:

Գյուլվարդը մոտեցավ, գրկեց Մուրադին, գլուխը համբուրեց, ասաց. «Հայրդ կիմանա շուտով, թե ուր է մայրդ, երանի՛ ողջ լինի, հույսդ մի՛ կտրիր, տղա՛ս, Աստված մեծ է»:

Երեխային հանգստացնելով՝ հեռացրեց նկարի մոտից, սիրեց, երեխան արդեն իր բոյից անցել էր, շուտով տասնչորս տարեկան պիտի լիներ: Շուտով տարեդարձն էր, և այդքան տարի միշտ տոնել էին առանց մոր: Հայրը մեծ ուշադրություն էր դարձնում ամեն ինչին՝ կատարելով և՛ հոր, և՛ մոր պարտականությունները, ոչ մի բան կիսատ չթողելով:

Բայց վերջերս այլևս չէր կարող շեղել ուշադրությունը, Մուրադը շատ բանի մասին էր արդեն մտածում, ուշադրությունը շեղել հնարավոր չէր, անպայման պիտի ճշտությունը իմանար:

Գյուլվարդը թողեց, որ իր տղան տա պատասխանը, դա իր ուժերից վեր էր, չուզեց իր ձևով բացատրել, շատ դժվար էր իր համար: Այսքան տարի մեծ դժվարությամբ դիմացան բոլորը, ամեն անգամ իրեն մեղադրելով ապրեց. այս գաղտնիքը վաղուց էին իրենք պահում՝ սկսած պապից:

Վարդն էլ իր հերթին էր երկար մտածում, ինքն էլ ելք չէր գտնում իրեն արդարացնելու: Երեկոները՝ իր քավության ժամին, տեղը չէր գտնում, հազար հարց էր տալիս իրեն և հազարից մեկին չէր կարողանում պատասխանել: Ուժերից վեր էր, երեսը սև էր, ամաչում էր, ինչպես ասի.

- Մուրա՛դ, քեզ թողեցի, փախա:

Ինչպես արդարանա: Երբեմն երկար-բարակ խոսքեր էր գտնում արդարանալու համար:

Հազար տեսակ ներողություն էր խնդրում՝ տարբեր պատճառաբանություններով, բայց վերջում միշտ ինքն էր մեղավորը:

Եվ, իրոք, իրեն մեղավոր էր զգում: Բայց ինքը երիտասարդ էր, փորձ չուներ այդքան խորը մտածելու: Երբ առիթն ունեցավ, օգտագործեց այդ առիթը: Քաջ էր ինքը, Մշո աղջիկը, սարերի աղջիկ, տաքարյուն, մի քիչ էլ կամակոր: Այդ բոլորը նա շուտ կաներ, եթե շուտ չհղիանար, դա եղավ պատճառը ուշացնելու, հետո էլ առիթն օգտագործեց՝ երկար չմտածելով, միայն թե փախչի, ու արեց և փոշմանեց:

Արդեն տասնչորս տարի է՝ անընդհատ այդ վիճակի մեջ է, շատ անգամ է ծրագրեր կազմել, բայց կարծես մեկը իրեն ասում է. «Համբերի՛ր, դեռ շուտ է, սպասի՛ր»:

Եվ այդ ձայնը իրենից ուժեղ է, սպասում է դեռ:

Համբերի՛ր, հոգի՛ս, համբերի՛ր,
Եթե պետք է, մի նահանջի՛ր
Պարզ է, որ պետք է լինի,
Միայն հարցն է ժամանակի:

Ու այսպես համբերում էր Վարդը, մեկ օր էլ չդիմացավ, այնպես հիվանդացավ, որ ժամը մեկ ուշաթափվում էր:

Առաջին անգամ, երբ դա պատահեց, Մինասն ու Արևհատը իր հետ էին: Նրանք ինչ-որ բան էին խոսում, բայց ինքը ուրիշ տեղ էր, չէր լսում, հանկարծ գլուխը պտտվեց, ու գլուխը դրեց սեղանին: Մինասը խառնվեց, մոտեցավ, բայց Վարդը գիտակցությունը կորցրել էր արդեն: Արևհատը փորձեց ուշքի բերել, աչքերը բացում էր ու նորից իրեն կորցնում: Մահճակալին պառկեցրին, բժշկին էին սպասում: Բժիշկը եկավ, անմիջապես տեղափոխեցին հիվանդանոց: Պարզ էր, մտածմունքն էր պատճառը և լավ չսնվելը: Ամբողջ թաղը կանգնեց ոտքի՝ մտածելով. «Այդ աղջիկը սնունդի պակասություն ունի»: Մեկը մտնում, մյուսը ելնում էր՝ ամեն մեկի ձեռքին մի համեղ ուտելիք, բոլորը բժիշկ էին կարծես: Տիկին Սիրունը իր վրա վերցրեց սնելու պարտականությունը: Վարդը հասկացավ, որ չնայած մենակ է ապրում, բայց ամբողջ թաղը իր ընտանիքն է:

Լուրը հասավ Ամերիկա: Սաթոն խենթացավ, ասաց. «Ես կերթամ, ինչ, Վարդ հիվանդ, իմալ մնամ հոս, կերթամ»:

Վաղինակը ժամանակ չկորցրեց, անմիջապես մորը ուղարկել ուզեց, բայց նավը մի շաբաթ հետո պիտի գար և Սալոնիկ գնար:

Առաքելը երբ լսեց աղջկա հիվանդանալը, շատ նեղվեց, ինքն էլ էր ուզում գնալ, բայց մտածեցին, որ ինքն էլ ուրիշ անգամ կգնա, ավելի լավ կլինի:

Սաթոն շատ լավ տեղ էր հասել, շատ նվերներ և մեծ գումար էր տարել, որ տվել էր Արմենակը Վարդի համար: Առաքելն ուրախ էր, որ Սաթոն կխնամի Վարդին, և լավ կլիներ, եթե կարողանար համոզեր և հետը բերեր Ամերիկա:

Սաթոն մնաց երեք ամիս Վարդի մոտ՝ Սալոնիկում: Վարդի առողջությունը շատ լավ էր, բայց, ինչպես միշտ, անդրդվելի էր.

Սաթոն համոզել չկարողացավ, որ Վարդը թողնի Սալոնիկը և հետևի իրեն:

Սաթոն վերադարձավ՝ արցունքներն աչքերին, միայն վստահ էր, որ վատ չէ: Վարդը որոշ չափով կարոտն առավ մորից, բայց այնտեղ դեռ շատ մարդիկ կային, որոնց կարոտել էր: Մոր հետ շատ խոսեց իր երեխայի մասին, Սաթենիկը հասկացավ, որ Վարդը սիրել է Քամալին և շատ է փոշմանել իր արածի համար:

***

Վարդի հիվանդանալը շատ վատ ազդեց Մինասի վրա: Երբ տեսավ Վարդի՝ աչքերը փակելը և գլուխը ուժգին սեղանի վրա դնելը, Մինասը, որ նստած էր Վարդի դիմաց և նրան էր նայում, շատ վախեցավ: Խոսում էին ինչ-որ բանի մասին, բայց խոսածը բոլորովին չէր կարող վատ ազդել որևէ մեկի վրա: Հետո, շատ հետո Վարդն ասաց, որ իրենց հետ չէր այդ ժամանակ, չէր հետևում խոսակցությանը և մտքով ուրիշ տեղ էր: Մինասը շատ լավ գիտեր, թե մտքով ուր է եղել, ոչ մի անգամ չէր ուզում խոսել, բայց իր մի արտահայտությունից Մինասը հասկացել էր, որ Վարդը Քամալին չի մոռանում, այդ նույնը զգացել էր նաև Սաթոն:

Վարդը Մինասի համար սրբություն էր, իր զգացմունքը ոչ մի անգամ փոխել չկարողացավ. սիրում էր Վարդին ու անհանգստանում. Վարդին հանկարծ բան չպատահի: Այնքան զգացմունք և սեր կար մեջը, իր սրտում, Վարդը անտեսեց և չթողեց, որ նա արտահայտվի, բայց այդ բոլորը կուտակված էր մեջը ու ծածուկ պահում էր, որ ոչ մեկը չիմանա, դա իր գաղտնիքն էր և որոշել էր պահել իր սրտում ամբողջ կյանքի ընթացքում:

Ամեն օր այցելում էր, երբ Վարդը հիվանդ էր, ժամերով նստում մոտը, խոսում տարբեր բաներից, որ զբաղեցնի, մենակ չթողնի:

Շատ կուզեր ավելի քաղցր խոսքեր ասել, շոյել, սիրել, բայց ինքը ամուսնացած էր, և կինը արդեն երեխայի էր սպասում: Նա չէր անտեսում կնոջը, սիրում էր, հոգում էր, բայց չէր պաշտում: Ինչպես կուզեր Վարդին սիրել: Ո՛չ, Վարդը ուրիշին էր սիրում, Վարդը չի կարող մոռանալ. երեխա էր նվիրել նրան, տվել էր, որ պահի, խնամի նաև: Մինասը ստիպված էր նրան միայն հարգալից վերաբերմունք ցույց տալ, ուրիշ ոչինչ անել չէր կարող:

Իր հոգում ամեն ինչը խառը վիճակում էր, ամեն ինչ միանգամից անել չէր կարող, պետք է, որ այդ բոլորը տարբերեր իրարից: Վարդին հարգանք ցույց տար, իսկ Արևհատին՝ սեր ու գուրքուրանք, որը ուժից մի քիչ չէ, շատ վեր էր, բայց կինն էր, ուներ իր արժանիքները և լիովին արժանի էր սիրո:

Մինասն այդ ամենը շատ լավ էր հասկանում, միայն ինչպես պիտի կարողանար դա անել:

Նա ուրախ էր, որ շուտով երեխա պիտի ունենա, արդեն պատրաստվում էին ամեն ինչով երեխային դիմավորելու համար:

Արևհատն իր խոսակցությունների մեջ ցույց էր տալիս, որ խղճում է Վարդին, այդ էր, որ հանդուրժել չէր կարող Մինասը:

Վարդը չէր նկատում այդ ամենը, Վարդը միշտ ուրիշ ձևով էր տեսնում այդ բոլորը, իր ձևով էր տեսնում, չէր նկատում այն, ինչն իր հոգու մեջ չէր: Մինասը գիտեր դա և ոչինչ չէր ցույց տալիս, միայն թե Վարդին միշտ հանդիպի, երբ ուզի:

Վարդի ներկայությունն ու ամեն մի խոսքն էլ իր համար քաղցր էին, ինչ էլ խոսի, միայն թե ձայնը հնչի իր ականջին, ժպիտը շուրթերին՝ թող միշտ լինի, դա էր իր ուզածը միայն:

Մինասը վատ էր տեսնում այն մարդուն, շատ կուզեր, որ ինքը լիներ այդ մարդու փոխարեն, որպեսզի Վարդը միայն իր մասին մտածեր, իրեն տեսներ: Այսքան բանը Մինասը ինչպե՞ս էր պահում իր սրտի մեջ, ինչպե՞ս կարող էր, տեսնենք որքա՞ն պիտի դիմանա այսպես լուռ:

Երբեմն լավ զգում էր, որ խենթություն է իր արածը, պետք է, որ համակերպվի, բայց անկարող էր, իր ուժերից վեր էր:

Քամալն էլ նույն զգացմունքն էր ապրել երևի. իր միակ միջոցն էր եղել փախցնելը: Կարողացել է փախցնել Վարդին, ինչպե՞ս է, որ չի կարողացել սիրտը նվաճել, մտածում էր Մինասը:

Բայց, ո՛չ, Վարդը սիրում է նրան:

Ստամբուլը Թուրքիայի ամենախոշոր քաղաքներից մեկն է, ծովեզրյա քաղաքը գտնվում է Մարմարա ծովի և Բոսֆորի նեղուցի շրջանում: Բոսֆորի նեղուցի որոշ մասը կազմում է Ոսկեղջյուրը՝ ընդգրկելով նաև Մարմարա ծովի մի մասը: Շրջապատված է բլուրներով, որոնց վրա կառուցված են հիանալի շինություններ: Այս քաղաքը կառուցված է երկու աշխարհամասերի վրա՝ Եվրոպայի և Ասիայի:

Գլխավոր քաղաքը՝ կենտրոնը, Եվրոպայում է գտնվում: Ստամբուլը հարում է նաև Սև ծովին և Միջերկրականին: Խոշոր նավահանգիստ է, արդյունաբերական և առևտրական խոշոր քաղաք: Այստեղ զարգացած է թեթև արդյունաբերությունը՝ տեքստիլի, կավի: Կա նաև ծանր արդյունաբերություն՝ ավտոհավաքման, փայտաշինական գործարաններ և այլն...

Ունեն շատ կրթական օջախներ՝ համալսարաններ, առևտրի ակադեմիա, կոնսերվատորիա, գրադարաններ, թանգարաններ, օպերա, թատրոններ: Այնտեղ տարբերվում է հին քաղաքը և նոր քաղաքը: Հին քաղաքը՝ նեղ փողոցներով և մզկիթներով, ներկայացնում է միջնադարը, նորը բոլորովին ուրիշ տեսք ունի՝ վիլլաներով, բարձրահարկ շենքերով: Բոսֆորի շրջապատի բլուրները ծածկված են հիանալի շենքերով, ապարանքներով, որոնք ունեն հիանասքանչ տեսարան՝ ծովը:

***

Այստեղ՝ Բոսֆորին շատ մոտիկ, մի բարձրահարկ շենքի երկրորդ հարկում, Քամալը մեծ բնակարան էր վարձել իր

ընտանիքի համար: Մայրը, ինքն ու Մուրադը արդեն հինգ տարի է, որ այստեղ են ապրում: Մուրադը շարունակում է սովորել բարձր դպրոցում, հատկապես ուշադրություն դարձնելով անգլերենի ուսուցմանը:

Քամալը հինգ տարի էր՝ արդեն նույն պաշտոնին էր, չէր ուզում փոխել աշխատանքը. կարիք չուներ ավելի բարձրանալու: Կառավարության մեջ մտնելը իրեն չէր հետաքրքրում, ավելի արդյունավետ էր համարում իր այդտեղ մնալը: Մենք գիտենք, թե ինչու: Հայերը գոհ էին իրենից, երախտապարտ էին՝ առանց իմանալու նրա ստույգ նպատակը՝ օգտակար լինել հայերին, ուրիշ ոչինչ: Իր գրասենյակով անցնում էին հայերը, այլևս ոչ մի դժվարություն չունեին նրանք:

***

Երեկոյան Քամալը մտավ տուն հոգնած, այդ օրը այնքան մարդու հետ էր գործ ունեցել, տարբեր ազգությունների՝ անձնագրերի, վիզաների գործով և հոգնել էր: Երբ ներս մտավ, նկատեց, որ մայրը տխուր նստած է, իսկ տղան երեսը նայել չի ուզում:

Անմիջապես զգաց, որ մի բան կա, մոտեցավ տղային, ուզեց համբուրել, Մուրադը երեսը թեքեց, չուզեց համբույրը: Քամալը դեռ այդպիսի բանի չէր հանդիպել, կանգնած մնաց ու հարցական նայեց մորը: Մայրը ոչինչ չասեց, լուռ նայում էր, թե ինչ է լինելու վերջը:

Մինչև հորը գալը տատի հետ խոսելուց հետո Մուրադը լուռ նայում էր մոր նկարին՝ նստած նկարի դիմացի պատի տակ:

Ինչ սեր, ինչ կարոտ, ինչ անհամբերություն էր մտել մեջը: Այդքան տարիներ համարձակություն չի ունեցել արտահայտվելու, հարցնել չի ուզել, որ իր հայրը չհուզվի վերհիշելով: Քանի

որ տեսել էր, թե հայրն ինչպես բերեց կնոջ նկարը, կախեց հարմար տեղում, որ ամեն րոպե աչքի դիմաց լինի:

Հիմա ինքն էր նստել հոր տեղը և տեսնում էր, թե ինչ լավ է երևում այդտեղից:

Բայց այսօր պետք է իմանա ճշմարտությունը անպայման, ինչ գնով էլ լինի, մոր կարիք ունի. ինքը չի դիմանում: Երբ հայրը ներս մտավ, սրտի զարկերն արագացան. սպասում էին երկու ժամից ի վեր այդ վերադարձին:

Մուրադը սիրում էր հորը, բարձր էր, ամեն ինչից վեր, գուրգուրել էր իրեն, զուրկ չէր թողել ոչ մի բանից, լավ խոսակից, լավ խորհրդատու էր եղել, բայց ոչ մի անգամ մոր մասին չէր խոսել իր հետ: Ինչն էր պատճառը: Այսօր դա պետք է իմանա, ինչից էր նա վրդովված, որ ոչ մի անգամ անունը տալ չուզեց իր մոտ:

Մուրադը խարխափում էր կասկածների մեջ. «Արդյոք ես մայր չեմ ունեցել, արդյոք որդեգրել է ինձ և մորս չի ճանաչել երբեք: Տատս մի անուն տվեց՝ Վարդ, երևի ինձ հանգստացնելու համար, հետո էլ հորինեցին, որ փախավ, գնաց- չեկավ, ոչ մի պատճառաբանություն: Մինչև երբ ինձ երեխայի տեղ պիտի դնեն, այսօր բոլորը պետք է իմանամ»:

Հայրը մոտեցավ տղային, նստեց մոտը դրած աթոռին, ու ժպտալով ասաց.

- Դու ինչու՞ ես նստել իմ տեղը:

- Ես էլ կուզեմ լավ նայել իմ մոր նկարին, այստեղից լավ է երևում, չէ՞, պապա՛: Հետո, շեղ նայելով հորը, ասաց.-ես նեղված եմ, պապա՛, ես ուզում եմ իմանալ, թե ո՞վ է եղել իմ մայրը, ինչու՞ չկա ինքը, ինչու՞ ես առանց մայր եմ մեծացել: Ուզում եմ իմանալ, թե որտեղ է և իր տանից գնալու պատճառը նաև: Ու խիստ հայացքով նայեց հորը՝ ասելով, որ այլևս չի խաբվելու ինքը, արդեն մեծ տղա է և զինվորականի տղա է վերջիվերջո:

Հայրը նահանջելու տեղ չուներ, բայց ինչպես բացատրի և որտեղից սկսի, որ քիչ խոսի ու բավարարի դիմացինին, որ այդքան խիստ խոսեց՝ իրեն համարելով զինվորականի որդի: Ինքը զինվորականի քաջություն պիտի ունենար արդյոք՝ այդ հարցադրումներին ճշգրիտ պատասխանելու:

Կյանքում ոչ մի անգամ այդքան խիստ պայմանների մեջ չէր ընկել ու ուշացնում էր իր պատասխանը, երբ տղան ասաց.

- Պապա, իմ մայրս հայ է, թե՞ ոչ:

Քամալ, այդ հարցին ինչ պիտի պատասխանես, ասա: Քամալը լռեց:

- Պապա, հարց տվեցի քեզ, պատասխանի՛ր, իմ մայրը՝ Վարդը, հայ է, թե՞ չէ:

- Քեզ ո՞վ է այդ...

- Պապա, իմ ընկերը դպրոցի ասաց, որ Վարդը հայկական անուն է, ճի՞շտ է, թե՞ ոչ, թուրքը ինչ գործ ունի, որ իր աղջկա անունը Վսրդ դնի, ասա, պապա:

Քամալը ուրիշ ոչինչ չէր կարող պատասխանել.

- Այո՛, քո մայրը հայ էր:

- Ինչ, ասա, իմ մայրս մեռե՞լ է, ինչո՞ւ ես ասում, որ հայ էր, չկա՞ հիմա, ասա՛:

- Չգիտեմ, Մուրադ, չգիտեմ, չեմ կարող ասել:

- Ինչպես եղավ, որ հայ առար, դու թուրք ես, չէ՞:

- Տղա՛ս, լսի՛ր, ինչ որ ասում եմ, ճշմարտություն է, որ հայ է մայրդ, բայց ոչ մեկը չպետք է իմանա այդ մասին, իմացի՛ր, որ մենք բոլորս էլ վտանգի մեջ կլինենք, եթե իմացվի: Ես քեզ խոստանում եմ, որ կգտնեմ մորդ, եթե ողջ է: Ես փնտրում եմ իրեն՝ արդեն քանի՞ տարի է, ու դեռ պիտի փնտրեմ այնքան, մինչև գտնեմ: Էլ ուրիշ բան չեմ կարող քեզ ասել, մեր գաղտնիքն է, չէ՞, զինվորականի գաղտնիք:

Մուրադը չբավարարվեց, բայց հավատում էր հորը, գիտեր, որ խոսքի տեր մարդ էր, դեռ ոչ մի խոսքին չէր կասկածել մինչև հիմա, պիտի անի, թե ինչպես կանի, դա իր գործն է:

Հայրը գրկեց տղային, հանգստացրեց, համբուրեց, բայց հազիվ կարողացավ իր արցունքները զսպել, ոչ մեկը չգիտեր, թե ինչ է զգում իր սրտում ինքը, որքան էր սիրում և կարոտում այդ Վարդին:

Ինչպես էին տղայի մեջ հասունացել այդ հարցերը և որքա՞ն ժամանակ, բայց այսօր նա չկարողացավ լրիվ պատասխաններն ստանալ:

Միայն իմացավ, որ մայրը՝ Վարդը, հայ է:

Բայց հայը թուրքին ինչպես առավ, այդ շատ էր ուզում հասկանալ: Լսել էր շատ դեպքեր, տղաները խոսում էին իրար մեջ դրսում, դպրոցում:

Մի երեկո հայրը Մուրադին ուզեց դուրս հանի՝ մտքերը ցրելու նպատակով, գնացին Ստամբուլի ամենալավ կինոթատրոնը՝ ֆիլմ նայելու:

Գյուլվարդը քարացած նստած էր, լուռ լսում էր հարցերը Մուրադի ու մտածում, որ ինչ լավ էր, որ այդ հարցերը իրեն չէին ուղղված, թե չէ, ինչ պիտի պատասխաներ: Ինքը մի հարցին չկարողացավ պատասխանել ու անհանգստացավ նաև, թե տղան ինչպես պիտի պատասխանի, իրենք մեղավոր էին, արդարանալու տեղ չունեին:

Երբ Գյուլվարդը մենակ մնաց, աղոթեց Աստծուն՝ խնդրելով նրանից անկարելին՝ Վարդի վերադարձը:

Գիշեր-ցերեկ մտքից դուրս չէր գալիս, մտածում էր՝ ինչո՞ւ թողեց, որ Վարդը գնար, ինչո՞ւ ճիշտը չասաց իրեն, ինչո՞ւ համաձայնեց երեխային նայել: Ինչո՞ւ չասաց՝ մի՛ գնա, մենք հայ ենք: Ինչո՞ւ, ինչո՞ւ... անընդհատ ինչո՞ւ:

Բայց դա էլ պատճառ ուներ, Վարդը չէր մնա, քանի որ ծնողները գնացել էին, քանի որ ծնողներն իր երեխային գուցե չընդունեին: Նա որոշել էր, գնալու էր, մշեցու աղջիկ էր, ինքը թուրքից էր փախչում: Եվ պատճառները շատ էին...

Գյուլվարդը իրեն մեղավոր էր զգում, բայց, իրոք, ո՞վ էր մեղավորը: Ամենամեծ մեղավորը թուրքն էր, որ այս անմեղ մարդկանց պահել էր ահի ու վախի մեջ, ստիպել, որ թաքնվեն, թաքցնեն ճիշտը ու ստիպում էր, որ միշտ ստի մեջ ապրեն, ինչ անեն, կյանքը թանկ էր: Բայց ինչ եղավ այդ թանկ կյանքը: Այդ թանկ կյանքերի հիշատակը միշտ պիտի ողբանք ու թանկ պահենք մեր հիշողության մեջ:

Վարդը արդյոք ողջ մնաց, գնաց, ո՞ւր գնաց արդյոք, հանդիպե՞ց ծնողներին, թե՞ հանդիպեց մարդասպանների, ո՞ր ճամփով գնաց արդյոք:

- Ա՛խ, Աստված, երանի՛ ողջ պահած լիներիր, մեղք են և՛ ինքը, և՛ իր Մուրադը: Դեռ չգիտեր իր՝ Քամալի սիրո մեծությունը, դեռ երբեք չէր խոսել մորը:

***

Գյուլվարդը ինչպե՞ս էր դիմացել, ամբողջ կյանքում չունեցավ ո՛չ ընկերուհի, ո՛չ հարևանուհի, որին կարողանար սրտանց մոտենար, գնար, գար, հարաբերվեր: Միշտ մենակ, շատ անգամ մտածում էր, որ մի օր խոսելը պիտի մոռանա, այնքան չէր խոսել:

Երբ խոսեր, պետք է բառերը քններ, նոր խոսեր, որ սխալմամբ ավելորդ բան չասի:

Մեծ գաղտնիք ունեին պահելու: Հիմա Մուրադն էլ գաղտնիք ունի պահելու:

Քամալը ոչ մի անգամ մորը չէր խոսել Վարդի հանդեպ իր զգացմունքների մասին, գաղտնի էր պահում, բայց մինչև ե՞րբ:

Մարդը որքա՞ն կարող է գաղտնապահ լինել, երբ չի կարող սուտ խոսել, գաղտնի է պահում:

Այս դեպքից հետո, մի օր, երբ Մուրադը դեռ դպրոցից չէր վերադարձել, Քամալը շուտ էր դուրս եկել գործից, տուն մտնելով՝ որոշեց խոսել մոր հետ.

- Աննե՛մ, ես էլ կուզեմ իմանալ քո գաղտնիքը, մինչև հիմա ոչինչ չեմ հարցրել, իմ տղան ինձ սովորեցրեց, որ ես էլ կարող եմ հարցեր տալ քեզ: Կուզեմ շատ բաներ իմանալ, մայրս, խնդրում եմ՝ ինձ ասես ինչ որ գիտես, ամեն ինչ, դու լավ մայր ես եղել ինձ համար, չես խոսել, որ ինձ չվշտացնես, բայց դու քո մասին երբեք չես մտածել: Ես գիտեմ ինչ է գաղտնիք պահելը, կուզեմ՝ դու ազատվես դրանից, մենք գոնե իրարից գաղտնիք չպահենք: Ասա՛, մայր ինչպե՞ս եղավ, որ դու ամուսնացար հորս հետ:

***

Գյուլվարդը սկսեց պատմել, թե Օրհանի և իր ծնողներին ինչպես են սպանել թուրքերը, և երկուսն էլ մեծացել են անտեր՝ սրա-նրա ավելցուկ հացն ուտելով, սրան-նրան ծառայություն անելով: Երբ տասնվեց տարեկան են դառնում որոշում են հեռանալ գյուղից: Իրար ձեռք բռնած՝ շատ երկար ժամանակ քայլում են ու շատ հեռանում գյուղից, որ մարդ չճանաչի իրենց: Մի քանի օրից հետո հասնում են այս թուրքի գյուղին, այստեղ ներկայանում են որպես թուրք ու մնում են այստեղ: Այստեղ էլ Քամալն է ծնվում:

- Հայրդ ամեն ինչ անում էր, որ ապագա ունենաս, որ ուսում ստանաս: Բայց տեսա՞ր, որ հորդ, միևնույնն է, թուրքերը վերացրին, պատճառն էլ չիմացանք, փոքր վեճից ընդամենը: Մարդ չի հասկանում՝ դրանց ձեռքը միշտ այրան մեջ պիտի լինի, հորդ

այնպես էին խփել, որ շատ էր ազդվել, հիվանդացավ ու չլավացավ այլևս:

Շատ լավ մարդ էր հայրդ: Ինքն անտեր էր, ինձ էլ որ տեսավ՝ այդ վիճակի մեջ ջահել աղջիկ, ասաց. «Գյուլվարդ, արի՛ գնանք, ես քեզ անտեր չեմ թողնի»: Ես էլ հավատացի իրեն, գնացի հետը: Ու ամբողջ կյանքում թուրք ապրեցի, հոգնել եմ արդեն՝ պահվելով անվերջ,- ու լաց եղավ:

Քամալը գրկեց մորը, ասաց. «Ես պիտի հանեմ քեզ այդ վիճակից, աննեմ»:

Մայրը հասկացավ, որ տղան մի բան մտածում է անել, որովհետև և՛ Մուրադին խոստացավ, և՛ իրեն:

Չուզեց խորանալ, չէր ուզում ավելի տղայի սիրտը նեղել, գիտեր, որ նա էլ շատ կուզեր խոսել, իր սրտի նեղությունը թափել: Թող խոսի, երբ հարմար գտնի:

Մուրադն էլ հանգստացավ. հայրն իրեն խոստացել էր մորը գտնել: Հավատում է հորը, որովհետև կարողություն ուներ, բայց հասկանում էր, որ այդ շատ զգույշ պիտի արվի, և շատ ժամանակ է պետք: Ո՞ւր է արդյոք, այնքան հայ է մեռել, հաշիվ չկա, դուրս է եկել տանից, ինքն էլ ջահել...

***

- Մինա՛ս, ինչո՞ւ պատասխան չունեմ դեռ քո կարծիքով, ինձ ասացին, որ մեկ տարվա ընթացքում կունենամ հունական քաղաքացիություն, ինչո՞ւ պիտի այսքան ուշանար:

Տարուց ավելի է, որ Վարդը դիմել էր հպատակություն ստանալու համար, դեռ պատասխան չուներ: Ուզում էր ստանալ. նպատակ ուներ: Եթե ստանար, կարող էր ճամփորդել, նպատակն էր գնալ երկիր՝ իր Մուրադին տեսնելու համար, այլևս սպասել չէր կարող:

Մտածում էր գնալ Մուշ ու այնտեղից գտներ նրանց, եթե դեռ այնտեղ են: Այն ժամանակ արդեն Քամալը մտադիր էր այդ գյուղից դուրս գալ, բայց ուր էր մտածում գնալ՝ չէր ասել:

Պարզ էր, որ այդ գյուղում չպիտի մնար ամբողջ կյանքում, դեռ նոր էր ավարտել և նոր գործի էր անցել:

Այդպես խոսում էր Մինասի հետ, նա էլ հուսադրում էր, չէր ուզում, որ Վարդը շատ մտածի:

Որքան Վարդը խոսում էր այդ մասին, Մինասը տեսնում էր, որ Վարդը հեռանում էր իրենից:

Երբեմն բնական էր համարում, երբեմն էլ իրեն կորած էր տեսնում, չէր հաշտվում այդ մտքի հետ: Եսասիրություն կար մեջը, և դա ինքն էլ գիտեր: Ամուսնացել էր, կին ուներ, աղջիկն արդեն մեկ տարեկան էր, բայց միտքն ուրիշ տեղ էր: Ինքն իրեն մեղադրում էր և փորձում էր իրեն ղեկավարել, որ ցույց չտա, բայց իր սրտից ջնջել չէր կարողանում:

Պիտի դրա համար պայքարել, բայց ինչ կարող էր անել ինքը, իրենը պլատոնիկ սերն էր ու սիրտը մաշում էր: Հույս ուներ, որ մի օր կփոխվի այս ամենը:

Արևհատը ոչինչ չգիտեր, իրեն լավ էր զգում: Ամուսին ուներ, երեխա ուներ, զբաղմունք ուներ, ծնողները կային, ամեն ինչով ապահով էր: Շատ էր սիրում Մինասին:

Երբ Մինասը թողեց գյուղը իր հորաքրոջ խորհրդով, շատ երիտասարդ էր: Իր ընկերների հետ մեծ դժվարությամբ կարողացել է հասնել Հունաստան: Իրեն խորհուրդ տվեցին մնալ այստեղ: Մնացած ընկերները գնացին Ամերիկա մի նավով: Մինասը փող չուներ այդքան, նաև հեռու էր թվում իրեն, դրա համար չուզեց գնալ: Մյուսներն էլ փող չունեին, բայց գաղտագողի պիտի գնային, երիտասարդ էին, մի կերպ կհասնեին: Մինասը իր ունեցած փողը չուզեց ծախսել՝ մտա-

ծելով, որ իրեն դեռ պետք էր գալու: Իրեն խորհուրդ տվեցին Սալոնիկ գնալու, մեծ քաղաք է, արդյունաբերական գործարաններ կան, մի գործ, ինչ էլ լինի, կգտնի:

Սալոնիկում դպրոց գնաց լեզուն սովորելու համար:

Արդեն գրագետ էր ինքը, իրեն միայն լեզու էր պետք սովորել: Այնուհետև աշխատանք գտավ իր համար ու միշտ էլ ղեկավար աշխատանք:

Մինչև Վարդի հետ հանդիպելը ոչ մի կին ընկեր չուներ. դա նորություն էր իր համար, միշտ տղամարդկանց հետ է առնչվել, հետո Արևհատին ծանոթացավ, այնուհետև մտավ ընտանիքների շրջապատը: Միշտ մենակ էր եղել, ամեն ինչում մենակ, կյանքը՝ տաղտկալի իր համար:

Այդ սրճարանն իր զվարճանքի վայրն էր: Այնտեղ ծանոթանում էր, ասում, խոսում ու գնում տունը պառկելու միայն. դա էր իր կյանքը:

Վարդը որոշ չափով փոխել էր ապրելակերպը:

Ուզեց Վարդին, բայց մերժվեց: Վարդը խիստ չմերժեց իրեն, հասկացրեց, որ իրենց ամուսնությունը հնարավոր չէր: Հետո, ինչպես գիտենք, Վարդի կյանքը իրեն պարզ եղավ. Վարդը պիտի գնար Ամերիկա և իր պատճառով նավից ուշացավ:

***

Առաքելն ու Սաթոն ամեն օր երկար խոսում էին Վարդի հետ: Վարդի վիճակը բոլորովին դուր չեկավ մորը, երեք ամիս մնաց Սալոնիկում: Որքան հասկացավ, Վարդը գնալով ավելի էր խրվում ու կարոտին չէր դիմանում: Կարոտյալ հիվանդ էր հոգեպես: Անընդհատ պլանավորում էր գնալ տղային գտնելու, տեսնելու: Արդեն չգիտեր՝ ինչ կարող էր անել, որ հասնի իր Մուրադին:

Նույնը զգում էր Առաքելը, նա էլ նույն վիճակում էր: Առաքելն ուզեց միասին գնալ, այսպես ավելի հեշտությամբ կգտնեն, և Վարդը մենակ չի մնա Թուրքիայում:

Պայմանավորվեցին նամակով, երբ Վարդն ստացավ իր հպատակությունը, Ստամբուլում հանդիպման օրը ստույգ որոշեցին:

Արդեն լավ ծանոթ էին այդ քաղաքին ու հանդիպելուց հետո միասին կշարունակեն ճանապարհը: Այդպես էլ արեցին:

Վարդը, երբ ստացավ Վաղինակի նամակը, որի մեջ գրված էի իր հոր մտադրությունը, անչափ ուրախացավ:

Պարզվեց, որ Առաքելի նավը Ստամբուլ պիտի հասներ տասնհինգ օր առաջ, քան Սալոնիկից եկող նավը, որով Վարդը պիտի գնար:

Վարդը կարծես կյանքի էր գալիս՝ հաշվի չառնելով երկմտանքը. մեծ հույսեր էր փայփայում տեսնել իր Մուրադին, ցույց տալ իր սերը, ներողություն խնդրել իր արած սխալի համար, պատճառաբանել, եթե կարողանար արդարանալ: Պատրաստվում էր այդ հանդիպմանը: Մինասի հետ մի քանի գնումներ արեցին: Ուզեց, որ Մինասը օգնի իրեն՝ մտածելով, որ ավելի լավ գիտի՝ ինչ կարող է սիրել տղան:

Առաքելը նմանապես այդ վիճակի մեջ էր, Վարդին տեսնելու համար հոգին էլ կտար, այնքան կարոտել էր: Այն օրից ի վեր, երբ նավը հեռացավ նավամատույցից, Առաքելի աչքերը մինչև օրս փնտրում էին Վարդին: Կարծես իր սրտի մի մասը մնաց հեռացող այն ափին:

Հարցնենք Մինասին, թե ինչ է զգում ինքը: Ինչ կամքի ուժով և համբերատար է ծառայում Վարդին, ընդունում ամեն մի միտքը, հուզումը, ցանկությունը, լսում քաղցր խոսքերը՝ նվիրված իր Մուրադին:

Տեսնում ուրախությունը, ցանկությունը, նվիրվածությունը: Թե ինչպես է շոյում իր հանդիպման րոպեն, մոր գուրգուրանքը, իր երևակայության գեղեցկությունը իր պատկերացրած զավակի նկատմամբ: Այս բոլորը շատ գեղեցիկ էր, բայց և հուզում էին Մինասին և մտատանջում՝ իրեն տեսնելով շա՛տ հեռու, լքված, խեղճ, նետված մի կողմի վրա, ու սիրտն իր օր օրի մաշվում էր:

Ուշ հանդիպեց Մինասը, ուշ սիրեց Մինասը:

Վարդն ինքը չէր ընտրել նրան, բայց Վարդն ազատ չէր, Վարդը կապված էր այդ մեկին: Վարդի սիրտը ուրիշին էր պատկանում, և Վարդն էլ չգիտեր, թե որքան է սիրում այդ մեկին: Այս բոլորը Մինասը լավ գիտեր, սիրտն իր վկայում էր, որքան էլ որ անունը չէր տալիս Վարդը, բայց պարզ էր, որ սիրում էր նրան՝ Քամալին:

***

Մինասը հաճախ այցելում էր իր հորաքրոջը, հատկապես, երբ տխուր պահեր էր ունենում:

Հորաքույրը փոքր ժամանակից ճանաչում էր Մինասին. ամեն ինչ սրտին մոտ էր ընդունում Մինասը, բայց ոչ մի անգամ չէր արտահայտվում:

Երբ զգում էր, որ Մինասը նեղություն ունի, որ արտահայտվում էր դեմքին նաև, հորաքույրն ասում էր. «Մինա՛ս, տղա՛ս, մի բան կա՞ քեզ նեղող, ըսե՛ տեսնամ, մի՛ պահեր»: Բայց միշտ լսում էր նույն պատասխանը. «Ոչինչ չկա, կյանք է, ոչինչ, կանցնի»: Սա կյանք է, կանցնի, ո՞վ չգիտի, որ պիտի կյանքը անցնի, բայց ինչ ձևով պիտի անցնի: Հաջորդ պահին մտածում էր. «Հորաքույրը ինչ պիտի անի, եթե ես չեմ կարող ինձ ղեկավարել»: Միշտ իրեն մեղադրում էր ու անմիջապես խոսակցությունը փոխում:

Հորաքրոջ որդիները՝ Սամսոնն ու Սերոբը, հիանալի տղաներ էին: Շատ էին խորհրդակցում Մինասի հետ. նրանք առևտրի մեջ էին և լավ շահում էին իրենց կյանքը:

Շատ անգամ Մինասին հրավիրվում էին հորաքրոջը տուն՝ ճաշելու: Գոհարը շատ էր սիրում Մինասի փոքրիկ աղջկան՝ Մերիին. սիրունիկ աղջիկ էր, արդեն քայլում էր ու որոշ չափով խոսում էր նաև: Մինասը գրկում էր ու ասում. «Իմ հրեշտակն է, հորաքո՛ւյր, տե՛ս՝ ինչ գեղեցիկ է, իրոք գովելի է»: Նա էլ գրկում էր հոր պարանոցը, սեղմում իր բարալիկ թևիկներով, ջերմացնում հոր սիրտը՝ կարծես ասելու համար. «Պապա՛, ես կամ, ես այստեղ եմ, դու ո՛ւր ես, ի՛նձ սիրիր, ի՛նձ նայիր»:

Մինասը խելացի տղա էր, այդպես էր մտածում միշտ, երբ երեխան իր գրկում էր, բայց իր ուժերից վեր մի ուրիշ սեր կար, որ իր միջից քաշում, տանում էր հոգին:

Փոքրիկ Մերին երջանկացրել էր նաև Արևհատի ծնողներին: Միշտ Մերիին տանում, պահում էին, նվերներով ուրախացնում էին նրան, խաղալիքներով լցրել էին ամբողջ սենյակը: Սիրում էր քեռուն՝ Երվանդին, գրկից չէր իջնում, անում էր ամեն ինչ, որ իրեն սիրեն: Երջանիկ մանկություն էր, երբ մեծերը հիշում էին իրենց անցկացրած մանկությունը, ակնհայտ տեսնում էին տարբերությունը: Ինչ ունեին հիշելու իրենց մանկությունից: Մտածում էի, որ ամեն ծնող երջանիկ է իր երեխայի երջանկությամբ, ջանում էին այդ ժամանակ մոռանալ իրենց մանկությունը:

Երիտասարդներն ամեն երեկո գնում էին սրճարան, նստում, զրուցում, սուրճ խմում, հետո վերադառնում տուն. զբաղմունք է իրենց համար:

Այսպես շարունակ օրերն ու տարիներն անցնում էին, գնում, ամեն մի փոքր բանից իրենց երջանիկ էին զգում:

***

Վարդը շատ դյուրագրգիռ էր դարձել, ամեն մի փոքր նեղությունը առիթ էր տալիս լաց լինելու: Անհամբեր էր դարձել, որքան օրերը մոտենում էին գնալու, այնքան հեռու էին թվում իրեն: Լիովին պատրաստ էր, տոմսը՝ գնված, մնում էր ճամպրուկները դասավորել միայն:

Մինասը ամեն ինչով ցույց էր տալիս իր օգնությունը, որ չնեղվի Վարդը, բայց Վարդը նեղված էր, կարծես նախազգում էր, որ չի գտնելու իր որդուն:

Իր նավը ավելի ուշ պիտի հասներ Ստամբուլ, հայրը պիտի սպասեր իրեն: Մտածում էր հոր մասին, որ իրենից տասնհինգ օր առաջ պիտի հասներ: Դեռ շատ ժամանակ կար, որ նավ նստեր, մենակ ինչ պիտի անի. այդ բոլորը իրեն հուսահատեցնում էին:

Հարցեր էր տալիս Մինասին, նա էլ բացատրում էր համբերատար:

Մինասը մտածում էր ինքն էլ իր հարցերի մասին: Ուզում էր, որ Վարդը գտնի իր տղային, թեկուզ իր ամուսնուն: Շատ բարի էր, գլխավոր նպատակն էր միայն, որ Վարդը չնեղվի, Վարդը չլացի, Վարդը լավ զգա իրեն, ինքը՝ ոչինչ: Վարդի խրախուսողն էր, Վարդի ընկերն էր ու հենարանը: Կարող էր լիովին հույսը դնել իր վրա:

Վարդը պատկերացում չուներ նույնիսկ, թե ինքն ինչ էր Մինասի համար, միայն գիտեր, որ օգնում է իրեն քանի որ մենակ է, ընտանիք չունի և օգնության կարիք ունի ինքը: Իրոք, այդպես էր երևում արտաքուստ, բայց եթե Մինասի սիրտը բացելու լիներին, ինչեր կտեսնենք, որ, իրոք, չեն երևում: Մինասը իսկապես սիրում էր, այն էլ հիվանդագին:

***

Լոս Անջելեսի նավահանգիստն էր: Վաղ առավոտյան Առաքելը, Վաղինակը և Արմենակը կանգնած էին նավամատույցի գրասենյակներից մեկի դիմաց:

Առաքելը պետք է հաստատեր, որ ներկա է: Նավամատույցում կանգնելու տեղ չկար, այնքան մարդ կար, բոլորը սպասում էին նավ բարձրանալու ժամին: Վաղինակը խորհուրդներ էր տալիս հորը, վախենում էր, արդեն մի անգամ տեսել էր նրա հուզմունքը: Պետք է Վարդին հանդիպեր, հետո ճամփա պիտի գնային, հուզումները կարող էին ազդել: Առաքելը վստահեցնում էր, բայց այդքան էլ հավաստի չէր խոսքը:

Եկավ ժամը, Առաքելը համբուրեց Վաղինակին և Արմենակին, թողնելով նրանց՝ կամաց առաջացավ դեպի կամրջակը՝ երբեմն հետ դառնալով, ձեռքով նորից նշան անելով, որ լավ է:

Նավը դեռ երկար կանգնեց, որ բոլոր ուղևորները բարձրանան, իր հատուկ ժամին պիտի խարիսխը բարձրացներ գնալու համար:

Առաքելն այդքան ժամանակ կանգնած մնաց, նավի կողքին հենված՝ նայում էր ներքևում գտնվող մարդկանց, բայց չէր տեսնում այլևս Վաղինակին: Ներքևում կանգնածները՝ բոլորն էլ, ձեռքերը վեր պարզած, բարի ճանապարհ էին մաղթում գնացող իրենց հարազատներին:

Օրը արևոտ էր, տաք ծովը փայլում էր: Արևի ճառագայթները հազար կայծեր էին նետում ջրի մանրիկ ալյակների վրա: Այնքան գեղեցիկ էր ծովը:

Նավի շեփորը հնչեց, հսկա նավը շարժվեց: Նավը հեռացավ մատույցից, ուղղվեց ու ճամփա բռնեց, շարժվեց:

Վաղինակը, արցունքն աչքերին, ձեռքը գցեց Արմենակի ուսին, հեռացան, երբ արդեն նավը ահագին հեռացել էր ու շուտով պիտի անհետանար ծովի մակերևույթից հորիզոնում:

Առաքելը գնաց՝ սիրտն օդի մեջ, կարոտն էլ սրտում: Քանի օր ճամփա պիտի գնար ու անմիջապես չպիտի հանդիպեր Վարդին, տասնհինգ օր պիտի համբերեր մինչև տեսնելը:

Առաքելը կանգնած մնաց երկար, նավը հեռացավ այնքան, որ այլևս միայն ծովն էր և երկինքը: Հանկարծ մտածեց, որ պետք է իր տեղը գտնի, թե ուր պիտի մնա այդքան օրը: Նայեց կողքերը մարդ չկար, մենակ էր մնացել: Ո՞ւր պիտի գնար, ո՞ւմ պիտի հարցներ, ով կարող էր իրեն պատասխանել, ինչ լեզվով պիտի խոսեր:

Ձեռքին մի թուղթ ուներ, որը տվել էր Վաղինակը, որի վրա համար կար, իր խցիկի համարը:

Առաքելը քայլում էր տախտակամածի վրա, առաջանում, մեկին տեսավ, ձեռքով արեց՝ ձայնը բարձրացնելով: Մարդը, իրեն տեսնելով, մոտեցավ, գլխով բարևեց, նկատելով թուղթը՝ ձեռքից վերցրեց ու նշան արեց իրեն հետևել: Մարդը նավի աշխատողներից մեկն էր, գիտեր ինչպես հասկացներ օտարականներին:

Առաքելը արագ հետևեց այդ մարդուն: Ինքն ազատ էր, բեռները իրենից շուտ գնացել էին, բայց որտեղ՝ ինքը տեղյակ չէր: Մարդը նրան տարավ ճիշտ սենյակի առաջ՝ դռան դիմաց կանգնեցրեց, դուռը ծեծեց, բացեց ու ցույց տվեց իր տեղը, խոնարհեց գլուխը ու հեռացավ:

Առաքելը տեսավ, որ մենակ չէր, մեկը կար արդեն, իրենից շուտ տեղավորված այնտեղ:

Բարևեց անգլերենով, նստեց մահճակալին, կողքերը նայեց, տեսավ, որ ճամպրուկներն այնտեղ են:

Ուրախացավ թեթևացած, հանգիստ նստեց:

Դիմացի մարդը պայուսակից ինչ- որ բան էր ուզում հանել, թվում է, թե ժամանակն էր ուզում շահել ու անիմաստ փնտրում էր մի բան, որը չգտավ:

Այդ ժամանակ Առաքելը մտածում էր, թե ինչ պիտի անի այդ մարդու հետ. «Ես ինչպե՞ս պիտի խոսեմ այդ մարդու հետ, որ օրս անցնի, թե ոչ, քանի օր մենակ իրար երես պիտի նայինք»:

Հայը առանց խոսել ինչ պիտի անի: Որոշ ժամանակ հետո մարդը գլուխը բարձրացրեց ու ոչինչ էլ չկարողացավ հանել պայուսակից, նստեց ու անմիտ նայեց Առաքելին:

Առաքելը մի քանի նախադասություն սովորել էր անգլերեն՝ ամերիկյան առոգանությամբ, ուզեց լռությունը վերացնել, խոսեց:

Մարդը հանկարծակիի եկավ, նայեց: Առաքելը շարունակեց հարցնել անունը, ինչ ազգի է, հո՞ւյն, նորից պատասխան չկար: Առաքելը տեսավ, որ չի կարող հասկացնել, սկսեց հայերեն խոսել, մտածելով՝ մեկ է, չի հասկանում ասածը, «Ինչ եմ ինձ կոտորում անգլերեն խոսելու, որ չի հասկանում, հայերեն էլ չի հասկանա, հայերեն խոսեմ՝ ինձ համար ավելի հեշտ կլինի գոնե»:

Այս անգամ տեսավ, որ հայերենը հասկացավ: Մարդն ասաց. «Այդ լեզուն գիտեմ, մարդ Աստծո, շո՛ւտ խոսեիր, որ բան հասկնայի»:

Սկսեցին ծիծաղել, ուրախանալ, իրար բարևեցին, նույնիսկ համբուրվեցին: Առաքելի ուրախությանը չափ չկար, ծանոթացան, անունը Մխիթար էր, ապրում էր Լոս Անջելեսում, ընտանիք ունի, տասը տարի է, որ այնտեղ է և ուրիշ բարեկամ չունի:

Այդքանը հապճեպ բացատրեց մարդը անմիջապես ծանոթանալու համար:

Առաքելը ավելին չխոսեց, դեռ շատ ժամանակ ունեին բացատրվելու, թե չէ ինչ պիտի անեին այդքան ժամանակը նավի վրա:

Առավոտը շուտ եկել էին նավահանգիստ, արդեն ժամը ցերեկվա երեքն էր, դեռ ոչինչ չէին կերել, մտածեցին ուտելու մասին, որոշեցին գտնել ճաշարանը: Ամեն ինչը վճարված էր նախօրոք, տոմսերի հետ:

Դուրս եկան միասին, ճաշարանը շատ հեռու չէր, երբ քայլեցին, ճաշերի հոտը, իրենց առաջնորդելով, տարավ ճիշտ տեղը, ներս մտան, շատ մարդ կար:

Նստած էին բոլորը, ուտում-խմում էին, իրենք ուշացել էին նույնիսկ: Աղմուկ կար, ամանների, դանակ-պատառաքաղների և մարդկանց ձայները, կերակուրների հոտերը իրար էին խառնվել: Կանգնած էին մնացել, աշխատողներից մեկը մոտեցավ, ուղեկցեց իրենց մի ազատ սեղանի մոտ, աթոռները հեռացրեց, որ նստեն: Տվեց ճաշացանկը ու հեռացավ:

Առաքելն ու Մխիթարը մատները դրին մի ճաշատեսակի նկարի վրա և ուզեցին այդ, մեկ է, որ կարդան էլ, բան չեն հասկանալու:

Այդպես կերան, խմեցին, կշտացան, որոշեցին գնալ մի քիչ քնելու, քանի որ շուտ էին վեր կացել այդ օրը և շատ հոգնած էին:

Գնացին, պառկեցին ու միանգամից քնեցին հանգիստ սրտով, ոնց էլ լինի, իրար ընկեր կլինեն նավի վրա, մինչև հասնեն Ստամբուլ:

Նավը, իր արագությունը վերցրած, սահում էր ջրերի վրայով: Դեռ արևը մայր չէր մտել, հորիզոնին դժվար էր նայել, այնպես փայլում էր դեռ, ճառագայթները ցնցուղի նման իջնում էին

ծովի վրա: Ալիքները կլանում էին դեռ տաքությունը այդ իջնող ճառագայթների: Շատ գեղեցիկ տեսարան էր, պայծառ գույներով շարժվող նկարի նման: Նայողը երանի էր տալիս այդ րոպեի համար. լուռ և մեղմ ալիքները տանում էին հեռուները, մոռացնում ու հանգստացնում իրեն՝ միայն նայելու և վայելելու համար այդ րոպեն:

Հիանալի ճամփորդություն էր:

Առաքելն ու Մխիթարն ապրեցին այդ րոպեները, նայեցին երկար, լուռ, առանց խոսելու՝ ամեն մեկը մոռանալով իր անցած ճանապարհը մինչև այսօր:

Դաժան և դժվար ճանապարհներով էին անցել, մինչև կարողացել են վաստակել այս նոր ճանապարհը: Մտածում էին պահել ներկան և վայելել՝ բավ համարելով անցյալը. «Աստված տանի, չբերի»: Այո՛, Աստված թող տանի, չբերի էլ, հերիք է, հոգնել են արդեն:

Երեկոյան երկու ընկեր գնացին ընթրելու, այս անգամ նստեցին առանձին սրահում՝ հանգստանալու և զրուցելու: Այդ օրը վերջացավ այսպես, երբ դուրս եկան տախտակամած, այս անգամ լուսինը դիմավորեց իրենց:

Լիալուսին էր խոշոր, լուսավորում էր շրջապատը, ոնց որ ցերեկ լիներ, դա էլ շատ գեղեցիկ տեսարան էր, անպատմելի:

Միշտ չէ, որ մարդը կարող է այդ տեսակ վայելել Աստծո տված պարգևները, օրինակ՝ լուսինը բաց ծովի վրա. դա միայն պատկերների վրա են տեսնում, այլ է, երբ ինքն է վայելում, և էությամբ ինքն էլ է մասնակցում ու դառնում այդ պատկերի մի մասնիկը:

Առաքելն առաջին օրվա համար բավարարված էր, գոհ և ուրախ մտավ անկողին՝ սպասելով հաջորդ օրվան:

***

Վարդը գիտեր ստույգ օրը, որ հայրը պիտի նավ նստեր: Չէր հանգստանում, ընկել էր ինչուների մեջ: Շատ էր մտահոգված հոր համար, այնքան, ու Մինասն ու կինը հանդիմանեցին.

- Վա՛րդ, նա երեխա չէ, որ մտածում ես այդքան, ինքը մենակ չէ, չորս կողմը մարդիկ կան, կօգնեն, երբ տեսնեն գրա կարիքը կա, մի՛ մտածիր»:

Այդպես հանգստացնում էին ամուսիններով:

Վարդին կանչել էին իրենց տուն, որ մենակ չմնա:

Մինասը մեղմ-մեղմ համոզում էր՝ երբեմն ուշադրությունը գրավելով իր աղջկա՝ Մերիի վրա: Փոքրիկ աղջիկը կանգնել էր դիմացը, բռնել էր Վարդի ձեռքը, ասում էր, «Արի՛ գնանք խաղանք գնդակով», ու պնդում էր: Վարդը գնաց հետևից, որ խաղան, նստեցին գորգին և սկսեցին գլորել գնդակը: Վարդը խաղում էր, գլորում գնդակը և միաժամանակ մտածում, հիշելով Մուրադին՝ մտքով ասում. «Ինչո՞ւ չմնացի, որ քեզ հետ էլ խաղալի այսպես»: Ու շատ ուրիշ բաներ էին մտքով անցնում, իսկ Մերին ուրախանում էր, ծիծաղում, գլորվում էր ինքն էլ գորգի վրա, որ գնդակը բռնի: Այդ ժամանակ Մինասը նստած էր մի կողմի վրա՝ աթոռին: «Ուրիշ տեղ է միտքը Վարդի»-մտածում էր նա՝ պարզ տեսնելով, որ իրոք այդտեղ չէ Վարդը: Խղճում էր Վարդին:

Չէր ուզում, որ Վարդը մտքով հեռանա, ուզում էր միշտ իրեն նայի, որ ինքը զգա նրա հայացքը իր վրա, կարծում էր, որ արևի ճառագայթներ են ու իրեն պիտի ջերմացնեն, եթե երկար նայի:

Ընդհատեց խաղը՝ աղջկա ձեռքը ուրիշ խաղալիք տալով, որ Վարդին ազատի այդ վիճակից: Հետո գրկեց աղջկան, երբ տեսավ երեխայի դժգոհությունը, սիրեց, համբուրեց:

Սիրունը բերել էր իր պատրաստած կերակուրները՝ իմանալով, որ Արևհատը չէր հասցրել անել, Մինասը ոչնչով չէր կարող օգնել, միայն կարող էր Մերիով զբաղվել, ուրիշ ոչինչ:

Այսպես կերան անուշ կերակուրները, ուրախացան Մերիով, որն էլ այնքան շատ էր խոսում, հարցեր տալիս, որ դիմացինը պիտի կարողանար ամեն հարցին պատասխանել, թե ոչ, կրկնում էր, հա կրկնում, մինչև բավարար պատասխան ստանար:

Վերջին օրերը՝ ճամփորդելուց առաջ, Վարդը ուզեց մենակ անցկացնել, այլևս չէր աշխատելու: Հանգիստ ուզեց դասավորել ճամպրուկները՝ մեկ առ մեկ ծալելով իր տղայի համար գնած հագուստները, մտածելով՝ արդյոք ճի՞շտ չափն են գնել, թե՞ ոչ: Շոյում էր ձեռքով, նորից շոյում, դնում ճամպրուկը:

Պատկերացնում է տղային արդեն մեծացած, խոսում էր հետն ու իր բախտից դժգոհում:

Մենակ էր ուզում մնալ իր մտքերի մեջ, խոսել տղայի հետ, քաղցր, համոզիչ խոսքեր գտնել: Որքան արեց, չգտավ այդ խոսքերը, հուսահատվեց, համոզիչ չէին իր խոսքերը, համապատասխան խոսքերը չէր գտնում ասելու:

Նա չկարողացավ գտնել այդ խոսքերը, դրանք պետք է սրտից գային այն պահին, երբ տեսներ իր որդուն՝ նրան նայելով, զգալով նրա ներկայությունը, զգալով նաև իր այդ խոսքերը լսելու նրա ցանկությունը:

Հիմա իզուր էին իր շարադրած խոսքերը, օդի մեջ, ինքն իրեն էր նեղում միայն:

Մենակ մնալով՝ մոռացավ նաև հաց ուտելը: Գույնը գցած նստել էր, երբ Մինասը ներս մտավ, ուզեց վերջին օրով դուրս հանել մի տեղ՝ նստելու, խոսելու համար:

- Այս ինչ վիճակ է, սրա համա՞ր էիր ուզում մենակ մնալ, գույնդ տեսե՞լ ես, ինչ արեցիր այս երկու օրը, ասա՛:

Վարդը ժպտաց միայն, չխոսեց: Մինասը մոտեցավ, գրկեց, համբուրեց: «Կարոտել էի,- ասելով կանգնեցրեց,- գնանք հաց ուտելու, ո՞ւր է վրայիդ ժակետը, դուրսը հով է»:

Վարդը արցունքները չկարողացավ զսպել, ասաց.

- Որքան ուզեցի, խոսքեր չգտա տղայիս համար, ուզեցի վարժվել, որ արտասանեմ, երբ տղայիս տեսնեմ, ինչ պիտի խոսեմ որպես մայր, ասա, Մինաս:

Մինասն այդ ժամանակ, Վարդի ձեռքից բռնած, դուրս էր հանում տանից, ոչինչ չպատասխանեց: Տարավ, քայլել տվեց մաքուր օդում, որից հետո մտան ավելի հեռու գտնվող մի ռեստորան, որտեղ Վարդը ոչ մի անգամ չէր եղել: Շատ հարգալից ընդունեցին, առաջարկեցին նստել մի սեղանի մոտ, տվեցին ճաշացանկը, որ ընտրեն: Վարդը չբացեց գիրքը, Մինասը որոշեց և՛ Վարդի և՛ իր համար ամեն ինչ՝ խմիչք, հյութ... Շատ դանդաղ ճաշեցին, շտապելու ոչինչ չունեին, երկար խոսեցին:

Մինասը խորհուրդներ տվեց, որ հանգիստ լինի, չվախենա նավից իջնելու ժամանակ, չխառնվի, հայրը այնտեղ կլինի, իրեն կսպասի:

Լավ էր, որ հայրը ուզեց գալ, եթե ոչ, Վարդը մենակ կգնար, վստահ էր: Երբ Վարդը պնդում էր, Մինասը, ճիշտ է, ձայն չէր հանում, բայց ճշմարիտ, շատ վախենում էր, թե ինչպես նա կարող էր այդքան վստահ լինել:

Երեկոյան Վարդին տուն բերեց, վերջին անգամ նայեց՝ պակաս բան չկա, քանի որ առավոտյան վաղ դուրս էին գալու նավահանգիստ գնալու համար:

Մինասը գնաց իր տուն՝ բարի գիշեր մաղթելով:

***

Առավոտյան Մինասը եկավ իր հորաքրոջ տղաների հետ՝ Վարդին ուղեկցելու:

Միասին գնացին նավահանգիստ՝ թղթերը պատրաստելու:

Նավը տասներկուսին պիտի շարժվեր: Արևհատի ծնողները, Մինասի հորաքույրը ավելի ուշ եկան նավահանգիստ՝ Վարդին բարի ճանապարհ մաղթելու համար:

Այս բոլորը Վարդի բարեկամներն էին, նստած նավամատույցի սրճարանում՝ շրջապատել էին Վարդին, և ամեն մեկն իր բարի խոսքն էր ասում նրան:

Վարդը մեկ լսում էր, մեկ չէր լսում. լրիվ օդի մեջ էր, ինքն էլ չգիտեր, թե ինչ է մտածում:

Մի երազ էր, որի մասին քանի տարի էր արդեն՝ երազում էր և այսօր է կատարվում, երանի սուտ չլինի:

***

Մեկ ժամ առաջ Վարդը պետք էր բարձրանար նավի վրա: Բոլոր կանգնածները շրջապատեցին Վարդին, համբուրեցին, գրկախառնվեցին, Մինասը կանգնած էր քիչ հեռու, հետևում սպասում էր, որ իր հերթը գար: Երբ բոլորին համբուրեց, փնտրեց Մինասին, տեսավ, որ հետևում է կանգնած, պտտվեց ու զգաց իրեն Մինասի թևերի մեջ, գրկեց, համբուրեց, ու բարի ճանապարհ մաղթեց:

Մինասը գույնը գցած, անթարթ աչքերով նայում էր Վարդին, գիտեր՝ Վարդը գնում էր, որ սիրտը տա ուրիշի, հեռանում էր ընդմիշտ, ինքն այդպես էր զգում. եթե այսօր չլինի էլ, մի օր լինելու է, սիրտն այդպես էր վկայում: Մտածում էր ու ելք չէր գտնում:

Վարդը մոտեցավ կամրջակին՝ նավի աստիճաններին, Մինասի ուղեկցությամբ, բռնած թևից, բայց Վարդը ոչինչ չէր զգում, մտախոհ էր. ինչպես պիտի ղեկավարի իրեն նավի վրա՝ դժվար է ասել:

Կարծես այն քաջ մշեցու աղջիկը չլիներ, այս վերջին տարիները վատ էին անդրադարձել իր վրա:

Հոգեպես շատ ճնշվեց, մենակությունն իրեն խեղճացրեց: Առանց տղամարդու ապրեց, կարծես աննպատակ ապրեց, այն օրվանից, երբ թողեց այն տունը, որ իրենը չհամարեց:

Երիտասարդ, տասնվեց տարեկանից մինչև այսօր չունեցավ հենարան, չգտավ իր հանգրվանը, չգտավ մի քար, որին գլուխը դներ ու պառկեր հանգիստ, առանց մտածմունքի:

Այսօր նորից ճամփաների վրա գնում է փնտրելու այն, ինչ կորցրել էր շատ վաղուց:

Երանի գտներ, հույսով էր գնում, բայց վստահ չէր ինքը:

Վարդը երերուն քայլերով կանգնեց կամրջի վրա, ետ դառնալով խեղճ հայացքով նայեց բոլորին:

***

Ճիշտ ժամին նավը հեռացավ նավամատույցից, տարավ Վարդին, տարավ նաև հույսը, որն ուներ Մինասը իր սրտում, թեև ինքն էլ չգիտեր՝ որն է այդ հույսը:

Երբ նավը հորիզոնում անհետացավ, բոլորը վերադարձան տուն:

Վարդը մեկ ամսով էր գնացել, իր նավը մեկ ամիս հետո պիտի վերադառնար Սալոնիկ: Երկու օր հետո Արևհատը նկատեց, որ Մինասը լավ չի զգում, գլուխը պտտվում է, ջերմություն ունի: Անմիջապես դիմեց մոր խորհրդին, որովհետև չգիտեր ինչ անել:

Սիրունը եկավ, բայց ինքն էլ չգիտեր ինչ անել, հարցրին Մինասին՝ բժիշկ կանչե՞ն, թե՞ ոչ: Մինասը համաձայնեց, բժիշկը երկար քննելուց հետո, ասաց, որ իր կարծիքով ծանր բան չկա. բայց և այնպես հարկավոր էր ավելի խորը քննություններ անել

և պետք էր տեղափոխել հիվանդանոց: Նա մինչ այդ ոչ մի անգամ բժշկի չէր դիմել, տարբեր քննություններ արեցին, դեղեր նշանակեցին, որովհետև ջերմությունը չէր իջնում:

Ամեն ինչ հուշում էր, որ ոչինչ չուներ, բայց խելքը գլուխը չէր գալիս, ու ջերմությունն էր նեղում բժիշկներին: Մի քանի օր հետո թեթև իջավ ջերմությունը, և աչքերը բացեց: Բոլորը շատ վատ էին զգում՝ այդպես տեսնելով Մինասին: Հատկապես Արևհատը, գիշեր-ցերեկ կողքին նստած, նեղված լաց էր լինում՝ անընդհատ սրբելով ամուսնու ճակատի քրտինքը:

Անընդհատ հարցնում էր բժիշկներին, թե երբ կիջնի ջերմությունը, ճրբ պիտի լավանա:

Երբ ամեն ինչ լավ էր արդեն, և աչքերը բացեց, Մինասը տեսավ կնոջը՝ կողքին նստած, արցունքներն աչքերին, ժպիտը դեմքին, իր ճակատը շփելիս, զգաց քնքշանք, զգաց ջերմություն: Մինասն էլ ժպտաց կնոջը, ձեռքը տարավ, դժվարությամբ բռնեց Արևհատի ձեռքը, ասաց.«Լավ եմ հիմա, լավ կլինի նաև քեզ համար»: Ձեռքը տարավ շուրթերին, համբուրեց:

***

Առաքելը շարունակում էր ճամփորդությունը, խոսակից ուներ: Հաճելի մարդ էր Մխիթարը, սվազցի էր:

Հաջորդ օրը, երբ կեսօրից հետո դուրս եկան տախտակամածի վրա, որտեղ դրված էին սեղաններ, աթոռներ, նստեցին և սկսեցին զրուցել:

Մխիթարը պատմեց իր կյանքը, թե ինչպես է կորցրել կնոջը և հինգ տարեկան երեխային, պատմեց, թվում էր, թե մեկ ուրիշի պատմածի շարունակությունը լիներ Դեր-Զորի ճամփի վրա: Այնքան ցավալի էր պատմում, ու արցունքները թափվում էին աչքերից:

«Այդքան տեսածներս ինչպես պիտի մոռանամ, կյանքիս բոլոր օրերը պիտի հիշեմ, աչքերիս դեմ գնում-գալիս են, ասածները հիշում եմ այսօրվա պես: Այնքան բարեկամ ունեի, գնում եմ, որ տեսնեմ, թե ում կարող եմ գտնել այնտեղ»:

Մխիթարին, երբ ուզել է երեխային ու կնոջը պաշտպանել, թուրքերն այնպես էին խփել հրացանի կոթով, որ ընկել էր մեռածի պես. որքան ժամանակ էր մնացել այդպես՝ չգիտեր, երբ ուշքի է եկել, տեսել է, որ գիշեր է, կողքի պառկածները բոլորը մեռած են: Մութ է եղել, խավար, փնտրել է, չի գտել կնոջն ու տղային, չի ճանաչել կողքի պառկածներին էլ:

Ուսի ոսկորը կոտրածի պես ցավելիս է եղել, մեծ դժվարությամբ հեռացել է ահագին, կես ժամի չափով քայլելուց հետո նստել է մինչև առավոտ լույսի բացվելը:

Աղջամուղջին տեսել է, որ հեռվում անտառ կա: Այնքան է քայլել, մինչև հասել է այդ անտառին: «Թևիս ցավից խենթանում էի, բայց քայլում էի՝ ամեն քայլիս ահռելի ցավ զգալով, թևս ծալած, արմունկս սեղմած, հեռանում էի այդ բաց գերեզմանից: Պատկերացնում ես փախչում էի հեռու՝ կնոջս ու երեխայիս այնտեղ թողնելով»: Իսկ ուսի ցավը, այդպես էլ ամիսներ է տևում, մինչև անցնում է: Բժիշկ չկար, ինչ բժիշկ:

Այդպես փախչելով, ինչպես ուրիշները, առանց փողի, մի կերպ կարողացել է գնալ Ամերիկա, նավի մեջ պահվելով՝ հասել է ու իջել Լոս Անջելեսի նավահանգիստը ուրիշ հայ տղաների հետ:

Աշխատել են, տարբեր գործեր են արել, ապրել են: Քանի տարիներ հետո ծանոթ ընկերները ստիպել են ամուսնանալ իր նման նույն ճակատագիրն ունեցող որբ մի աղջկա հետ: Հիմա մի աղջիկ ունեն, երեք տարեկան, գոհ էր կնոջից, լավ էր:

Առաքելն էլ իր կյանքը պատմեց, այդ ձևով հասան Ստամբուլ:

Նավը կանգնեց, Առաքելն ու Մխիթարը պատրաստվեցին՝ նավից իջնելու համար:

Մարդիկ կանգնած սպասում էին դուրս գալուն: Մուտքի մոտ մեկը կանգնած նայում էր փաստաթղթերին ու ասում, որ պետք է վիզա ունենան Թուրքիայում շրջելու համար՝ մոտավորապես ցույց տալով, թե ուր գնան վիզայի համար: Շատ հեռու չէր, Առաքելն անմիջապես իմացավ տեղը, լավ ծանոթ էր այդ տեղանքին, այնքան էր շրջել, երբ Թուրքիայում էին Հունաստան գնալուց առաջ: Երկուսով միասին գնացին վիզաների գրասենյակը, այնտեղ շատ մարդ կար, պետք էր սպասել: Սկզբից Մխիթարը մտավ, նրանից հետո Առաքելի կարգն էր:

Առաքելը ներս մտավ, դիմացի սեղանի ետևում նստած զինվորականը քաղաքավարի, գլխի շարժումով բարևեց Առաքելին՝

«Էֆենդի» կոչելով ու ցույց տվեց աթոռը, որ նստի: Առաքելը նստեց, բայց մի տեսակ զգաց իրեն, քաշված, որովհետև դիմացինը շատ քաղաքավարի էր: Հինվորականը թղթերը վերցրեց, նայեց, հարցրեց թե ինչ նպատակով է եկել Թուրքիա: Առաքելը պատասխանեց. «Ման գալու նպատակով»: Նա էլ ասաց. «Ցանկանում եմ լավ օրեր»: Այդ միջոցին դուռը ծեծեցին, ներս մտավ մի տղա, մոտեցավ զինվորականին՝ ինչ-որ բան ասելու, բայց երբ անցավ Առաքելի մոտով, գլուխը խոնարհեց ու որպես բարև ասաց. «Էֆենդիմ»:

Ցածր ձայնով ինչ-որ բան ասաց, պաշտոնյան էլ պատասխանեց, որ այդ մասին կխոսեն երեկոյան: Ու տղան, որը շատ նման էր զինվորականին, դուրս եկավ:

Առաքելը մտածեց, որ նրա տղան էր:

Այդ ժամանակ վիզան խփեց անձնագրի մեջ և վերադարձրեց Առաքելին: Հինվորականը վեր կացավ և ուղեկցեց դեպի դուռը՝ բացելով այն:

Ոչինչ չհասկացավ Առաքելը, մոտեցավ Մխիթարին, որը սպասում էր դրսում: Այդտեղ իրարից բաժանվեցին և որոշեցին իրար տեսնել Ամերիկայում: Մխիթարը ավելի շուտ պիտի վերադառնար՝ ըստ իրեն:

Առաքելը այստեղ՝ Բոսֆորի շրջանում, փնտրեց հյուրանոց: Տեղավորվեց այդ օրը, հանգստացավ սենյակում, գնաց ճաշարան, դուրս եկավ հյուրանոցից, ման եկավ: Հաջորդ օրը դուրս եկավ, գնաց այն սրճարանը, որ երկար ժամանակ իրենց հավաքատեղին էր: Տերը փոխվել էր, աշխատողները փոխվել էին: Փոխվել էր նաև սրճարանը, ավելի գեղեցիկ, ամեն ինչը փոխված էր, աթոռ, սեղան, նստեց, սուրճ ուզեց, խոսեց մի քիչ, հարցրեց հներից, չճանաչեցին ոչ մեկին, դուրս եկավ, գնաց հյուրանոց: Տասնհինգ օր պիտի սպասեր Վարդին: Պայմանավորվել էին Բոսֆորի մոտ հանդիպել, գիտեին օրն ու

ժամը նաև: Բայց շատ կար դեռ այդ օրվան, Առաքելը ինչ պետք է աներ մենակ, որոշեց ման գալ՝ ազատ զգալով իրեն, ոչ մեկից չէր վախենում, այլևս կարիք չուներ ֆես դնելու գլխին, ծպտվել թուրքի պես, հիմա ինքն ամերիկացի էր, թաքնվելու կարիք չուներ:

Գիտեր թուրքերեն, ազատ խոսում էր, կարիք էլ չուներ, որ ասեր՝ հայ է, դա ոչ մեկին չէր հետաքրքրում: Բայց փնտրում էր, որ հայ գտնի, նայում էր մարդկանց դեմքին՝ որոշելու նպատակով հայ է, թե ոչ: Մտածում է, ինչպես է, որ հայ չկա:

Շատերն անունները փոխել էին, բոլորին չվիճակվեց դուրս գալ երկրից, անպայման մնացողներ էլ կլինեին:

Օրն անցնելու համար մտնում-ելնում էր խանութները, նայում ապրանքներին, երբեմն խոսում աշխատողների հետ: Օրը մի քանի անգամ նավով անցնում էր Բոսֆորը, հաճույքի համար միայն, հետ դառնում: Առաջին անգամ, երբ անցավ Բոսֆորը, լաստանավով էր, այն ժամանակ դա էր, հիմա փոքր նավեր էին՝ վրան ծածկած:

Օրերը տաք էին և գեղեցիկ: Լավ ման եկավ եվրոպական մասում, այնտեղ ուրիշ քաղաքներ էլ կային մոտիկ իրար, լավ թուրքերեն գիտեր, չէր շփոթվում:

Մտածում էր. «Եկել եմ, լավ ման գամ, հաջորդ անգամ կլինի՛ արդյոք, կկարողանամ նորից գալ, Ամերիկան շատ հեռու է »:

Առաքելը որոշեց Վարդին նավի մոտ սպասել, ավելի լավ կլինի: Այդպես էլ արեց, գոնե օգնեց ճամպրուկները իջեցնելու:

Երկու ժամ առաջ գնաց, կանգնեց նավամատույցին, հետո որոշեց նստել այնտեղ՝ սրճարանից դուրս դրված աթոռներից մեկի վրա: Զբաղեցրեց մի սեղան և սպասեց՝ հայացքը չկտրելով ծովից:

Շատ չանցած՝ նավը կամաց մոտեցավ նավամատույցին, կանգնեց: Առաքելը մոտեցավ նավին, հայացքը դաձնելով աջ ու

ձախ, նավի երևացող եզրերին նայելով, փնտրում էր Վարդին՝ անհամբեր շարժումներ անելով:

Երկար սպասեց, ուղևորները իրար հետևից դուրս էին գալիս, Վարդը ուշացավ:

Առաքելը, անհանգստացած, ավելի առաջացավ դեպի ելքը: Վերջապես Վարդը երևաց: Առաքելը մոտեցավ կամրջակին: Վարդը տեսավ հորը, շատ ուրախացավ, մի քանի քայլ կար, որ հասներ հորը: Առաքելը այլևս չէր համբերում: Վարդը ուժով գցեց ճամպրուկները գետնին ու փաթաթվեց հորը, երկուսով լաց էին լինում, բայց դա ուրախության և կարոտի լաց էր:

Միասին գնացին հյուրանոց, իրոք, լավ մտածեց Առաքելը, որ Վարդին դիմավորեց նավի մոտ, թե ոչ, Վարդը չէր գտնելու իրեն այդ ծանր բեռներով: Հայրը անմիջապես նկատեց Վարդի հյուծված լինելը: Այդ քանի տարվա մեջ շատ տարբերություն զգաց և շատ նեղվեց, քանի որ երիտասարդ էր աղջիկը, չէր ուզի այդպես տեսնել նրան: Երևում էր անխնամ լինելը, մենակությունը շատ էր ընկճել նրան:

Առաքելն անմիջապես ճամպրուկները ներս առավ, աղջկան նստեցրեց, որ հանգստանա, այնուհետև առաջարկեց գնալ ճաշարան՝ հաց ուտելու, ուրիշ ոչինչ չուզեց հարցնել, նախ կերակրել, հետո, մտածեց Առաքելը: Գնացին ճաշարան ճաշելու, հետո հայրը հարցրեց Վարդի նպատակը, թե որտեղից պետք էր սկսել:

Վարդի նպատակն էր նախ Մուրադին գտնելը, որից հետո կորոշի: Ըստ իրեն, կուզեր, որ տղային ունենար միայն իր համար, բայց այդ տղային ինքը միայն բերել էր, ունեցել էր, մնացածով ինքը չէր զբաղվել, արդյոք իրեն նվեր կտային՝ հաշվի չառնելով, որ լքել էր, չէր կատարել մոր պարտականու-

թյունները: Այդ բոլորը վերլուծել էր և սպասում էր դեռ մերժում իր որդու կողմից, բայց պիտի դիմանար, պիտի ընդուներ, պիտի խոնարհվեր Մշո այդ աղջիկը:

Ամեն ինչին համաձայն էր ինքը: Գնալու է և գտնելու է, սպասելու է այնքան, մինչև գտնի: Այդպես էր վկայում իր սիրտը, ինքն աղոթել էր Աստծուն այդքան տարիներ:

Հայր ու աղջիկ հաջորդ օրը տեղեկացան, թե ինչ միջոցով պետք է գնան Մուշ: Հասկացան, որ շատ բան չի փոխվել, և փոխադրամիջոցները նույնն են գրեթե:

Եթե կարողանան ճանապարհի մի որոշ մասը ավտոմեքենա ունենալ, լավ է, բայց մնացյալը լինելու էր այլ՝ երևի ձի կամ էշ: Ինչ արած, ամեն ինչի համաձայն են, սկսեցին իրենց երթուղին, էլ չխոսենք, թե ինչպես հասան Մուշ:

Վարդը շատ ուրախ էր, որ հայրը եկել էր իրեն օգնության: Եթե ոչ, Վարդը կկարողանար գնալ, եթե երթևեկելու միջոցները լավ լինեին: Որքան էլ որ հեռու է, բայց տեղեկությունները շուտ են հասնում: Լավ գիտեր, որ այդ վիճակին են դեռ Թուրքիայում:

Վերջը, մի քանի օրից հասան Քամալի ծննդավայրը մեծ դժվարությամբ:

Առաքելն ու Վարդը, տեսնելով գյուղը հեռվից, մտածեցին, որ վերջապես հասան: Վարդը չէր հավատում, որ Քամալը մնացած կլինի այդ գյուղում, բայց պետք էր ստույգ տեղեկություններ ունենային. գալու նպատակը դա էր, այդքան ճամփան զուր չէին եկել: Գյուղը մնում էր, թուրքի գյուղ էր, մարդիկ կային, ապրում էին: Դաշտերը, այգիները, պարտեզները, տները, ամեն ինչ տեղն էր:

Արդյոք Քամալի ընտանիքը այդտեղ է դեռ: Վարդի սիրտը վախի մեջ էր, խփում էր ուժգնորեն: Մոտեցան, տունը տեղն էր, բայց շրջապատը ամայի, տատասկների մեջ էր:

Վարդի ծնկները կոտրվեցին, սիրտը վատացավ՝ տեսնելով տնակը խոտերի մեջ կորած, պարզ էր, որ տարիներով չէր բացվել այն: Պարտեզը՝ մոլախոտով ծածկված, հողը՝ կարծրացած անձրևներից և արևից: Դուռը փակ, տունը անտարբերության մատնված, անխնամ: Վարդը նստեց քարին, այն քարին, որը մի ժամանակ նստարան էին համարում և մաքրում էր միշտ:

Ինչ պիտի անի հիմա:

Առաքելի բերանը չէր բացվում, ինչ պիտի անեն հիմա: Մտածում էր, թե ինչպես են ապրել այս պայմաններում, ինչպես չեն տեսել, չեն իմացել, թե լավը որն է, համակերպվել են ամեն ինչին: «Խեղճ աղջիկս ինչ պիտի անի, որտեղ պիտի գնա, գտնի իր փնտրածը՝ իր կորցրած որդուն»:

Ինքն էլ կորցրեց քանի անգամ, բայց գտավ, լավ պատկերացնում էր Վարդի վիճակը, խղճում էր, աշխարհից աշխարհ էր եկել, որ մենակ չթողնի Վարդին, հիմա ինչ եղավ: Նստած Վարդը լաց էր լինում, հայրը գրկեց, հորդորեց՝ վստահեցնելով, որ գտնելու է, որ նրանք թուրք են և ոչինչ արած չեն լինի նրանց, որ ողջ են անպայման: Քանի անգամ էլ կրկնեց՝ թուրք են:

Հոր ամեն խոսքին՝ «թուրք են», Վարդը ցնցվում էր: Երկար նստեցին այդ քարին, երկար խոսեց հայրը, Վարդը ուժ չուներ միջամտելու:

Առաքելը վեր կացավ, մոտեցավ դռանը, փորձեց բանալ: Հրեց դուռը, բացեց, ներս մտավ: Ներսում բոլորովին ուրիշ էր, մաքուր, ամեն ինչ իր տեղը, շատ քիչ բան էին տարել, մնացածը թողել, կարծես մարդ մտած չլիներ ուրիշ: Բայց ով պիտի մտներ, եթե թուրքի տուն էր: Միայն մի քիչ փոշի էր ծածկել ամեն ինչ: Վարդը դեռ նստած էր, չէր շարժվում, միայն մտածում էր՝ ինչպես մտնի այդ տունը: Հիշում էր, որ հանձնեց երեխային ու

դուրս եկավ, նստեց ձին ու հեռացավ այդ տանից, հիմա եկել, չոքել է այդ տան առաջ, ծնկները կոտրած, տեղից վեր կենալ չի կարողանում:

«Քաջությո՛ւն ունեցիր, Վարդ, դու այդ աղջիկն էիր, դիմացի՛ր, եթե դու չգտնես, իրենք քեզ կգտնեն, մի՛ հուսահատվիր»: Մեջից ինչ-որ մեկը խոսում էր Վարդին, ինքը լսում էր:

- Վարդ, արի՛,- կանչում էր հայրը ներսից,- ներսը դուրսի նման չէ, մտի՛ր, տեսնենք՝ հետո ինչ պիտի անենք:

Վարդը դժվարությամբ մտավ դռնից ներս, այն դռնից, որից տասնչորս տարի առաջ դուրս էր եկել՝ արցունքներն աչքերին, հուսահատ վիճակում: Հիմա էլ նույն ձևով ներս է մտնում, ոչ մեկը չկար, որ իրեն դիմավորի:

Ներս մտավ, չորս կողմը նայեց ու փնտրեց տղայի օրորոցը: Օրորոցը նույն տեղում էր, շարժում չկար: Մոտեցավ, գրկեց, ընկավ վրան ու բարձրաձայն լաց եղավ: Հայրն արցունքներն աչքերին հասավ, գրկեց, հեռացրեց օրորոցից, նստեցրեց թախտին, որ հանգստացնի:

Չգիտեր ինչ խոսեր Առաքելը, մոր սիրտն ամոքելու ոչ մի խոսք չէր գտնում, դժվար պահ էր:

«Խեղճ Վարդ, կյանքդ լացով անցավ, երբ պիտի ժպիտ տեսնեմ երեսիդ,- մտածում էր հայրը.- սրա համար ծնվեցիր դու»:

Այդպես երկար նստեցին իրար մոտ՝ չիմանալով ինչ անել. հանկարծ Առաքելն ասաց.

- Գնամ հարևանի հետ խոսեմ, հարցնեմ, միգուցե մի բան ասեն, թե ուր են, ո՞ւր են գնացել, չենք կարող նստել-գուշակել. եթե եկել ենք, պետք է փնտրենք:

Վարդը ոչինչ չպատասխանեց, ոչ էլ տեղից շարժվեց: Հայրը գնաց:

Ճամպրուկները դուրսն էին դեռ, այդպես էլ մնացին, հայտնի չէր՝ պիտի ներս առնեին, թե՞ պիտի շարունակեին ճամփորդությունը:

Կեսօր էր արդեն, գիշերը անցկացրել էին մի պանդոկում՝ ոչ հեռու գյուղից, մեկ ուրիշ գյուղում: Ձիերով էին եկել՝ մի տեղից մյուսը անընդհատ փոխելով ուղեկցին ու ձիերին: Ճամփաները նույնն էին, առաջխաղացում չկար: Մարդը, որ իրենց բերել էր մինչև այստեղ, արդեն գնացել էր իր ձիերով, նշանակում էր, որ իրենք պիտի մնային, լավ էր, տունը տեղն էր ամեն ինչով:

Հայրը գնացել էր, Վարդը, մենակ նստած, երկար ժամանակ մտածում էր, մտքերը խառնված էին գլխի մեջ, չգիտեր՝ ինչպես դասավորեր: Այս ինչ եղավ, չնայած սպասում էր, որ այդպես էլ պիտի լիներ:

Առաքելը վերադարձավ մի կնոջ հետ, դիմացի տան հարևանուհին էր: Վարդին տեսնելով՝ մոտեցավ, գրկախառնվեց, համբուրեց: Խոսեց, ասելով. «Ես քեզ լավ չեմ ճանաչում, հեռվից շատ եմ քեզ տեսել, Գյուլը միշտ գալիս-գնում էր քո գնալուց հետո, միշտ երբ երեխային որևէ բան էր պատահում, միասին էինք խնամում Մուրադին»: Վարդը լսում էր ուշադիր, աչքերից թափվում էին արցունքները:

Հետո սկսեց հարցեր տալ, այնքան շատ, որ կինը չէր հասցնում պատասխանել, բայց բոլոր հարցերի պատասխանները գիտեր: Վարդը վերջ ի վերջո հանգստացավ՝ իմանալով, որ Մուրադին մեկ տարուց ավելի այդ կինը տեսել էր և գիտեր, որ առողջ է, այդպես էր տեսել վերջին անգամ:

Այդ կինը շատ սիրալիր էր Վարդի հետ, կարծես կարոտ էր մարդու հետ խոսելու: Ինչպես գիտենք, այդ գյուղում տները շատ մոտ չէին իրար, հետո սերտ հարաբերություն չեն ունեցել դրացիների հետ: Դրա համար էլ Օրհանը՝ Քամալի հայրը, ընտրել էր այդ գյուղը, և Գյուլը համակերպվել էր իր ընտանիքը պահպանելու համար: Համեստ Գյուլվարդը զոհաբերել էր իրեն իր որդու համար: Զգում էր Վարդը, հասկանում էր, շատ էր մտածել այդ մասին, բայց չէր կարողացել իմանալ գաղտնիքը, թե ինչու էին այդ գյուղում առանձնության մեջ ապրում, ոչ մի անգամ չէր տեսել, որ Գյուլվարդը իր դրացի կնոջը առնչվեր, իսկ այսօր հարևանուհին ասում էր, որ իր գնալուց հետո միշտ իր խորհուրդների կարիքն էր ունեցել:

Հիմա դա չէր հետաքրքրում Վարդին, կարևորն իմացավ, այն, ինչ ուզում էր իմանալ, բայց դա շատ քիչ էր: Անցել էին այդքան տարիներ, ուր էին հիմա՝ դա էր ամենակարևորը: Հայրը չէր միջամտում, որովհետև չգիտեր՝ ինչ կարող էր հարցնել:

Հարևանուհին հանկարծ հարցրեց, ուզո՞ւմ են մի բան ուտել, թե՞ ոչ:

Պատասխան չստանալով՝ գնաց տուն և շատ ուտելիքով հետ եկավ: Ստիպեց, որ ուտեն, հետո կմտածեն, թե ինչ պիտի անեն:

Հարևանուհին կիսատ էր թողել խոսքը, դեռ չէր ասել, թե Գյուլը ինչ էր ասել գնալուց առաջ: Փաստորեն, տեղյակ էր պահել, որ գնալու են Մուշ, տղան գործ ունի այնտեղ, և խնդրել էր աչքը պահել տան վրա, գիտեր նաև, որ ամեն ինչը թողել են՝ ասելով, որ Աստված գիտի, թե վերջում ինչ կլինի:

Այս կինը ոչ մի անգամ ներս չէր մտել, բայց լավ գիտեր նաև, որ ոչ մեկը չի մոտեցել տանը մինչև այսօր: Տեսել էր իրենց գալը, չէր մոտեցել, քանի որ ճանաչել է Քամալի հարսին: Քամալը փոքր ժամանակ շատ էր եղել իրենց տանը, իր տղաները շատ են սիրել նրան: Որ ինքն էլ շատ էր սիրել Քամալին, քանի որ լավ ընկեր է եղել իր տղաների համար: Իր տղաներն էլ շատ բան են սովորել Քամալից՝ ընդօրինակելով նրա բնավորության լավ գծերը: Տղաները ամուսնացել, գնացել էին, կինը մնացել էր մենակ իր ամուսնու հետ, այդ քշված գյուղում, իրենց բաղ ու բաղչայով. հողի աշխատավորներ էին և կմնան մինչև իրենց մահը:

Կինը Վարդին հուսադրում էր, որ Քամալը, Մուրադը և Գյուլը գտնվում են ինչ- որ տեղ, վստահեցնում էր՝ մի օր գտնելու է և տեսնելու է իր տղային:

Կինը գնաց՝ մտածելով մենակ թողնել իրենց:

Ասաց պատրաստ է օգնելու, եթե կարիք ունենան: Առաքելն ու Վարդը մենակ մնացին. նստած տխուր նայելում էին իրար.

այլևս ուրիշ նորություն չկար, ամենավերջինները տվեց հարևանուհին: Այնքանով բավարարված էին, որ եկան այստեղ. այդքան ճամփան անցնելն իզուր չէր, ո՞վ պիտի այդքան տեղեկություն տար իրենց, ոչ մեկը: Հիմա թեթևացավ գոնե իրենց հոգին, թե վերջում ինչ կլինի, ով գիտե, Աստված մեծ է:

Առաքելը շատ ուշ ճամպրուկները ներս բերեց, փոխվեցին, ճանապարհի փոշին թափ տվեցին հագուստների վրայից: Նստեցին՝ չիմանալով ինչ անել. Առաքելը, օրորոցին նայելով, քթի տակ սկսեց մռմռալ մի երգ՝ Մշո լեզվով...

Արև՛, շեղա՛ մեր
Լեռներում
Քամի, ՛ վազի՛ր
Մեր հանդերում
Ինձմե պոկած
Կարոտներում
Կա մի անուշ
Երազ, կա մի աշխարհ հեռվում
Քնի՛ր, բալե՛ս, հիշի՛ր օրոր, օրոր:
Ժողովրդական երգ «Մշո օրոր»:

Վարդը ինչո՞ւ էր լաց լինում, չէ՞ որ Մուրադը ողջ էր, այն կինն էլ ասաց, որ առողջ էր երեխան, ոչ մի վատ, կասկածելի բան չկա, պիտի գտնի իր տղային, եթե ինքն էլ չկարողանա, տղան է գտնելու իրեն. իր սիրտը վկայում է:

Վարդը հորը երդվեց այլևս լաց չլինել, ասաց.

- Պապա, ես հերիք լացեմ, ինչու ողջ մարդու վրա կուլա՞ն:

- Ո՛չ, չեն լար, աղջկաս սիրեմ, այլևս չլացես, Աստված մեծ է:

Այդ օրը անցավ այս ձևով, երեկոյան հարևանը եկավ, կնոջ հետ երկար խոսեցին անցած, գնացած դեպքերից, խոսեցին

նաև ջարդից, պարզվեց այդ մարդկանց էլ դուր չի եկել արածները, և որ այդ գյուղը չեն էլ մտել, որովհետև հայ չի եղել այնտեղ: Իրենք լսել են միայն և զգացվեց, որ նեղված են նույնպես այդ անմարդկային օրենքներից: Ասում են, որ իրենք խառնվել չեն ուզում, միայն ուզում են հանգիստ ապրել ու մեռնել: Տղաները նույնպես հանգիստ բնավորություն ունեն, չեն սիրում նեղել ուրիշի, ասում են. «Մեր երեխաները մեծացել են Քամալի հետ ու վերցրել են Քամալի համեստ բնավորությունը»:

Այդ մարդիկ չիմացան, որ Առաքելը հայ է, պետք չէր, որ իմանային:

Այդ գիշեր հայր ու աղջիկ հանգիստ քնեցին այդ տան մեջ:

Վարդն այդ գիշեր պառկեց իր անկողնում, ամբողջ գիշերը չքնեց, բայց այլևս չմտածեց իր տղայի մասին, ուրիշն էր մտքի մեջ, որը ամբողջովին տեղավորվել էր իր մեջ: Վարդը, որքան կուզի թող մերժի նրան, միևնույնն է, այսօր հասկացավ, որ սիրում է Քամալին:

Առավոտյան վեր կացան, որոշեցին հարցուփորձ անել: Վարդը չուզեց գնալ հոր հետ, շատ էր հոգնած այդ ճամփորդությունից:

Առաքելը մենակ ուզեց գնալ Մուշ, այնտեղ միգուցե կարողանար որոշ տեղեկություններ քաղել Քամալի մասին: Առաքելը գնաց հարևանի ձիով: Վարդը, առիթից օգտվելով, պառկեց և հանգստացավ, իսկ կեսօրին հարևանուհին եկավ, և շատ երկար զրուցեցին իրար հետ: Վարդը սիրեց այդ կնոջը, միամիտ ապրած, կյանքում ոչ մի տեղ չէր գնացել, իրենց հողի ստացածով բավարարված, իր տանից բացի ոչինչ չէր տեսել:

Այդ գիշերը Վարդը մենակ անցկացրեց Քամալի տանը, զգաց, որ վատ չէր, նույնիսկ հաճելի էր իր համար, քնել էր մինչև առավոտ հանգիստ, առանց զարթնելու:

Մյուս օրը երեկոյան Առաքելը վերադարձավ շատ հոգնած, քանի տարի էր՝ ձի չէր նստել. ահագին դժվարություն էր ունեցել:

Երկար հարցուփորձից հետո, մի քանի գրասենյակներ ման գալուց հետո մեկը մի նախադասությամբ պատասխանել էր իրեն.

- Այդ անձնավորությունը վաղուց է, որ այստեղ չէ, գնացել է Ստամբուլ, որովհետև պաշտոնը բարձրացրել են, բայց չգիտենք, թե ինչ պաշտոնի է հիմա:

Վարդը, երբ լսեց հոր պատմածները, չհամոզվեց, որ կկարողանա գտնել Մուրադին, եթե ճիշտ ասենք, ավելի Քամալին էին փնտրում, բնականաբար, այդպես էլ պիտի լիներ, եթե ոչ, ինչպե՞ս գտնեին Մուրադին: Շատ դժվարությունների հանդիպեցին, ճամփա էին ընկել՝ կարծելով՝ կգնան և այնտեղ կգտնեն, որտեղ թողել է իրենց, բայց, ո՛չ, սխալվել են. չէ՞ որ Առաքելն էլ Ամերիկայում է, Վարդը՝ Հունաստանում, իսկ Քամալը ինչո՞ւ պիտի մնար այդ գյուղում: Այսպես է, երբ հուսահատվում են, երկար չեն մտածում: Երկուսն էլ հույս չունեին իրենց նպատակին հասնելու, այդքան էլ դյուրին չէր, և երևի երկար ժամանակ էր պետք, դեռ նոր են սկսել փնտրել: Ի՞նչ անեին, մի՞թե Ստամբուլում մի Քամալ կար:

Երկար խոսեցին, ապարդյուն, ոչ մի եզրակացության չհասան: Մտածեցին՝ մի քանի օրից հետո որոշեն հետագա անելիքը: Առաքելը ուզեց գնալ իր ծննդավայրը, այդ գյուղը, որ բոլորը թողեցին փախան, լքեցին ստիպված՝ թուրքից ազատվելու համար: Ուզում էր տեսնել մեկ անգամ էլ, վերջին անգամ, քանի դեռ մոտ էր գտնվում: Ինքը՝ Վարդը, չուզեց գնալ, ծանր հուշեր են, որ անընդհատ վերանորոգվում են իրենց մեջ:

Հորը պատմեց, թե ինչպես իր տանից գնալուց հետո նույն օրը գնացել էր իրենց փնտրելու, գյուղ էր մտել և գիշերել էր տանը, առաջին անգամ էր պատմում: Հայրը լաց եղավ՝

մտածելով, որ այս աղջիկը որքան բաներ է անցկացրել ու պահել իրենցից:

Վարդը ոչինչ չէր պատմել՝ մտածելով, որ նրանց տեսածը շատ էր արդեն, պետք չէր ավելացնել:

Առաքելը մի օր հանգստանալուց հետո նորից ձի նստեց, գնաց, ինքն այդ դաշտերին ու սարերին ծանոթ էր: Մշո մաքուր օդին նաև: Վարդը մենակ մնաց. քանի օր էր անցել, ոչ մի բանի ձեռք չէր տվել: Այդ օրը վեր կացավ, մոտեցավ տղայի օրորոցին, շոյեց ձեռքով, օրորեց ու մտածեց. «Ինչպես կարողացա քեզ թողնել ու գնալ, ինչքան ուժեղ էր իմ սերը իմ ծնողների հանդեպ: Ես քեզ էլ էի սիրում, բայց նրանց հանդեպ ուրիշ մի բան էլ կար, որ այդպես եղավ, հիմա չեմ կարող բացատրել, որ արդարանամ: Ես նեղված էի, ինձ մեկը պետք է որ հասկանար, երիտասարդ էի, ամեն դեպքում մեղավոր եմ, կներես, մեծ տղա ես արդեն, չգիտեմ ինձ պիտի հասկանաս, թե ոչ: Չգիտեմ քո հայրը իմ մասին ինչ է քեզ ասել, ես քեզ համար ոմն եմ»: Ու այդպես շարունակ հարցեր էր տալիս ու իր ձևով պատասխանում: Վարդը անհամբերությունից ավելի արագ էր շարժում օրորոցը, կարծես նրանից պատասխան էր ուզում ստանալ:

Թողեց օրորոցը, հայացքը շրջեց մյուս իրերի վրա, տեսավ, որ ամեն ինչ խոսում էր հետը, հիշեցնում իրեն, որ ինքը այդ տան հարսն է եղել, որ իրեն լավ ծանոթ են: Մոտեցավ սնդուկին, որի մեջ դասավորում էր երեխայի շորերը, մաքուր լվացած, ծալած: Բացեց, նայեց, աչքերին չհավատաց, այնտեղ էին իր տղայի փոքրիկ շապիկները, որ հագցնում էր այն ժամանակ, ուրախացավ, վերցրեց սիրեց, հոտ քաշեց. փոքրացել էին, դրա համար էին թողել այդտեղ: Շատ երկար սիրեց, դրեց սրտին, բացեց, ծալեց, բայց չուզեց լաց լինել:

Այդ օրը զբաղվելու շատ բաներ ուներ, ավլեց, մաքրեց, փոշիներն առավ, հետո դուռ, լուսամուտ սրբեց, իր մեջ եռանդ գտավ այդ բոլորը անելու: Ամբողջ տունը մաքրեց, փայլեցրեց ու ծրագրեց վաղվա համար աշխատանք նույնպես: Վաղը պիտի դուրս գար, մաքրեր տան շրջապատը, ավլեր ամբողջ բակը:

Այն ժամանակ Գյուլվարդը չէր թողնում, որ դրսի կեղտոտ գործերն անի: Գոմ ունեին նաև, շատ ոչխարներ, այծեր: Այդ բոլորը չկային հիմա, բայց տունը տեղն էր: Մի օր էլ գոմը կմտնի ու կմաքրի, իր տունն է, պիտի անի: Այսպես գոնե չի ձանձրանա:

Վարդը և՛ կանի, և՛ կհիշի անցյալը: Անցյալի մասին մտածելը, լինի լավ, լինի վատ, միշտ անուշ է, ու ժպիտով է հիշում մարդ իր անցյալը, միշտ քաղցր է թվում իրեն, քանի որ ջահելության օրերն են դրանք, անկրկնելի, անվերադարձ հուշեր:

Այդ օրը երեկոյան եկավ հարևանուհին իր ամուսնու հետ, ուտելիք էին բերել՝ մածուն, կաթ և ձու նաև: Կինը մտածում էր՝ ինչպես կարող է օգնել Վարդին: Շատ բան էր բերել, բայց ինչպես եփել, ինչպես տաքացնել:

Հաջորդ օրը Վարդը գոմում գտավ բոլոր հարմարությունները՝ օջախ, նավթ, լուցկի, ամեն ինչ, մինչև անգամ կերակուր եփելու ղազան-կաթսա, շատ ուրիշ ամաններ՝ մաքուր լվացված, դասավորված մի սնդուկի մեջ:

Վարդը տեսավ, որ ոչ մի բանի կարիք չունի, միայն մի քիչ մթերք ունենար, լավ էլ կապրի: Ամեն ինչից էր առնում կարոտը, թեթևանում էր այդքան տարիների ծանր հոգին: Հիմա ուրիշ կերպ էր զգում իրեն, հոգեպես հանգիստ, իրեն իր տան մեջ, և այդ բոլորը իրենն էր համարում:

Հոտ էր առնում ամեն ինչից, իր տղայի և մահճակալում իր Քամալի:

***

Առաքելը, իր կարոտած սարերում ընկած, ջահելությունն էր վերհիշում, իր կորած Մշո արգավանդ դաշտերը, իր անտառները, ծառերը, որոնցից կաթում էր Մանանան:

Ձին խաղում էր տակը Առաքելի, ինչ քաղցր են այդ հուշերը, երբ դառնում են իրականություն, երբ տեսնում ես քո աչքերով ու շոշափում քո մատներով: Ման ես գալիս քո ման եկած տեղերով և քեզ զգում ջահելացած՝ մոռանալով անցած տարիներդ:

Առաքելը՝ մշեցին, երանության մեջ էր, ոչ մեկն իրեն չէր խանգարում, ամեն ինչ փոխվել էր, այլևս վախ չուներ, իրեն թագավոր էր զգում: Անցյալը հեռացրել էր իրենից, եթե ասենք մոռացել է, կսխալվենք, ո՛չ, չի մոռացել, որովհետև այն, ինչը որ մեր ժողովուրդն է տեսել, դարեր չի մոռացվի:

Առաքելի սրտից արյուն էր կաթում. իր երջանկության հետ միասին զգում էր մի անտանելի ատելություն թուրքի նկատմամբ. «Ինչ ըրավ թուրքը մըզի, շինեց թափառական պանդուխտ, առավ մըր տուն տեղ, այգի, մըր հողը հայրերի: Մըր զավակներ շինեց օտար, մըր երկիր առավ, նստավ: Իմմ՛ լ թողինք մըր ինչքն ամեն թուրքին: Մըր հեր ու մեր թաղված ըն հողին, իմմ՛լ գացինք»:

Այսպես շրջում էր, Մշո սարերն անցնում կարոտած սրտով: Հանդիպում էր աղբյուրների, կանգնում, իջնում, խմում, սիրտը հովացնում, նստում սևացած հողին, ձեռքով փորփրում, նորից վեր կենում, մոտենում կանաչ դաշտին, փնտրում այն կանաչները, որ ծանոթ էին իրեն, դնում բերանը, ծամում: Առաքելը իր բնաշխարհի մեջ իր աշխարհն էր փնտրում, իր երիտասարդ տարիներն էր փնտրում:

Յար էհա, յար էլո, յարըմ գորանի
Յար էհա, յար էլո, յարըմ գորանի:
Էդ Մշո դաշտ, կսիմ, հինգ հարիր գեղ էր,
Էդ Մեղրագետ, կսիմ, հիվընդի դեղ էր:

Էե, լե - լե, լե, լե-լե գորանի,
Էե, լե - լե, լե, լե-լե ջան գորանի:

Առաքելն այս ձևով անցավ իր ամբողջ ճանապարհը՝ լացելով, երգելով իր ժամանակի երգերը: Սիրում էր երգել. միշտ մտածել է. «Թուրքը թողճ, որ երգենք, պարենք». միշտ պահեց ահի, վախի մեջ: Որքան մոտենում էր գյուղին, այնքան վշտերը շատանում էին: Արդեն այստեղ ձին դանդաղեցրեց քայլերը, Առաքելը ուզեց ավելի ուշադիր նայել գյուղը շրջապատող դաշտերին ու այգիներին: Երբ անցավ իր դաշտի մոտով, սիրտը մրմռաց, դաշտի մոտ կանգնած էր մի տրակտոր: Մտածեց. «Ո՛վ մշակի, ո՛վ վայելի»: Բայց կյանք է, այդպես էլ է լինում, փոխվել են ժամանակները:

Անցավ տների արանքով, նույն արահետներն էին, հողը՝ կարծրացած դարեր ի վեր:

Ձիուց իջավ, սանձը բռնած մոտեցավ իր տանը: Դրսում մարդ չկար, դուռը ծեծեց, մի կին դուրս եկավ, նայեցին իրար հարցական, և ո՛չ այդ կինը, ո՛չ էլ Առաքելը չհավատացին իրենց աչքերին:

- Առաքե՛լ, դո՛ւ իս, աչքերիս չըմ հավադա:
- Լուսի՛ն, դո՛ւ իս, իմմ՛լ ուրխցա օր քըզի տեսա:

Առաքելն անչափ ուրախացավ՝ տեսնելով Լուսինին: Լուսինը Ղազարի քույրն է, ամուսնացել էր Գառնիկի հետ, ապրում էին կողքի գյուղում: Առաքելը երբ տեսավ, կարծեց՝ սուրբ տեսավ, միանգամից արցունքները թափվեցին աչքերից, քանի՛ տարի էր

անցել, և այդ կինը դուրս եկավ իր տանից: Գրկախառնվեցին, համբուրվեցին, ներս մտան տուն: Առաքելն իր իսկական տան մեջ էր, իր ամբողջ ունեցվածքով, ոչ մի բան չէր փոխվել: Նստեց ու կուշտ լաց եղավ, այս անգամ ուրախությունից, որ իր տունը շեն է մնացել հայի ձեռքում:

Նայում է չորս կողմը, շոշափում ինչ պատահի: Լուսինը իրեն լավ էր զգում, Առաքելը եկավ, իր տունը տեսավ մաքուր, ամեն ինչ կարգին:

Լուսինի խելքը գլուխը չէր գալիս, կարծես երազ լիներ իր համար, շատերը մեռան, շատերը հրաշքով փրկվել են, ու չգիտեն, թե ով որտեղ է հիմա:

Գառնիկը եկավ դաշտից, նա էլ կարծես հրաշքի հանդիպեց, գրկախառնվեցին և իսպառ մոռացան իրենց դժվար օրերը: Խոսելու ոչինչ չէին գտնում, միայն իրար էին նայում ու ծիծաղում բարձր- բարձր:

Լուսինը իր աղքատիկ ունեցածով անմիջապես սեղան դրեց: Մի բաժակ թան առաջարկեց Առաքելին: Վերջինս մեծ սիրով ընդունեց, խմեց և ամ քաշեց. իր երկրի թանն էր, թթու էլ լիներ, համեղ էր իր համար:

Առաքելը ուզեց իմանալ՝ ինչպես է, որ այստեղ են մինչև հիմա: Կարճ պատասխանեցին, որ անունները փոխել են, ապրում են դեռ, թե վերջում ինչ կլինի, չգիտեն:

Սրանք էլ նույն ճակատագրից են փախել, իրենք էլ կորցրել էին իրենց աղջկան տասը տարեկանում Դեր-Զորի ճամփին: Իրենց աղջկա մահից հետո մեկի օգնությամբ փախել են, շատ-շատերի հետ մտել են անտառ: Քանի օր պտտվելուց հետո հեռվից տեսնում են սարերը, նմանեցնում իրենց սարերին ու շարունակում են քայլել, չգիտեն որքան, քանի օր անց մի կերպ հասնում են այս գյուղին: Գառնիկը լավ ճանաչել է այս սարերը: Վերջը Գառնիկն ասում է. «Մտնելու եմ այս գյուղը, ինչ ուզում

է, թող լինի, էլ ոչ մի տեղ չեմ գնա, մեռածի պես էինք, ոտքի վրա կանգնել չէինք կարող, ոտաբոբիկ էինք, չարոխ չունեինք, ոտքերս բոլոր վերքերի մեջ էր: Եկանք, տեսանք՝ գյուղը մարդ չկա: Կանցնեի, քո տունը տեսա: Ասացի, որ այստեղ էլ են քշել բոլորին: Մտնենք, ասացի Լուսիկին: Լուսիկի վիճակը տեսներիր, դեմքին նայեիր, չէիր ճանաչի, ես էլ նույնը:

Վերջը մտանք, նստեցինք, կուշտ լացեցինք ու պառկեցինք: Երկու օր երևի չենք զարթնել:

Ու այդպես էլ մնացինք, էլ չիմացանք ձեր մասին, ոչ մեկը չխոսեց: Դրանից հետո կամաց-կամաց թուրքեր եկան, բայց շատ մարդ չկա»:

Խոսելուց հետո շարունակեցին օգտվել սեղանից: Կերան տխուր-տրտում, ոչ մի ուրախանալու բան չկար: Այդքան տարի այս ձևով ապրել են, երևի մի օր առիթ չեն ունեցել ծիծաղելու, ոչ մեկին չեն ունեցել, քաշված, վախեցած ապրել են, մոտիկ դրացի էլ չի եղել: Լուսինն ասում էր. «Երանի մենք էլ մեռնեինք, որ ապրել ենք, ինչ հասկացանք մեր կյանքից, չգիտեմ՝ եղբայրս ինչ եղավ, նրանք էլ մեռան երևի, խաբար չունեմ իրենցից»:

Այդ ժամանակ Առաքելը սթափվեց, ինչպես չի մտածել ասելու, որ եղբայրը՝ Ղազարը, քույրը՝ Մարոն, և հայրը ողջ են, ապրում են Լոս Անջելեսում:

Առաքելին լսելով՝ Լուսինը վեր թռավ ու սկսեց պարել և համբուրել Առաքելին: Բոլորն ուրախ ծիծաղում էին:

Առաքելն ասում է, որ քույրն ու եղբայրը իրենց ընտանիքներով են, իսկ հայրը ողջ ու առողջ է: Առաքելը շատ տեղեկություններ ուներ նրանց հայտնելու և ուրախացնելու: Հայտնեց նաև, որ Մարոյի աղջկան՝ Քնուշին, ամուսնացրել են իգիթ Արմենակի հետ:

- Առաքել, Աստված ուղարկեց քեզ,- ասաց Լուսինը,- մեզ կենդանություն բերեցիր, մեռած մարդիկ էինք մինչև հիմա,

մտածում էի, որպես ինչ ենք ապրում այս երկրի վրա, աննպատակ, բարեկամ էլ չունենք, ոչ մի տեղից բարի լուր չունենք: Երեխա էլ չունենք, որ գոնե իրենով ուրախանանք: Մի երեխա ունեինք, մեռավ, թաղել էլ չկարողացանք, թուրքը թողեց, որ թաղենք...

Էլ չկարողացավ շարունակել, սկսեց լաց լինել, Գառնիկն էլ հետը: Ինչ արեց թուրքը, բոլորիս սգավոր դարձրեց, չթողեց լան, իրենց մեռելներին թաղեն:

Առաքելը հանգստացրեց իրենց, ասաց, որ մի քանի օրից պիտի վերադառնա Ամերիկա, կպատմի իրենց մասին, տեսնեն՝ որևէ բան կարող են մտածել իրենց համար: Զարմացան, թե ինչպես պիտի գնա Ամերիկա, որովհետև դեռ չէր պատմել իր պատմությունը: Այս անգամ Առաքելը պատմեց իր պատմությունը: Թե ինչպես է հասել Ամերիկա: Պատմեց Վարդի մասին, թե ինչու է այստեղ այսօր:

Լուսինի վրա հանգստություն իջավ, դեմքին ժպիտ եկավ, կարծես մեջն էլ կյանք մտավ: Օրհնեց Առաքելին, նայեց Գառնիկին, ասաց.

- Տեսար, ինչո՞ւ մեզ կյանք է տվել Աստված, այս բաները պիտի լսեինք, չես իմանում՝ դեռ ինչեր կարող է լինել:

Այսպես խոսելու, ասելու շատ բաներ կար, ու Առաքելը անընդհատ խոսում էր, որքա՜ն պատմեց ծանոթների մասին: Այսքան նորություն որտեղի՞ց պիտի ունենային այս խեղճերը: Առաքելն էլ բավականություն ստացավ, նախ, որ եկավ իր գյուղը տեսավ, իր տունը տեսավ, իր հողը տեսավ, իր ջուրը խմեց, իր հայրենիքը տեսավ: Քանի օր էլ մնաց այս մարդկանց հետ, ուրախացրեց, հետագա անելիքների մասին էլ որոշ ցուցումներ տվեց, իմացավ՝ նամակ հասնո՞ւմ է այդտեղ, հասցե ունե՞ն, թե՞ ոչ:

Քանի օր հետո վերադարձավ Վարդի մոտ:

***

Քամալը երկար տարիներ աշխատեց Ստամբուլի վիզաների գրասենյակում, երկար տարիներ ուսումնասիրեց, որ գտնի մի շյուղ, որից կարողանա կառչել իր նպատակի համար, բոլոր հայերին գոհացրեց, որովհետև գիտեր՝ նրանց ուզածն ինչ էր և չէր մեղադրում նրանց՝ ասելով, որ թողնում են իրենց հողը, տուն ու տեղը, գնում օտար երկիր, այն, ինչ չեն ունեցել իրենց հողի վրա, ո՛չ, չէր մեղադրում. մի կյանք ունեն, չափավոր կարճ, ինչո՞ւ ապրեն տառապանքով, որն իրենցն էր: Իրենց հայրենիքն էր, բայց իրենցը չէ հիմա, քշված են, տեղահան եղած, կողոպտված են, վե՛րջ, այլևս հայրենիք չունեն:

Քամալը երկար սպասեց, որ Վարդին տեսնի՝ կարծելով, որ Վարդն էլ կանցնի այդ դռնից, որ Վարդին էլ վիզա պետք պիտի լինի, շատ փնտրեց, շատ սպասեց: Այնքան կին անցավ իր մոտով, քողով, թուրքի նման հագնված, և հայեր էին բոլորը, ոչ մեկը իր Վարդի նման չէր, իր Վարդն ուրիշ էր, իր Վարդը քնքուշ էր, Վարդի հոտն ուրիշ էր:

«Խեղճ Քամալ, մեղք եղավ քեզ»:

Վարդին վիզա պետք չեկավ, Վարդն անօրեն անցավ Հունաստանի սահմանը, Ղազարի ցուցումներով, մի ճամփա կար, որի տեղը պետք էր իմանալ:

Իսկ երբ եկավ Ստամբուլ, Վարդին նորից պետք չեկավ վիզան, եվրոպացի էր համարվում, և ոչ մեկը իրենից ոչինչ չհարցրեց:

Քամալը ուրիշ ձևով ուզեց գտնել Վարդին: Խոսք էր տվել Մուրադին, խոսք էր տվել նաև իրեն: Երբ տեսնում էր, որ կարող էր խնդրել կամ դիմել, անում էր: Քանի-քանի մարդու է խնդրել՝ ասելով, որ ծանոթ է մեկին, ու կորցրել է կնոջը՝ անունը՝ Վարդ, ուզում է գտնել, որ երբ հասնեն Ամերիկա, չմոռանան, միգուցե գտնեն: Ասեն նաև, որ որդին՝ Մուրադը, փնտրում է իրեն ու տալիս էր իր հասցեն: Խնդրում էր չմոռանալ, բայց գնում, մոռանում էին: Շատ սպասեց Քամալը, ոչ մի տեղից պատասխան չուներ: Հուսահատվում էր, ամեն օր աղոթում, Աստծուն խնդրում: Ինքն էլ այդ ձևով տանջվեց:

Աշխատանքից հետո մինչև տուն մտնելը մի քանի րոպե մոտենում, Բոսֆորի նավերին էր նայում, շրջում ջրի ափերին, նայում ծովին, մտքերով հեռանում, գնում, փնտրում, բայց որտեղից գտնի, ինչ անի, որ գտնի փնտրածը, ինչպես կորցրեց, սիրում էր և ոչ մի վայրկյան չխունացավ իր սերը, ընդհակառակը, թեժացավ, ու անհամբերությունից ավելի արագ-արագ էր շունչ տալիս կրակին, որ թեժանա ու չմարի: Հավատում էր, որ Վարդը կա, որ ապրում է, պիտի գտնի նրան և շատ բան ունի ասելու, որ պիտի շատ սիրի ու չամաչի, որ ինքը թուրք է: Որովհետև գիտեր արդեն, թե ով է ինքը, որ արժանի է Վարդին: Անհամբեր ուզում էր ասել, որ ինքը հայ էր և հպարտ է հիմա և չի ամաչում իր արարքի համար, որովհետև սիրել էր: Այսպես ամեն օր, ամեն իրիկուն, տուն չմտած, այս գեղեցիկ երիտասարդը շրջում էր ջրի եզերքով, նայում ջրերին, նայում հեռուն, այնուհետև քայլերն ուղղում դեպի տուն, բայց չէր ուզում մտնել, ուզում էր ինքն էլ հեռանալ, գնալ, ինչպես անում էին շատերը, վերցնել մորն ու զավակին գնալ, բայց ո՞ւր: Սիրում էր այն տունը, ուր ծնվել էր, ուր անց էր կացրել իր մանկությունը, որը թողել, դուրս էր եկել, ինչպես բոլոր հայերն էին արել, ինքն էլ հայրենիք չուներ, ինքն էլ հայր չուներ, թուրքն էր սպանել իր հորը:

«Ինչո՞ւ ես պիտի որբ մնայի, չվայելեի իմ հորը: Ես շատ կարիք ունեմ հայրական խոսքերի, հայրական խրատների: Ինչո՞ւ հիմա իմ երեխան մայր չունենար, ինչո՞ւ հիմա ես կին չունենայի, ինչո՞ւ, ասա՛, մայրս, ասա՛, ինչո՞ւ դու էլ ամուսին չունենայիր, որ նստեիր, սրտիդ ուզած ձևով վայելեիր: Ինչն էր խանգարում մեզ: Ես չեմ կարող հաշտվել այս մտքի հետ: Երբ մտածում եմ, խելքիս եմ գալիս, անեմ, ասա՛, ինչ անեմ»:

Քամալը երբեք այսպես չէր խոսել, չէր ուզում, որ մայրը նեղվի, որ իր մտածմունքը չավելացնի մոր վշտերին, բայց էլ չէր կարող մենակ տանել այս իր հոգսերի ծանրությունը: Սիրտը չէր դիմանում, ո՛ւմ հետ խոսեր, խոսակից չուներ, պիտի խենթանար, գաղտնիք ուներ ինքը, պետք է պահեր:

- Գիտեմ, տղա՛ս, քո զգացածը ես էլ եմ զգում, բայց, կարծում եմ, պիտի համբերենք դեռ, շատ դժվար է, գիտեմ, թե ինչպես պիտի լուծվի, դա չգիտեմ: Գիտեր, որ տղան հետաքրքրվում է, բայց այդքան տեղափոխություններն իրենց կարող էին խանգարել, տեղահան են եղել, իրենց իսկական հետքը կորցրել են արդեն:

- Դու միշտ ասում էիր, որ սխալ էի, չպիտի փախցնեի Վարդին, բայց ի՞նչ անեի, որ ունենայի իրեն, ուրիշ միջոց չկար: Քեզ ասեի, չպիտի ուզեիր, հայ էր: Ես հայի էի սիրել, ի՞նչ անեի, ինձ ասա՛, ինչպե՞ս մոռանայի, եթե չէի կարող մոռանալ:

Պատմում էր մորն ու լաց էր լինում, մայրն էլ հետը: Պատմում էր, թե երբ էր տեսել, ինչպես էր տեսել, որտեղ էր տեսել ու վերհիշում էր իր ջահել սրտի զգացմունքները. որքա՜ն էր շրջել այդ գյուղի բոլորը ոտքով, ձիով, այնպես արել, որ իրեն չնկատեն հայերը: Երբեմն էլ պաշտոնական զինվորականի հագուստով, ձիով, որ կարողանար անցնել տան մոտով, որ ոչ մեկը չհարցներ, թե ո՛վ է ինքը, ի՞նչ է անում այդտեղ:

Մոտ մեկ տարի, հոգով հետն է եղել, անունն էլ չի իմացել, մինչև կարողացել է աղբյուրի մոտ հարմար առիթը գտնել: Հեշտ չի եղել իր համար փախցնելը, հազար բան է մտածել, ճիշտ էր անում արդյոք, սխալ էր անում: Ազնվությունը խոսում էր մեջը, բայց սիրտն ուրիշ բան էր թելադրում:

Սիրում էր, ուրիշ բան անել չէր կարող:

Ահա թե ինչ եղավ. ինքը մնաց ձեռնունայն, իր որդին՝ առանց մայր: Հույս չուներ բոլորովին, ապարդյուն անցան իր բոլոր ջանքերը, ինչու շարունակեր փնտրել իզուր: Մայրը տղային սփոփելու համար ոչ մի խոսք չէր գտնում, միայն ասում էր. «Մի քիչ էլ սպասիր, Աստված մեծ է, մի՛ մտածիր, տղադ կմեծանա, կգտնի մորը»: Իսկ մտքում անհանգստանում էր. «Եթե ողջ մնացած լինի միայն»:

Այնքան էին լսել վատ լուրեր, որ արդեն մտածում էին՝ ամեն ինչ վատ է վերջանում:

Քամալը շատ խոսեց հոր մասին, հիշում էր, թե ինչպես էր չարաչար պայքարում քար ու հողի հետ արորը քաշելու ժամանակ, եզներ էլ չունեին, էշին էր կապում, էշն ինչ ուժ ուներ, որ քաշեր այդ ծանր խոփը:

Սիրում էր, երբ հայրը երգում էր. այդ ժամանակ կյանքը քաղցր էր թվում, նույնիսկ չէր իմանում՝ ինչ է ասում, չէր հասկանում, բառերը չէր զանազանում. փոքր էր դեռ:

Առաջին անգամ էր մոր հետ այսպես երկար խոսում և բացատրվում. միշտ կարծել էր, որ չի կարողանա մոր մոտ բացել իր սիրտը, որն այդքան բարակել, ցանց էր դարձել, բայց տեսավ, որ մայրը կարող էր իրեն հասկանալ, այն մայրը, որն ինքն էլ անհարմար է զգացել միջամտել, փորփրել իր տղայի նուրբ հոգին: Լավ տեսնում էր, որ տանջվում էր, քնի մեջ երբեմն էլ անհասկանալի բաներ էր խոսում, միայն զգացվում էր, որ կարոտը մեծ էր, շատ մեծ:

Դրանից հետո մայր ու որդի հաճախ էին խորհրդակցում, մայրը հայերեն էր խոսում հետը, որ կարողանար հասկանալ ավելի լավ, արդեն կարդում էր և հասկանում կարդացածը: Գյուլվարդը գրագետ չէր, բայց խոսել գիտեր, կարող էր ինչ-որ չափով օգնել տղային չհասկացածը հասկանալու:

Քամալը շատ ընդունակ էր, և շատ ուշ չէր իր համար լեզու սովորելը: Փոքր ժամանակ ընկերներից լսել էր հայերեն խոսք, բայց ուշադրություն չէր դարձրել. եթե իմանար, այն ժամանակ կսովորեր, ոչինչ դեռ ուշ չէր իր համար: Մուրադը տեսնելով, որ հայրը հայերեն է կարդում, մի անգամ հարցրեց.

- Պապա՛, ինչու ես այդ լեզուն կարդում:

- Որ մորդ գտնեմ, հայերեն խոսեմ հետը, զարմացնեմ իրեն:

Ուրիշ անգամ այլևս չհարցրեց, թողեց, որ հայրը զբաղվի դրանով, երեկոները այդքան մտազբաղ և նեղված չէր լինի գոնե:

Մուրադն ավելի բարձր դպրոց գնալ սկսեց. նպատակ ուներ. մեկ ուզում էր քաղաքագետ դառնալ, մեկ՝ շինարար-ճարտարապետ, երբեմն էլ բժիշկ դառնալ էր ուզում: Մեծ մայրը ասում էր, որ շինարար-ճարտարապետն իրեն ավելի կվայելի, բժիշկն էլ վատ չէ: Եթե լավ մտածի ու այս երկուսից մեկը ընտրի, շատ լավ կլինի:

Մուրադը շատ էր սիրում մեծ մորը, նստում էր վերջերս, մեծ մարդու պես խորհրդակցում հետը: Պատմում էր դպրոցում եղածը, ուսուցիչների մասին, ընկերների մասին:

Գյուլվարդն արդեն մեծ մարդու տեղ էր դնում թոռանը: Ուղարկում էր խանութ առևտուր անելու: Հետը միշտ խոսելու բան գտնում էր:

Գյուլվարդը երկար ժամանակ՝ ամուսնու մահից հետո, խոսակից չէր ունեցել: Քամալը սովորում էր. տանր չէր, հիմա լավ էր, Մուրադը հորից շուտ էր գալիս դասից, կնրակուրը եփած

էր, տունը մաքուր հավաքած: Գյուլվարդը ամեն ինչ անում էր, որ գոհացնի տղային և թոռանը:Նրանց շորերը միշտ մաքուր լվացած, արդուկած էին:

Մուրադն արդեն հոր բոյին էր հասնում: Հայրն ուրախ էր, որ տղա ունի, որ մայր ունի նաև, թե ոչ, ինչպես պիտի տղային պահեր, մեծացներ, որ իր բոյից էլ անցներ:

Միշտ փառք էր տալիս Աստծուն, որ մեկին առավ, բայց երկուսին պահեց իր համար: Ինքը լավ գիտե հայերի պատմությունը, ինքն այնտեղ էր, երբ իրար կորցնում էին, ընտանիքում մի քանիսը մեռնում էին, մնացողները փախչում էին, փախչելիս էլ կրակում էին վրան, որ ինքն էլ այդտեղ հոգին ավանդի: Այնքան դեպքեր էր տեսել, դիմանալու բան չէր, բայց դիմացավ հանուն իր հայի:

Մնաց մինչև վերջ, որ ամենավերջինին էլ փրկի, բայց ինքը շատ քիչ էր միլիոն ու կես մարդու համար, այդ ինքը գիտեր. հիշում է այն թափորը, որ գնում էր իր առջևից, ծայր չուներ, երբ պիտի կարողանա մոռանալ այդ: Այդ բոլորը գնացին մեռնելու: Այդ բոլորը մորը չէր պատմել Քամալը, միայն ասում էր, որ աշխատանքի է գնում: Փոշոտ, կեղտոտ ետ էր գալիս ու ոչ մի բացատրություն չէր տալիս մորը: Նորից մաքուր հագուստներով գնում, փոշոտ, կեղտոտ ետ գալիս: Ինքը զինվորական կրթություն ուներ և զինվորական ծառայության մեջ էր, տոկունություն էր պահանջվում իրենից, բայց անմարդկային էր իրենց արածը, անընդունելի Քամալի համար:

***

Հունվար ամսի քսանհինգն էր. Մուրադի ծննդյան օրը: Ամեն տարի այդ օրը Քամալը նշում էր տղայի ծննդյան օրը: Սկզբի տարիները նշում էր, որից հետո ամբողջ գիշերը լացով էր անցկացնում, բայց հետո, երբ տղան շուտ-շուտ մեծանում էր,

ուրախ խաղում էր հետը, ծիծաղեցնում, ինքն էլ ուրախանում: Հիմա ավելի հպարտ էր՝ տեսնելով բարձր հասակը, գեղեցիկ կառուցվածքը: Շատ էր փնտրում, թե ինչով նմանեցնի մորը, ավելի շատ իրեն էր նման, միայն աչքերն էին մորը:

Այսօր տասնհինգ տարեկան էր: Քամալը մտածեց մորը վերցնի, գնան մի ռեստորան, նշեն այդ օրը, տղան կուրախանա՝ արդեն մեծ է: Մայրը գրեթե դուրս չէր գալիս տանից: Գեղեցիկ հագնվեցին, երեկոյան դուրս եկան: Ռեստորանը լեփ-լեցուն էր մարդկանցով, ամեն երեկո այդպես էր, երաժշտություն կար: Շատ համեղ ճաշեր կերան, բավական ուշ վերադարձան տուն: Շատ ուրախացավ Մուրադը, շնորհակալ եղավ հորը:

***

Մինասը հիվանդանոցից դուրս եկավ, լավ էր որոշ ժամանակ, բայց շատ երկար տևեց, անընդհատ ախորժակ չուներ, լավ չէր սնվում, այդպես էր եղել արդեն երկար ժամանակ մինչև ամուսնանալը: Մենակ էր ապրում, ուտելու ժամ չուներ, պատրաստող չուներ տանը, ճաշարան ամեն օր չէր կարող գնալ: Սովորել էր այդ տեսակ սնվելուն, և դա անդրադարձել էր առողջության վրա:

Հիմա կնոջ պատրաստածներն էլ շատ չէր հավանում: Միշտ ասում էր, որ մի քանի ճաշատեսակ սովորի մորից, ծիծաղով էր ասում, որ չնեղացնի, բայց ճշմարտություն էր ասածը:

Արևհատը փորձեց սովորել, մի քիչ դժվար է, ձեռք ձեռքի վրա տարբերություն կա, կամ մի բանը քիչ է դնում, կամ ավել, նույնը չի ստացվում: Նուրբ էր Մինասը, հորաքրոջ ճաշերը շատ էր սիրում, ջահել ժամանակ նա էր իրեն կերակրել, այն, ինչին սովորում են, դժվար է փոխելը: Բայց դա չէր իսկական պատճառը. Մինասը հիվանդ էր, ուրիշ տեսակ հիվանդ: Մինասը սիրահարված էր. դա էր իր ախորժակ չունենալու պատճառը: Մտքում կրկնում էր. «Ես սիրում եմ, նա ինձ չի սիրում»: Ամեն ինչ անում էր, որ մոռանա, անկարելի էր: Վարդի հետ գալու օրերն էր հաշվում: Օրը գիտեր վերադարձի, շատ էր մտածում, արդյոք հանդիպեց հորը, որտեղ է հիմա, փնտրո՞ւմ է Քամալին. այս բազմաթիվ հարցերը իրեն հանգիստ չէին տալիս: Դրա հետ միասին պիտի խոսեր կնոջ հետ, աղջկա հետ պիտի խաղար, սիրեր, ինքը ո՛ր մեկն աներ: Ուզում էր չհիշել, երևի հիվանդ էր, գիտակցաբար չէր ուզում մտածել, բայց ինքնաբերաբար մտածում էր, քանի տարի է արդեն՝ ինքն իրեն չի կարող համոզել, որ սխալ է իր արածը: Գնում է՝ հորաքրոջ աղջկա ձեռքը բռնած: Աղջիկը մեծ էր արդեն, քայլում էր, խոսում, լավ զբաղեցնում բոլորին: Հորաքույրը շատ էր ուրախանում, երբ տեսնում էր իրենց, լավ ընդունում էր, հյուրասիրում, ամենահամեղ ճաշեր էր պատրաստում Մինասին ընդունելու ժամանակ, գիտեր, որ Մինասը ամեն ինչ չէր սիրում ուտել: Տեսնում էր, թե ինչպես է փոխվել, նիհարել, հարցնում էր.

- Մինա՛ս, տղա՛ս, ի՞նչն է պատճառը, որ տխուր ես, ի՞նչ ես զգում, որ մենք չգիտենք, ինձ ասա՛, տղա՛ս, միգուցե մի բանով կարողանամ քեզ օգնել, որտեղդ է ցավում, ասա՛ տեսնեմ:

- Սիրտս է, հորաքո՛ւյր:

- Սի՛րտդ, հիվանդանոցում բան չգտան, ո՛չ, սխալվում ես, սրտիդ բան չկա, ամեն ինչ լավ է՝ ասացին:

- Հորաքո՛ւյր, սիրտս հանգիստ չէ:

- Ինչո՞ւ հանգիստ չէ, ի՞նչ ունես, փառք Աստծո, կին ունես, երեխա ունես, էլ ո՞րն ասեմ, ի՞նչդ է պակաս, ասա տեսնեմ:

- Չգիտեմ՝ ինչպես ասեմ, որ հասկանաս, հորաքո՛ւյր, լավ է չասեմ:

Հորաքույրը մտածմունքի մեջ ընկավ, գլուխը շարժեց, կուզեր, որ իր մտածածը սխալ լինի: Խելացի կին էր հորաքույրը, կասկած ուներ սրտում, բայց չխոսեց, որ չհրահրի Մինասին, այդպես էլ չէր կարող թողնել: Մինասը ոչ մեկը չուներ, որի մոտ կարողանար իր սիրտը բացել, ինքը պետք է խառնվեր այդ գործին:

- Հորաքո՛ւյր, քեզ ուզում եմ ասել, բայց իմ գաղտնիքն է, չեմ ուզում, որ ուրիշ մեկն իմանա, գիտեմ, որ խենթություն է արածս, բայց իմ կամքից անկախ է, և ուժ չունեմ հեռացնելու ինձանից, իմ մտքից, իմ սրտից, ինչ անելս չգիտեմ, ամուսնանալս էլ չօգնեց:

- Տղաս, ես լավ հասկանում եմ քեզ, բայց դու այս ձևով ապրել չես կարող, պիտի համոզվես, որ նա քեզ համար չէ, նա ամուսնացած կին է և քեզ ոչ թե չի սիրում, նա քեզ սիրում է որպես ընկերոջ, որպես լավ մարդու, նա քեզ հարգում է և մտքով էլ չի անցնում, որ դու այդքան խորն ես ընդունում իրեն:

- Դու գիտես, հորաքո՛ւյր, դու գիտես, թե ով է ուրեմն:

- Գուշակեցի, դժվար չէր հասկանալը, գիտեմ, թե ինչ է սերը, ես քեզ չեմ մեղադրում, որ սիրել ես, միայն դու պետք է գիտակցաբար քեզ զսպես: Երբ տեսնում ես, որ քո սիրուն չի պատասխանում, նա չի էլ մտածում, իր սիրտը ուրիշ տեղ է, քեզ անկարելի է իրեն հասնելը, իրեն տիրանալը:

Մենակ դու չես, շատերն են սիրում, բայց կարողանում են ղեկավարել իրենց: Քո կինը բարձր արժանիքներ ունի, դու այլևս ուրիշին մի՛ նայիր, այն, որ քեզ չի ուզում պատկանել, մոռացի՛ր: Ընտանիք ես կազմել, տե՛ր կանգնիր, այն, որ քոնը չէ, ուրեմն չէ, քեզ տրամադրիր ուրիշ կերպ մտածելու, կտեսնես, որ կկարողանաս, դու խելացի տղա ես, մի՛ նվաստացիր այդքան: Ես վստահ եմ, որ կարող ես:

- Ճիշտ ես, հորաքո՛ւյր, բայց ժամանակ է պետք ինձ երևի: Շատ եմ փորձել, դեռ չեմ կարողացել: Լավ եղավ, որ խոսեցի, թե չէ լռությունն ինձ շատ էր խանգարում: Պետք է, որ հաջողեմ:

Հորաքույրը հաց դրեց, տղաներն էլ եկան, կերան, սուրճ խմեցին, աղջկան էլ սիրեցին, հետո Մինասը թեթևացած սրտով տուն գնաց:

Կինը սպասում էր, հաց չէր կերել, սեղանը պատրաստ էր, սպասում էր իրենց, երեկոյան ճաշն էր: Մինասը չմերժեց, կնոջը հետ միասին մի քիչ կերավ, կինն ուրախացավ:

***

Վարդը լրիվ ուրիշ մոլորակի վրա էր սավառնում, ուրիշ իղձեր էր փայփայում, ավելի առողջ էին մտքերը, արդեն իրեն տերն էր կարծում այդ տեղանքի: Շուրջբոլորը հավաքել, մաքրել, սրբել, իրեն տիրուհի էր համարում, իրեն մնում էր նստել, սպասել: Մի օր կգա իր արքայազնը որդու հետ, ինքն իր ապարանքի մեջ էր, վերջ:

Չէր ուզում իր միտքը շեղել ուրիշ բանով: Մեկ է, իր մտքի թելը մի ուղղությամբ է գնում, իրեն մի ճամփա էր ցույց տալիս, որն արդեն բռնել էր ու հասել էր վերջնակետին, այլևս ուրիշ ճամփա չի տեսնում, թելի ծայրն իր ձեռքում է, վերջ: Քանի տարի մտածում էր, ելք չէր գտնում, տարբեր ծուղակներից անցավ, փախավ, տարբեր անելանելի վիճակներ ապրեց, և այդ ամենը իր ջահել, գեղեցիկ օրերը խորտակեցին, բայց կարողացավ հաղթահարել, գոնե այդպես էր կարծում: Շատերին կորցրեց, վստահ էր, որ վերջում բոլորին կգտնի, բայց թե ով ինչպես կների, դա էր, որ չգիտեր: Աստծո վրա է հույսը դրել:

Առավոտյան հարևանուհին եկավ, տեսավ, զարմացավ Վարդի արած մաքրությունից, շատ սիրեց Վարդին՝ ասելով, որ այս տանը պակասում էր նրա նման մեկը: Ուրախացավ նաև, որ իրեն էլ շունչ տվեց ապրելու. կյանքը մեռած էր, մեկը չուներ, որի հետ կարողանար խոսել, շուտով խոսելն էլ պիտի մոռանար: Դեռ չգիտեր, թե ով է Վարդը՝ որպես անձնավորություն: Ինչո՞ւ է եկել այստեղ, որտեղի՞ց է եկել և ի՞նչ նպատակ ունի: Վարդը ոչինչ չի պատմում, չգիտի, որ հայ է դիմացինը: Վարդը ուզեց

որոշ ուտելիք գնել իր համար, դիմեց հարևանուհուն: Դեռ չէր որոշել, թե որքան պիտի մնա, հորն էր սպասում դրա համար:

Հայրը գնացել էր, քանի օր է՝ չկա, բայց մտածելու բան չունի: Հայրը իր հայրենիքում էր, ճանաչում էր, չէր կորչի, լավ թուրքերեն գիտեր, ոչ մեկը չի կասկածի, հետո օտարերկրացի է, ո՞վ ինչ պիտի կասկածեր: Վերադարձին Վարդը կորոշի իր ասելիքը, մեկ է, իրենց ճանապարհը բաժանվելու է Ստամբուլում, եթե ինքը վիզա չունենա, ոչ մեկն իրեն Ամերիկա չի ընդունի: Առաջ այդպես չէր. մարդիկ որպես փախստական էին գնում: Վարդն անելանելի վիճակի մեջ էր նորից, բայց սիրտն ուրախ էր, այդ դատարկ տան մեջ իրեն մենակ չէր զգում, ամեն մի առարկա իրեն ինչ-որ բան էր հիշեցնում, կարծես խոսում էր հետը մեղմիկ, ու ինքը լուռ լսում էր, երբեմն պատասխանում: Ինչ զգացում, ինչ երևակայություն, բայց քաղցր էր իր համար: Մտածում էր, որ հարյուր տարի էլ կապրի այդտեղ և չի ձանձրանա:

Հիշում էր Գյուլվարդին, որ համբերատար, հանգիստ խոսում էր հետը, բացատրում չիմացածը, չէր ուզում, որ ծանր գործերի մեջ մտնի, տղամարդու գործերն ինքն էր անում, որովհետև Քամալը միշտ բացակա էր, միշտ զբաղված էր:

Երեկոյան Քամալը ուզում էր իրենց հետ լինել, երբ ուշ էր գալիս, ոչինչ անել չէր կարող, ամեն ինչը արված էր արդեն:

Երեք օր էր անցել. հայրը չկար, նորից չորս, հինգ օր. Վարդը մտահոգվեց, թե ինչո՞ւ այսքան երկար պիտի մնար: Մտածեց՝ արդյոք ծանոթ մարդկանց հանդիպեց, թե՞ ոչ, պիտի շրջեր, գար:

Հարևան կնոջ հետ չէր կարող այդ մասին խոսել, չէր կարող նրա հետ խորհրդակցել: Իր մտքով միայն դա էր անցնում: Շատ ճիշտ էր, Առաքելը տաք անկյուն էր գտել, իր տաք անկյունը, ուր միշտ նստում էր: Վատ էր, լավ էր, իրենն էր. տարիներ ապրել էր այդ տանը, ինքն էլ շինել էր այդ տունը, այդ օջախը, այդ

թոնրատունը, ինքն էր քարը քարին դրել, ամեն ինչին ծանոթ էր: Նա, ով հետո է նստում մեջը, չգիտի տան ամեն մի անկյունը, քանի տարի էլ ուզում է մնացած լինի: Որ ասեմ վայելում են, ո՛չ, այդ մարդիկ սիրտ էլ չունեն մանրամասն ուսումնասիրելու այդ տունը, այնքան որ, դրսում չեն:

Բայց Առաքելը դա սարքել էր, որ իր ամբողջ կյանքը այդտեղ անցկացներ, այդպես էր այն ժամանակ, ո՛ւմ մտքով էր անցնում Ամերիկան: Բայց կյանքն այս է, չգիտես ինչ է լինելու վաղվա օրը:

Առաքելը հիմա Ամերիկայում, ո՞վ գիտի, ինչ տան մեջ է ապրում, բայց այս տունը իրեն սիրելի է, ինչպես առաջին օրը, որ նստել է մեջը, մտքի մեջ ասել էր. «Փառք Աստծո, ես էլ մի անկյուն ունեցա»: Այո՛, դա անկյուն էր, տուն չէր, բայց իրենն էր: Հիմա նույն զգացումն է իր մեջ. հարազատ է, որովհետև իր հայրենիքում է ինքը, իր պապերի երկիրն է Մուշը, ինքը մշեցի է, ամերիկացի չէ: Բայց ճակատագիրն իրեն այնտեղ նետեց, չթողեց, որ իր Մուշում աճի, զարգանա, ոչինչ, որ շուտ չէր զարգանա, թող ուշ զարգանար:

Իր օդն ու ջուրը չթողեցին վայելեր:

Անգո՛ւթ ազգ, ե՛րբ պիտի այս արածների համար պատասխան տա, ո՞վ գիտի: Ինչ օգուտ, եթե տա էլ, կարո՞ղ է ետ բերել այն կյանքերը, որոնք...

Որքան խոսենք, այնքան խոսելու բան կունենանք:

Առաքելը մի շաբաթ իր տան մնալուց հետո, ուզեց վերադառնալ: Լուսինն ու Գառնիկը արցունքն աչքերին բաժանվեցին Առաքելից: Առաքելը մեծ հույսով իրենց թողեց՝ մաղթելով կրկին տեսություն: Այդպես էլ պիտի լիներ, որովհետև հարազատ չունեին այդտեղ, բոլորը դրսում, օտար երկրներում

էին, բայց ազատ էին, վախ չունեին, մարդ էին իրենց զգում: Առաքելը, այնտեղից դուրս գալով, գնաց Մուշ, այնտեղ էլ տեղ չթողեց, ման եկավ իր բոլոր իմացած տեղերը, մի քանի օր մնաց հյուրանոցում, հետո վերադարձավ Վարդին վերցնելու ու շարունակելու ճամփան դեպի Ստամբուլ. այդ էր նախագիծը երկուսի:

Վարդն արդեն սպասում էր հորը, կարոտել էր: Շատ էր սիրում, փոքր հասակից միշտ կապված է եղել հոր հետ, սիրում էր հոր գործերին խառնվել, հորն օգնել, շատ անգամ մենակ չէր թողնում նրան: Իզուր չէր, որ հայրն ուզեց գալ Թուրքիա աղջկա հետ, որ մենակ չթողնի իրեն, բայց ճակատագիրը փոխել չես կարող. ինչ որ գրված է, լինելու է:

Վարդն օրվա մի ժամանակը նստում է այն հղկված քարին ու նայում ճանապարհին, հորն էր սպասում: Հետաքրքիր էր, որ այդ ճամփով ոչ մեկը չէր անցնում, գրեթե ելք ու մուտք չկար, այդ գյուղը օտար չէր մտնում: Իրենք իրենցով էին: Իրենց տունը, իրենց անասունը, իրենց արորը, իրենց բաղն ու բախչան:

Այսպես տարիներ ինչպես են ապրել մարդիկ, գյուղը ճանապարհի վրա չի եղել:

Դրա համար էլ Օրհանը այդ գյուղում է որոշել կառուցել իր բույնը, իրենց ապահով զգալու համար, այստեղ իրենց ոչ ոք չէր ճանաչի:

Վարդը հեռվում տեսավ հորը ձիու վրա, վեր կացավ, կանգնեց, թաշկինակը հանեց գրպանից, շարժեց՝ ցույց տալու համար, որ տեսել է նրան: Հայրը արագացրեց ձիուն, եկավ, իջավ, փաթաթվեց աղջկան, համբուրեց: Վարդը շատ ուրախացավ, ասաց.

- Լավ տեսար տունդ, ինչպես դիմացար այդքան:

- Կպատմեմ՝ ինչպես տեսա և ում տեսա այնտեղ, թող մի քիչ հանգստանամ, կուզեմ մի բան ուտել, եթե ունես: Ու չորս կողմը նայեց, չճանաչեց, այնքան մաքուր էր ամեն ինչ, ասաց.

- Դու էլ ժամանակ չես կորցրել, ինչպես տեսնում եմ, այս ինչ մաքրություն է: Անճանաչելի ես դարձրել այս տունը:

- Այս տունը այսպես էր, հայրիկ, որ ես առաջին օրը մտա, այդ հետո էր դարձել անճանաչելի: Հայր ու աղջիկ ներս մտան, այնտեղ էլ ամեն ինչ մաս-մաքուր տեսավ, ասաց.

- Մարդու տանը որ կին չլինի, ինչ կլինի վիճակն արդյոք: Հիմա, այո՛, տուն է իսկական, ապրես, աղջիկս:

Հայր ու աղջիկ ճաշեցին ուրախ:

Առաքելը պատմեց անակնկալները, զարմացրեց Վարդին, երկար-երկար ամեն ինչի մասին խոսեց, պատմեց Մուշի մասին նաև:

Շատ բավարարված ետ էր եկել իր ճամփորդությունից, հոգնած էր միայն, դա էլ ոչինչ: Վարդն էլ պատմեց, թե ինչպես է անցկացրել առանց իրեն, արդեն երևում էր, թե ինչով էր զբաղված եղել:

Ցույց տվեց տղայի փոքրիկ շապիկները: Առաքելը վերցրեց, սիրեց, հոտը առավ իր թոռան, բայց չուզեց լաց լինել, հազիվ իրեն զսպեց:

Առաքելը ուզում էր երկար, շատ երկար խոսել Վարդի հետ, մտածում էր մնալ այստեղ, այս խաղաղ անկյունում, աշխարհից կտրված, ամեն ինչից հեռու, խոսելու համար, վերհիշելու իրենց կյանքը՝ լավ թե վատ: Ասել այն, ինչ անհայտ էր մյուսին, այսքան տարիներ իրարից հեռու են եղել, հազիվ էին տեսել իրար: Վարդը մեծ էր, հայրը կարող էր սիրտը բանալ, ցույց տալ՝ որքան նեղված օրեր է ունեցել, որ մենակ է տարել՝ չուզենալով մորը նեղել, ու միշտ ինքն է հույս տվել՝ ամեն ինչը ներս գցելով: Շատ դժվարություններ են ունեցել ու հիմա, երբ լավ

են համարում իրենց, Վարդն է մնում հեռու իր բոլոր հոգսերով: Այդ շատ էր մտահոգում Առաքելին, և չէր կարծում, որ հարթ պիտի վերջանա, այս դրությունը գնալով խճճվում էր ըստ իրեն: Հույս ունեին գտնել հետքը Քամալի, բայց անհույս էր դա, որտեղից գտնեն, դա հսկա խոտի դեզի մեջ մի ասեղ փնտրել էր նշանակում: Ինչպես պիտի գտնեին, և երբ կլինի դա: Առաքելը դեռ մտածում էր, չէր ուզում խոսել Վարդի հետ, որ չհուսահատվի: Գնաց փնտրեց, շատ մարդու հետ խոսեց, Մուշի գրեթե բոլոր փողոցները ման եկավ, այդ էլ չի ասել Վարդին: Շատ էր ազդել Վարդի վիճակը. ձգտում էր որդուն գտնել: Այդ շատ նման էր այն վիճակին, երբ փնտրում էր Վարդին, սարեր, ձորեր ընկած՝ չէր համարձակվում մտնել թուրքի գյուղերը՝ փնտրելու համար: Եկել էին մինչև այդ գյուղը, ուր հիմա Վարդը այդքան անձնվիրաբար հաստատվել էր՝ չորս կողմը մաքրելով: Այո՛, եկել էին, բայց չէին մտել գյուղ, իմանալով իրենց սպասվող վտանգը՝ հետ էին դարձել: Վարդը դարձավ իրենց վիշտը այդ օրվանից, հետո էլ առավել, երբ իրենք էլ թողեցին ու փախան՝ իրենց կյանքը փրկելու համար, այլևս Վարդը գոյություն չուներ իրենց համար:

Քաջ էր Վարդը, հերոսուհի, ծնողասեր, հայասեր էր Վարդը, գոնե նորից տեսան իրար: Այսպես մեկ կորցնելով, մեկ գտնելով անցնում էր կյանքը: Դեռ Առաքելը չգիտեր, թե ինչ է սպասում իրեն:

Վարդը լսում էր հոր պատմածները. մեկ ուրախ էր, երբ ուրախ էր պատմությունը, մեկ տխուր էր, երբ տխուր էր, ինքն էլ անելանելի վիճակում էր, վճռականորեն ուզում էր կերտել իր ապագան՝ մտածելով, որ հերիք է թափառական լինելը:

Մտածում էր՝ ինչ է այս մարդկանց կյանքը, որ պիտի տոկան մինչև իրենց կյանքի վերջը: Ինքն արդեն լավ կյանք տեսել էր, ինչպես ձեռք քաշեր: Բայց մի հույս ուներ սրտի խորքում, մի

անկյունում պահված, դա էր, որ չէր կարող լքել, ու այդ հույսը միայն այս խղճուկ պատերի արանքում էր տեսնում:

Պատերն իրենք էին ձգում Վարդին, ո՛ր մեկին լսի, ինչպես գուշակի՝ ո՛րն է ճիշտը՝ գնա՞լը, թե՞ մնալը:

Շատ ժամանակ չուներ, շտապ պետք է վճռեր: «Այս գիշեր քնեմ,- մտածեց Վարդը,- վաղը կորոշեմ»: Այդ գիշեր չքնեց Վարդը, շատ երկար մտածեց: Առավոտյան, երբ հայրը վեր կացավ, հագնվեց, լվացվեց, Վարդն ասաց իր մտածածը:

- Պապա՛, ես կարծում եմ, որ դու մենակ պիտի վերադառնաս, ես չեմ ուզում գալ, ուզում եմ մնալ այստեղ, կսպասեմ Քամալին, եթե չգա, ինձ վիզա կուղարկես, ե՛ս կգամ Ամերիկա:

Լավ գիտեր, ու այդտեղ երկար մնալ չէր կարող, բայց քանի հույս ուներ իր սրտի անկյունում, պիտի սպասի, եթե ո՛չ, կգնա: Ամբողջ գիշեր մտածել էր և ցանկացել, որ իր իղձը կատարվի, և հոր սիրտը չվշտացնի, քանի որ լավ գիտեր՝ իր հոր իղձը իրեն Ամերիկա տանելն էր: Գիտեր, որ հայրը ճիշտ կհամարի իր այս որոշումը:

Այդպես էլ արեցին: Երկար խոսեցին, համաձայնեցին, իր բոլոր տվյալները գրեց, տվեց հորը վիզայի համար:

Քանի դեռ շատ ժամանակ կար հոր գնալուն, ուզեցին միասին անցկացնել մնացած օրերը՝ մինչև մեկնումի օրը:

Վարդը որոշեց նաև մի նամակ ուղարկել Հունաստան, տեղեկացնելու համար, որ չի վերադառնալու: Բնականաբար, մի գեղեցիկ նամակ էլ գրեց առանձին Մինասին՝ շնորհակալություն հայտնելով նրա մեծագույն մարդկային բարության համար: Մեջը չնշեց իր հետագա անելիքների մասին՝ խոստանալով տեղյակ պահել հետո: Վերջում գրեց՝ սիրով՝ Վարդ:

Նպատակահարմար էր նամակը Ստամբուլից ուղարկել. ավելի շուտ կհասներ: Հայրը նամակը մոտը վերցրեց՝ պարտավորվելով Հունաստան ուղարկել:

Մի քանի օր հետո Առաքելը մեծ դժվարությամբ բաժանվեց Վարդից՝ Ստամբուլ վերադառնալու համար: Վարդը շատ նեղվեց, բայց ուրիշ միջոց չկար, վճռել էր արդեն, կյանքը ցույց կտա՝ ճիշտ էր, թե ոչ:

Հարևանուհին ոչինչ չհասկացավ, միայն պարզ դարձավ, որ Վարդը մնացել է, ավելի երկար պիտի մնա:

Մինասը օրերն էր հաշվում, Վարդի գալուն էր սպասում: Երբեմն գնում էր հորաքրոջ տուն, բայց համարձակություն չուներ խոսելու, ուրիշ տեղ չուներ գնալու, ինքն այստեղ էր գալիս կամ սրճարան գնում: Այնտեղ էին գալիս հայ տղաներ, լավ էր, իրար հետ խոսում էին, զբաղվում թղթախաղով, սուրճ խմում:

Կինը հաճախ էր մոր տուն գնում. երբ Մինասը աշխատանքի էր, տանը չէր մնում մենակ: Ամռան երկար օրերն էին:

Շատ անգամ Մինասը գնում էր նավահանգիստ, սիրում էր ծովի օդը, հիանում էր նավերով, ծովով, հանգստանում էր ինքն էլ:

Երբ մոտեցան Վարդի գալու օրերը, ամեն երեկո սկսեց գնալ, անհամբեր էր, վերջին օրերն էին, ու վախենում էր նաև: Նայում էր նավամատույցի մոտ կանգնած նավերին, պատկերացնում էր Վարդին իջնելիս, կամրջակի վրա կանգնած: Սրտի թրթիռով էր սպասում, շատ դժվար էր. չէր կարող կիսվել մեկ ուրիշի հետ, ինքն իրեն տանջվում էր: Գիտակցում էր, որ սխալ էր. քանի որ այդ զգացումը երբեք չի ունեցել ավել վաղ՝ երիտասարդ տարիներին, ինչո՞ւ հիմա պիտի ունենար, որ չկարողանար ղեկավարել իրեն: Այո՛, սերը տարիք չի հարցնում: Երբ սիրում են մեկին, այդ մեկը ամենալավն է և ամենասիրունն է միշտ: Իր երիտասարդ տարիներին հնարավորություն չի ունեցել այդ զգալու, հոգով այլ տեղ է եղել, ավելի կարևոր խնդիրների մեջ և ժամանակ ու առիթ չի ունեցել քնքշությունը, մանր գեղեցկությունը տեսնելու մի բանի կամ մեկի մեջ. այդ զգացումը

դեռ քնած էր իր հոգում: Խաղաղ հոգու մեջ է պառկում սերը ու միանգամից տակնուվրա անում այդ խաղաղ հոգին:

***

- Վարդին դիմավորելու պիտի գամ, Արևհատ, երեխային էլ վերցնենք, գնանք նավահանգիստ, Վարդը կուրախանա:

- Դու մենակդ գնա, ես մնամ, սեղանը պատրաստեմ, այստեղ կբերես, միասին հաց ուտենք:

Մինասը համաձայնեց, սիրտը թեթևացած գնաց՝ մտածելով, որ շուտով Վարդը միայն իրենը կլինի:

Արևհատը շատ բարի կին էր, համեստ, ուշադիր: Շատ լավ գիտեր Մինասին, գիտեր նաև, թե ինչն է հողմահար անում Մինասի հոգին, բայց լավ ճանաչում էր նաև Վարդին: Վարդի ազնվությունն իր համար օրինակելի էր: Սպասում էր վերջին, չէր մեղադրում Մինասին էլ, որովհետև գիտեր, որ իրենից առաջ էլ անտարբեր չի եղել Վարդի նկատմամբ. մարդիկ խոսում էին, ինքը լսում էր այդ ամենը: Եվ գիտեր բոլոր մտերիմ հարաբերությունների մասին, այդ բոլորը հաշվի առնելով էր ամուսնացել Մինասի հետ, ինչ արած: Դրա հետ մեկտեղ Մինասը հիանալի մարդ էր, հիանալի ամուսին իր համար: Արևհատը սպասում էր, համբերում էր պարզապես: Չէր կիսվում մոր հետ, բայց մայրն էլ այդքան սրտի մոտ չէր առնում՝ մտածելով՝ մի բան է, կանցնի: Միշտ աղջկան խրատում էր լավ վերաբերմունք ցույց տալ ամուսնուն, որի կարիքը նա ունի:

Այսպես զգույշ ապրում էին իրար հետ՝ իրար հարգելով, ավելորդ բաներն անտեսելով, խաղաղ, համերաշխ ընտանեկան անդորրը պահպանելով:

Մինասը գնաց նավահանգիստ: Գնաց այն սրճարանը, որտեղ Վարդը խոստովանել էր, պատմել իր անցած կյանքը Քամալի հետ, պատմել իր երեխայի մասին: Հիշեց Վարդին, նրա

արցունքներով լցված աչքերը, հիշեց ամեն ինչ ու տրտմեց, ծանրացավ հոգին, հիշեց, որ ինքը չկար այդ բոլորի մեջ, որ Վարդը սիրում է մինչև հիմա էլ Քամալին:

Մինասը նստած էր այնպես, որ կարողանար տեսնել նավամատույցը: Հազար մտքերի մեջ տանջվելով՝ մեկ ուրախանում, մեկ տխրում էր, երազում էր և լաց լինելու ցանկություն ուներ նույնիսկ: Ինչ վիճակում էր՝ ինքն էլ չէր հասկանում, բայց ամենախորքում զգում էր, որ այլևս չի տեսնելու Վարդին:

Իր մեջ այդ վախի ձայնն էր խոսում, որին վանել չէր կարող, ինչպես չէր կարող հասնել Վարդի անուշ սիրուն, որը փայփայել էր լուռ իր սրտում, գաղտնի, որ հանկարծ ոչ մեկը չգողանա իրենից, որ միշտ իրենը լինի:

Գիտեր, որ խենթություն էր իր արածը, բայց ուրիշին չէր հայտնում իր զգացածը, որ հանկարծ իրեն չմեղադրեն՝ ասելով, որ հիմարություն է իր կողմից, չշեղեն իրեն այդ երազից, այո՛, քաղցր երազ էր սա, և ինքն ուզում էր միշտ երազել: Քնեցնում էր այդ սերն իր մեջ, որ երազ դառնա ընդմիշտ:

Մինասն այդ երազների մեջ ծովին էր նայում, նայում էր հեռուն, որքան աչքը կտրում էր, և մտքերի մեջ չէր նկատել, որ հսկա նավը կանգնած է արդեն նավամատույցում:

Հապճեպ վեր կացավ նստած տեղից, արագ մոտեցավ նավին: Կամրջակը երկարեց մինչև ցամաքը: Դեռ մարդ չկար, բայց արդեն հավաքվում էին դուրս գալու համար:

Մինասը աչքերով փնտրում էր Վարդին, չէր տեսնում, համբերում էր. «Կգա, մտածում էր, դեռ շուտ է»: Բոլորը խռնված, իջնելու պատրաստ, շտապում էին ափ, Վարդը չկար:

Իջնում էին արդեն, անցնում առջևից, համբուրվում, ուրախ ճիչեր էին լսվում չորս կողմում, Վարդը չկար: Բոլորն ուրախ խոսում էին դիմավորողների հետ, Վարդը չկար:

«Պետք է սպասեմ, հիմա կգա»,- ասում էր ինքն իրեն: Իջան,

իջան, մարդ չմնաց, Վարդը չկար: Մինասը այլևս ոչ մեկին չէր լսում, ականջներին այլևս ոչ մի ձայն չէր հասնում: Չկար Վարդը, ինչո՞ւ, ինչ եղավ, հիվանդ է, չի՞ կարող դուրս գալ: Այս բոլոր մտքերը, իրար խառնված, զբաղեցնում էին խառնիխուռն մտքերը Մինասի:

Հանկարծ սթափվեց, ինչո՞ւ էր կանգնել ու չէր շարժվում: Քայլը նետեց, առաջացավ դեպի կամրջակը, ուզեց բարձրանալ, առաջանալ, մեկը մոտեցավ, արգելեց, այդ ժամանակ միայն հասկացավ, որ Վարդը, իրոք, չկա: Ամենավերջին մարդը դուրս էր եկել արդեն:

Փորձեց խոսել, չկարողացավ, ձայնը դուրս չէր գալիս կոկորդից: Բայց ինչպե՞ս է, որ կանգնած է ինքը, ստիպեց իրեն խոսել կոկորդ մաքրելով:

- Ես մեկին եմ սպասում, բայց դուրս չեկավ, պատճառը կուզեմ իմանալ, ներողություն:

- Ուրեմն այդ մարդը չի եկել, ամենավերջին մարդը դուրս է եկել արդեն, այլևս մեկը չկա նավի վրա:

Մինասը հազիվ կարողացավ հաստատ կանգնել գետնին, կարծես հողը փախչում էր ոտքերի տակից: Իրեն հավաքեց՝ մտածելով. «Ասում էին, չէ՞, որ ես ինձ պետք է ղեկավարեմ, սա է, Մինաս, հավաքի՛ր քեզ, ոչինչ, որ չի եկել, կարևորը, որ չի մեռել»: Ու քայլերը դանդաղ ուղղեց դեպի տան կողմը: Հասավ, բայց ինչպե՞ս հասավ տուն, միայն ինքը գիտի:

Մտնելով տուն՝ իրեն նետեց աթոռին, ոտքերն արդեն իրեն չէին ենթարկվում: Կինը այդ բոլորը տեսավ, բայց ինքն ամեն ինչ գիտեր արդեն: Նամակը տվեց Մինասի ձեռքը, ու ինքը մի կողմ քաշվեց՝ մտքի մեջ ասելով. «Կարծեմ իմ մեղքը չէ, որ դու այս օրին ես հասել»: Մինասը զարմանքով վերցրեց նամակը, վրան նայեց, կարդաց, աչքերին չէր հավատում:

Վարդի գրած նամակն էր իր ձեռքում, կարծեց սրբի գրած էր ու հազիվ կարողացավ բռնել՝ ծալվածքը բացելու համար, վերջը հաջողվեց:

Կարդաց առանց ձայնի, ընկալեց միտքը, ծալեց նույն ձևով, պահեց ձեռքը ու շոյեց:

Արևհատը այլևս չէր նայում, չէր ուզում ավելին տեսնել, տեսնել այն, ինչ զգում էր Մինասը:

- Արևհա՛տ, ուզո՞ւմ ես՝ գնանք հորաքրոջս մոտ, եթե ուզում ես, հագնվի՛ր:

Մերին տանը չէր, տատիկն էր տարել:

Արևհատը չմերժեց, միասին գնացին հորաքրոջ տուն: Այնտեղ Մինասը հայտնեց Վարդի որոշումը. չի եկել, իսկ այնտեղից էլ ուզում է երևի գնալ Ամերիկա:

Հորաքույրը, ոչինչ չակնարկելով, ասաց.

- Իր կամքն է, ուր ուզում է, թող գնա, ամենաճիշտը դա է, իր բարեկամները բոլորն այնտեղ են, այստեղ ոչ մեկը չուներ խեղճը:

Ու կարծես իր սիրտն էլ հանգստացավ:

Անմիջապես սուրճ առաջարկեց, չխորացնելով խոսակցությունը: Հարցրեց, թե Մերին ինչո՞ւ չկա, ո՞ւր է: Այնուհետև խոսքը փոխեցին ուրիշ ուղղությամբ:

Նամակի մասին էլ չխոսեցին՝ ավելորդ համարելով: Նամակը Մինասին էր ուղղված. իր գործն է, թե ինչ կանի: Այլևս չխոսվեց այդ մասին:

Վարդը ավելի հեռացավ, ամեն ինչով:

***

Առաքելը շատ դժվարությամբ հեռացավ իր հայրենիքից, իր Մուշից, բայց կարոտն առած վերադարձավ Ստամբուլ և երկու օր հետո իր վերադարձի նավը բարձրացավ՝ ետևում թողնելու համար իր վաթանը հայրենական: Մտածում էր՝ միգուցե վերջին անգամ է լինելու իր գալը: Բայց դեռ չէր լրացել իր վաթսուն տարեկանը, իրեն առույգ էր զգում, հիմա ավելի հանգիստ էր սիրտը:

Նավի վրա կրկին հանդիպեց Մխիթարին, բնականաբար, պիտի հանդիպեին, որովհետև նույն նավով պիտի վերադառնային: Շատ ուրախացան, երբ իրար տեսան, չնայած որ նույն խցիկում չպիտի գիշերեին:

Ամբողջ օրը միասին էին անցկացնում, միայն քնելու համար էին իրարից հեռանում:

Ամեն մեկը պատմեց իր տեսածն ու լսածը՝ շատ տպավորիչ և հետաքրքիր:

Մխիթարը գտել էր իր հորեղբորը և հորեղբոր տղաներին, խնամիներին, որոնք վերադարձել էին իրենց գյուղ ջարդից հրաշքով փրկվելուց հետո, անտանելի դեպքերի նկարագրությունները հոգում: Մխիթարը շատ ուրախ էր գոնե այսքանին ողջ գտնելու համար, դա մեծ մխիթարություն էր իր համար: Որոշ հարցեր էր լուծել, որոնց մասին չխոսեց. դրանք Առաքելին չէին էլ հետաքրքրում:

Մխիթարը վայելել էր իր ջահել ժամանակի վայրերը, կարոտած տեղերը, բավականություն ստացած էր վերադառնում,

կարծես մի քանի տարով երիտասարդացել էր: Ասում էր, էլ չի ուզում հիշել անցյալը, մեռնողների հոգին Աստված թող լուսավորի՝ մտածելով, որ մարդիկ ծնվել են, ճիշտ է, բայց մեռնել էլ կա, պետք է հարմարվել՝ կարճ կյանքը չթունավորելու համար: Մխիթարը այսպիսի փիլիսոփայական խոհերով ուզում էր իրեն մխիթարել:

Առաքելն էլ այլ կերպ էր իրեն մխիթարում, վերջը այն եզրակացության եկան, որ բոլորն էլ իրենց մխիթարելով են ապրում, եթե ոչ, դառնացնում են կյանքն այնպես, որ երանի են տալիս մեռնողներին:

Առաքելը պատմեց Վարդի մասին, ասաց, որ որոշ ժամանակ հետո նրան էլ պիտի տանի Ամերիկա: Պատմեց իր աշխարհի մասին, իր գյուղի մասին, կարևորը, իր տան մասին, որին այդքան կարոտել էր և բավական հանգիստ է հիմա, որ տեսել է, վայելել որոշ ժամանակ:

Այսպես ասել-խոսելով ընկերացան, հասցեներ փոխանակեցին՝ հետագայում կրկին իրար տեսնելու համար:

Վերջին օրը իրար հետ մի-մի բաժակ օղի խմեցին, իրար բարի հաջողություն մաղթեցին և Լոս Անջելեսի նավահանգստում բաժանվեցին իրարից:

Արմենակն ու Վաղինակը եկել էին դիմավորելու: Ջերմագին ողջունեցին իրար, կարծես հարյուր տարի չէին տեսել: Առաքելը շատ բան ուներ պատմելու: Չեր կարող այդքան կարճ ժամանակում պատմել այդքան բաները: Գլխավորը շատ հակիրճ ասաց, որ Վարդը մնաց թուրքի տանը, պիտի մնա այնքան, մինչև իր սպասածը գա իր որդու հետ, եթե ոչ, գալու է Ամերիկա. այդ էր Վարդի վերջին և վերջնական որոշումը: Վարդը պատմություն էր դարձել իրենց համար: Սաթենիկը գրկաբաց ընդունեց ամուսնուն, այս կարոտի մեջ կար նաև աղջկա կարոտը, Վարդի կարոտը: Ուզում էր նաև մանրամասն

տեղեկություններ իմանալ երկրի մասին: Շատ բան ուներ Առաքելը պատմելու, ամենազարմանալին այն էր, թե իրենց տանը ով էր ապրում հիմա, հետաքրքիր էր ամեն մի միջադեպը, այսպիսի զուգադիպություններ լինում են, և սուտ էր թվար, ինչպես կարող են այդպիսի բաներ լինեն կյանքում: Այո՛, ինչպես եղավ, որ Վարդը փախավ այդ տնից խենթացած, հիմա էլ հոժար կամքով, սիրով ուզեց մնալ այդ տանը ու սպասել չգիտես ինչու և ում: Նրան, ում մերժեց՝ թուրք համարելով, հիմա սպասում է, ինչո՞ւ, նույնիսկ չէին կարող պատկերացնել:

Առաքելը շատ պատկերավոր էր պատմում, ամեն ինչ տեղը-տեղին: Սաթոն ամեն օր ուզում էր լսել ու մի քանի անգամ պատմել տվեց ամեն ինչ:

Առաքելը պատմում էր, իսկ Սաթոն պատկերացնում և ապրում էր այդ ամենը՝ իրեն պատկերացնելով ճիշտ դեպքի վայրում: Մոսոն երբ լսեց, թե Վարդին որ գյուղ են տարել փախցնելուց հետո, ասաց.

- Պապա՛, մենք մինչև այդ գյուղը գնացինք, հիշո՞ւմ ես, բայց չմտանք, ասացին թուրքի գյուղ է, որի՛ դուռը ծեծենք՝ հարցնելու համար. «Մեր աղջկան դո՞ւք եք փախցրել»: Դրա համար հետ դարձանք, գնացինք:

Առաքելն ասաց. «Տունն էլ կարգին տուն էր, ճիշտ հայի տան նման, բոլորովին թուրքի տան նման չէր, ինձ որ նայեք: Վարդը գեղեցիկ մաքրեց չորս կողմը և նստեց թագուհու պես, բայց ինչպես պիտի մնա մենակ՝ այդ եմ մտածում, մինչև երբ: Ասաց՝ ես կգրեմ, որ ինձ վիզա ուղարկես, որ գամ Ամերիկա, Հունաստան էլ չեմ գնա: Հիմա մենք պիտի սպասենք, որ ինքն ուզի, որ ուղարկենք: Բոլոր տվյալները բերել եմ»:

Բոլորն ուրախացան. լավ էր գոնե, որ լավ տեղեկություններով եկավ Առաքելը, իզուր չգնաց, ինքն էլ կրկին տեսավ իր Մուշը:

Գիշեր-ցերեկ չունեին, անընդհատ խոսում էին, նույն բաները վերլուծում, պատկերացնում ու միշտ իրենց ուզածի ձևով հասկանում: Շատ այցելուներ ունեցան, բոլորն էլ ուզում էին լուրեր ունենալ իրենց հայրենիքից, որը միշտ իրենցն են համարելու: Հողն ու ջուրը չեն շարժվում, մնում են միշտ նույն տեղում, բայց մարդն է թափառում, միշտ հեռանում իր հողից ու ջրից:

***

Վաղինակը նամակ գրեց քրոջը, որ հայրը շատ լավ է վերադարձել, պատմել է ամեն ինչ, երբ որ ցանկանա, կարող է հայտնել, իրենք պատրաստ են ուղարկել համապատասխան փաստաթղթեր, միայն իմանան, թե այս նամակն իր ձեռքը պիտի անցնի, թե ոչ: Հասցեն ճիշտ է, թե ոչ:

Վարդը ստացավ նամակը, որը հասցեագրված էր Քամալ Օրհան օղլու անունին: Շատ ուրախացավ, որ նամակատարը նամակ տվեց ու գնաց, առանց հարցնելու, թե ով է ինքը:

Վարդը կարդաց եղբոր գրած նամակը, համբուրեց, դրեց ծրարի մեջ, հասկացավ, որ հարազատը ուրիշ է, և կարոտը չի թողնում մոռանալ:

Անընդհատ հիշում է, ծանոթ դեմքերը պատկերվում են աչքի առաջ:

Վարդը գրեց նամակի պատասխանը, այնուհետև շարունակվեց նամակագրությունը. այլևս մտածելու բան չունեին:

Վարդը չգիտեր՝ որքան ժամանակով պիտի մնա այդտեղ, շուտով ամռան տաք օրերը նահանջեցին, օրերը կամաց-կամաց ցրտում էին: Պետք էր մտածել վառարան դնելու մասին, թոնրատանը վառարան կար, կտրատած փայտ էլ կար: Հարևանը եկավ օգնեց, վառարան դրեցին, փորձեց վառել ու տեսավ՝ ամեն ինչ կարգին է: Ամեն ինչ լավ էր, Վարդը վստահ էր, որ ձմեռը անց է կացնելու տաք տեղը: Ուզեց մեկ-երկու հավ պահել,

քանի որ կեր կար մնացած, նաև զբաղվելու բան կունենար: Նա ձմեռվա ահագին պաշար դրեց՝ շատ դուրս չգալու համար, շատ ցուրտ ձմեռ էր լինում այդտեղ: Վարդը գումար ուներ իր աշխատանքից խնայած, հայրն էլ գնալուց առաջ ահագին գումար էր թողել իրեն՝ իրեն քիչը պահելով. դեռ ճանապարհ ուներ անցնելու: Այնպես որ, ապահով էր, մտածելու բան չուներ: Հարևանուհին միշտ գնում-գալիս էր, կամաց-կամաց մտերմանում էին: Վարդը լավ խոսում էր թուրքերեն, իրեն «գելին» էին կանչում քանի որ անունն էլ չէին հարցրել, միշտ «հարս» էին ասում: Վարդը չգիտեր հարևանուհու անունը, երբ մի անգամ ամուսինը ասաց կնոջ անունը, իմացավ՝ Սուլթան է, իսկ ամուսնուն ասում էր՝ «ղոնշու» (հարևան):

Մի օր Վարդը պատուհանից դուրս էր նայում. հավերին կեր էր տվել, նրանց էր նայում, տեսավ մի սիրուն կատու կանգնած հավերի մոտ, հետո կծկվեց, նստեց: Անմիջապես դուրս եկավ, միամիտ կատուն վախեցավ, բայց մնաց նստած: Վարդը ուզեց պահել այդ կատվին, մեղքացավ: Կանչեց կատվին, մոտեցավ, փոքրիկ էր, կանչեց ներս՝ ուտելու բան ցույց տալով: Այդ օրվանից կատուն եղավ Վարդի անմիջական ընկերը: Շատ սիրեց, պահեց տաք տեղ, «փիսիկ» դրեց անունը, սա էլ սև ու սպիտակ գույներ ուներ:

Սուլթանը եկավ, փիսիկին տեսավ, նա էլ փաղաքշեց, իմացավ, թե ում կատվի ձագն էր, շատ հեռվից չէր եկել: Եկել հասել էր տան մոտ, կորցրել էր իր տունը: Ոչինչ, ավելի լավ տեղ ընկավ, իրեն ավելի լավ կնայի Վարդը:

Վարդն իր հետ բոլոր հագուստները չէր վերցրել, ձմեռային հագուստ բոլորովին չուներ: Սուլթանը իրեն օգնեց մի քանի ձմեռային հագուստներ գնելու, շալ և վերարկու նաև: Խնդրել էր մեկին, որին ճանաչում էր. նա առևտուր էր անում գյուղերում, բերել տվեց հագուստներ, որ Վարդն ընտրի իր համար. դեռ

այդպես էր կարգն այդ ժամանակ: Թուրքիայում հեռու էին ամեն ինչից: Վարդն էլ շատ չփնտրեց, միայն թե տաք լինի և չհիվանդանա: Գարունը եկավ, Վարդը ոչ մի դժվարություն չունեցավ. ձմեռը շատ լավ անցավ: Բաղ ու այգի սկսեցին կանաչել, ծաղկել: Վարդն ամբողջ օրը ոչինչ չուներ անելու: Իրեն խանգարող չուներ, մտքերով ճամփորդում էր տարբեր երկրներ, որտեղ ինչ բարեկամ, ծանոթ ուներ, ինքն այնտեղ էր, մտքով խոսում, հարցեր էր տալիս, հետո ինքն իրեն պատասխանում, խենթություն էր, բայց ուրիշ ինչ կարող էր անել: Բոլորին անխտիր հիշում էր, երբեմն հիշում էր Մինասին: Մինասին առանձնահատուկ էր համարում, եթե նա չլիներ, ինչ պիտի լիներ իր վիճակը: Նա իր համար եղել է հովանավոր հրեշտակ, ինչպես պիտի կարողանար իր գոյությունը պահպաներ: Միգուցե ուզեր ամուսնանալ նրա հետ, եթե իր վիճակն այդպիսին չլիներ: Բայց, ո՛չ, իրեն չէր կարող համոզել այդ քայլը կատարելու, քանի որ առանց իր իմանալու, սիրտն ամբողջապես այլ տեղում էր:

Տեսնում էր Մինասի նվիրվածությունն ամեն րոպե, շատ ժամանակ չէր ուզում շահագործել նրան՝ իրենից ծածուկ պահելով իր կյանքի դժվարությունները: Բայց Մինասն ամեն ինչ էր տեսնում, կարող ենք ասել, ապրում էր իրենով: Վարդը դա տեսնում էր, որքան էլ որ Մինասը պահում էր իրենից: Ինչպես տեսնում ենք, ոչ մի բան ոչ մեկի աչքից չի վրիպում: Վարդը չէր կարող այլևս այդպես շարունակել՝ գայթակղելով խորտակել այդ երիտասարդի կյանքը, որն արդեն ամուսնացել և երեխա ուներ, ընտանիք:

Նա ուրիշ կերպ չէր կարող անել, ինքն ազատ չէր. իր սիրտն ուրիշին էր տվել անկախ իրենից: Ամենաճիշտ ձևը սա համարեց և հանգիստ էր հիմա, թող բոլորն էլ իրենց անդորրը գտնեն, ուրիշ ելք չկար, վերջացավ:

Պարզ երևում էր, որ ինքն անելանելի վիճակում է, որևէ տեղից ոչ մի հույս չունի, որ կարողանար փայփայել: Բայց որոշել էր մնալ և սպասել այնքան ժամանակ, որ այն փոքրիկ հույսը, որ դեռ սպասում էր, բոլորովին մարի: Չէր կարող հեռանալ, հեռու գնալ, կարծես մեկը ձգում էր իրեն, պոկվել չէր կարողանում: Կմնա Վարդն այդտեղ, իրեն ոչ մեկը չէր նեղացնում: Վարդը հանգիստ չէր իրականում, ամբողջապես ամայացած էր, մի կողմ նետված: Երբ պիտի զգա իրեն ուժեղ բազուկների մեջ: Արդյոք այդ օրը կտեսնի՞, թե՞ այսպես տխուր պիտի վերջանա իր կյանքը:

***

Գարունը բացվեց, հանկարծ իր տուն հյուրեր եկան: Նա չէր ճանաչում իրենց, բայց հասկացավ, անմիջապես հասկացավ, որ այն մարդիկ են, որոնք ապրում են իրենց տանը՝ Լուսինն ու Գառնիկը: Հայրը պատմել էր նրանց մասին, գիտեր, անմիջապես ներս հրավիրեց նրանց: Ասացին, որ նամակ էին ստացել եղբորից և Առաքելի խնդրանքով են եկել տեսակցելու՝ իմանալով, որ դեռ այստեղ է ինքը:

- Ուզեցինք իմանալ՝ ինչպե՞ս ես, ձմեռը ինչպե՞ս ես անցկացրել, եկել ենք ծանոթանալու: Ասեցին նաև, որ շուտով հրավեր պիտի ստանան Ամերիկա գնալու համար: Երկար զրուցեցին, այդ գիշեր էլ մնացին: Վարդն էլ ուրախացավ՝ հայ տեսնելով: Հաջորդ օրը գնացին՝ առանց հասկանալու Վարդի վերջին նպատակը:

Բայց հուսադրեցին իրար, որ հաջորդ անգամ Ամերիկայում կհանդիպեն:

Վարդը, այսպես ինքն իրեն զբաղեցնելով, անց էր կացնում իր տաղտկալի օրերը մենության մեջ: Եկան ամռան տաք օրերը արևոտ: Ափսոսում էր, որ ծով չկար այնտեղ, իրեն ավելի լավ էր

զգում Սալոնիկում, երբ ժամերով մենակ գնում էր ծով, նայում հեռուն: Հեռվում, հորիզոնում էր տեսել այն առագաստը, որի վրա կանգնած պիտի գան արքայազնն ու իր որդին, երկուսն էլ բարձրահասակ, գեղեցիկ ու հպարտ իրենց էությամբ, և այդ երկուսն էլ իրեն են պատկանում: Գիտեր, որ բարի են բնավորությամբ: Այդ բոլորը գիտեր Վարդը, լավ ուսումնասիրել էր և հիշում էր, չնայած որ չէր ուզում խոստովանել՝ միշտ փնտրելով բնավորության մի գիծ, որը հատուկ է այն անխիղճ ազգին, փնտրում էր, բայց չէր գտնում: Ամեն ինչով տարբերվում էր, ինչն էր պատճառը՝ հանելուկ էր իր համար: Նա իր երեխայի հայրն էր, չէր ատում, բայց ինչո՞ւ էր իրեն ստիպում չսիրել նաև: Շատ արժանիքներ ուներ սիրվելու համար, և այս պայքարը հայի և թուրքի, հողմահար էր անում իրեն, հեռացնում իր իսկական զգացումներից: Շատ էր մտածել Վարդն այդ մասին, և սիրտը ճմլվում էր, երբ մտածում էր՝ պետք չէր, որ սիրեր նրան, որովհետև առանց հարցնելու տարել էր իրեն. ինչո՞ւ: «Բայց որ հարցնեն, Վարդ, դու պիտի ուզեի՞ր իրեն, ո՛չ, որովհետև նա թուրք էր»:

Ո՛չ, չէր ուզելու, բայց լա՛վն էր, շա՛տ լավն էր, Վարդն իր մեջ թաղում էր իր սերն ու միշտ իրեն խաբում, որ չի սիրում:

Քամալը նույնպես ուներ իր մտորումները, որոնք գնալով իրեն նետում էին հուսահատության մեջ: Մեծ խնդիր եղավ այն, որ իր կարողությունը պաշտոնի բերումով չկարողացավ օգտագործել, որովհետև անմիջապես իրեն էր վերաբերում հարցը և չէր ուզում իր անունին արատ բերել և վտանգել և՛ իրեն, և՛ իր պաշտոնը: Վստահելով ոմանց՝ փնտրել էր, բայց պատասխան չուներ: Գիտեր, որ եթե Վարդը կենդանի է, ուրեմն Թուրքիայում չէ և շատ վաղուց՝ իր այդ պաշտոնը ստանձնելուց շատ առաջ. այդ բոլորը Քամալը շատ լավ գիտի: Տարիներ էին անցել, դա էր պատճառը, որ արտասահմանում է ինքը: Քամալը

չգիտեր՝ ո՛ր ուղղությամբ ուղարկեր իր պատգամը, ո՛ւր է արդյոք Վարդը. իր կասկածներն իրեն շփոթեցնում էին: Վարդի գնալուց հետո ոչ մի տեղեկություն չի ունեցել: Ելք չի գտնում, բայց չի լքում նաև:

Երեկոները, սովորության համաձայն, գնում էր ծովի եզերքը, շրջում, հետո սրճարանում նստում մի սեղանի կողք, դիտում էր ծովը, ալիքների մեղմ խաղը, միաժամանակ հիշում անցյալն իր գողտրիկ տան մեջ, հիշում Վարդին, նրա մեղմ շարժումները, բարի դեմքը. այդքան նեղվածության մեջ ոչ մի անգամ չըմբոստացավ, բարձր չխոսեց, միայն կրկնում էր. «Ինչո՞ւ արեցիր»: Ու լաց էր լինում, որն ավելի էր տանջում Քամալին:

Իրոք, ինչո՞ւ արեց. չէ՞ որ սիրում էր, լավ չէր զգում իրեն, երբ Վարդը լաց էր լինում: Երկուսն էլ չգիտեին՝ ինչ խոսեն իրար հետ, երբ երկուսն էլ տխուր էին: Երկուսն էլ ջահել էին, անփորձ: Քամալը ընդհատում էր մտածմունքը, վեր կենում, քայլերն ուղղում դեպի տուն:

Մայրը սպասում էր իրեն, սեղանը պատրաստ էր ճաշելու համար: Մուրադը երբեմն տանը չէր լինում, մի ընկերոջ հետ դուրս էր գալիս, արդեն մեծանում էր: Քամալը գիտեր, որ իր տղան ավելորդ քայլեր չէր անի, վստահ էր, խոսել էր այդ մասին նրա հետ՝ կյանքի անակնկալներից հեռու պահելու համար: Մուրադը լավ հասկանում էր հորը, գիտեր նպատակը, հարգում էր ասածները:

Գյուլվարդի վիճակը գնալով վատանում էր, պիտի կարողանար գոհացնել երկու տղամարդու, պիտի կարողանար խոսելու նյութ գտներ տղայի համար առանձին, թոռանը՝ առանձին:

Ինչ արեց Վարդը, ինչո՞ւ թողեց իր վրա այդ դժվարին պարտականությունը, իրեն չէ՞ր վերաբերում դա:

Քամալը վերջերս տուն էր մտնում, անմիջապես գիրքն առնում էր ձեռքը, նստում: Կարդում էր հայերեն և լավ հաս-

կանում էր կարդացածը, հետո պատմում հայերենով մորը: Շատ ուրախ էր. լավ առաջադիմում էր, կուզեր, որ տղան էլ սովորի, բայց դեռ չէր ուզում, որ իմանա ճշմարտությունը, ժամանակը չէր դեռ:

Գիտեր, որ Վարդը գրել-կարդալ գիտեր, դա հարցրել էր: Վարդը դպրոց գնացել էր իրենց գյուղում:

Քամալը այն օրվանից, երբ իմացավ իր հայ լինելը, չկարողացավ ընկեր ունենալ: Թուրք ընկեր չուզեց, հայ էլ չէր կարող գտնել, չկար նախ, եղածներն էլ չէին մոտենում թուրքին: Երբ գնում էր սրճարան, նստում, խոսում էր, խոսքի մեջ ընկնում, ծանոթ էր մի քանիսին, բայց մոտիկություն անել չէր կարող: Նախ որ, ճիշտ է, հպարտ չէր, բայց պաշտոնը թույլ չէր տալիս իրեն այդքան մոտիկանալ մեկին: Հիրավի, Քամալի վիճակը վիճակ չէր, անտանելի էր, ոչինչ չհասկացավ իր կյանքից, երիտասարդ տարիներն անցնում էին աննպատակ: Այդ բոլորի պատճառն ու մեղավորն ով էր, ով կարող էր ասել:

Պարզ էր բոլորին, որ երկրի սոցիալական հարաբերությունները էին այդ երկրի անմխիթար վիճակի պատճառը, մարդկանց վախով ապրելը:

Արդյոք թուրքերը հանգիստ հոգով էին ապրում, ո՛չ, իրենց մեջ էլ վախ կար, քաշված ապրում էին ամենքն իր բնի մեջ: Պարզ էր, որ բոլորն էլ վայրենի չէին, կա՛ր վերջիվերջո մի փոքրամասնություն, որ խղճի զգացում ուներ, թեկուզ փոքր. այդ մարդիկ ինչպե՞ս էին ապրում:

Քամալը շատ էր մտածում այլ բաների մասին: Նախ, ինքը ոչ մի բան անել չէր կարող, հայ էր ինքը:

Մի օր Քամալը որոշեց գնալ իր ճանաչած ճաշարանը մենակ, իր նպատակը ճաշելը չէր, այլ մի բաժակ գինի խմել էր ուզում, անել մի բան, որ ոչ մի անգամ տանը չէր անում, ուզում էր չհիշել իրեն տանջող մտքերը՝ կարծելով, որ դա պիտի իրեն

օգնի, բայց դեռ չգիտեր, որ լրիվ հակառակ կարող էր լինել: Մտաբերեց նաև մոռացված շատ հուշեր, որոնց մասին չէր էլ մտածել: Քամալը քայլերն ուղղեց դեպի այդ ռեստորանը, գնում էր ինքնաբերաբար և արագ, կարծես ուզում էր վազել առանց մտածելու, թե ինչու է շտապում: Մոտեցավ դռանը, կանգնեց, հայացքը գցեց չորս կողմը, չգիտես ինչու, հրեց դուռը, ներս մտավ: Դիմացը կանգնած էին արդեն, որպեսզի իրեն հրավիրեն ազատ մի սեղանի մոտ: Գլուխը կախ հետևեց, մոտեցավ ցույց տված սեղանի մոտ դրված աթոռին, նստեց: Իրեն մեղավոր էր զգում, ինչպե՞ս եկավ այստեղ, որ ինքը մենա՛կ վայելի. դա վայելք էր, որովհետև կային շատ ճաշարաններ, որտեղ հիանալի կերակրում էին: Ո՛չ, այսօր մենակ ուզեց լինել, քիչ մարդով, ինքն իր հետ, միգուցե մտքի մեջ մեկ ուրիշն էլ կար՝ չենք կարող ասել:

Նայեց ճաշացուցակը, նախ գինի ուզեց, հետո կմտածի ուտելու մասին:

Գիտեր, որ մայրը ինչ համեղ կերակուր ունի պատրաստած իր համար, բայց այսօր այդտեղ պիտի ճաշեր, որոշել էր:

Գինին բերեցին: Սկսեց փոքր կումերով ճաշակել գինին, գլուխը բոլորովին չէր բարձրացնում՝ նայելու մարդկանց. ոչինչ իրեն չէր հետաքրքրում:

Շատ երկար տևեց ըմպելը, դրա հետ միասին զգաց, որ մենակ չէ, միտքը մեկի հետ է, և երանի է տալիս այն օրվան, որ այստեղ, ոչ թե հոգով, այլ մարմնով կտեսնի իր մոտ նստած այդ մեկին: Երանի՛ չսիրեր այդպես, երանի՛ չհանդիպեր այդ մեկին, իսկ ավելի ճիշտ, երանի՛ հիմա մոտը լիներ, որ բաժակը կարողանար խփել իր բաժակին, և իրար լավ օրեր կարողանային մաղթել, սեր խոստովանել: Երանի էր տալիս, իրեն-իրեն խոսում, երազում, որ կատարվի երազանքը, կարողանա սիրել այնպես, ինչպես ինքն էր ուզում, սակայն չէր կա-

րողացել, որովհետև ինքը մեղավոր էր իրեն կարծում, քանի որ ուրախացնելու փոխարեն վիշտ է պատճառել այդ մեկին: Ինչպես պիտի կարողանա գրավել սիրտը և սիրել իր ուզածի պես. այսքան կարոտ, այսքան ցավ այսքան տարի...

Քամալը նայում էր դիմացը, հանկարծ բացվեց ճաշարանի դուռը. երեք հոգի, հանգիստ խոսելով, ներս մտան, ձայները ծանոթ էին, նայեց, ինչ-որ նմանություն տեսավ, զգաց, որ ծանոթ են, ստիպեց իրեն ավելի ուշադիր նայել և ճանաչեց երեքին էլ:

Ալի, Քերեմ, Օքան եղբայրներն էին՝ իր մանկության ընկերները՝ հարևանները: Երկար տարիներ չէր տեսել իրենց: Նրանք չտեսան Քամալին:

Գարսոնը մոտեցավ նրանց և ուղեկցեց մի սեղանի մոտ՝ ոչ հեռու իրենից, բայց Քամալը ոչ մի շարժում չարեց, դեռ նայում էր երբեմն, տեսնում, թե ինչպես տեղավորվեցին և շարունակեցին իրենց սկսած խոսակցությունը: Խմելու հյութ ուզեցին ու նայում էին, թե ինչ պիտի պատվիրեն ուտելու համար:

Հանկարծ եղբայրներից մեկը ուշադիր նայեց Քամալի կողմը ու ասաց.

- Դուք տեսնո՞ւմ եք այն, ինչ ես եմ տեսնում, թե՞ ոչ:

Բայց Քամալը իրենց չէր նայում: Երեքն էլ նայեցին Քամալի կողմը: Մեկն ասաց.

- Ես Քամալին եմ տեսնում:

- Ես էլ,- ասաց մյուսը:

Երեքն էլ միասին գրեթե գոռացին.

- Քամա՛լ:

Քամալը գլուխը բարձրացրեց, նայեց նրանց կողմը, տեղից վեր կացավ, առաջացավ: Երեք եղբայրները արդեն իր մոտ էին. գրկախառնություն, համբույրներ: Քամալը միայն անուններն էր տալիս՝ կարծես իմանալու համար՝ չի՞ մոռացել արդյոք:

Ո՛չ, չէր մոռացել, երեքին էլ լավ գիտեր, ճանաչում էր: Երեքն էլ իրենից մեծ էին մի քիչ: Բայց լավ ընկերներ են եղել: Իրենից շուտ թողեցին տունը, գնացին ամեն մեկը մի աշխատանքի, իսկ ինքն այդ ժամանակ սովորում էր դեռ, պիտի սովորեր: Այն ժամանակվանից չէր տեսել իրենց, արդեն քանի՞ տարի էր: Նստեցին մի սեղանի շուրջ և խոսեցին ամեն ինչից: Տղաներն ամուսնացել էին, երեխաներ ունեին: Երբ Քամալը Վարդին տարավ, նրանցից ոչ մեկը տանը չէր: Չէին տեսել Վարդին: Բայց վերջում, երբ գնացել էին իրենց ծնողներին այցելելու, իմացել էին, որ Քամալը կին և երեխա է ունեցել, որ մի օր կինը թողել է երեխային, հեռացել է տանից, բայց ինչու՝ չգիտեն: Խոսեցին Քամալի մորից, հորից, մի խոսքով, շատ բան գիտեին նրանց մասին:

Մի եղբայրը՝ Ալին, ապրում էր Ստամբուլում, ոչ շատ հեռու այդտեղից, դրա համար էին մտել այդ ռեստորանը, երկու եղբայրներն էլ ապրում էին Մալաթիայում:

Քամալը ուզեց, որ այդտեղ հաց չուտեն՝ մտածելով, որ մայրն իրեն է սպասում, ինքն էլ արդեն ուշանում էր, մինչև մատուցողի մոտենալը եղբայրները որոշեցին, որ ավելի լավ է, գնան՝ մորաքրոջը տեսնելու: Քամալի մորը մորաքույր էին ասում:

Գնացին: Քամալը տան դուռը բացեց՝ մորը կանչելով.

- Աննե՛մ, տե՛ս, ո՛ւմ եմ բերում, նայի՛ր:

Մայրը զարմացավ. Քամալն առաջին անգամ մարդ էր բերում տուն: Գյուղվարդը երբ տեսավ թե ովքեր են, ուրախացած ներս հրավիրեց, գրկախառնվեցին և ջերմ համբուրվեցին: Սկսվեց հարցուփորձը. ծնողներից հարցրեց, տեսնո՞ւմ են արդյոք իրար, թե՞ ոչ: Մի քանի նախադասություն, և ամեն ինչ գիտեին արդեն:

Մայրը սեղանը պատրաստեց, որովհետև Քամալն ասաց.

- Աննե՛մ, գիտեմ, որ լավ ճաշ ունես եփած, իրենք էլ ոչինչ չեն կերել, ուտենք միասին:

Հաճույքով կերան, գինի էլ խմեցին, իրար շատ լավ բաներ մաղթեցին ու գնացին:

Ալին ասաց, որ իրար կարող են տեսնել նորից, արդեն տան տեղը գիտեր: Եղբայրները գնացին, բայց Մուրադին չտեսան, տանը չէր: Նույնիսկ չխոսվեց Մուրադի մասին, չգիտես ինչու:

Հետաքրքիր հանդիպում էր, հաճելի անակնկալ. Քամալի ընտանիքը ապրել էր լրիվ առանձնացած աշխարհից, չէր ունեցել ո՛չ բարեկամ, ո՛չ հարազատ. ինչպես որբ ամուսնացել են ծնողները, մեկուսացվել են այդ գյուղում, այնպես էլ չեն ցանկացել իրենց նետել հասարակության մեջ, այնքան տարբեր ցավեր են ունեցել:

Հայի օջախ, որը արյունակից չի ունեցել, ապրել է թուրքերի միջավայրում:

Այսօր զարմանալի էր Գյուլվարդի համար հյուր ընդունելը: Ուրախացան մայր ու տղա, հետո էլ երկար ժամանակ խոսելու նյութ ունեցան: Կարծես մարդկությունից դուրս էին եկել: Քամալն էլ, երբ իմացավ հայ լինելը, ինքնամփոփ դարձավ, վախեցավ իր մոր և երեխայի համար: Պարզ էր, որ այդ տեսակ կյանքը ոչ մեկին հաճելի չէր: Հայը մարդասեր էր, հյուրասեր, սիրում էր խոսել: Բայց կյանքի բերումով այդպիսին էին դարձել: Երբ պիտի փոխվեր այդ ամենը, ինչպես իրենց իսկությունը պիտի գտնեն՝ չգիտեն: Քամալը հաճախ էր մտածել. երբ տեսնում էր, որ հեռանում էին օտար երկրներ, իր մտքում ասում էր, որ այս երկիրն էլ օտար է հիմա այս մարդկանց համար, որ հեռանում են. «Ես էլ հայ եմ թուրքի անունով և՝ չեմ կարող հաղերդակցվել իմ հայի հետ, թուրքին էլ չեմ ուզում»:

Հայը որտեղ էլ գնա, հայ է, բայց հայրենիքը կմնա երազ իր համար: Չի կարող ասել, որ իր ծննդավայրն իր հայրերի երկիրն է: Կարճ մի կյանք ունեն, կեսից ավելի չիմացավ իր իսկական

ով լինելը, մինչև երբ պիտի քողարկվի, թուրքին չի ուզում, իր անվան տակ է թաքնվում:

Քամալը ուզում էր այս դրությունից դուրս գար, ամեն օր աղոթում էր Աստծուն, սպասում էր, որ մի օր անպայման պիտի պատասխանի:

Անցան օրեր, ոչինչ չէր մխիթարում Քամալին. մշեցու զավակն իր սիրուն հավատարիմ մնաց: Ոչ մի անգամ հայացքը չբարձրացրեց, որևէ մեկին չնայեց, չնայած ինքը շատ երևացող արտաքին ուներ և շատերի ուշադրությանն էր արժանանում: Նա մնաց կառչած իր անհույս սիրուն: Հաճախ էր մտածում իր Մուրադի մասին. հանկարծ չկապվի մեկին, ամբողջ կյանքում իր նման տանջվի: Դեռ իր ընտրությունը լավ էր. առանց իմանալու Վարդը հայ էր, ամուսնացավ, պարզվեց, որ ինքն էլ է հայ:

Ինչպե՞ս բացատրել Մուրադին, եթե սիրահարվի թուրք աղջկա՝ չիմանալով իր հայ լինելը. ամեն ինչի մասին մտածում էր Քամալը:

Իր հայրն էր այդ վիճակում իրենից պահել, հիմա էլ ինքն է շարունակում նույն սխալը: Տեսնում է, որ անկախ իրենցից են անում, կյանքը քաղցր է. ստիպված են:

Մեկ ամսվա մեջ Քամալը ստացավ երկու նամակ իր հացեով: Առաջինի մեջ ո՛չ անուն կար, ո՛չ ազգանուն, միայն գրված էր.

«Վարդը ծնողների հետ Միացյալ նահանգներ է գնացել»: Կանադայից էին ուղարկել: Այս ստանալով՝ կասկածն ուզեց փառատի Քամալը, բայց ոչ մի ստույգ տեղեկություն չուներ ուրիշ: Հաջորդ նամակը ստացավ. «Իմ ծանոթները ճանաչում են մի կնոջ անունը՝ Վարդ: Այդ Վարդը գտնվում է Հունաստանում, Սալոնիկում, հասցեն այս է...»: Այս նամակը դեռ հուսալի էր, տալիս էր մի տեղեկություն, որով կարող էր որոնումները, գոնե հասցեն կար:

Հազար կասկած էր տանջում սիրտը. այնքանով էր ուրախ, որ հայերը իրեն չէին լքել ու մոռացել, փնտրել են. չէ՞ որ այդքան կարողացել են պատասխանել: Գրեց մի երկտող այդ հասցեով՝ բացատրելով, որ Վարդին փնտրում է իր որդին՝ Մուրադը, որն արդեն 15 տարեկան է: Խնդրում է Վարդին պատասխանել հետևյալ հասցեով: Երկտողի տակ գրում է. «որդիդ՝ Մուրադը»: Այս նամակը ուղարկում է Հունաստան՝ նշված հասցեով: Քամալը սպասում է պատասխանի, տեսնում է, որ իր ջանքերը իզուր չեն եղել, բայց տարիներ խլեցին իրենից:

Այս բոլորի մասին Քամալը չէր խոսում մոր հետ, չէր ուզում խանգարել մոր միտքն ու հանգստությունը:

Շատ չանցած՝ մի ուրիշ նամակ ստացավ, այս անգամ տեղեկությունները ավելի հավաստի էին թվում: Տեղեկացնում էր՝ Վարդը կա, ապրում է, միայն պարզ չէ, Թուրքիայո՞ւմ է, թե Ամերիկայում: Վերջում ավելացնում է. «Եթե փնտրողը Քամալն է, ես երանի եմ տալիս իրեն, կարողացել է տիրանալ այդպիսի ազնիվ, անմեղ և հավատարիմ էակի: Մինաս»:

Այս բոլորը գրված էր շատ գրագետ թուրքերենով, քանի որ նամակը, ըստ Մինասի, թուրքի էր ուղղված:

Մինասի ազնիվ լինելն էլ պետք է գնահատել. այստեղ էլ արատ չէր ուզում գցել Վարդի վրա՝ իր համախոհին պարզապես զիջելով իր զգացմունքները:

Երբ նամակը տվեցին Մինասին, երբ կարդաց «Մուրադ» ծրարի վրա, սիրտը տակնուվրա եղավ, զգաց, որ իր սրտի թելը կտրվեց, այլևս կասկած չկար. Վարդը գնալով ավելի էր հեռանում իրենից: Մինասն անմիջապես որոշեց պատասխանել և իր իմացած քիչ տեղեկությունները տեղ հասցնել, քանի որ խոսքը վերաբերում էր Վարդին, իր Վարդին, ոչինչ, թող ուրիշինը լինի, բայց իմանար միայն, որ լավ է լինելու իր Վարդը:

Քամալը ծրարը նամակատուփից հանելուն պես զգաց սրտի զարկերի ուժգնությունը, այլևս համբերանքը չէր հերիքում. ինչ կար արդյոք գրված այդ նամակում: Անմիջապես բացելուց հետո տեղեկացավ, որ այստեղ էլ ճշգրիտ տեղեկություններ չկան: Բայց այս Մինասն ո՞վ էր...

***

Այս անգամ Քամալը պատմեց նամակի մասին: Մայրը հուսադրեց, որ լավ էլ տեղեկություն է, գոնե գիտեն, որ կա Վարդը և գտնվում է ինչ- որ տեղ, օրը կգա, կիմանան նաև՝ որտեղ է գտնվում:

Նորից անելանելի վիճակ. Քամալը իր տեղը չէր գտնում, հիմա որտե՞ղ փնտրեր Վարդին: Ամեն երեկո Քամալն ու մայրը երկար խորհրդակցում էին, մինչև Մուրադը տուն կգար: Մուրադի դասերը ուշ էին ավարտվում, տղան մասնակցում էր տարբեր խմբակների: Քամալը չէր վախենում. տղային ոչինչ չէր պատահի. նա զինվորականի տղա էր՝ բոլորը ճանաչում էին: Աշխատանքի տեղում հիմա ավելի քիչ էր հանդիպում հայերի, առաջվա պես շատ չէին գնացողները: Բայց այն քիչն էլ դժվարություն չուներ, բոլորն էլ ուրախ դուրս էին գալիս իր գրասենյակից՝ հազար անգամ շնորհակալություն հայտնելով, երբեմն էլ որոշ հայերեն բառեր արտասանելով. իրենց թվում էր, որ թուրք է, չի հասկանա, բայց համարժեք բառը չգտնելով թուրքերեն՝ հայերեն էին ասում, որ իրենց խոսքը կիսատ չմնար: Քամալը գիտեր, հասկանում էր ու ժպտալով նրանց ուղեկցում էր դեպի դուռը:

Շատ երկար մտածեց, որ ինչ-որ մեկը երանի է տալիս իրեն, կարծես ինքն էլ իրեն երանության մեջ էր զգում, բայց, չգիտեր ինչու, գուցե այս թևավոր խոսքերից:

- Բայց այդ ո՞վ է արդյոք:

Երեկոները՝ աշխատանքից հետո, կարծես օրենք էր դարձել իր համար ծովափ գնալը: Նստում էր սրճարանի աթոռներից մեկին ու նայում ծովին: Սուրճը կամաց, կում-կում խմելով՝ մտածում էր, ուղեղը միշտ աշխատում էր: Ստացած տեղեկությունները նորից մտաբերում էր, մտքով կարդում: Մտածում էր՝ եթե Վարդը Հունաստանից է գնացել Ամերիկա, ուրեմն այնտեղ է. Թուրքիայից գնալ չէր կարող, ինքն անպայման տեսած պիտի լիներ, իր մոտով պիտի անցներ անպայման Ամերիկա գնալու համար: Այդ էլ իր փաստարկն էր:

Միայն հասկացավ, որ պետք է համբերել, ավելի երկար մտածել չէր կարող կամ էլ չէր համարձակվում մտածել:

- Այս գիշերը մամայիս եմ տեսել երազիս, տեսա՝ հեռու կանգնած էր, ինձ էր կանչում, ճիշտ այս իր նկարի նման էր, գեղեցիկ: Ձեռքով էր անում ինձ, ժպտում էր, բայց շուտ զարթնեցի,- ասաց Մուրադը առավոտյան, երբ վեր կացավ՝ դպրոց գնալու:

Գյուլվարդը նայեց երեսին, համբուրեց, ասաց.

- Աստված ձայնդ լսի՛, յավրո՛ւմ:

Տղան պայուսակը վերցրեց, դուրս եկավ, կարծես հույս ուներ, թեթևություն կար մեջը:

Հայրը շեղ նայեց հետևից, սիրտը ճմլվեց, ետ դարձավ, նայեց նկարին, մտքում ասաց.

«Ինչ արեցի ես, դու ինչ արեցիր մեր տղային»:

***

Անցավ ևս մի քանի օր. Քամալը արդեն վերադարձել էր աշխատանքից. այդ օրը ուղիղ տուն էր եկել: Նոր էր ներս մտել, նստել լվացվելուց հետո: Մայրը ուզում էր սուրճ եփել նախ, որ խմեն միասին, ճաշն ավելի ուշ ուզեցին ուտել, երբ Մուրադը վերադառնար դպրոցից: Հանկարծ դուռը ծեծեցին, զարմանալի էր. ո՞վ կարող էր լինել: Այդպիսի բան երբեք չէր

պատահել: Քամալը վեր կացավ, չթողեց մորը մոտենա դռանը: Դուռը բացեց, Ալին էր կանգնած դռան առաջ, ժպիտը դեմքին՝ թեթևացած հոգով ներս հրավիրեց Քամալը: Ալին եկավ, նստեց, բարևելուց, համբուրվելուց հետո. կարծես իր եղբոր տունը լիներ: Իրար որպիսություն հարցնելուց հետո Ալին կարծես բան ուներ ասելու, բայց չէր ուզում միանգամից արտահայտվել, մտածեց հեռվից գալ, չգիտեր՝ ասելիքն ուրախությո՞ւն էր բերելու, թե՞ հակառակը:

Գյուլվարդի խոսքը ճիշտ նպատակին էր ուղղված: Հարցրեց՝ ծնողներից լուր ունե՞ր: Ալին ուրախացավ, որ հարց տվեց, ասաց, որ նոր է վերադարձել գյուղից, բոլորը լավ էին և շատ բարևներ էին ուղարկել: Ինքը պատմել էր՝ ինչպես են հանդիպել Քամալին, ամեն ինչ պատմել էր: Այդ ժամանակ Գյուլվարդը վեր կացավ սուրճ եփելու համար, արդեն իրենց համար էր եփելու:

Այդ ժամանակ ձայնը իջեցրեց, ասաց, որ մի բան էլ ունի ասելու, բայց չգիտի՝ ասածը լավ պիտի ընդունեն, թե՞ ոչ:

Քամալը ասաց. «Ասա՛, ինչո՞ւ չասես, բա՞ն է պատահել, ինչ է, եթե օգնելու բան կա, ասա՛»:

- Ո՛չ, այդ օգնելու համար չէ, կուզեի ասել, գիտես, որ կնոջդ չեմ տեսել, մենք՝ եղբայրներս, չենք ճանաչում, բայց մայրս ասաց, որ հիմա ձեր տանն է. ամբողջ ձմեռը մնացել է այնտեղ: Անցյալ տարի հոր հետ է եկել, տասնհինգ օր հայրը մնացել է հետը, հետո վերադարձել է, ինքը, իհարկե, չգիտի՝ ինչու է աղջկան թողել: Ավելացրեց, որ մայրը ավել բան չգիտեր, բայց ասաց, որ շատ լավ աղջիկ է:

Գյուլը զբաղված էր. ոչինչ չլսեց, իսկ Քամալի բերանը բաց մնաց: Խոսել չկարողացավ, միայն լսում էր. կարծես ականջները արձագանքում էին, աչքերը հառած Ալիի բերանի շարժումներին՝ մտածում էր՝ երազ է, թե՞ ոչ:

Ձեռքը տարավ, Ալիի ձեռքը բռնեց, հազիվ կարողացավ ասել. «Ճի՞շտ ես, դու տեսա՞ր իրեն»: «Ո՛չ»,- եղավ պատասխանը, ասաց, որ գործով էր գնացել, այնքան, որ տեսել էր ծնողներին, հաջորդ օրը՝ առավոտյան վաղ, վերադարձել էր Ստամբուլ:

Գյուլվարդը սուրճը դրեց սեղանին, այլևս չխոսվեց այդ մասին: Քամալը չանդրադարձավ, Ալին էլ հասկացավ, որ պետք չէր շարունակելը: Քամալը միայն ցույց տվեց իր ուրախությունը և շնորհակալություն հայտնեց նրա այցելության համար: Սուրճը խմեցին, Ալին վեր կացավ գնալու համար, Քամալը դուրս եկավ հետը՝ ճանապարհ դնելու, այնտեղ ասաց, որ ուրախալի լուր էր տվածը, և շատ կարևոր էր իր համար: Ալին էլ ուրախացավ ու գնաց՝ ասելով՝ նորից կտեսնվեն:

Մայր ու տղա խոսեցին ուրիշ բաներից, մինչև Մուրադի գալը: Երեքով այդ երեկոն ուրիշ կերպ անցկացրին: Քամալը շատ ուրախ էր, երկար կատակներ արեց իր տղայի հետ, նման բան երբեք չէր պատահել, զարմանալի էր, բայց մայրը վերագրեց, որ Ալիին տեսնելն էր իրեն այդքան ուրախացրել. մանկության ընկերն էր, իրար շատ էին սիրում, այն ժամանակ ուրիշ ոչինչ և ոչ մեկը չուներին, այդ չորս տղաները միշտ իրար հետ էին ամեն տեղ, ինչ անեին, իրար հետ: Քամալին փոքր եղբոր տեղ էին դրել, շատ էին սիրում, Քամալն էլ շատ սիրուն տղա էր, որքան մեծացավ, այնքան գեղեցկացավ: Քամալի հայրն ամեն ինչ անում էր, որ ուսում ունենար որդին, այդպես էլ եղավ, բարձրացավ, իր առաջադիմությամբ պաշտոնյա դարձավ: Քամալն այդ գիշեր բոլորովին չքնեց, ուրախությանը չափ չկար, փառք էր տալիս Աստծուն ամեն վայրկյան՝ զարմանալով՝ այդ ինչ երազ էր տեսել Մուրադը, երազ չի եղել, այլ հայտնություն: Ինչպե՞ս պիտի Վարդն իրեն ընդուներ, ինչպե՞ս, անելիքը չգիտեր: Ուզում էր ինքը տեսներ, առաջ գնար, իր հարսին արժանավայել խնդրեր, այնպես, ինչպես

չէր արել այն ժամանակ: Որոշեց գնալ աշխատանքի, հայտնել իր բացակայելու մասին, որից հետո գնել մի քանի նվեր՝ Վարդին հաճույք պատճառելու համար: Արդեն չէր դիմանում, պետք է գնար՝ մորն ու տղային հայտնելով, որ շատ կարևոր գործուղում է, և իրեն էր հանձնարարված այդ անելը: Մի քանի օրով համաձայնություն ստացավ աշխատանքից բացակայելու համար:

Հաջորդ օրը ճամփա ընկավ՝ մորն ու որդուն համբուրելով: Պետք է ասել, որ մորը շատ տարօրինակ թվաց, այդ առաջին անգամը լինելով՝ տղան այդ պարտականությունը հոժարությամբ է կատարում:

Չասենք, թե ինչ դժվարություններով կարողացավ ճամփորդել, միևնույնն է, ոչինչ չէր կարող իր ճամփան փակել, նա արդեն օդով էլ կգնար, միայն թե հասներ և շուտ հասներ: Ամբողջ գիշերը ճամփա գնաց, երբեմն կամաց, երբեմն քառատրոփ և մեկ օր հետո առավոտյան արևի դուրս գալու հետ մեկտեղ կանգնած էր Քամալը իր տան դռան դիմաց, զինվորականի հագուստով, ձիուն նստած:

Այդ ժամանակ Վարդը ամբողջ գիշերը, պառկած իր անկողնու մեջ, մի վայրկյան աչքերը չէր փակել իր երեկոյան ամենօրյա պաշտամունքից հետո: Վաղ առավոտյան դեռ շարունակում էր երազել իր արքայազնի մասին, ինչպես միշտ, ու հանկարծ հայացքն ընկնավ պատուհանից դուրս:

Նայեց երկար՝ աչքերին չհավատալով, շփեց աչքերը, փակեց, բացեց, նույնը տեսավ. «Ո՞վ է Քամալն է, ինչ, ես տեսիլք եմ տեսնում արդեն, թե՞ խենթացել եմ»:

Տեղից չշարժվեց, մնաց նստած, ոտքերը չէին ենթարկվում իրեն: Նայեց նորից: «Այո՛, իջնում է ձիուց, ինքն է»: Ուզեց անունը տալ, գոռաց, բայց ձայնը դուրս չեկավ կոկորդից, ականջները ծանրացան...

Քամալն իջավ ձիուց, արագ դուռը բացեց, մտավ տուն: Վարդին գտավ գետնի վրա, երեսնիվայր, գրկեց, դրեց անկողնուն, խառնվեց, ինչ անելը չգիտեր, ջուր բերեց, ջրով շփեց երեսը, սիրեց, համբուրեց, լաց եղավ: Շատ գեղեցիկ խոսքեր ասաց, գրկեց, համբուրեց, պառկեց կողքին, կանչեց իր Վարդին: Շատ երկար տևեց, մինչև Վարդը բացեց աչքերն ու տեսավ, որ իր Քամալը գրկած համբուրում է իրեն, ու խոսում, «Վա՛րդ, զարթնի՛ր, աչքերդ բա՛ց, ես եմ՝ Քամալը, ինձ մի՛ թողնիր, ես սիրում եմ քեզ, Վա՛րդ, մեղք է մեր տղան՝ Մուրադը»: Այսպես խնդրում, աղաչում էր:

Վարդը կամաց բացեց աչքերը, բայց դեռ երազի մեջ էր իրեն կարծում, չէր հավատում, որովհետև այդ բոլոր բառերը ինքը հայերեն էր լսում և չէր հավատում, որ Քամալն է: Քամալը նորից շոյեց երեսը Վարդի, ասաց.

- Զարթնի՛ր, Վա՛րդ, ես եմ՝ Քամալը, բա՛ց աչքերդ, սիրում եմ քեզ:

Վարդը բացեց աչքերը, այո՛, տեսավ Քամալին, բայց Մշո աղջիկն ինչպե՞ս խոնարհվեր, ցույց տար, թե քանի տարի է սպասել նրան, ցույց տար, որ ինքն էլ է տանջվել ու երազել այս օրը: Վարդը թևը գցեց, Քամալին գրկեց.

- Ես էլ եմ քեզ սիրում, Քամա՛լ, ինչ անեմ, որ թուրք ես, սիրում եմ քեզ, ոչինչ, որ թուրք ես,- այսպես խոսեց Վարդը թուրքերենով՝ մտածելով, որ թուրքերեն պետք է լիներ Քամալի խոսածը, բայց թարգմանությունն էր երևի գալիս իր ականջին, թե ոչ, ինչպե՞ս կարող էր Քամալը հայերեն խոսել:

- Վա՛րդ, ինձ հետ հայերե՛ն խոսիր, ես հայ եմ, Վա՛րդ,- ավելի ուժեղ գրկելով Վարդին՝ համբուրեց Քամալը:

Վարդը կտրուկ վեր կացավ, նստեց. կարծես հրաշք էր կատարվում, ուրիշ ոչինչ լինել չէր կարող, աչքերը լայն բաց արած կարոտով նայում էր Քամալին, հազիվ իրեն հավաքելով, թե ոչ,

նորից էր կորցնելու գիտակցությունը, քանի որ իր ուղեղը դժվար էր կարողանում ընդունել այդ անհավատալի նորությունը:

- Ինչպե՞ս, ճի՞շտ է, Քամա՛լ, դու հա՞յ ես, ինչպե՞ս եղավ, որ հայ ես, բայց ինձ ասում էին, որ թուրք ես:

- Ո՛չ, Վա՛րդ, ես հայ եմ, մշեցի՛, այդ մասին մայրս է վկայել քո գնալուց հետո, այն օրվանից քեզ փնտրել եմ, մեր տղան չգիտի դեռ, որ ինքն էլ է հայ, բայց շատ է սիրում քեզ, եթե տեսնես՝ ի՞նչ լավ տղա ունես:

Վարդն իրեն կորցրել էր արդեն, չգիտեր՝ ինչպես ընդուներ այս բոլորը, տարիներ ի վեր փնտրում էր իրեն արդարացնելու միջոցներ, որ իրեն պետք չեկան բոլորովին, այո՛, երբ սեր կա, ներում պետք չէ:

Այսպես երկար խոսեցին, երկար իրար սիրեցին՝ երանության գրկում ընկած. այդքան տարիների սպասումն ու կարոտն ամփոփվեց մի քանի րոպեի ընթացքում:

Րոպեն րոպե չէր, իհարկե, ժամեր էին, բայց այնքան արագ անցան այդ ժամերը, կարոտը դեռ չէր հագենում, նոր էին սկսել հասկանալ իրար:

Այնքան զբաղված էին, որ ոչ մի ազատ վայրկյան չունեցան՝ պատուհանից դուրս նայելու: Ձին կանգնած էր նույն տեղում նույն վիճակով՝ բեռը շալակին, իզուր էր ոտքերը դոփում գետնին, չէր ուզում խանգարել, բայց իրեն վիրավորված զգաց, որ անտեսել են իրեն, սկսեց խրխնջալ՝ ասելով. «Էհե՛, ես այստեղ եմ, ինչ եմ լինելու սոված, ծարավ այսպես»:

Հանկարծ ձայնն ընկավ Քամալի ականջը, սկսեց ծիծաղել, Վարդը նույնպես:

Երկուսն էլ հասկացան, թե ձին ինչ էր ուզում հասկացնել իրենց ու կուշտ ծիծաղեցին: Իրար գրկած՝ վեր կացան, դուրս եկան, ձին գլուխը դարձրեց դեպի իրենց ու նորից բողոքեց:

Քամալը ճամպրուկն էլ չէր իջեցրել վրայից, չնայած շատ ժամեր էին անցել, շուտով երևի արևը մայր մտներ, եթե ձին չզգուշացներ, որ իր ուտելու ժամերը խախտում են՝ իրեն անտեսելով:

Քամալը ձին վարձել էր մի քանի օրով, ետդարձին պիտի հանձներ, և շարունակեին ճանապարհը:

Քամալը ձիուն կերակրեց, ջուր տվեց, հետո կանգնեցրեց գոմում գիշերվա համար: Կերակրեցին նաև հավերին: Փիսիկն իրեն շատ լավ էր զգում, տեղաշորի վրա փաթաթված քնած էր, երբեմն ետ էր նայում, ուշադիր դիտում՝ կարծես ասելու համար. «Սա ոմվ է այսպես եկել, տեղս գրավել, պառկել»: Երբեմն էլ, փոխելով դիրքը, մռմռում էր, նորից քնում:

Եթե ձին չլիներ, երևի Քամալն ու Վարդը չհիշեին, որ իրենք էլ պետք է սնվեն մարմնապես: Քամալը, ճամպրուկը ներս բերելով, հանեց գեղեցիկ նվերները, որ բերել էր Վարդի համար: Նվիրեց, մեծ ուրախությամբ Վարդն ընդունեց՝ հազար անգամ համբուրելով Քամալին, բավ չհամարելով իր շնորհակալական բառերը, հասարակ համարելով իր համբույրի դիմաց: Այնուհետև նստեցին, միասին կերան Վարդի պատրաստած համեղ կերակուրը, որն առաջին անգամ ճաշակել վիճակվեց Քամալին. միշտ մայրն էր եփել, կերավ, տեսավ, որ մեկն էլ կար այս աշխարհում, որ կարող էր համեղ կերակուր եփել: Շատ անուշ կերան և շարունակեցին իրենց կիսատ թողածը: Այնուհետև չուզեցին փորփրել անցյալը և վշտանալ, հազիվ էին մոռացել, ընդհակառակը, այս գեղեցիկ խոսքերից հետո սկսեցին հետագա ծրագրեր, որոշումներ:

Տեսան, որ գեղեցիկ ու լավ օրերը նոր են սկսվելու իրենց համար, երիտասարդ են, դեռ կյանքն առջևում է:

Վարդը շատ ուրախացավ, որ Քամալը հայ էր, հայերեն խոսել գիտեր, ամենագեղեցիկ և քաղցր խոսքերով իրեն

երջանկացնում էր: Այս ինչ երազ էր, չէր ուզում, որ վերջանար, ընդհատվեր: Քամալը նմանապես երանության մեջ էր, իր ունեցած սերը կրկնապատկված զգալով՝ ամեն ինչ անում էր, որ ցույց տար, որ ինքը, իրոք, սիրելով է փախցրել: Շատ երկար բացատրվեցին, խոսեցին, երդվեցին, շատ ուրիշ-ուրիշ բաներ որոշեցին: Բայց,

- Վարդ, կարո՞ղ ես ինձ ասել, այդ Մինասն ո՞վ է: Վարդը աչքերը լայն բացեց զարմացած, այս որտեղի՞ց որոշեց Քամալը, ինչպե՞ս իմացավ, որ Մինաս կար, և որ Մինասն իր կյանքի մի մասն էր մինչև այսօր: Զարմանքը հերիք չէր, պետք է կարողանար ճիշտ նկարագիրը տար այդ Մինասի: Անմիջապես չկարողացավ պատասխանել հանկարծակիի եկած, բայց Քամալը սպասում էր անկեղծ պատասխանի և անմիջապես:

- Ինչպես գիտես, որ Մինաս կա, այնպես էլ գիտես ուրեմն, թե ով է այդ Մինասը:

- Ո՛չ, չգիտեմ, քեզ եմ հարցնում:

- Մինասը բարձր արժանիքներով մեկն է, համակրելի, որը ցանկություն ուներ ինձ հետ ամուսնանալու, բայց ես ցույց տվեցի, որ իր ընկերությունն ավելի հաճելի է ինձ համար, ինքն էլ հարգեց իմ առաջարկը: Մնացինք լավ ընկերներ, այն էլ ասեմ, եթե նա չլիներ, այսօր այստեղ ինձ գտնել չէիր կարող:

Չգիտենք, թե պատասխանը բավարարե՞ց Քամալին, թե՞ ոչ, համենայն դեպս, ուզում էր հավատալ Վարդին. ամենակարևորը այն էր, որ այսօր, այս պահին Վարդն իր գրկումն էր գտնվում:

Հաջորդ օրը՝ կեսօրին մոտ, հարևանուհին դուռը ծեծեց: Վարդը դուռը բացեց, ներս հրավիրեց: Տունը հավաքված էր, մաքուր, իսկ Քամալը, կանգնած հայելու դեմ, նոր էր երեսը սափրել: Քամալը ետ դարձավ, տեսավ ծանոթ, բարի դեմքը: Մոտեցավ, բարևեց, համբուրեց՝ ասելով, որ ինքն էր ուզում գնալ նրանց բարևելու:

Կարոտել էր Սուլթանը, հարցրեց մոր մասին, Մուրադի մասին: Նստեցին, զրուցեցին, բայց ավելին չուզեց հարցնել: Երեկոյան հրավիրեց ճաշելու, ասաց, որ նոր հաց է թխել, ամուսինն էլ կուրախանա:

***

Քամալը շատ տեղեկություններ ստացավ Վարդից. Հունաստանում է եղել քանի տարի, հայրը Ամերիկայում է, և ունեն օտար քաղաքացիության իրավունք, դա շատ կարևոր էր: Վարդը հայտնեց, որ հորը խոստացել է Միացյալ Նահանգներ գնալ և շատ ուրիշ տեղեկություններ հայտնեց շատ ուրիշ մարդկանց մասին:

Քամալը շատ նուրբ մոտեցավ հարցին, դեռ չգիտեր՝ Վարդը հետևելու է իրեն, թե իր անձնական որոշմանը պիտի հետևի:

- Վարդ, դու գալու ես չէ՞ ինձ հետ Ստամբուլ, հետո ինչ նպատակ ունես, ինձ ասա, խնդրում եմ, կուզես մնալ ինձ հետ, պետք է ես իմանամ, դու իմ կինն ուզում ես մնալ, թե պիտի գնաս Ամերիկա՝ ծնողներիդ մոտ:

- Ես ուզում եմ, որ մենք բոլորս գնանք, դու, մաման, Մուրադը, բոլորս միասին: Դու ուզում ես դա, շուտ ասա:

- Ես կուզեմ, որ քո սրտով լինի, Վարդ:

Այդպես համաձայնեցին ուրախ՝ նորից թողնելով այդ բոլորը եկող օրերի համար: Ուզեցին նորից մի քանի օր մնալ այստեղ, առանձնության մեջ վայելեն և խորհրդակցեն ապագայի համար: Քամալն իր աշխատանքով ամեն ինչի կարող էր հասնել և շատ կարճ ժամանակամիջոցում, ինքը դա լավ գիտեր, մնում էր գործել միայն:

Երբ Վարդը պատմեց Ղազարի քրոջ՝ Լուսինի և Գառնիկի մասին, որ ուզում են գնալ և պատրաստ են արդեն, Քամալն

անհանգստացավ, որովհետև ինքը այնտեղ չէր, հանկարծ դժվարություն չունենան թղթերի մեջ:

Դեռ չէին որոշել իրենց դուրս գալու օրը:

Երեկոյան հյուր գնացին հարևանի տունը: Շատ լավ ընդունեցին իրենց, երկար խոսեցին անցած-դարձածից, իրենք հայտնեցին նաև, որ պիտի գնան՝ նրանց թողնելով ամեն ինչ, որ ունեն. միգուցե այլևս չվերադառնան: Սուլթանը շատ նեղվեց, ամուսինը՝ նույնպես: Ուշ երեկոյան վերադարձան իրենց տուն:

Առավոտյան որոշեցին. հաջորդ օրը վաղ՝ արևը ծագելուն պես, դուրս գալ, թողնել ամեն ինչ, ճամփա ընկնել դեպի Ստամբուլ: Բայց մեկ ձիով հնարավոր չէր, հարևանը ուզեց ուղեկցել իրենց՝ մեկ ուրիշ ձի տրամադրելով: Այդպես էլ արեցին մինչև հաջորդ պանդոկը, որտեղ կարող էին երկու ձի ունենալ, ուղեկիցն էլ հետը՝ ճամփան շարունակելու համար, մինչև հասնեին մի տեղ, որտեղից կարող էին տրանսպորտից օգտվել:

Վարդը անհամբեր էր, երբ պիտի հասներ իր Մուրադին. հազար բան մտածելով՝ հետևում էր Քամալին: Ճանապարհը երկար էր, հոգնեցուցիչ, բայց սիրով էր գնում այս անգամ, մենակ չէր, վախենալու բան չուներ, ավելի հուսալի էր. Քամալը հետն էր:

Քամալը աչքը չէր կտրում Վարդից, անընդհատ հարցնում էր. «Լավ ես զգում, հոգնե՞լ ես, հանգստանալ ուզո՞ւմ ես»: Այդպես առաջանում էին, երկու գիշեր էլ մնացին պանդոկներում, մինչև հասան Ստամբուլ:

Վարդը շունչ քաշեց՝ մտածելով, որ հասնում է, որ մոտենում է իր այնքան տարվա անհույս մտորումների վերջակետին: Ինքը մենակ չէր, իրեն հենարան ուներ, որին կարող էր վստահել, խոսելու, արդարանալու կարիք չուներ, ներված էր ամեն ինչ:

Քամալը ասում, խոսում էր հետը, ուզում էր տրամադրությունը փոխել, քանի որ զգում էր, ներքուստ Վարդը մի հսկա հանգույց ունի, որ նեղում է իրեն:

Արդեն իջել են մեքենայից, Բոսֆորի շրջանում են, մի փոքր հեռու, արդեն Վարդին ծանոթ էր, բայց իրենք հակառակ կողմը շարունակեցին քայլել:

Քամալը ճամպրուկների համար բեռնակիր էր վարձել, որը հետևում էր իրենց: Քամալը, Վարդի ձեռքից բռնած, նրան տանում էր, շատ հեռու չէր շենքը, որտեղ ապրում էին այս արդեն քանի տարի:

Վարդը կարծես ամպերի վրայով էր քայլում, ոտքերի տակ չէր տեսնում, վերացած էր, լավ որ Քամալը բռնել էր իրեն:

Կիրակի օր էր: Հասնելու օրը Քամալն էր որոշել, որ տղան տանը լինի: Մեծ անակնկալ էր, տեսնենք ինչպես պիտի ընթանա, Քամալը շատ վստահ էր Վարդի հաստատունության վրա, միշտ հուսադրում էր, որ քաջություն ներշնչի, և այդ հանդիպման պահը լավ անցնի: Ահա կանգնած էին դռան դիմաց: Բեռնակիրը գնացել էր: Քամալը դուռը ծեծեց, բայց ինքը կանգնեց Վարդի ետևում և երկու ձեռքով բռնեց մեջքից ու ականջին կրկնում էր՝ քաջ լինի: Դռան հետևից լսվեց Գյուլվարդի ձայնը թուրքերենով:

- Մուրա՛դ, դուռը ծեծեցին, տես՝ ո՛վ է:

Մուրադը դուռը բացեց, նայեց, աչքերը լայն բացեց, նորից ուշադիր նայեց, հետ դարձավ, նկարին էլ նայեց ու հասավ մորը գրկեց՝ կանչելով՝ աննե՛մ, աննե՛մ ու սկսեց լաց լինել բարձրաձայն, այլևս չէր դիմանում: Ինչ էր զգում, միայն իր սիրտը գիտեր:

Վարդը հազիվ կարողացավ հաստատ դնել ոտքը գետնին, առջևից տղան էր գրկել, հետևից Քամալը, համբուրում էին երկուսն էլ միասին:

Վերջապես ներս մտան սենյակ, դուռը փակեցին: Վարդին նստեցրին բազկաթոռին, Գյուլվարդը մոտեցավ, համբուրեց հարսին և խոսեց թուրքերեն ու հետ քաշվեց: Բայց Մուրադը չոքել էր մոր դեմ, ծնկի էր եկել, նայում էր կարոտած աչքերով, շոյում էր ձեռքերը, ասում.

- Ինչո՛ւ ինձ թողեցիր, գնացիր, ինչո՛ւ ինձ էլ չտարար հետդ, ասա՛: Մայրը հազիվ կարողացավ ասել.

- Այդ ժամանակ չէի կարող, Մուրա՛դ, հետո էլ քեզ կորցրի, ճամփաներս ինձ ավելի հեռու տարան, իմ անո՛ւշ յավրում:

Վարդին անմիջապես ջուր տվեցին, որ խմի: Երկար ժամեր անցան, մինչև Քամալը հիշեց, որ ճամպրուկները դրսում են դեռ, ներս բերեց:

Մայրը գրկեց տղային, չէր կարողանում, տղան իրենից մեծ էր արդեն, ինքը շատ փոքր էր տղայի կողքին: «Ինչ գեղեցիկ է, ինչ լավն է»,- մտածում էր Վարդը: Այս ինչ երանություն էր, անհավատալի, իր կյանքի ամենագեղեցիկ օրը պիտի համարի Քամալի հանդիպումից հետո երևի:

Նստեցին դեմ դիմաց, երկար նայեցին իրար, խոսքեր դժվար էր գտնել, ինչպես արտահայտվեին, ինչ լեզվով խոսեին, հիմա հայ էին, թե՞ թուրք, դժվար էր զանազանել: Մուրադը ոչ մի բառ չգիտեր հայերեն: Ոչինչ, կշարունակեն թուրքերեն խոսել, մինչև հիմա, որ խոսել են, ինչ է եղել, լեզու է:

Այդ օրը շատ բան չխոսվեց. ճանապարհից էին եկել, շատ հոգնած էին: Վարդն այդ օրը, այդ գիշեր այնպես հանգիստ քնեց, առանց հոգի, միայն իմացավ, որ մտնում է անկողին, աչքերը բացեց առավոտյան. այդ ժամանակ միայն սկսեց իրեն հարցեր տալ. «Այս ինչ ճակատագիր էր, այս ինչ երազ էր, որ կատարվեց. փառք քեզ, Աստված, հազար անգամ փառք, որ իմ աղոթքներն անպատասխան չթողեցիր, իմ ամուսնուն գտա, իմ

որդուն գտա ողջ և առողջ»: Առավոտյան Մուրադը համբուրեց մորը, գնաց դպրոց, Քամալն էլ գնաց իր աշխատանքին, ուզում էր տեսնել դրությունը այնտեղ, մտածում էր Լուսինի և Գառնիկի մասին:

Մի քանի օր անց նրանց գործն էլ հաջողվեց, սիրտը հանգստացավ: Ոչինչ չէր խոսել, միայն հարցրել էր՝ ո՞ր նավով են պատրաստվում գնալ: Գառնիկն ասել էր. «Այս նավին չկարողացա գնել տոմս, կլինի մեկ շաբաթ հետո, հաջորդ գնացող նավին»:

Այդքանն իմացել էր Քամալը, ուրիշ բացատրություն չէր տվել: Բայց կասկածեցին երևի, որ իրենց ազատող նույն սպան է, կասկածանքով՝ ուշադիր նայելով:

Քամալը մտածեց նաև իրենց երկրից դուրս գալու մասին. դա արդեն իրեն գործն էր, և պիտի հարմար առիթը լավ օգտագործեր, որ ամեն ինչ լավ ստացվեր: Վարդը դեռ չգիտեր, թե ինչ կարողություն ունի իր ամուսինը և ինչեր էր արել այսքան տարիների ընթացքում:

Վարդն ու Գյուլվարդը մնացին տանը, այսօր առաջին անգամ Գյուլվարդը սկսեց հայերեն խոսել իր հարսի հետ, և զարմանք պատճառեց Վարդին. որքա՜ն լավ էր խոսում հայերենը, և որքա՜ն սեր կար նրա խոսքերի մեջ իր նկատմամբ:

Ինչ վախ է միշտ ապրել հայ մարդու մեջ, դրդելով այդպես քողարկվելու, լռելու, որքա՜ն կամքի ուժ են ունեցել այդ անելու համար: Կյանքը քաղցր է, իհարկե: Վարդը կամա-ակամա շատ բան սկսեց հասկանալ, որ մինչ այդ մտքովն էլ չէր անցնում, միամիտ մեծացել էր ամբողջ կյանքում, բայց այսօր շատ քիչ բան էր փոխվել իր բնավորության մեջ. բարի էր ինքը, համեստ, դրա հանար էլ բոլորն իրեն սիրում էին և դեռ շատ կհիշեն ու կսիրեն:

Ամբողջ օրը պատմեցին, խոսեցին այնքան տարվա իրենց տեսածի, լսածի և արածի մասին: Վարդի պատմածները շատ զարմացրին Գյուլվարդին, նամանավանդ, երբ իմացավ, որ Հունաստանում է ապրել այսքան ժամանակ և ամեն ինչ արել է իրենց գտնելու համար: Դեռ շատ բան չկարողացան խոսել:

Քամալը շուտ վերադարձավ աշխատանքից, քանի դեռ Մուրադը դպրոցում էր, որ կարողանան խոսել և մտածել հետագա անելիքների մասին:

Գյուլվարդը ոչ մի խոսքին չէր խառնվում. ինքն ամեն ինչին համաձայն էր, Վարդի նպատակն էր հեռանալ այդ երկրից, իսկ Քամալն էլ համաձայն էր կնոջ հետ, մնում էր իրեն դասավորել համապատասխան բոլոր թղթերը՝ երկիրը թողնելու, ճամփորդելու համար:

Այդքան տարիներ Քամալն իր աշխատանքով կարողացել էր բավարար գումար կուտակել, և կարող էին ճամփորդել առանց դժվարություն ունենալու: Մնում էր միայն գործել արագ: Այս մասին շատ խոսեցին, Վարդը շատ ուրախ էր, որ համաձայն էին իր մտքին: Մտածում էին Մուրադի մասին, ինչպե՞ս պիտի ընդունի նոր լուրը:

Հայրը ուզեց Մուրադին պատմել ամեն ինչի մասին, քանի որ արդեն մեծ տղա է, շատ լավ կհասկանա տղան այսքան տարվա իր խուփ մեծանալու պատճառը, որովհետև այդ մասին Մուրադն էլ շատ էր մտածել և չէր գտել պատճառը: Ճիշտ պատասխանն այսօր կստանա վերջիվերջո: Կուրախանա նաև, որ իր կարծիքն էլ մեծ նշանակություն ունի այս ամենի, այս ճակատագրական որոշման մեջ:

Վարդն ու Քամալը պայմանավորվեցին մեծ անակնկալ անել Վարդի ծնողներին՝ վիզա չպահանջելով, քանի որ կարող էին գնալ որպես տուրիստ: Միայն գնալու օրը Քամալը մի հեռագիր կուղարկի՝ հայտնելով նավի կանգնելու օրն ու ժամը,

նավահանգիստը: Մեկնումը պիտի լիներ շատ շուտ՝ մոտ օրերին, հետաձգել չէին ուզում: Միայն Քամալը կարողանար դասավորել պետք եղածը և առաջիկա նավի տոմսերը գներ: Իրենց հետ տանելու շատ բան չունեին:

Այդ օրը Մուրադը շուտ եկավ տուն սովորականից, հազիվ կարողացավ համբերել մինչև օրվա վերջ: Մայրը տանը իրեն էր սպասում արդեն, մոր կարոտով ապրեց վերջին բոլոր տարիները, հիմա, որ տանն էր, ինչպես մթնեցնի այդ օրը: Եկավ, տեսավ՝ հայրն էլ էր տանը արդեն, հասկացավ, որ հայրն էլ անհամբեր օրվա վերջին էր սպասել, ինչպես ինքը: Մուրադը մտավ տուն, բարևեց, համբուրեց մորը, մեծ մորը և մոտեցավ հորը, գրկելով շնորհակալություն հայտնեց, հայրը համբուրեց տղային, շոյեց երեսը: Այնուհետև Մուրադը ծնկի եկավ մոր առջև, ասաց

- Աննեմ, ճիշտ է, որ դու հայ ես, ուզում եմ, որ դու ասես ինձ, ճիշտ է:

- Այո՛, տղաս, ես հայ եմ, իսկ դու ինչ ես, գիտես, տղաս:

- Ես, ինձ ասել են՝ ես թուրք եմ, ոչինչ, չէ՛, աննեմ, դու ինձ սիրո՞ւմ ես, չէ՛, ես քո տղան եմ, ասա՛, որ դու ինձ սիրում ես:

- Ես քեզ սիրում եմ, յավրու՛մ, մի՛ մտածիր, դու թուրք էլ լինես, քեզ կսիրեմ, յավրո՛ւմ: Ու գրկեց տղային, որ նստած էր գետնին՝ ճիշտ դիմացը, և շատ մոտիկից նայում էր իր մորը, համբուրում, սիրում, խոստովանում, թե որքան է նրան փնտրել, տարիներով երազել է ու սիրել, այսպես էլ պատկերացրել է:

Այդ ժամանակ Վարդը հիշեց, որ նվերներ էր առել Մինասի հետ տղայի համար ու վեր կացավ, ճամպրուկից հանեց ու այդ բոլորը նվիրեց տղային: Մուրադը շատ ուրախ ընդունեց բոլոր նվերները, շնորհակալություն հայտնեց մորը, շոյվեց ու համբուրեց կրկին: Հայրը այս ամենին նայում էր սիրով, ժպիտով, մտածելով, որ վերջիվերջո արևը մտածեց իր տան վրա էլ փայլել, և, որքան էլ Աստծուն փառք տալու լինի, քիչ է այս իր երջանկության դիմաց:

- Սիրեցիր նվերներդ,- հարցրեց հայրը,- տեսնում ես՝ մայրդ այդքան տարի քեզ մոտ չի եղել, բայց միշտ քեզ հետ է եղել, ինչպես տեսնում ես: Մայրդ գնալուց առաջ քեզ վստահել է մեծ մորդ, որովհետև ավելի վստահելի մարդ չի ունեցել քեզ նրան հանձնելու: Այն ժամանակ չէր կարող քեզ հետը տանել, հետո կիմանաս այդ մասին, բայց մայրդ է և լացելով է տվել, որ մեծ մայրդ քեզ պահի՝ հավատալով, որ մի օր քեզ նորից կգտնի:

Քամալը ճիշտ համարեց հիմա ասելու այն ամենը, ինչ դեռ անհայտ էր իր տղային, Վարդը չուզեց ասել, որովհետև հոր գործն էր այդ ասելը.

- Մուրա՛դ, տղա՛ս, այսօր կուզեմ, որ քեզ հայտնի լինի որոշ բաներ, որոնք դեռ պետք է գաղտնի մնան, մինչև զգանք, որ այլևս վտանգի մեջ չենք, նախ, որ հայ ենք մենք բոլորս էլ, հետո, որ ուզում ենք Ամերիկա գնալ, որովհետև մեր բոլոր բարեկամները այնտեղ են, իսկ շատ բաներ կան դեռ, որ քեզ չեմ ուզում ասել, թողնենք մանրամասնությունները, ավելի ուշ կիմանաս:

Մուրադը զարմացած մեկ սրան էր նայում, մեկ նրան, նա միայն լսեց, որ իրենք հայ են, մնացածը բոլորովին չլսեց, մինչդեռ հայրը շատ երկար խոսեց: Մտածեց, որ իրոք բարդ է դրությունը, ինչպես պիտի այս ամենը պարզվի իր ուղեղում, և դեռ այս բոլորը չէ, որ իրեն հայտնում են այսօր:

Քամալը գրկեց տղային, համբուրեց, հետն էլ ասաց.

- Հոգ մի՛ անի, տղա՛ս, ամեն ինչ իր հունով կգնա, մնում է նորից համբերել, միայն համբերել, ինձ մնա՝ ես տեսնում եմ, որ մեր ապրած բոլոր մղձավանջների վերջն է արդեն:

Քամալը որոշեց մինչև վերջին օրն էլ աշխատել, մինչև մեկնման օրը՝ ոչ մի կասկած չհարուցելու համար: Այդպես էլ արեց:

***

Վաղինակը, հեռագիրը ձեռքին, ներս մտավ, ուրախ էր, չգիտեր՝ ինչպես հայտներ, որ այս լուրը հանգիստ ընդունեն բոլորը: Հայրն ու մայրը նստած սուրճ էին խմում, ամեն մեկը խորասուզված իր մտորումների մեջ, երբեմն-երբեմն միայն խոսում էին: Վաղինակի ներս մտնելը ընդհատեց խոսակցությունը, նայեցին Վաղինակին, տեսան, որ բան ունի ասելու: Վաղինակը ուզեց կարդալ հեռագիրը, բայց նախաբանով սկսեց.

- Գիտեք, բան ունեմ կարդալու, բայց խնդրում եմ առաջ ձեզ պինդ պահեք, որ կարդամ: Հեռագիր եմ ստացել: Առաքելը սուրճի բաժակը դրեց սեղանին. տեսնելով, որ տղան ուրախ էր, սրտապնդվեց, ասաց,

- Կարդա լսենք, ո՞վ է ուղարկել, շուտ կարդա, ուրիշ բան մի՛ խոսիր: Հեռագիրը անգլերենով էր գրված, Վաղինակը թարգմանեց, որ այս ամսի տասնվեցին Ստամբուլից եկող նավով գալիս է Վարդը իր ընտանիքով: Վաղինակը բացատրեց, որ այս գրվածը կցկտուր է, բայց իմաստը սա է, որ Վարդը գալիս է:

Հեռագիրը անցավ ձեռքից ձեռք, կարծես ուզում էին գտնել մի բառ, որ Վաղինակը չէր կարողացել թարգմանել:

Առաքելը անուժ նստած էր, Սաթոն ջուր էր բերում, Վաղինակը համբուրում էր հորն ու մորը՝ ասելով. «Լա՛վ պահեք ձեզ, Աստված մեծ է»:

Լուրը շրջեց ամբողջ Ֆրեզնոյով մեկ, չանցած մեկ ժամ՝ Առաքելի տունը ասեղ գցելու տեղ չկար: Ամենաառաջինը քավոր

Արմենակի ընտանիքն էր, որից հետո՝ մեր ճանաչած բոլոր ընտանիքները:

Սաթոյի ուրախությանը չափ չկար. այն մշեցին, որ ինչքան ժամանակ ուզել էր քաղաքավարի լինել, միշտ հսկել էր իր տունը, արդեն նորից իրեն զսպել չէր կարող, գոռում էր, խոսում ուրախությունից: Ներս մտնողին իր մշեցու բարբառով բացատրում էր, որ Վարդը գտել է իր մարդուն, տղայի հետ գալիս է...

Մեծ ուրախություն էր, մեծ հյուրասիրություն, այդ մի քանի կցկտուր բառերը որքան հանգստություն բերեցին այս հոգնատանջ մարդկանց, որոնց սրտում միշտ մի մեծ նեղություն կար:

Ինչպես միշտ, Արմենակը պատրաստ էր ամեն ինչի, ինքն էլ ոտքի կանգնեց՝ Վաղինակի հետ այդ օրը նշված ժամին դիմավորելու Վարդին և իր ընտանիքին: Այդ գործը կարգավորելը դժվար չէր իր համար, մեր քավորը հոժարակամ անում էր. իրեն խնդրելու կարիք չկար:

***

Եկավ օրը ճամփորդելու, ամեն ինչ դասավորված էր՝ և՛ փաստաթուղթ, և՛ ճամպրուկ: Հսկա նավը կանգնած էր, ընդունում էր իր ուղևորներին: Քամալը իր ընտանիքով բարձրացավ նավ՝ ուրախ, բայց դեռ մի վախ կար, որ դողում էր մեջը: Վարդը այդ վախը չուներ, քանի որ շատ բան չգիտեր. իր հունական անձնագրով բարձրացավ նավ: Վերջը բոլորն այնտեղ էին, սպասում էին նավի շարժվելուն: Շեփորը հնչեց, նավը շարժվեց, բոլորն ուրախացան, թեթևացան, այլևս մտածելու բան չունեին:

Մուրադը երանության մեջ էր, շատ էր երազել բաց ծով դուրս գալ, անընդհատ նայում էր հեռացող նավերին, երանի էր միշտ

տալիս գնացողներին: Այսօր իր հերթն է գնալու, նավը իրեն տանում էր մի անծայրածիր հարթության վրայով, ինքն էլ չգիտի՝ ուր էր գնում, բայց գնում էր: Այսպես հիանալով՝ ժամերով աչքը չէր կտրում՝ մե՛րթ նայելով ջրերի փայլուն ալիքներին, մե՛րթ հորիզոնին, մե՛րթ երկնքին:

Քամալն ու Վարդը իրենք էլ չէին հավատում իրենց այս երջանկությանը: Վարդը լավ գիտեր, որ լավ ընդունելություն պիտի ունենան, որովհետև հայրը վատ չէր տրամադրված թուրք Քամալի հանդեպ:

Գյուլվարդը նույնպես նայում էր ջրերին, գլուխը բարձրացնում, նայում էր երկնքին ու հազար փառք տալով՝ շնորհակալություն էր հայտնում իր Աստծուն, որ իր ընտանիքը վերականգնեց, այսօր մտածում են նոր կյանքի, լավ օրերի մասին, իր համար ոչ մի օր չէր մտածել, ապրել էր անհայտության մեջ, հեռու մարդկանցից, թաքնված միշտ, բայց երբեք չմոռանալով, թե ով է ինքը, ինչ ազգի զավակ է և ինչ կրոնի է պատկանում: Այսօր Աստված բացել է մի դուռ իր առաջ. եթե Աստված է բացել, ուրեմն շատ լավ է լինելու, հավատում էր Աստծուն լիովին:

Շատ երկար էր ճանապարհը, բայց վայելելով անցան, և ճանապարհը կարճ թվաց:

Նավը կանգնեց նավահանգստում: Ամբոխը, հավաքված նավամատույցին, այնքան մեծ էր, որ անհնար էր գտնել մեկի, նամանավանդ որ անծանոթ էին, և չգիտեին, թե ով են դիմավորողները: Այդ վիճակի մեջ էր Վարդը, չգիտեր՝ ինչպիսին պիտի լինի հանդիպումը և ում հետ:

Առաջանում էին մարդիկ, ցույց տալով իրենց փաստաթղթերը, իջնում, գնում: Հանկարծ Վարդը լսեց իր անունը, կարծեց՝ հոր ձայնն է ու ձեռքը բարձրացնելով՝ գոռաց. «Ես

այստեղ եմ»: Մեկը կանչում էր իրեն այդքանի միջից, ու Վարդը շարունակում էր ասել. «Ես այստեղ եմ»: Առաջանում էին, այսպես իջան և կանգնեցին նավամատույցի վրա՝ չորս կողմը նայելով, թե ով պիտի մոտենար: Վերջապես Վաղինակը, ամբոխը ճեղքելով, առաջացավ, Արմենակը հետևից հասավ: Վարդը ճանաչեց եղբորը, փաթաթվեց, համբուրեց ու մնացին այդպես գրկախառնված, այնինչ Արմենակը արդեն բարևում էր Քամալին, Գյուլվարդին ու գրկել էր Մուրադին, այնքան էին խոսել Մուրադի մասին, որ արդեն հասկացավ, որ Վարդի տղան է ուրեմն: Վարդը հիշեց, որ մենակ չէ ու եղբորը ծանոթացրեց՝ ասելով, Քամալն է, մայրը և Մուրադը: Վաղինակը բարևեց ու գրկախառնվեց նաև բոլորի հետ: Վարդը մոտեցավ Արմենակին, համբուրեց և շնորհակալություն հայտնեց: Շատ ուրախ և մարդկային հանդիպում էր: Քամալը լավ ընդունելության արժանացավ առաջին իսկ պահից: Բոլորը խոսում էին թուրքերեն, միայն Վարդն էր խոսում հայերեն, մեծ անակնկալը դեռ վերջում էր:

Արմենակը գիտեր մի քիչ թուրքերեն, Վաղինակը՝ ոչ, բայց նա էլ քրոջ հետ էր խոսում հայերեն:

Ամեն ինչ Արմենակը նախապես որոշել էր՝ ինչպես գնալ, ինչպես հասնել Ֆրեզնո:

Առաքելն ու Սաթոն ամեն ինչ անում էին Վարդին լավ ընդունելու համար՝ ցանկանալով ամեն ինչ հասցնել կատարելության: Ինչպես պիտի ընդունեն Վարդի ամուսնուն, տղային, իսկ մոր գալու մասին գաղափար չունեին նույնիսկ:

Այսօր Առաքելի տան սպասողների թիվը նույնպես շատ էր, կարծես մի պաշտոնավոր մարդու պիտի դիմավորեին, բոլորը «թուրք» էին լսել, իրենց բոլորին տարօրինակ էր թվում այդ ընդունելությունը: Վարդին բոլորը ճանաչում էին քիչ թե շատ, նրա ամուսինն էր հետաքրքիրը, ինչ տեսակ մեկն է, որին այդ աղջիկը սպասեց տարիներ առանց որևէ մեկին նայելու, այդ ազնիվ Մինասին էլ մերժեց, և դեռ չգիտեն, թե Մինասն ինչ օրեր է անցկացնում՝ Վարդի սիրով տարված:

Մի մարդու նման աշխատում էին բոլորը լավ տպավորություն թողնել, իրենց այսօրվա կենցաղը բոլորովին նման չէ առաջվա իրենց ունեցածին, երբ խեղճ ու կրակ ապրում էին այն երկրում, որն իրենց հայրենիքը պիտի կոչեն մինչև իրենց մեռնելու օրը, որովհետև իրենց հայրերի երկիրն է, ու որը թուրքը գողացավ՝ իրենց կոտորելով և արտաքսելով հայրենիքից:

Շատերն էլ երևի մտածում էին, որ «թուրքն» այսօր իրենց հետ սեղան պիտի նստի և չամաչի իր արածների համար:

Մարդ են, և, պարզ է, կմտածեն, որքան էլ լավ տրամադրված լինեն, հոգու խորքում այդպես են համարում:

Թուրքն իրենց թշնամու պես վերաբերվեց և թշնամի դարձրեց բոլորին իր նկատմամբ:

Սպասում էին բոլորն անհամբեր, առավոտվանից սրտատրոփ, ճիշտ է, չեն խոսում, որ տանտիրոջը չվրդովեն, բայց այդպես են մտածում:

Արմենակը գնալուց առաջ նախազգուշացրել էր. «Ամեն ինչը լինի կատարյալ. եթե մեր աղջիկն ընդունել է այդքանից հետո, նշանակում է՝ մի բան ունի որպես առավելություն այդ տղան, չմոռանալ, որ երեխա ունի, որը չպիտի թողնենք այդ տղային, մենք արդեն բոլորս որը ենք»:

Այս ամենի մեջ բարի հոգին էր խոսում, իսկական մարդու դաստիարակությունը, մարդու իրեն ղեկավարելու և ճշմարիտն ըմբռնելու կարողությունը:

Վերջապես դուռը ծեծեցին: Դուռը բացվեց, նախ ներս մտավ Արմենակը, հատուկ նպատակ ուներ առաջինն իր ներս մտնելը: Մի հայացքով քննեց բոլորի տրամադրությունը և ուրախ ասաց.

- Վերջապես եկանք: Եվ ճանապարհը բացեց հետևի եկողներին: Վարդը մտավ, այնուհետև՝ Մուրադը, որից հետո՝ Գյուլվարդը, մոր թևը բռնած մտավ Քամալը, ամենավերջում մտավ Վաղինակը:

- Սալամ ալեքում,- ասելով մտան բոլորն ու կանգնեցին:

Առաքելն առաջացավ որպես տանտեր, մոտեցավ, ապշած նայեց, աչքերին չհավատաց, բարևն էլ մոռացավ: Ետևում կանգնած ընտանիքների տղամարդիկ էլ նմանապես, ապշած քարացան, ինչպես նաև ընտանիքի անդամները: Բոլորը լռել էին. ոչ մի խոսք, ոչ մի բարև: Վարդն ու Գյուլվարդը նայում էին բոլորին և չգիտեին՝ ում նայեն, ում թողնեն, այնքան մարդ կար այդտեղ: Միայն Արեգնազը մոտեցավ, փաթաթվեց Վարդին, բայց Վարդը իրեն շատ վատ էր զգում:

Այդքանի մեջ միայն Արմենակը սիրտ ունեցավ լռությունը ճեղքելու, ասաց.

- Այս ինչո՞ւ մեկից լռեցիք բոլորդ, ինչ պատահեց, դուք մարդ չէիք տեսել մինչև հիմա, եթե կուզեք՝ ես ծանոթացնեմ բոլորիդ այս դրությունից ձեզ հանելու համար, այս մարդիկ մեր բարեկամներն են, կուզեք թե ոչ, դա ձեր գործն է, ներկայացնեմ: Բռնելով Քամալի թևն՝ ասաց.- Այս պարոնը Վարդի ամուսինն է, այս տղան Մուրադն է, որի անունը շատ լսել եք, այս կինը սկեսուրն է Վարդի, այսինքն՝ Քամալի մայրը: Հայտնի եղավ բոլորիդ: Հիմա այս մարդկանց բարևին պատասխանեցեք, մեր ընտանիքի անդամներն են:

Առաքելը, որը դեռ ուշադիր նայում էր ու աչքերին չէր հավատում, ասաց.

- Դուն գիտես՝ անծանո՞թ ենք, ո՛չ, ես լավ էլ ծանոթ եմ և՛ փեսային, և՛ իմ թոռանը...

Մյուսները չթողեցին, որ Առաքելը խոսքը լրացնի:

- Մենք էլ ծանոթ ենք այդ սպային, որ փրկեց մեզ Դեր-Զորի անապատից, մեզ ինքն է փրկել, իր շնորհիվ մենք բոլորս այստեղ ենք հիմա...

Մեծ խառնաշփոթություն, իրարանցում, գրկախառնություն, շնորհակալության խոսքեր, բոլորը խառնվել էին իրար, հրմշտում էին իրար, թե որ մեկը պիտի շուտ համբուրի Քամալին: Այդ ընթացքում նորից Արմենակն էր խելքը գլխին, խեղճ Գյուլվարդին առանձնացրեց մի կողմ, նստեցրեց՝ թուրքերենով ասելով. «Դու նստի՛ր այստեղ, ես տեսնեմ՝ այս ինչ իրարանցում է, քանի կար, մարդ չէր խոսում, ինչ պատահեց»:

Արմենակը կանգնեց մի առանձին տեղ, սենյակի մեջ ու խոսեց.

- Առաքե՛լ հորեղբայր, կարո՞ղ եմ իմանալ, թե ինչ կատարվեց, այս ինչ է նշանակում, եկեք մեկ-մեկ խոսենք, բացատրվենք:

- Ես այս պարոնին և իր տղային վստահ եմ, որ տեսել եմ վիզաների գրասենյակում, ճի՞շտ է,- ուղղեց հարցը Քամալին:

- Ճիշտ է,- պատասխանեց Քամալը.

- Մենք էլ իրեն ճանաչեցինք, այն սպային շատ նման է, որ մեզ ազատություն տվեց փախչելու, երբ մենք այն թափորի մեջ էինք, մեզ քշում էին անապատ, ճի՞շտ է, թե՞ ոչ:

- Ճիշտ եք,- պատասխանեց Քամալը:

- Մեզ էլ ինքն ազատեց, մենք լավ հիշում ենք իրեն:

- Ինձ ջուր տվեց, խմեցի:

Մյուս եղբայրն էլ թե՝ ինձ հաց տվեց մի քիչ, ճիշտ է, չէ՞:

Քամալը չպատասխանեց այլևս, ինքն էլ մտազբաղ էր, հիշեց այն օրերը, հիշեց ամեն ինչ, բայց ինչպե՞ս հիշեր բոլորին, թե ում ինչ է տվել, աչքերը լցվեցին, երկու կաթիլ արցունք թափվեց աչքերից, ուրախության արցունքներ էին, ու մի վայրկյանում այդ ամբողջը ֆիլմի պես անցավ իր աչքերի առջևով:

***

Ամեն ինչ պարզ եղավ բոլորին:

Գյուլվարդը նայեց տղային, ինքն էլ լաց եղավ:

Վարդը մոտեցավ ամուսնուն, համբուրեց, ձեռքը բռնեց, հորը նայեց ու ասաց.

- Հայրի՛կ, գիտե՞ս, որ փեսադ հայ է, հետը հայերեն խոսի՛ր, ինքը գիտի հայերեն:

Այդ ժամանակ բոլորը միասին ասացին.

- Բարև...

Այլևս չխորացան, ուրախ նստեցին բոլորը, քանի որ դեռ ոչ մեկը չէր նստել:

Նստեցին սեղանների մոտ և ճաշակեցին հայկական համեղ կերակուրները:

Քամալն իրեն շատ լավ զգաց: Վերջապես ընտանիք ունեցավ և պիտի կարողանար ապրել այսուհետև առանց գաղտնիքի,

բայց երբեք չէր սպասում այսպիսի ընդունելության: Այնքան համեստ էր ինքը, որ ոչ մի անգամ այս բոլորի մասին չէր խոսել մորը և ոչ էլ Վարդին:

Ինքն ուրիշ բան էր ուզում, իր կարոտած սերն էր խոստովանում Վարդին, ժամերը րոպեների պես էին թռչում, և ժամանակը չէր բավում, միշտ կիսատ էր մնում...

Բաժակները լցրեցին, բարձրացրին, բոլորը կանգնեցին և միաբերան խմեցին Քամալի կենացը՝ օրհնելով և շնորհակալական խոսքեր ասելով՝ համոզված, որ ինչ էլ ասեին, քիչ էր: Առաքելը կանգնած մնաց. հպարտ էր իր փեսայով, տեսել էր նրա դիրքն ու մարդկանց հարգանքը նրա նկատմամբ և նաև Քամալի հարգանքը մարդկանց նկատմամբ: Առաքելը Դեր-Զորի ճամփան չէր անցել, եթե անցներ էլ, այդ գրասենյակում նրան կճանաչեր, ոչինչ, այսօր ճանաչեց և իրեն հպարտ էր զգում, որ իր աղջիկը կարողացել էր թուրքի մեջ մարդը գտնել ու մինչև վերջ հավատարիմ մնաց իր այդ մարդուն:

Բոլորը խմեցին Վարդի և Քամալի կենացը, ուզեցին Քամալն էլ արտահայտվի երկու խոսքով:

- Ես նախ շնորհակալ եմ ձեզ այս ընդունելության համար: Առանց հայտնելու գալս, ծեծեցի ձեր դուռը և բոլորովին չգիտեի, որ բոլորիդ արդեն ծանոթ եմ, ես գիտեմ միայն՝ Աստված երեսիս նայեց, որ Վարդն այդ ճամփու վրա չէր, կարծում էի, որ աչքիցս վրիպել է, Փա՛ռք Աստծո:

Երբ Վարդն ինձ թողեց, հեռացավ, ճիշտ այդ օրն իմացա, որ ես հայ եմ, մայրս ասաց, երբ տեսավ հուսահատությունս:

Բայց ես միսիա ունեի կատարելու և շատ խիստ՝ հայերին ուղեկցել դեպի մահ: Ես չկարողացա հրաժարվել իմ այդ հանձնարարությունից, որոշված էր արդեն: Ես խիստ կպատժվեի, ստիպված էի գնալ, բայց մեջս խոսեց հայի հոգին, անմիջապես անցա գործի: Երբ առաջին անգամ հաջողեցի օգնել փախչելու

մի քանի տասնյակ հայերի, ես անմիջապես զգացի, որ Աստված է ինձ դրել այդ ուղու վրա, ու շարունակեցի այնքան, մինչև այլևս հայ չկար, որ անցներ այդ ճամփով:

Ահա այսպես Քամալը մի քանի նախադասությամբ բացատրեց բոլորին, այն էլ հայերենով, և բոլորը ափուբերան իրեն էին լսում, միայն Մուրադը չհասկացավ, թե ով ինչ բարեկամ է իրեն, բայց զգաց, որ հայրը շատ լավ ընդունվեց այդ ընտանիքում: Մայրը, կողքը նստած, բացատրում էր, թե ով իրեն ինչ բարեկամ է:

Քավոր Արմենակը, իհարկե, ասաց իր խոսքը և Վարդին ու Քամալին նվիրեց ճամփորդական ուղետոմս նոր կյանք սկսելու համար:

Գալով Մինասին՝ այն մեծ սիրտը, որ ինքն ուներ, արդար հոգին, որ ծվարած էր իր մեջ, այն անհուն սերը, որ տարիներ շարունակ մղել էր հոտ առնել միայն իր Վարդից, նա որոշել էր պահել, գուրգուրել ընդմիշտ:

Այն Վարդին, որին հանդիպել էր առաջին անգամ, նա իրենն էր համարում, նա բոլորովին առնչություն չուներ Քամալի այն Վարդի հետ, նա իր Վարդն էր, իր առաջին սիրո Վարդը՝ անմեղ, քնքուշ. մի հատ էր նա և իրենն էր, նրա հոգին իր մեջ էր. թե ինչպես էր մարմնավորվում այդ հոգին, ինքը գիտեր միայն: Այդպես պիտի մնա ու պիտի փայփայի միայն ինքը, ոչ մեկը չպիտի իմանա նրա գոյության մասին այլևս, բացի իրենից, ոչինչ, որ սիրտը կմաշի, բայց պիտի սիրի՛ ու սիրի՛ մինչև իր կյանքի վերջին րոպեն:

Այնուհետ, նա միշտ մեկ հատիկ վարդ ունեցավ իր ծաղկամանի մեջ՝ բարձր տեղում, նոր քաղած, բուրումնավետ, իր աչքի առաջ և նաև իր սրտի խորքում:

12. 02. 2015

Մարի Լուիզ Վարդանյան

Վարդը

Հրատարակչության տնօրեն՝
Վահրամ Մնացականյան

Խմբագիր՝
Ալլա Սահակյան

Սրբագրիչ՝
Զարուհի Մխիկյան

Գեղարվեստական խմբագիր՝
Հերմինե Վարդանյան

Չափսը՝ 60x84, 1/16: Ծավալը՝ 21.5 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 300 օր:

Տպագրվել է «ՎՄՎ-ՊՐԻՆՏ» ՍՊԸ հրատարակչության տպարանում
Հասցեն՝ Ազատության 24/11, հեռ. 28 54 28
E-mail: vmv_print@yahoo.com
www.vmv-print.am